







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ С С Р
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА



АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ПЕСНИ СТРАННИКА

Подготовка текста,
предисловие и комментарии
МАНИК МКРТЧЯН



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ С С Р
ЕРЕВАН 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԷՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99-192



ԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՊԱՆԻԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Տեխսըդ դասքաստէց,
Ներածութիւնը գրէց և ծանոթագրէց
ՄԱՆԻԿ ՄԿՐՏՅԱՆԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՅՈՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1961



Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի նմրագրական-
հրատարակչական խորհրդի որոշմամբ

Ներկա աշխատությունը բովանդակում է հայկական ժողովրդական քանահայտության կարևոր տեսակներից մեկի՝ պանդխտության երգերի գիտական համահավաք տեքստը:

Բացի «Պանդխտության երգեր»-ի ժողովածուից, որը կազմում է աշխատության գերակշռող թասը, գիրքն ունի նաև ներածություն և նվիրված ժողովրդական պանդխտության երգերի ընդհանուր բնութագրին:

Տեքստում բերված են տարբերական մամուլում, ժողովածուներում, հրդարաններում, հանդիսներում ղետնդված պանդխտության երգեր և իրենց տարբերակներով:

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանների համար:

ՆԵՐԱՎՈՐՈՅՈՒՆ



ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄՆ ՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Պանդխտության երգերի հավաքումն ու հրատարակումը, ժողովրդական երգերի մյուս տեսակների համեմատությամբ, ավելի բարձր լինելու մեղանում:

Միջին դարերից մեզ հասել են պանդխտության երգերի մի շարք նմուշներ, որոնք պահպանված են Վենետիկի, Վիեննայի ձեռագրատներում և Երևանի Պետական ձեռագրատանը (Մատենադարան):

Պանդխտության երգերի (տպագրված) առաջին նմուշը, հանրահայտ «Կուռնկ»-ը լույս է տեսել 1847 թ. «Բազմավեպ»-ում: Ապա դարձյալ «Բազմավեպ»-ի 1851 թ. համարում հանդիպում ենք «Վայրի հավուկ մի» տողով սկսվող, «Անընկեր» վերնագրով պանդխտության մի երգի: 1856 թ. Գամառ-Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» ժողովածուի մեջ տպագրված է «Կուռնկ»-ի մեկ այլ ընթերցվածը:

Սկզբնական շրջանում հրատարակված այս երգերը մեծ մասամբ անհատական ստեղծագործությունների ժողովրդականացած նմուշներ են:

Անցյալ դարի 70—90-ական թվականներին բանասիրության մեջ աճում է հետաքրքրությունը դեպի պանդխտության երգերի հավաքումն ու հրատարակումը: Հաջորդաբար լույս են տեսնում մեր բանահավաք-բանագետների հավաքած ժողովածուներն ու երգարանները, որտեղ հանդիպում ենք և պանդխտության երգերի: Այսպես՝ 1868 թվ. Պետերբուրգում լույս է տեսնում Մ. Միսնասարյանցի՝ «Քնար հայկական»-ը, 1874 թ.՝ Արիստակես Վ. Սեդրակյանի «Քնար մշեցոց և վանեցոց» ժողովածուն: 1876 թ. Պոլսում հրատարակվում է Ար. Սարգսյանի (Տեկանցի) «Պանդուխտ վանցին» պանդխտության երգերի մի գողտրիկ ժողովածու:

Նույն ժամանակաշրջանում հայ պարբերական մամուլի էջերում ևս տպագրվում են պանդխտության երգեր:

1882 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Արիստակես Վ. Տեկանցի «Հայերգ»-ը միջնադարյան պանդխտության երգերի մի շարք նմուշներով: 1883 թ. Զմյուռնիայում լույս տեսնող «Արևելյան մամուլ»-ի էջերում էլ երևում են այդ երգերից: 1884 թ. հրատարակվում է մեր բանահավաքների ռազմիրա՝ Գ. Վ. Սրվանձադանցի «Համով-հոտով»-ը, որը ունի Ակնի մի շարք անտունիներ, հատկապես պանդխտության, սգու և թաղման երգեր: Մի քանի երգ տպագրված է նույն թվականին Թիֆլիսում լույս տեսած Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի Գ գրքում:

1885 թվականից մինչև 1890 թվականը մեկը մյուսի ետևից լույս են տեսնում բանահյուսական մի շարք ժողովածուներ ու երգարաններ, ինչպես օրինակ՝ Գ. Շերենցի՝ «Վանա սաղ»-ի առաջին մասը, Գ. Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Գր. Գրիգորյանի «Սոխակ Հայաստանի» լիակատար երգերի 5 հատորը, Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 2 գիրքը և այլն: Այս ժամանակաշրջանում ուշագրավ է Պոլսում հրատարակվող «Մասիս» լրագիրը, որի 1884, 1886, 1888 և հետագա թվականների համարներում սիստեմատիկ կերպով հրատարակվում են պանդխտության երգեր:

Պանդխտության երգերի հավաքումն ու հրատարակումը մեծ թափ է ստանում 90-ական թվականներից: Այսպես, օրինակ, «Մասիս»-ը 1890—1893 թթ. համարներում պարբերաբար հրատարակում է ղարիբի երգեր, 1892 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Երվանդ Լալայանի «Զավախքի բուրմունք»-ը, 1893 թ. Գարեգին Հովսեփյանի՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից»-ը: Պոլսի գրական բաղաքական օրաթերթ «Հայրենիք»-ը իր 1891—1894 թթ. էջերում հոգվածներ է ղեկավարում պանդխտության վերաբերյալ: 1893—1895 թթ. «Արձագանք»-ի մեջ, մի շարք համարներում հաջորդաբար լույս է տեսնում Տ. Նավասարդյանի «Ժողովրդական քանահյուսություն» հոգվածաշարը, որտեղ ժողովրդական երգերի այլ տեսակների հետ միաժամանակ բավական նմուշներ են բերվում նաև այս երգերից:

Այնուհետև, 1895 թվականից մինչև 1900 թվականը լույս են տեսնում Հ. Ճանիկյանի՝ «Հնությունք Ակնա» հայտնի, արժեքավոր ժողովածուն (1895), Արշակ Բրուտյանի՝ «Ռամկական մրմունջներ»-ը (1898), Գ. Շերենցի՝ «Վանա սաղ»-ի երկրորդ մասը (1899), որը առաջին մասի համեմատությամբ հարուստ է այդ երգերով: 1900 թ. լույս է տեսնում Աղ. Մխիթարյանի՝ «Տաղեր ու խաղեր»

ժողովածուն, ուր ժողովրդական ու աշուղական այլ և այլ երգերի կողքին կան նաև պանդուխտի երգեր:

Տարբեր դավանների բարբառներով բազմաթիվ երգեր կան Եւլայայանի «Աղգազրական Հանդես»-ում (սկսած 1897 թ.): Իր հանդեսում Լալայանը սխառնատիկ կերպով հրատարակում է պանդխտության երգեր: Պոլսում հրատարակվող «Բյուրակն»-ը իր 1898—1900 թթ. համարներում տալիս է մի շարք դարիբի երգեր:

90—900-ական թվականներին լույս տեսած երգարաններն ու ժողովածուները, չնչին բացառությամբ, միայն տեքստեր են պարունակում, սակայն որևէ ուսումնասիրություն կամ հետազոտական աշխատանք չկա, միայն, պարբերական մամուլի էջերում լույս են տեսնում փոքրիկ հոդվածներ և նկատողություններ պանդխտության մասին:

1900-ական թվականներից մինչև 1917 թվականը Թե՛ առանձին ժողովածուներում և Թե՛ մամուլի էջերում լույս են տեսնում բազմաթիվ նոր երգեր: Օրինակ՝ 1901 թ. լույս է տեսնում Աղ. Մխիթարյանի «Փշրանքներ Շիրակի ամբարներից» (Էմինյան աղգազրական ժողովածու, հատ. Ա), Վաղարշապատում՝ Մ. Արեղյանի և Կոմիտասի կազմած «Հազար ու մի խաղ»-ի առաջին և երկրորդ հիսնյակը (առաջինը լույս է տեսել 1903 թ., երկրորդը՝ 1905 թ.): Էմինյան աղգազրական ժողովածուի Զ հատորում Ս. Հայկունին բանահյուսական այլ տեսակների շարքում զետեղում է պանդխտության երգերի մի սովոր շարք (էջ 105—162): 1917 թ. էջմիածնում լույս է տեսնում Հայկ Աճեմյանի «Ծաղկաքաղ Վասպուրականի» ժողովածուի Ա պրակը, որտեղ նույնպես կան հատ ու կենտ երգեր:

Այդ ժամանակներում մեր երաժշտագետներն էլ իրենց հերթին ժողովրդական երգերի այլ տեսակների հետ մեկտեղ ձայնագրել են պանդխտության երգեր: Սակայն, ժողովրդական երգերի հավաքումն ավելի հաջող ընթացավ, քան այդ երգերի եղանակների ձայնագրումը: Եթե պանդխտության երգերի հավաքումն սկսվեց անցյալ դարի 60-ական թվականներից, ապա եղանակներին՝ երեք տասնամյակ անց: Պանդխտության երգերի եղանակների գրառման և մշակման գործում մեծ աշխատանք են կատարել Կոմիտասն ու Սպ. Մելիքյանը, հիշենք նրանց՝ 1917—1930 թթ. ձայնագրած եղանակները:

Մեր ձեռքի տակ եղած նյութերը, անշուշտ, հայ ժողովրդական ստեղծագործության այս հետաքրքիր բնագավառի՝ պանդխտության բոլոր երգերը չեն: Դրանց որոշ մասը տակավին անծանոթ է մեզ, իսկ շատերն էլ գրի չառնվելու հետևանքով մնացել են անհայտ:

ՊԱՆԴԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԻ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ կեղեքվել է օտարերկրյա բռնակալների կողմից: Անպակաս են եղել Հռոմի ու Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբների, սելջուկների, մոնղոլների և օսմանցոյ արշավանքները:

Չկարողանալով դիմանալ մի կողմից՝ ազգային ճնշումներին, իսկ մյուս կողմից՝ հարստահարություններին ու շահագործմանը, հայ ժողովուրդը հաճախ թողել է իր հայրենի երկիրն ու դիմել օտարություն:

Հայրենիքից հեռանալը տեղի է ունեցել երկու ճանապարհով՝ գաղթականության և պանդխտության: Գաղթականությունը եղել է հայ ժողովրդի ամենամեծ ու հին շարիքներից մեկը:

Հայ ժողովուրդը թողնելով երկիրը, հաղարձերով գաղթել է ոչ միայն օտար երկրներ՝ Միջագետք, Կապադովկիա, Լեհաստան, Հունաստան, Ռումինիա, Եգիպտոս, Հնդկաստան, Ռուսաստան և նույնիսկ Ամերիկա, այլև հաճախ երկրի ներսում՝ մի նահանգից անցել է մյուսը, մի քաղաքի ավերումից հետո բուն դրել, ընտանիք կազմել մի այլ քաղաքում:

Գաղթականությունը Հայաստանում մեծ ծավալ է ստացել XI դարից, հատկապես սելջուկների արշավանքից հետո:

Այլ բնույթ է ունեցել պանդխտությունը: Եթե գաղթել նշանանում է թողնել հայրենիքը ընդմիշտ, և ընտանիքով, գավառով, մարզով գնալ օտար երկրներ բնակություն հաստատելու, ապա պանդխտել, նշանակում է ժամանակավորապես հեռանալ հայրենիքից, օտարության մեջ աշխատանք ու վաստակ որոնել:

Գծվար է ասել, թե ո՞ր դարից է Հայաստանում ծայր առել պանդխտությունը, բայց մեր ձեռքի տակ եղած նյութերը ցույց են տալիս, որ պանդխտության հոծ շարժումը սկսվել է XII—XIII դարերից, թեև նրանից առաջ էլ եղել է այդ երևույթը:

Անցյալ դարի 90-ական թվականներից պանդխտության մեծ ավիր է սկսվում. հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ դիմում են օտարություն, որի հետևանքով կանայք մնում են այրի, երեխաները՝ որբ, ծնողները՝ վշտի ու տառապանքի մեջ:

Այս պատճառով էլ պանդխտությունը մեծապես մտահոգել է մեր հասարակական մտքի բազմաթիվ մշակների, որոնցից շատերը տեսնելով այդ ահավոր շարիքը, ձգտել են ամեն կերպ հայ աշխատավորին ետ պահել պանդխտելու մտքից: Պատահական չէ, որ ժամանակի հայ մտավորականության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Միքայել Նալբանդյանը, Արփիար Արփիարյանը, Մանուկ Աբեղյանը և ուրիշներ թե՛ մամուլում իրենց հոգևածներով, և թե՛ իրենց գեղարվեստական ստեղծագործություններում աշխատավոր գյուղացուն կոչ էին անում հեռու մնալ պանդխտելու մտքից, ցույց տալով նրա աղետավոր հետևանքները:

Պանդխտությունը հայ ժողովրդին քշել է աշխարհի տարբեր կողմերը: Պանդխտության հիմնական վայրեր համարվել են Արևմտյան Հայաստանում՝ Կ. Պոլիսը, Իզմիրը և Թուրքիայի նավահանգստային ուրիշ քաղաքները, Անդրկովկասում՝ Բաքուն, Գանձակը, Թիֆլիսը, Բաթումին և այլն:

Պանդխտության մեծ շարժում եղել է Զուղայից և Ատրպատականից: Այս վայրերից պանդխտել են դեպի Բուլանիա, Պոլիս, Իզմիր, Վասպուրականից՝ Ակն, Սեբաստիա, Անիից՝ Տրանսիլվանիա, Հունգարիա, Ռումինիա, Արարատյան նահանգից՝ Տավրիտյան թերակղզի կամ Ղրիմ և այլն:

Հայերը պանդխտել են Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա (Փարիզ, Լիոն, Մարսել), Եգիպտոս, Սուդան, Հաբեշտան, Սուրիա (Բեյրութ, Հալեպ), Հնդկաստան և այլուր:

Հայաստանում չկա մի անկյուն, որտեղից պանդխտած չլինեն տարբեր երկրներ, տարբեր ժամանակներում, և դժվար է ցույց տալ եվրոպական ու առհասարակ մի երկիր, ուր հայ պանդուխտ չգտնվի:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի հաղթանակից հետո և Հայաստանում սովետական կարգերի հաստատումով վերացվեցին սոցիալական ու ազգային բոլոր հակասությունները, իսպառ վերացվեց նաև պանդխտությունը և ոչնչացան նրա առաջացման պատճառները:

Այժմ, շնորհիվ Սովետական իշխանության ազգային քաղաքականության, հայ ժողովուրդն ունի իր հայրենիքը և պատահական չէ, որ տասնյակ հազարավոր պանդուխտներ վերադառնում են Հա-

յաստան, մասնակցելու վերածնված հայրենիքի սոցիալիստական շինարարությանը, իրենց մասնակցությունը բերելու հայ ժողովրդի ստեղծագործ աշխատանքին:



Տաղանդավոր ու ստեղծագործ հայ ժողովուրդը, որն իր ավանդական բանահյուսության մեջ այնքան կենդանի ու բաղձալիցմանի կերպով արտացոլել է պատմական շրջանների իր կյանքը, տալով բանահյուսական մի շարք աննման երգեր, բնականաբար, չէր կարող անտարբեր լինել այնպիսի մի երևույթի նկատմամբ, ինչպիսին պանդխտությունն էր:

Հայաստանի գրեթե բոլոր շրջանների աշխատավորները իրենց բանաստեղծների, երգասացների միջոցով հորինել են բաղձալիցվ, մեկը մյուսից գունեղ ու բարձրարվեստ երգեր:

Այս երգերում կենդանի արձագանք են գտել հայ պանդխտության լուսաշող կյանքի տարրեր զբվագները, նրա հոգեկան աշխարհի ավայտանքները:

Պետք է նշել, սակայն, որ հասարակական զարգացման տարբեր էտապներում պանդխտության ձևերը, հետևապես և երգերը տարբեր բնույթ ունեն:

Այսպես, ծանոթանալով ներկա ժողովածուն բովանդակող երգերին, կտեսնենք, որ պանդխտության վաղ շրջանի՝ միջնադարի երգերում բոլորը սոցիալական անհավասարության դեմ կամ բացակայում է, կամ խիստ պասսիվ է, մինչդեռ հետագա շրջանի երգերում այդ բոլորն ուժեղ կերպով է արտահայտվել:

Խոսելով հայ ժողովրդի ստեղծած պանդխտության երգերի մասին, դանիացի նշանավոր քննադատ Գևորգ Բրանդեսը ասում է. «...մեկ ժողովուրդ չունի հայկական երգերուն նման երգեր—պանդուխտի աղիոգորմ և սիրո տարվալից երգեր»¹:

Փորձենք այժմ ծանոթանալ այդ երգերի բովանդակության, բնույթի ու արվեստի հետ:



Հայ ժողովրդական պանդխտության երգերը բաղձատեսակ և բաղձաբովանդակ են: Դրանք օրգանապես կապվում են իրար հետ և կաղմում մի ընդհանուր շղթա, որը ներկայացնում է պանդուխտի ամբողջական կենսագրությունը:

¹ Գ.Բրանդես, Հայաստանը և Եվրոպան, Ժնև, 1907, էջ 14:

Յուրաքանչյուր երգ արտահայտում է պանդուխտի և նրա հարազատների կյանքի, ապրումների ու մտորումների այս կամ այն կողմը:

Այս երգերը առաջին հերթին հորինել են իրենք պանդուխտները, ապա նրա հարազատները՝ կինը, մայրը, հայրը, եղբայրը, քույրը: Սրանցից յուրաքանչյուրը ստեղծել է իր ուրույն երգը: Սակայն քույր պանդուխտները չէ, որ հորինել են երգեր, և ոչ էլ քույր պանդուխտ ունեցողները: Դրանք եղել են բանաստեղծական և կատարողական ձիրքով օժտված մարդիկ միայն:

Պանդխտության երգեր հորինել են նաև պրոֆեսիոնալ երգիչները, որոնք երգել են պանդուխտների մոտ նրանց հարազատների՝ և հարազատների մոտ՝ պանդուխտների վերաբերյալ երգեր:

Ցավոք պիտի ասել, որ մեր բանահավաքներն անցյալում աշաղրուկյուն չեն դարձրել պանդխտության երգեր հորինողների ու կատարողների վրա, և ոչ մի տեղեկություն չեն հաղորդել նրանց մասին: Քերես դրա պատճառը եղել է մեր անցյալի բանահավաքների ու բանագետների ունեցած սխալ հայացքը ֆոլկլորի մասին: Ժողովրդական բանահյուսությունը նրանց համար եղել է մի ինչ-որ անգեմ, համաժողովրդական ստեղծագործություն, որ հորինվում է ոչ թե անհատի, այլ ամբողջ ազգի կողմից, ուստի և անհատ ստեղծագործողը բնականորեն մատնվել է անուշադրության:

Հրաժեշտ և բաժանում.— Հայ աշխատավոր գյուղացու պանդխտության երգերի մեջ առաջին տեղը զբաղում են հրաժեշտի և բաժանման երգերը, որոնց գլխավոր գործող անձը պանդխտության գնացողն է: Այս երգերի հիմնական մոտիվը մոր սրտառուչ ողբն է հեռացող որդու համար: Այստեղ մայրը աղակտուր ողբում է իր քալին, հայրը՝ տարագիր որդուն, կինը՝ իր սիրասուն ամուսնուն, մանկիկն ու պատանին՝ իրենց հորը:

Հրաժեշտի և բաժանման երգերը պանդխտության ամենապարտառու և հուզիչ երգերից են:

Պանդխտության գնացողն էլ, հայրենիքում մնացողն էլ դիտեն, որ օտարության մեջ ավելի վատթար վիճակ է սպասվում պանդուխտին, որ նա կամ չի վերադառնալու, կամ եթե վերադառնա էլ, չյուծված, աշխատանքի համար անպետք, անընդունակ է լինելու:

Պանդխտության մեկնելու նախապատրաստության սովորությունը առանձնապես տարածված էր Ակնի և Վանի շրջաններում, հավանաբար այն պատճառով, որ դրանք համատարած պանդխտության վայրեր են եղել: Ըստ այդ սովորության, մեկնելուց

երեք օր առաջ, պանդխտութեան գնացողը դիմում է մորը, կամ տան մեծին իր գնալու մասին հայտնելով՝ «Մայրիկ, կարաւանի ձին վարձեցի, երեք օրեն ճամբա պիտի ելնենք, ընկերներս լավ մարդիկ են, թերեւս աստօծ տնօրինութեանն է, որ մենք ուրախ սրտով պատառ մը հաց միասին չտանք... Ուտի քանի մը հաց, բաղարջ թխե, քանի մը գունդ փոխինդ շաղվե, քանի մը կտոր պանիր, քանի մը հատ ձուկ-մուկ, ալ դուք գիտեք, հալաւներ, հագուստներ, եռստոն օրվան ճամբա է»¹:

«Ձին վարձեցի» բառը մոր համար սարսափելի գույժ է:

Պանդխտութեան գնալը նման է ցմահ տաժանակրութեան, այն տարբերութեամբ, որ տաժանակրութեան ուղարկվում է հանցագործը պետական օրենքով, իսկ պանդխտը, դարձյալ պետական կառավարողների, իշխողների երեսից ինքնակամ, բայց ստիպված գնում է այլ երկիր, վերադարձի հույս չունենալով: Դրա համար էլ հրաժեշտի օրը՝ սուգի ու ողբի օր է: Այդ օրը հավաքվում են պանդխտի ազգականները, բարեկամները, ծանոթները, հարեանները՝ մխիթարելու պանդխտի մոտիկներին:

Հրաժեշտի և բաժանման սովորութեանը իր արձագանքն է գտել պանդխտութեան այս կարգի երգերում: Ժողովրդական պանդխտութեան երգերում կան հրաժեշտ և բաժանում արտահայտող բազմաթիվ երգեր.

Էլեք եմ, կերթամ կը, վե՛լ գիտէ հալս,
Մե՛մ ա Սստուած գիտէ դառնալս ու գալս.
Մարիկ ձեռքտ պազնեմ, եար, մնաս բարով,
Արզահիլ կամօքտ պաքմ տուր սիրով²:

9

Պանդխտութեան գնացողը միաժամանակ այցելում է իր այգին, պարտեզը, մաղթում ու աղբսում է վերջիններիս շատ բարիք տալ, որպեսզի իր երեխաները կարող չմնան, գան քաղեն, ու մոռանան հայր կորցնելու վիշտը: Այնտեղ բնութեան ծոցում նա թափում է իր արցունքները, համբուրում հողն ու տերեւը, թուփը, ծառն ու ծաղիկը և բաժանվում արտասովոր աչքերով³:

1 «Արձագանք», 1894, № 89:

2 Երգերի տակ նշված համարները մեր աշխատության տեքստում եղած երգերի համարներն են (Մ.Մ.):

3 «Արձագանք», 1894, № 89:

Պանդուխտին պետք է հանգիստ, քանի որ նա առավոտյան մեկնելու է, և երբ նա պառկում է հանգստանալու, նրա մայրը բանաստեղծ դարձած երգում է, շոքելով որդու առջև, համբուրում ու սղորում է:

Նա գիտե՞, որ իր որդին կամ չի վերադառնալու, կամ եթե վերադառնա էլ ինքն արդեն մեռած է լինելու:

Արևելյան սովորությունը կաշկանդում է, որ կինն էլ ազատ ու համարձակ լինի իր հույզերի ու ապրումների արտահայտության մեջ: Ամուսնուն պանդխտության ճանապարհելու նախօրյակին կինը՝ գաղտնի, լուռ, անխոս է տանում այն բոլոր ապրումներն ու մտորումները, որոնք ազատ ու անկաշկանդ արտահայտում են պանդուխտի հայրն ու մայրը, քույրն ու մյուս ազգականները: Ուստի կինը գիշեր-ցերեկ լուռ ու անխոս երգում և խնդրում է ամուսնուն չդնալ: Բնորոշ է այս տեսակետից հետևյալ երգը՝

Գիշեր ու ցորեկ կուլամ,
Ձի դադրիր աչերս ի լալու.
Իմ եարս ի ծոցոյս ելեր,
Ու երես դրեր զնալու.
Զձեռկունքս ալլ ի յինք տարայ,
«Բռնելու եմ, չեմ թողնելու»:
Զերդումն ի բերանն էառ.
«Գնալու եմ, չեմ կենալու»:

ԵԳ

Պանդխտության գնացողի տունը նման է մեռելատան. պանդուխտի հարազատները աղերսում են, խնդրում, որ ետ կանգնի գնալու մտքից, բայց նա չի գնում քեֆի կամ ուրախության.

Ելեր եմ կերթամ դուն կարգիլես իս,
Դուն բարեխօս եղիր սուլթան սուրբ Սարգիս,
Թաղէ ժամընցուցած պաղչաս ու էգիս
Վարդս քեզ ամանաթ, մայր, կեցիր բարով:

16

Չափազանց սրտաշարժ է պանդուխտի մեկնելու վայրկյանը: Եթե նախապատրաստվելիս պանդուխտի հարազատները հույս ունեն, որ կարող է միտքը փոխել, կամ մի քանի օրով գնալը հետաձգել, ապա այժմ ամեն ինչ վերջացած է. գնում է: Առավոտյան բո-

լորը հաւաքւում են, նախօրոք պատրաստում բաժանման-հրաժեշ-
տի սեղանը, ըստ սովորութեան առաջին բաժակը վերցնում է տան
ժերը, դիմելով ուղևորին, պատվիրում է, որ զնացողը ուխտ անի
շուտով վերադառնալու, որպէսզի հոր գլուխը իր ձեռքով դերեղման
դնի, և իր ափով հող լցնի վրան¹:

Պանդխտողը կատարելով նվիրական ուխտը, համբուրում է
ծնողի ձեռքը, խնդրում մորը, որ օրհնի իրեն, հաջողութեամբ տեղ
հասնելու: Այնուհետև ստանալով ծնողների օրհնութիւնը, նա պատ-
քաստւում է շարժվելու դեպի «ամենայաց երկիրը»:

Պանդուխտի կիներ ամուսնուն ճանապարհելիս երգում է՝

Առավոտուն զով ատեն
Պիւպիւններուն երգած ատեն,
Եարս ճամբու դրի,
Լեռներու կանանչ ատեն:

ԲԱ 117

Իսկ ամուսինը նախանձախնդիր իր պատվին, վերջին անգամ
կնոջը դառնալով, կտակում է՝

Կերթամը, ուղուր քրէ,
Ընծի հըմար աղօթէ,
Էկեր վուրիշը սիրես նէ
Տէրը հոգիդ թող առնէ:

ԲԱ 118

Կարավանի ձիերի զանգակների ղողանջները կտրում են հա-
րազատների հույսի վերջին թելը:

«Ալ մնաք բարով, հայր ու մայր, քույր ու եղբայր, կին ու զա-
վակ, դրացի ու աղգական, խանձարուր և օրրան, սուրբ վայրեր ան-
մեռ մանկութեան. բույր ու բուրաստան, անդ ու անդաստան, պար-
տեղ և այգեստան ալ մնաք բարով, թերևս մինչև հավիտեան»²:

Կարավանը շարժվելիս, ըստ ընդունված սովորութեան, պան-
դուխտը վերցնում է մի բուռ հող տան շեմքի տակից, և տանում
հետը, որ եթե լա՝ հայրենի հողի վրա թափվեն արցունքները:

Պանդուխտի մեկնելուց հետո ընտանիքի հոգսերն ավելանում

¹ «Արձագանք», 1894, № 90:

² Նույն տեղում:

են, Եթե մինչ այդ տնտեսական անապահովությունն էր, չքավորություն, հարկատվություն, պարտքեր ու տուրքեր, ապա այժմ այդ բոլորին գումարվում է և հարազատի կարոտն ու սերը: Մանավանդ այն հանգամանքը, որ պանդխտության մեջ իրենց հարազատը լինելու է վատ պայմաններում, այս գիտակցությունը տանջում է մնացողներին, որոնք դառն փորձից իմանալով, թե ինչպիսի պայմաններում է լինելու իրենց սիրելին, երգում են.

Մտամբողը մի գովեր երկրն վար է,
Տախտակը տեսչէկ, սալ քարն ալ բարձ է.
Ձեռքերը երեսին մենտիլն ալ թաց է
Վալ անոր տիրոջը, աշերն ալ լաց է:

176

Պանդուխտի կինը լուռ ցավ ունի, խորը և մեծ, որովհետև
ամուսնու սերն ու կարողությունը մի կողմից, հոգսերը մյուս կողմից՝ (երե-
խաների ու տան ծերերի), չարաչար մաշում են նրան, ուստի նա
զանգառվում է երգելով.

Նոր է բացվեր կարմիր վարդի տերևը,
Կրակով է լեցվեր սրտիս վերևը,
Քաշածներս ալ չեն քաշեր լեռները,
Ցավերս ալ պատմեմ կուլան քարերը:

150

Նահապետական կենցաղում հայ կիրնը զրկված է ամուսնու քաջակայության ժամանակ տանից դուրս գալու իրավունքից, ուստի ամուսնու նյանդիտության գնալուց հետո փակվում է, մահովը ձեռքն առնում ու երգում.

Քարթնն եմ սաղեր, մտեր եմ մեջը,
Նարս եմ ղրկեր, քսանիս մեջը
Եթիմ տի վննծցնեմ ես ասկից վերջը:

268



Հայրենի օջախից հեռանալիս պանդուխտը մեծ ակնկալություն ունի, նա անընդհատ մտածում է այն մասին, որ շատով, շատ շուտով, պանդխտավայր հասնելուն պես, կամ փող



պիտի ուղարկի տուն, կամ շուտով իր աշխատանքի վաստակով պարտքերը թեթևացնի: Ընդհանուր առմամբ պանդխտության մեկնողները դառն փորձից գիտեն, թե ի՞նչ է սպասվում օտարության մեջ, բայց պանդխտությունը շարիքներից փոքրագույնն է, ուստի որոշ ակնկալություններով մեկնում են օտարություն, հույս ունենալով, որ բանվորության մեջ կամ մշակության մեջ կկարողանան փող վաստակել, որով և հնարավորություն կունենան ընտանիքի հոգսերը հոգալ՝

Էրթամ Ըստամբուլ,
Դատիմ փարա բուլ,
Իմ յարի խամար,
Առնեմ ջուխտ մի սոլ:

11

Փող վաստակելու մտքով տարված, պանդուխտը մի պահ մոռանում է թե ի՞նչ է սպասում իրեն օտարության մեջ, սակայն հայրենի հողից կտրվելուն պես, դեռևս ճանապարհին նախազգույն է վերահաս վտանգն ու դառը ճակատագիրը: Հետաքրքրական են պանդուխտի այս վիճակն արտահայտող երգերը՝

Ժամ ժամ դիմ զարիպութինս
Ես յիշեմ, ու նստիմ ու լամ.
Ճապղել եմ ջրի նման,
Ի յօտար երկիր կու գնամ:
Աստուած գիտէ ան ճանփան,
Ուր երթամ, կամ ուր տի մնամ:
Ո՞վ կապէ խաչն իմ սրտիս,
Կամ հողվարք, որ ես դուրանամ,
Յորեկն եմ նետի նման,
Ուր նետեն, ես ի հոն կենամ.
Գիշերն աղեղան նման՝
Ես լարթափի ի վար կու մնամ:

32

Պանդուխտի վիճակը օտարության մեջ. — Պանդխտության երգերի երկրորդ մոտիվը, դա պանդուխտի նոր միջավայրի նկարագրությունն է, այն նոր ու խորթ աշխարհը, ուր ընկել է թշվառ գյուղացին: Այս երգերում արտահայտություն են գտել պանդուխտի

գանգատը դառն ճակատագրից, իր թշվառ կացությունից, հասարակական վերնախավերի արհամարհանքը պանդուխտի նկատմամբ, դեպի այն մարդը, որը տարիներ շարունակ իր հողի, արտի վրա աշխատել, հալալ վաստակով ապրել է, սակայն դառն ճակատագրի հարվածներով այժմ շարտվել է օտար աշխարհ:

Պանդխտության երգերի այս տեսակի մեջ արտացոլվում է աշխատավորի շահագործումն ու կեղեքումը պանդխտավայրում: Նա փախչելով վաշխառուից, հարկից ու տուրքից, ընկել է ավելի անօրենի՝ գործարանատիրոջ կամ կապիտալիստի, վաճառականի կամ առևտրականի ձեռքը և անխնա կեղեքվում է:

Ուշագրավ է, որ միջնադարյան դարիբույժյան անտունիների մեջ չի զգացվում սուր ատենությունն ու հակադրությունը դեպի քաղաքը, ընդհակառակը, քաղաքն այս երգերում դիտվում է որպես «դրախտավայր», «ավետյաց երկիր»: Վաղ շրջանում պանդխտում էին սակավաթիվ մարդիկ, գլխավորապես վաճառականներ: Իսկ ավելի ուշ շրջանի, հատկապես XIX դարի պանդխտության երգերում արտահայտվում է պանդուխտի հուսախաբությունը քաղաքից, նրա երգերում էլ արտահայտություն է գտնում ատենությունը դեպի կապիտալիստական քաղաքը:

Այս շրջանի պանդխտության երգերում ստեղծվում է քաղաքի բացասական պատկերը. դարիբը և նրա ազգականները դժգոհում են քաղաքից, ուր ընկել է իրենց սիրելին.

Քեամբախ Բէյօղլի, պլեր Իւքիւտար,
Որ չանէր իմ եար վէր ձիկ դարբեդար...

կամ

Ղարիպը հիվանդ էր,
Ծանր կտքար
Չորս բոլորը կաշէր,
Աղգական չրկար:
Սուտ ազգական եղան,
Հարցուցին հալը,
Կուղէին ուտէին
Ղարիպի մալը:

51

Կ. Պոլսի ու Իզմիրի խաների մոլթ անկյուններում, Բաքվի գործարանների գորշ ու ժանդահոտ հանրակացարաններում, Թիֆլիսի

գաճառականների ու առևտրականների դռներին, կամ Եվրոպայի ու Ամերիկայի փողոցներում օր հացի կարոտ թափառում է, մաշվում, հյուժվում հայ պանդուխտը, անօգնական ու մենակ, խռանց հաթաղատի, առանց աղգականի՝

Ղարիպ եմ ու խիստ լալի,
Յայս օտար երկիրս որ եկի՛:
Ոչ հայր, ոչ եղբայր ունի՛մ,
Ոչ ունիմ սրտով սիրելի...

50

Պոլսում՝ ջրկիր ու ծառա պանդուխտները, Թիֆլիսում՝ մշակները, Բաքում՝ նավթարդյունաբերության բանվորները, աշխարհի գանազան անկյուններում թափված նժդեհները, տարիներ շարունակ, երբեմն 20—30 տարի աշխատում էին քրտինքի ու կեղտի մեջ, աննշան վարձատրությամբ: Նրանք չէին արժանանում անգամ իրենց վաստակի նվազագույն բաժինը վայելելու բախտին, տրված հացն էլ քթից էին բերում, վիրավորելով նրա խնրաժախտությունն ու արժանապատվությունը: Չափազանց բնորոշ է այս տեսակետից հետևյալ քառյակը՝

Խարիպ ուր որ կերթար
Դուռին կը գոցեն
Կտրը մը հաց կուտան
Սիրտը կխոցեն:

35

Անտանելի էին ստորերկրյա անցքերում աշխատող պանդուխտ բանվորների աշխատանքի պայմանները: Արեաղուրդ և խոնավ, նավթահանքերում մաղութի ու ցեխի մեջ, բրիչը ձեռքին՝ հանքափորը անվերջ հատում էր երկրի կուրծքը, մաշելով իր կյանքը և քայքայելով առողջությունը:

Պոլսի ու Թիֆլիսի մշակներն էլ տարիներով մեջքները կքած անտանելի բեռների տակ կորանում էին, երկու տակ դառնում:

Բանվորները բանվորական կացարաններում, մշակներն ու ջրկիրները խանների անկյուններում ապրում էին աննկարագրելի պայմաններում, ցուրտ, կեղտոտ, մութ, խոնավ, առանց անկողնի, առանց խնամակալի: Բնականաբար այդպիսի պայմաններում հի-

վանդություններն էլ ավելի հաճախ էին այցելում նրանց: Անհրա-
ժեշտ բժշկական օգնության ու սննդի պակասը մի կողմից, հարա-
զատների խնամքի բացակայությունը մյուս կողմից, հիվանդին
կարճ ժամանակում հասցնում էին մահվան դուռը:

Ղարիպը պառկել ա անճար կտնրայ,
Հէր ու մէր շի կայ, որ հոգսը հոգայ,
Քարերը հօրղանն են, ֆողը դօշակ,
Քարց ու բալիշ շունի նա իր գլխի տակ:

45

ՆՅն պանդուխտը ֆիզիկապես չէր էլ մեռնում, ապա միան-
գամայն հյուժվում, մաշվում էր, դառնում աշխատանքի անընդու-
նակ, և այս բոլորը կատարվում էր շատ կարճ ժամանակամիջոցում:
Ցերեկվա հոգնատանջ աշխատանքից հետո պանդուխտը մտնում էր
ապականված խանը, ուր մի քանի հարյուր հոգի միասին էին գի-
շերում:

Ազատ լեռների ու ընդարձակ դաշտերի մաքուր օդում մեծա-
ցած գլուղացին չէր կարող դիմանալ քաղաքի ապականված օդին՝
ու պայմաններին, և կորցնելով առողջությունը, անօգնական ու ան-
ճար, պիտի երազեր իր հարազատներին՝

Ղարիպ եմ, տեղըս քար ա,
Ղարիպն, էդ ի՞նչ անճար ա
Վախում եմ զարիպ մեռնեմ,
Անագէ հողը մըտնեմ:

44

Թշվառ պանդուխտի ծանր վիճակի ու ապրումների լուռ վկա-
ներն են նրա գրած նամակները, որոնք չափազանց հուզիչ ու սրտա-
ռուչ են: Այդ նամակներում պանդուխտն արտահայտում է իր դժգո-
հությունը աշխատանքի ծանր պայմաններից, և գանգատվում մե-
նակությունից: Նահապետական ընտանիքի որդին ընկնելով օտա-
րության մեջ, այրվում է հարազատների կարոտով: Բերենք այդ
նամակներից մեկը.

«Իրիկուն խաց պիտի ուտեմ, կիրիշկեմ չորս պիւլորս, ինկեր
չունեմ, ախպեր չունեմ, խեր չունեմ, մեր չունեմ, տղա իսկի չկա:
Սև դեղ աշիւս կրողի պես կերեմ. սարեր, ձորեր բերան բացեր, պի՞օ

կպոռան վերես. վայ մերիկ, կարիպ ընկեր եմ ես, վի՛րն ասեմ իմ
ցավ ու կսկիծներս. անտեր մնացի ես, կուլամ իմ կանաչ ու կտրիշ
արես: Հմեն մարդ խաց կուտի, ես լերդ ու լեղի. ձեր սեր կյիշի
սիրտս կիրիցի. կարիպ մնացի, ահ, կարոտ մնացի»¹:

Օտարության մեջ պանդուխտի մենակությունն ու անճարու-
թյունը արտահայտվում են ոչ միայն նամակներում, այլև այն եր-
գերում, որոնք հորինում են պանդուխտները օտարության մեջ.

Ղարիպ եմ, զարիպ զուշ եմ,
Ղարիպ յերկրի զիւշ եմ,
Մտնիմ տուն՝ մեր չկայ,
Յեւեմ դու՛ չօլի զուշ եմ:

46



Հայրենիքի սերը. — Քանակով համեմատաբար քիչ, բայց բո-
վանդակությամբ խորն ու տպավորիչ են հայրենասիրական մոտիվ-
ներով պանդխտության երգերը: Հայ աշխատավոր գյուղացին, թե-
պետե սրտանց սիրել է իր հայրենիքը, բայց կարիքի ու սովի ճի-
ւաններից խուսափելու համար նա դիմել է օտարություն: Հայրե-
նիքից հեռանալուն պես նա զգացել է, որ թուլանում է իր ոտքի տա-
կի հողը: Բնորոշ է այս տեսակետից հետևյալ երգը՝

Ես շեֆթալուի մորճ մ'էի,
Ապառաժ քարը բուսնէի.
Եկին, քաշեցին, տարին,
Զիս այլոց այգին տնկեցին,
Շէքրէն ալ շէրպէթ արին,
Ու բերին ինձի ջրեցին.
Եկէք, զիս տեղըս տարէք
Ու ձնան ջրով ջրեցէք:

27

Հայրենիքի կարոտով տոշորվող պանդուխտը վստահ է, որ իր
վաթանի ձյան ջրով ավելի լավ կաճի, քան օտարի շաքարաջրով:

1 Ա. ր. Տ հ կ ա ն ց, Պանդուխտ վանցին, Կ. Պոլիս, 1876, էջ 11.

Հայրենիքի սերը զուգակցելով հաբաղատների կարոտի հետ,
այրում են զարիբի սիրտը: Դիմելով կոռնկին, նա ասում է՝

Կանչէ կոռնկ կանչէ,
Տակըդ կանաչ է,
Աշխրբի արեգակը,
Ինձի դուման է:

Կանչէ, կոռնկ կանչէ,
Քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը
Գունտ-գունտ արուն է:

33

Հայրենիքից հեռու, օտարութեան մեջ գտնվող պանդխտի համար՝ սիրելի, թանկագին է երկրից եկող ամեն մի թղթի կտոր, ամեն մի «խարրիկ»: Նույնիսկ հայրենիքից փչող քամուց, երկնքից սլացող թռչունից է նա ուզում տեղեկություն ստանալ իր ընտանիքի, որն է լուր՝ իր վաթանի մասին: Հատկապես կոռնկը եղել է տառապած ու հայրենաբաղձ զարիբի լավագույն բարեկամը, նրա սրտի սուրհանդակը: Կոռնկի միջոցով է նա հայրենիք ուղարկել իր ապրումներն ու կարոտի զգացումները:

Կոռնկը հայկական ժողովրդական բանահյուսութեան մեջ հանդիսանում է գարնան կարապետը, բարի լրաբերը, և պատահական չէ, որ պանդխտը կոռնկին է դիմում հայրենիքից լուր ստանալու համար:

Հայրենիքի, վաթանի սերն ու կարոտը առանձին հուղականութեամբ ու զեղեցկութեամբ արտահայտված են հայ ժողովրդի ամենախորված երգերից մեկի՝ հանրահայտ «Կոռնկ»-ի մեջ¹:

1 «Կոռնկ»-ի մասին մինչև օրս եղած կարծիքներից մեզ հայտնի են երեքը: Հայ բանասերներից ոմանք գտնում են, որ «Կոռնկ»-ը Նահապետ Քուշակի գրչին է պատկանում, և, որ մինչև այժմ իբրև այդ երգի հեղինակ ճանաչված անձինք նրա ընդօրինակողներից են եղել (Հայրենիք, Երզրան, Բոստոն, 1908, էջ 304): Ոմանք էլ կարծում են, որ «Կոռնկ»-ը Մկրտիչ Նաղաշինն է («Արձագանք», 1893, № 18): Կան բանասերներ էլ, որոնք «Կոռնկ»-ը ժողովրդական երգ են համարում: Մեր կարծիքով վերոհիշյալ տեսակետներից ոչ մեկն էլ ճիշտ չէ: Ամենից առաջ «Կոռնկ»-ի լեզուն ու ոճը ոչ Նաղաշին է նման, և ոչ էլ Քուշակին: Քուշակին վերագրած երգերը ոչնչով չեն առնչվում «Կոռնկ»-ին: «Կոռնկ»-ը Նաղաշի գրչին էլ չի կարող պատկանել, որովհետև նրա զարիբի երգերը հորինված են բոլորովին այլ շափերով: Ինչ վերա-

Կոռունկ՝ ուստի՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ.
Կլոռունկ՝ մեր աշխարհէն խարրիկ մի շունի՞ս:

Հայրենիքի կարոտը մաշում ու տանջում է պանդուխտին, նա
դիմելով կոռունկին, ասում է.

Թողեր եմ ու եկեր իմ մլըքերս ու այգիս,
Քանի որ ախ կանեմ, կու քաղվի հրգիս.
Կլոռունկ՝ պահ մի կացիր, ձէնիկդ ի հոգիս:

Պանդխտի հոգին քաղվում է, որովհետեւ նա իր հողը, այգին,
տունը, արտը թողել է ու այժմ ընտանիքից հեռու խորովվում է
օտարութեան ու թշվառութեան մեջ, պանդխտավայրում, խաների
պատերի տակ ձեռնունայն ու ընչազուրկ: Նա մխիթարութեանը
գտնում է կոռունկի մեջ, և աղերսում նրան, որ նամակը տանի հա-
ցընի իր սիրելիներին: Վերջում զայրանում է խեղճ պանդուխտը նրա
համար, որ կոռունկը իրեն պատասխան չի տվել՝

Ինձ պատասխան չի տուիր, ելար գնացիր,
Կլոռունկ՝ մեր աշխարհէն գնա հեռացիր:



Կարոտ, սեր և սպասում.— Գորովագութ մոր կարոտը առ իր
սիրասուն զավակը, համեստ ու ազնիվ կնոջ ջերմ սերը գնպի իր
ամուսինը լայն տարածում են դտել պանդխտութեան երգերում:
Պանդուխտն օտարութեան մեջ զգում է իրեն մենակ, և կարոտ տա-

քերում է «Կոռունկ»-ի ժողովրդական լինելու խնդրին, սա ևս հեռու է հավանական
լինելուց: Ծիշտ է, մեր բանասիրության մեջ ժողովրդական ստեղծագործության գո-
հարներ ունենք, սակայն և ոչ մի ժողովրդական երգ չունի «Կոռունկ»-ի ձևն ու շարժը:

Մեզ թվում է, որ «Կոռունկ»-ը անհատական ստեղծագործություն է, ունեցել է
իր հեղինակը, բայց որովհետեւ իր բովանդակությամբ ու թեմայով շատ ու շատ մոտ
է եղել ժողովրդի սրտին, ուստի վերջինս յուրացրել, սեփականել է այն՝ ավելաց-
նելով, փոխելով ներկայացրել իրեն ժողովրդական երգ՝ ժամանակի ընթացքում
տալով մի շարք տարբերակներ: «Կոռունկ»-ի տիպի, ծագումով անհատական, բայց
ժամանակի ընթացքում իրենց հեղինակին կորցրած և ժողովրդականացած ստեղծա-
գործություններ են նաև մեր աշխատության ժալելվածում զետեղված պանդուխ-
տության երգերը (Մ. Մ.):

ծում դեպի հարազատները: Նա մտնելով նոր ու խորթ աշխարհ, իրեն
զժբախտ է զգում, խաների մութն ու խոնավությունը, նորեկների
անտարբեր հալացքներն ու սառնությունը խեղճ պանդուխտին հու-
սահատեցնում են և նա զգալով իրեն մենակ, երգում է՝

Ամեն հավն յուր ընկեր գտեր,
ճա եմ մոլորեր,
Ամեն քարն յուր տեղն դադրեր,
Ճա եմ զլորեր...

56

Սիրո, կարոտի և սպասումի մոտիվներն հաճախ հանդես են
գալիս միաձուլվել մի բան, որ բնորոշ է պանդխտության երգերի
համար և կազմում է վերջիններիս առանձնահատկությունը: Սա
հասկանալի է, քանի որ պանդխտության զնացողը օտարության մեջ
կարոտ ու սեր է զգում դեպի իր կիները՝ մայրը, զավակները, և միա-
ժամանակ սպասում է, որ գործերը մի քիչ լավանան՝ հայրենիք է
վերադառնալու: Իսկ այնտեղ, հայրենիքում մնացողներն էլ սեր,
կարոտ են տածում դեպի իրենց պանդուխտը և սպասում նրա վե-
րադարձին: Կարոտի և սպասումի լավագույն օրինակ է այս երգը՝

Յաման կփրփրի Պուլխու ծովը,
Ինչ անուշ կը փըշն սեվտեին հովը,
Թէ որ տերը կամեր երթայի քովը,
Առնէի մուրատս, իյնեի ծովը:

106

Նման երգերում արտահայտվում է իրարից հեռու, բայց իրաք
տաժած կարոտի և սիրո ջերմ զգացմունքը: Այս տեսակետից ավելի
աշագործ են հետևյալ երկու քառյակները՝

Բամբակ եմ ցաներ խարբերթի ուլան,
Բիւրիւլ մի փլցուներ ձագերուս եռւլան,
Տուն էկո, տուն էկո, սիրածս, տուն էկո.
Արմաղան պետքը չէ, արեդ առ էկո:

Գոգնոցս ներկեր եմ կենջու տորոնով,
Արտիկս լցվեր է գունդ գունդ արիւնով.

Սիրած, աղբիւր շինե, ես գամ ջուր խմեմ,
Ընքվեբդ սե դար արա, ես վրան թառեմ:

77

Սիրածը այնքան է կարոտել իր յարին, որ "ոչինչ պետք չէ
նրան, միայն թե իր յարը տուն գա:

Առանձնապես բնորոշ է սիրո ու կարոտի ներքոհիշյալ երգը՝

Գիշեր ցորեկ հեշ չես ելեր մտացս.
Գլխս բարձ դնիմ, կուգաս երազս,
Հերամ արիւր կերած հացս, խմածս,
Աշխարքին չես փոխիւր իմին սիրածս
Աճապ օր տըլլա առնիմ մուրատս:

Խալեմքեր պիտեի, քեսֆեթ առնեի,
Քանի կարոտնայի, վրատ նայեի.
Պեքի ես ալ քենե արզուս առնեի:

Գարնան պիլպուլի պես պաղճան կիշնեանք,
Թե թեի կուտայանք, չիֆթ ժուտ կու գայանք,
Երկիր կու հավասեր զատուիլ շունեանք:

Ջարկիր կրակ տվիր, կերիմ կու վառիմ,
Ջրի պես ծարվցեր՝ ճանրատ կու նայիմ:

83

Սիրո, կարոտի և սպասումի զգացումների միասնության այս
հրաշալի օրինակը միաժամանակ արտահայտում է երկու սիրող
սրտերի հուշերի վերապրումը:

Ե՛վ պանդուխտը, և՛ նրա կինը հավասարազոր երգեր են
հյուսում.

Թուղթ կը գրեմ գյուրջի կալմով,
Քեզ կողորկեմ կուշի թեով
Դու քյաֆուր վարդ, ես էլ բյուլբյուլ
Գիշեր ցորեկ մընամ ահ ու զարով:

Քեզ կողորկեմ դուղա սալամ,
Թող իմանա աշխարհ ալամ,

Թե շատ մընաս, թե քիչ մընաս,
Ա՛խ, կարիք եար, սիրուդ կուլամ:

165

Սերն ու կարոտը այնքան են միաձուլված, որ թե՛ պանդուխտը,
և՛ թե նրա կիներ հորինում են այնպիսի սիրո երգեր, որ դժվար է
որոշել պանդո՞ւխտն է երգում, թե՞ նրա կիներ:

Դեռատի կիներ ամուսնո՞ւ պանդխտության գնալուց հետո տնից
դուրս չի գալիս: Տանը նստած, կարոտը սրտում, անդամաճան իր
սիրուն, սպասում է ամուսնուն, և խնդրում նրան չմոռանալ կնոջը:

Երկինք որոտաց, դողաց,
Աստղն իսկի ի տեղն չմնաց,
Իմ յար, երբ յիսնե ելար,
Բյուր հազար ծաղկունք ի հտրաց.
Գրեմ ես բարակ թղթիկ,
Ուղարկեմ շատ պատգամ ի լաց.
«Որտեղ ես՝ բարով կացիր.
Զքո սիրած եարըդ չմոռնաս»:

100

Երիտասարդ կիներ տարիներ շարունակ անդամաճան ու հավա-
տարիմ սիրում ու սպասում է ամուսնուն: Նամակի ուշացումը, կամ
ամուսնու լուրթյունը նրա մեջ կասկած են առաջացնում, չլինի՞
խռովել է, չլինի՞ նոր յար է ճարել, իրեն մոռացել:

էրեկվա լուսին, էս ավուր արե,
Մեր դրոնեն ընցար, չը տվիր բարե.
Մաշտենք խռով իր չը տվիր բարե,
Թե ձիկ թարկ արիր, ուրիշն ես կընդե:

էսօր լըսեր եմ, քո գեոն փոխեր ես,
Ինձի թողեր ես, քեզ եար ճարեր ես.
Աստված մութարաք, բարով վայելեա,
Իմ մեղաց դիմաց մընաս սեերես:

103

Եղել են նաև դեպքեր, որ պանդուխտը դամաճանել է կնոջը,
այնտեղ ուրիշ կին է առել, բայց, այստեղ կիներ անդամաճան

սպասում է իր ամուսնուն, թեկուզ և կասկածում ու տանջվում է։
Հայ կնոջ համար չկա ավելի առաքինի բան, քան իր բարոյականու-
թյունն ու պատիվը, պատահում է, որ պանդուխտները 15—20 տա-
րի մնում են օտարության մեջ, սակայն կինը փակված սպասում է
նրան՝

Տարին տասներկու ամիս,
Նեխեցավ խնձորն ի ծոցիք,
Ոչ խնձորիս տեր ելավ,
Ոչ եկավ մարդըս սիրելիս։

61

Եվ խեղճ կինը երկար սպասելուց ձանձրացած՝ այժմ դժգոհում է,
որ ամուսինը տասներկու տարի է գնացել է, բայց չի վերադառնում
և որ իբր նա ծովով անցնելու հնարավորություն չունի, ահա կինը
խոստանում է թևերով կամուրջ կապել՝

Տարին տասներկու ամիս,
Դուն ծովուն քովը կու կենաս,
Մովը մահանա կանես,
Իս քենե հասրաթ կու պահես։
Թևերս կարմունջ կապեմ
Մովու վրայնն անցնիս գաս։

66

Պանդխտից որևէ իր կամ առարկա հիշատակի համար պա-
հելը եղել է տարածված մի սովորություն, կարծես թե կինը կամ
մայրը այդ թողած իրից են իրենց կարոտն առել։ Ամուսնու հե-
ռանալուց հետո էլ, նրա նկատմամբ ունեցած սերն ու կարոտը ստի-
պել են կնոջը՝ մի հիշատակ, մի նվեր խնդրել պանդխտից։

Մենտիլդ աղտոտ է
Ղրկե վլանամ,
Դընեմ սև աչերուս,
Պառկեմ քնանամ։

147

Պանդխտության երգերում կան նմուշներ էլ, որոնք արտա-
հայտում են զարիբի անհավատարմությունը կնոջ նկատմամբ։ Կինը

զժգոհ է, որ ամուսինը մոռացել է տունն ու երեխաներին, ամուսնացել է ուրիշի հետ, և վերադարձի մասին էլ չի մտածում:

Օխտը տարի կանն իզմիր ես գացեր,
Իզմիրի շուրքը թիւքէն ես բացեր.
Ջեռացտ թղթիկն ալ խնշո՛ւ ես մոռցեր,
Ստ տեղացը եարուն քուրք ես հագուցեր,
Քու էօքսյուզ եարիկո՛ւ շաւ ես լացուցեր...

158

Պանդուխտի հաբազատները գնացող եկողից խնդրում են մի լուր բերել իրենց սիրելիից.

Ջուրն իլաւ երես երես,
Բազրկյան, աստված սիրես,
Երբ որ գնաս Շորագյալ,
Ղարիբ յարս հետդ պիրես:

164

Ոչ միայն գնացող եկողներից են խնդրում լուր բերել իրենց դարի-բից, այլև բնության այս կամ այն տարեբքին են դիմում՝ հովերին, քամուն, արեւին և այլն.

Փչեցեր հովեր, սարեր ձուն բերեր,
Իմ դարիբ եարս առեք տուն բերեր,
Հենց արեք, որ դուք էս ըրիգուն բերեք,
Անքուն աչքերիս քաղցր քուն բերեք:

179

Ինչպես գիտենք, աշխատավոր գյուղացին գնում էր պանդըխտության, փող, հաց աշխատելու համար, նրա բնտանիքը չնայած կարիքի մեջ էր, կորել էր պարտքի տակ, սակայն կարոտի զգացմունքը հաղթում է կարիքին: Նրա հաբազատները՝ մայրը, կինը լուր են ուղարկում, որ պետք չէ բերածը, միայն թե ինքը առողջ վերադառնա.

Տուն էկո, տալիան տղաս, տուն էկո,
Արմաղանդ պետք չէ, տարածդ առ էկո:

186

Պանդխտի մայրը շատ ծեր չէ, բայց կարոտից ու վշտից
մազերը սպիտակել են, քանի որ «ձագը» չկա՝

Արցունքս է կուրեր դրանը սալը,
Գացեր է դեմքիս կարմիրը ու ալը,
Պաղչալիս բոլորը վարդ եմ բուսցուցեր,
Ապառաժ իմ կըլեր ջուր իմ վազցուցեր,
Ես ալ իմ սիրելի ձագն եմ կորուսեր,
Անոր համար կու պտըտիմ սար ու ձոր...
Սար ու ձոր մութ կոխեր աշխրբիս վրա
Աշխրբին արեւ իմ ձագուն վրա:
Յոթը տարի կանն ձագ քեզ ատեր եմ,
Էօմըս ուղորիդ մախիր արեր եմ:
Այս գիրս ալ արցունքներովս գրեր եմ,
Առնես այս գիրը, ձագ, դուն սիլա գաս:

75

Այս կարգի երգերում կա նաև պանդխտի ընտանիքի անհրա-
պույր կյանքի ծանր կացության նկարագիրը: Անգութ պարտքատերն
ու վաշխառուն նեղում են պանդխտողի անօգնական կնոջը՝

Գիշեր ցորեկ հիշ չես ելար մտացրս,
Գլուխս բարձ դնեմ կուգաս դիմացրս,
Աղու ըրիր, ըմմէն օրվան կերած խմածըս:
Կուլամ, ողորմած տէր, աս ընտո՞ր բան է,
Պարտեկանն ալ եկեր՝ տընեն կը հանէ:

71



Պանդխտության երգերը բաղմարովանդակ են: Նրանք միայն
լաց, թախիծ, թշվառություն, կարոտ ու սեր չեն արտահայտում,
այլ նրանց մեջ կան նաև կենցաղային այլ մոտիվներ ու արտա-
հայտություններ:

Հայտնի է, որ պանդխտության դիմում են մեծ մասամբ երի-
տասարդները, որոնց մի մասը ամուսնացած է, կին, երեխա ունի, իսկ
շատերն էլ կամ ամուրի են կամ նոր նշանած: Նշանված պանդուխ-

տը տարիներ առաջ գնացել է, վերագարձի հույսը կորցրած, նշանածի ծնողները չկամենալով դժբախտացնել իրենց աղջկան, ամուսնացնում են ուրիշի հետ, հաճախ այդ կտաւարվում է անկախ աղջկա կամքից:

Պատահում են ղեպքեր էլ, որ երբ աղջկան ամուսնացնում են, հանկարծ, անսպասելի վերագառնում է նշանածը՝ պանդուխտը.

Ղարիբ երկիր ման եկած,
Ջանիդ մեռնեմ բեղարած,
Մի ոտը որ շուտ գայիր,
Ինձ չէիր տեսնի տարած:

251

Բախտավոր են այն ընտանիքները, որոնք շունեն պանդուխտ: Դրանք երջանիկ բացառություններ են, սակայն, պանդխտության «ուղտը» վաղ թե ուշ նրանց դռանն էլ է չոքելու.

Ես ալ խարիպին ձանը,
Կառնէի նը՝ կարմննայի,
Եկաւ իմ գլխակա ելաւ,
Կողորմիմ ամեն խարիպի:

229

Պանդուխտների մի փոքր մասը, որպես բացառություն, վերագառնում է հայրենիք, իսկ մեծ մասը մնում և կորչում է օտարության մեջ:

Վերագարձած պանդուխտը մի կողմից ուրախություն է պատճառում իր հարազատներին, մյուս կողմից էլ ղարիբ ունեցող շատ ընտանիքների կարոտի բորբոքման ու տխրության առիթ է հանդիսանում: Պանդուխտ ամուսնուց լուր չստացած, կարոտից տոչորված կինը այսպես է երգում.

Այվանը կելլամ, ցուրտ է, կու մրսիմ,
էլին եարը կու գա, ես կու հավասիմ,
Տերը հոգիս ալ չառնեք, մեռնիմ, խալսիմ:

150

Սուգ ու քաղում.— Երջանիկ են համարվում այն ընտանիքները, որոնց պանդուխտը մեռնելուց հետո գոնե բերվում է հայրենիք: Հիվանդ վիճակում պանդուխտը երազում է մեռնել հայրենիքում, ողջակիզվել իր սիրո ու յարի համար, թաղվել նրա դռան...

Ինձի տարեք եարիս գոնեն անցուցէք,
 Ծարաներս բացեք, քաջիւր եարիս ցըցուցէք:
 Մատվներս կտրեցէք, մոմ էրէք վառեցէք,
 Ավազը խոնկ էրէք, վրաս ծխեցէք:
 Ինձի տարէք, եարիս գուռը թաղեցէք:

200

Պանդուխտի համար մահը բոլորովին էլ պատահական չէ, այլ անխուսափելի մի բան: Նրանք ամեն օր տասնյակներով մեռնում են օտարության մեջ, իջևաններում, բանվորական կացարաններում, բայց նրանց համար ավելի անտանելին անթաղ մնալն է, կամ օտարության մեջ թաղվելը, ուստի բավական շատ են պանդուխտության սգո և թաղման մոտիվներով երգերը.

Ծաման, եաման, իս Ուսկուտար անցուցէք,
 Մե ծովը ճեղքեցէք, ճամբան ցըցուցէք,
 Տարէք իմ մոր դրոնակ, վար դրեք, պոհ մի լացէք:

186ա

Օտարության մեջ գտնվող պանդուխտների նկատմամբ արհամարհանքը այն աստիճան ուժեղ էր, որ երբ նա մեռնում էր, երկար ժամանակ անթաղ էր մնում: Չնայած եկեղեցու գանձարանը նրանք կատարած մոծումներին, հաճախ եկեղեցին անգամ հրաժարվում էր թաղել պանդուխտներին: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ ժամանակի մամուլը՝ «եկեղեցին կմերժեր դազաղ մը, քահանա մը, աղոթք մը, ափ մը հող տալ այդ դիակին: Մեռնողը զոջացող մեղավոր մըն էր, եկեղեցին օրենքները ոտնակոխ ըրած էր, եկեղեցին մերժված մըն էր, նդովյալ մըն էր, ոչ, ասոնցմենէ ավելի գեշ բան մըն էր. — աղքատ մըն էր, ու աղքատներուն ալ էն գեշ տեսակեն էր. — զարիբ մըն էր»¹:

¹ «Հայրենիք», 1892, № 169.

Այսպիսի վերաբերմունքի հետևանքով էր, որ հաճախ պանդուխտ մեռելները մի բանի օրով անթաղ էին մնում, և այս երեւոյթն իր արտահայտութիւնն է գտել պանդխտության երգերում.

Եկին ու բերին խապար,
Չեօլ խուրպեթ մանուկ մէ մեռեր:
Մեռեր, մարդ չէ իմացեր,
Իրեք օր խանն է մնացեր...

192

Սրա համար է, որ պանդուխտը երանի է տալիս սարերին, որոնք ջուր չունին, բայց կանաչ գույն ունին, ոչ մեռնում են, ոչ օտար երկիր գնում՝

էրնէկ կուտամ ձեզի, սարեր,
Ջուր չունիք՝ կանանչ գունաք,
Ոչ մահ ունիք, ոչ մեռանիք,
Ոչ զարիպ էրկիր կըզընաք:

31

Սրտաշարժ են այն երգերը, որոնք արտացոլում են պանդուխտի հարազատների հոգեվիճակը, իրենց որդու մահւման գույժն ստանալիս:

Հայրենիքում ընտանիքը մեծ հույսերով սպասում է պանդուխտի վերադարձին, կամ նրա օգնութեանը, և հանկարծ դրանց փոխարեն դարիբի մահւման սև գիրն են ստանում.

Պաղճըսանը պառկեր, քունը տարեր է,
Խոռիյաթը եկեր, վարդը քաղեր է,
Փոստան եկեր քեզի խապար բերեր է,
Ասօր քու սիրական որդիտ մեռեր է,
Մեռեր ու չէ հասեր սրտին մուրատին:

211

Խելակորույս մայրը չի հավատում, որ որդին մեռել է, նա չի հաշտվում այն մտքի հետ, որ այլևս չի տեսնելու նրան, չնայած արդեն ստացել է «սև գիրը».

Եկիք նէ բարով եկիք,
Իմ որդիէս խաբրիկ մի բերի՞ք,

33

Խաբրիկ մի գալուն բերէք,
Աչերս լալուն կըտրի,
Սրտիկս թալկաւելուն:
Իմ որդեկս չէ մեռեր,
Սուրբ Յակոբ ուխտ է գնացեր
Ինչ վարդ կա՝ գլխուն է դրեր,
Մանուշկին հոտոյն է քնացեր:

194

Պանդխտի մահը առհասարակ մեծ ողբերգություն է հարա-
զատների համար, մանավանդ որ նա մեռել է հայրենիքից հեռու,
օտարութեան մեջ.

Ինչո՞ւ դու խաբրիկ մեռար,
Ուր տուին հողտ դրամով
Եկու դուն սիրայ մեռիք
Ուր տալի հողդ քիւրեկով.
Խաբիկ մեռար, խաբիկ թաղեցին,
Խաբիկ տուին հողին վերևուն:

202

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԻ ԱՐՎԵՍԸ

Պանդխտութեան երգերը ժողովրդական երգերի մյուս տեսակ-
ների մեջ աչքի են ընկնում իրենց հատուկ հուշականութեամբ:

Եթե աշխատանքի երգերի համար էականը ուրիշ է, կրկնակն
ու կանչը, ապա պանդխտութեան երգերին հատուկ է լիրիզմը, հու-
շականութունը, դրամատիզմը:

Պանդխտութեան երգերը հուզիչ են և սրտառուչ: Հաճախ մի
քանի բառով կամ մի քառյակով պանդուխտը կամ նրա հարազատ-
ները արտահայտում են իրենց հոգու վիճակը, զգացմունքները:

Կան պանդխտութեան երգեր, որոնք արտահայտում են պան-
դուխտի, կամ նրա կնոջ հոգեկան ներքին աշխարհը.

Ընկալ թաղէ թաղ, ես թուղթ ճարեցի,
Շողշողան մատներս դալամ արեցի,
Աչքիս արտասունքը թանաք արեցի,
Սրտիս դարդերը մեջը գրեցի:

Գրեցի, ասի հալս իմացիր,
Ես կարմ չեմ, էլ դու դիմացիր,
Իմ կողմանէ դուն խիալով կացիր,
Ես քիչ գրեցի, դուն շատ իմացիր:

Գրեցի, ասի ամենին տեր կայ,
էդ քու սրտումը էդ ինչ թաւոր սէր կայ
Ինձ հմա ոնչ լիս, ոնչ էլ քշեր կա,
Ես խորոտ եղնիկ, ինձի տէր չկայ:

Ասի, ամեն հաւ իր բունը մտավ,
Ամենն էլ իրեն հնգերը գտաւ,
Մենակ ես եմ, ախ ես, մոլորված,
Ես մարմառ քար եմ, տեղից գլորած:

107

Այս երգն արտահայտում է մարդու ներքին հույզերն ու մտորումները, նրա հոգեկան տվայտանքները: Մա լիրիկական երգի մի լավագույն նմուշ է, որը կարող է վերաբերել և՛ պանդխտին, և՛ նրա կնոջը...

Պանդխտության երգերի համար հատկանշական է նաև դրամատիզմը: Հաճախ պատահում են դրանց մեջ պնպիսիները, որոնք կարծես մի փոքր դրամա են ներկայացնում, որտեղ հանդես է գալիս պանդխտի և նրա կնոջ դիալոգը. երբեմն էլ պանդուխտն ինքն է ներկայացնում այդ դրամատիկական գործողությունը՝

Ծամա՛ն, եամա՛ն, իս Ուսկուտար անցուցէ՛ք,
Սեւ ծովը ճեղքեցե՛ք, ճամբան ցըցուցէ՛ք.
Տարէ՛ք իմ մորս զրոնակ, վար գրէ՛ք, պօհ մի լացէ՛ք.
Եարուկս ալ վար իջուցէ՛ք, հիւսած ծամեր քակեցէ՛ք:
Քուրուկս ալ վա՛ր բերէ՛ք, ծարուրած աչքըն լացուցէ՛ք:

Այս բոլորը ասելուց հետո, պանդուխտը պատասխանում է ինքն իրեն.

Չըկա՛ն... չեն գա՛ր...

Անտերունչ տարէ՛ք թաղեցէ՛ք:

188ա

էս տեղ պատկելու՝ ես քունջ մը կուղեմ,
— Յորի՞.
— Երկինքն է դարիպ, գետին անծանօթ,
Ջուր-հացն է լեզի, մարդիկ անամօթ...

Դրամատիկ հետաքրքիր պատկեր է մոր ու որդու երկախոսությունը՝

Կուսակաջ է երկան գիշեր,
Ես ի քու դռնակդ եմ եկեր.
Դռնակդ ալ ի դիր տեսայ,
Ուրոյմ պարտեզդ եմ եկեր:
— Մարի՛կ, մարի՛կ դուռը բաց.
Ես ի քու որդեկդ նման:

Ապա հանդես է գալիս մայրը և պատասխանում՝

Աշուիդ իմ որդու աշուին,
Ձանդ անոր ձանը շիւմանիր.
Գնա՛ այս գեղին վերեւ.
Հէլպէթ այս գեղը խան ունի.
Պառկէ ւ անուշ քուն եղիր...

Ուշադրաւ են դրամատիկական այն երգերը, որոնք երկախոսության ձևով արտահայտում են երկու իրարից հեռու սիրող սրտերի զգացմունքները: Դրամատիզմով հագեցված պանդխտության երգի լավագույն նմուշներից է ներքոհիշյալ երգը՝

Իմ եարն է գրեր ըսեր,
Եա՛ր, եկո՛ւ զիս գողցի՛ր ու տա՛ր:
— Ինտո՛ր դամ, գողնամ տանիմ,
Ատ չէօլին ճամբեկն է դժար:
Մի՛ վախեր, եար, մի՛ վախեր,
Ես կարմունճ կապիմ քո համար...

Պանդխտութեան երգերի արվեստի առանձնահատկութիւններից է գեղարվեստական համեմատութիւնը: Այսպէս, օրինակ, մայրը իր մեռած որդուն համեմատում է մատանուց ընկած ջալահիր ակի հետ.

Ալ չեմ երթար բաղչան վարդենույն տակը,
Ինկեր է մատնիս ջէահիր ակը:

185

Ինչպէս որ մատանու ակն ընկնելուց հետո մատանին անարժեք է դառնում, այնպէս էլ որդու մահվանից հետո, մոր գոյութիւնն՝ անիմաստ:

Սիրածը, կամ ամուսինը իր կնոջը, կիսն ամուսնուն, մայրը որդուն համեմատում են բույսերի, անգին քարերի և այլ արժեքավոր իրերի հետ, կամ հրաշալի պատկերներով զարդարում սիրած էակին նվիրված երգը՝

Գոգնոցս ներկեր եմ կենճու տորոնով,
Սրտիկս լեցուեր է գունտ գունտ արիւնով,
Սիրած, աղբիւր շինէ ես գամ ջուր խըմեմ:
Հնքուերդ սև դար արա, ես վրան թառիմ:

77

Կամ սիրո աշխարհի համեմատութիւն, ինչպիսին է՝

Սէրըդ պտղունցըդ առիր,
Իմ սրտիս մէջը վառեցիր.
Կրակըդ վառ թողուցիր,
Դուն ալոց երկիր գնացիր:
Քանի դուն ալոց ալոց՝
Իմ սրտիկս է դանգատ ու խոց:

168

Հաճախ հանդիպում ենք երգերի համեմատութիւնների, որտեղ չարի խմած ջրամանը՝ թաւը, համեմատում են թանկագին քարի հետ՝

Երթած երկըրներուդ խումաշը խաս է,
Ջուր խըմած թասերդ էլմաս թրաշ է,
Չեմ գիտեր՝ ըրածըդ նիա՞ղ է, նա՞ղ է...

Մայրը գեղեցիկ պատկերներով գովում է որդուն, նրան համեմատում մարդարիտների հետ՝

Ղալամբեար չէի, որ հանէի աննման ըռանգը:

Լա՛մ, զահերու վրայ հերկ անեմ.

Արցունքովս ցօղեմ, ցավերովս ցանեմ:

Սուրբ աստուածածնայ ծոցեն մարգրիտ մի ինկեր, զին շունի:

Երնե՛կ զըտնողին, վա՛յ էկեր իտրուողին:

212

Պանդխտության երգերի մեջ բնորոշ է նաև մարդու հոգեվիճակի համեմատությունը բնության հետ:

Այդ կարգի երգերի առաջին մասը՝ բնության մը սկսվածը, երկրորդ մասի համար ծառայում է թե՛ իբրև շրջապատի նկարագիր, և թե՛ իբրև բաղդատություն: Առաջին մասում նկարագրված բնությունը ի միջիայլոց նկարագրություն չէ, այլ արտաքին աշխարհը վերցված է այնպես, որ պանդխտի սիրածի զգացմունքի հետ որոշ հարաբերության մեջ է մտնում՝

Ամպեր է գարուն կու գայ,

Սև սրտէս արին կու գայ:

Պարզ տեսնում ենք բնության երևույթի հարաբերությունը մարդու հոգեվիճակի հետ: Առաջին տողը նկարագիրն է բնության ամպոտ եղանակի. ամպեր են կուտակվել, գարուն է գալիս, գարնան հետ վարդ ու բույր է գալու, սակայն պանդխտի կնոջ սև սրտից արյուն է կաթում, նրա համար ի՞նչ նշանակություն ունի գարունը, երկնքի ամպերն ու պարզությունը, քանի որ իր յարը տանը չէ. երգի տողերը զարգանում են հետևյալ կերպ՝

Գիտեմ քի եարս տունն է,

Ձանր դուրպէթէն կուգա:

Ահա թե ինչու է սիրտը սև, և ինչու սև սրտից էլ արյուն է գալիս: Բերենք մեկ այլ օրինակ՝

Երկիւնքն է ամպե, կու կէր մարմար ձին,

Կուկնէր կը թափեր վէր մալուլ մարդուն:

Առաջին տողի մեջ պանդուխտը տեսնում է իրեն շրջապատող բնությունը, նրանից վերցնում մի էական մոմենտ, որ երկինքը ամպել է, և գալիս է մարմար ձյուն, սափայն բնության այդ նկարագիրը լրկ նկարագիր չէ, այն միաժամանակ մի համեմատություն է հոգեկան դրություն. ցավն այն է, որ այդ մարմար ձյունը գալիս, թափվում է «մալուկ» մարդու գլխին: Ապա պանդուխտն հարցնում է՝ «մեկ ես եմ մալուկ, թէ՞ աշխարհ բիթուն»:

Համեմատության հետ միասին պանդխտի երգերում ասկա է նաև գեղարվեստական հակադրությունը:

Այսպես, ներքոհիշյալ երգի մեջ պանդխտի կինը դժգոհում է, որ իր յարը զարիբ երկրում է, և աշխարհն իր համար մութ է՝

Եարբս զարիբ երկիրը
Աշխարհ ինձի հոս մութը,

ապա բնության երևույթը, ծառի ծաղկումը հակադրում է իր վիճակին.

Էլին ծառնը ծաղկեր,
Իմս՝ կարկուտնը զարկեր:

Կամ՝

Լուսունկան բակ բուրբեց,
Սեւ ամպին մէջ ոլլրեց,
Եարիս զուրպեթ էրթալը,
Եօթը տաբին բուրբեց:

62

Այս քառյակի երկրորդ մասից իմանում ենք, որ երգիչը գյուղի հարս է, թերեւս նոր ամուսնացած, ամուսինը գնացել է պանդխտության և ահա յոթը տարի է բացակայում է: Ինչպես որ լուսնյակը «բակ բուրբելով» թաղվում է սև ամպի մեջ, այնպես էլ նրա յարը «ամպամած» է, պանդխտության մեջ է, և ինքն էլ տխուր է:



Պանդխտության երգերի ոտանավորի սովորական տիպն է քառյակը, շատ հազվադեպ է եռյակը: Քառյակներն են, որ բարդվելով ու աճելով, երբեմն էլ տարբեր երգեր իրար միահեղվելով կազ-

մում են համեմատաբար ընդարձակ և ամբողջական երգեր: Այս բնորոշ է առանձնապես «անտունինների» համար: Հանդիպում ենք նաև կրկնակների, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս երրորդ տողից հետո, և երբեմն էլ առաջին տողից առաջ:

Պանդխտության երգերն իրենց տաղաչափական կառուցվածքով նման են ժողովրդական երգերի մյուս տեսակների ոտանավորի չափին: Դրանք բաղկացած են 5-ից մինչև 12—15 վանկանի նույնահանգ, զուգահանգ և անհանգ տողերով ոտանավորներից:

Հայ ժողովրդական պանդխտության երգերի լեզուն հիմնականում մեր գավառական բազմաթիվ բարբառների ու ենթաբարբառների կենդանի խոսակցական լեզուն է: Բայց կան երգեր էլ, հատկապես միջնադարյան անտունիններն ու պանդխտության այլ երգերը, որոնք գրված են միջին հայերենով: Պանդխտության երգերի լեզուն հիմնականում նման է մեր ժողովրդական բանահյուսության մյուս տեսակներին:

Ստեղծագործ և բանաստեղծ հայ ժողովուրդը, իր թախիծն ու Վիրտը, տանջանքն ու տառապանքն ևս արտահայտել է մեծ վարպետությամբ ու խորությամբ: Օրինակ «Կարիբն ի օտար ախշար» և «Մարդ որ մարդու կ'անիծի» մեջ ժողովուրդը արտահայտել է պանդխտության ամբողջ կործանարար բնույթը, նրա հետևանքով ժողովրդի թշվառությունը, այն ողբերգությունը, որը ծնում է պանդխտությունը՝

Կարիբն ի օտար ախշար,
Սիրտ նեղ, կեանքն իսպառ,
Թէ սրտի հարարաթն ասես,
Ապառաժ քեարեր կպատուի:

30

Մարդ որ մարդու կանիծի,
Քող ասի՝ կարիբանաս,
Սար քեյ սնար էլնի,
Աւաղի մէջ թիւանաս.
Թէ քեռ աշխարհ յիշես,
Ողջ անձնով էլնես ցաւագիյն:

54

Ընդամենը տաս տողի մեջ արտահայտված է ամբողջ պանդխտության էությունը: Պակաս բնորոշ չէ ներքոհիշյալ երգը, որը

դարձյալ արտահայտում է պանդխտության ողջ էությունը, ընդհանրացնելով բոլոր պանդուխտների վիճակը, բանաստեղծ-ժողովուրդը պանդխտին համեմատում է կանաչ ծառի հետ, որը չորանում է՝

Այլ ողորմ մարդ չեմ տեսել,
Քան զհարուստն որ աղքատանայ,
Ի դարիսլովին երթայ,
Հայր ու մայր, եղբայր չունենայ,
Յորժամ սիրելի տեսնու,
Նայ պահէ զերեսն ու գնայ:
Նորա օրինակ ի՞նչ բերեմ,—
Ըզկանանչ ծառն որ չորանայ.
Տերեն ալ իւրմէ թափի,
Շուքըն իւր տակէն հեռանայ:

217

Եվ իրոք, ի՞նչը կարող է ծառի համար ավելի կորստաբեր լինել, քան նրա չորանալը, տերեւներից ու ստվերից զրկվելը: Այսպես է նաև պանդխտությունը, բանաստեղծ պանդուխտ ժողովուրդի հասկացողությամբ:

Մի քանի խոսք պանդխտության երգերի եղանակի մասին: Հայ ժողովրդական պանդխտության երգերն ունեն իրենց եղանակները, որոնք հորինվել են տեքստերի հետ միաժամանակ և որոնք հիմնականում արտահայտում են բնագրի բովանդակությունը, այսինքն՝ կարոտ ու սեր, վիշտ ու տանջանք, թախիծ ու մորմոք: Այդ երգերի եղանակները արտահայտում են տխուր ու մելամաղձոտ տրամադրություններ և մեծ մասամբ մեներգային բնույթ ունեն, հակառակ սիրո երգերի, որոնք երգվում են փոխնեփոխ կամ կոլեկտիվ կերպով:

Այսպիսով, պանդխտության երգերի եղանակներն էլ հարազատ մնալով բնագրի բովանդակությանը, արտահայտում են հայ պանդուխտի տվայտանքներն ու ապրումները, նրա հոգեկան աշխարհի հույզերն ու մտորումները:



Մանրամասն ուսումնասիրելով հայ ժողովրդական պանդխտության երգերը, տեսնում ենք, որ վաղ շրջանի երգերում սոցիալական բողոքը գյուղական շահագործողների դեմ թույլ է, իսկ հե-

տագայում՝ XVIII—XIX դարերում այդ բողոքն ավելի ցայտուն դառնում:

Այսպիսով, անցյալ հասարակական կյանքի դարգացման հիման վրա պանդխտության երգերը ենթարկվել են ոչ միայն զաղախարահան, այլև գեղարվեստական հարաձգման: Նկատելի է, որ տրագիկմբ պանդխտության երգերում ավելի ուժեղ է ուշ շրջանի համար, քան վաղ շրջանի երգերում, որոնք թե՛ կենսաբանական են և թե՛ լիրիկական ուժեղ, իսկ հետագա շրջանում իշխում էին հուսահատ մոտիվներն ու ողբերգությունը:

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԵՎ ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԵՐԸ ՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Անցյալում պանդխտությունը եղել է հայ ժողովրդի սոցիալական մեծագույն շարիքներից մեկը, որը գերազանցապես պայմանավորված է ներքին սոցիալական հակասություններով, և դրա համար էլ պատահական չէ, որ այն լայն արձագանք է գտել մեր այրվեստի տարբեր ճյուղերում՝ ժողովրդական բանահյուսության, գեղարվեստական գրականության (արձակ և չափածո), երաժշտության և նկարչության մեջ: Ժողովրդական բանահյուսության մեջ բացի պանդխտի երգերից, կան նաև առածներ, ասացվածքներ, հեքիաթներ, որոնք արտահայտում են պանդխտի չարքաշ կյանքն օտարության մեջ, նրա վիշտն ու մորմոքը, հայրենիքի այրող կարոտը:

Պանդխտությունը որպես երևույթ անցյալ կյանքում, իր ուժեղ արտացոլումն է գտել մեր զրեթի բոլոր գրողների ստեղծագործություններում: Դժվար է ցույց տալ մի գրողի, որը այս կամ այն առիթով անդրադարձած չլինի պանդխտությանը: Բանաստեղծները սկսած միջնադարից, վերջացրած մեր ժամանակներով, իրենց գեղարվեստական երկերում արտահայտել են այդ համազգային ողբերգությունը (դարիերությունը): Նրանցից շատերը իրենց լավագույն ստեղծագործություններում օգտագործել են պանդխտության ժողովրդական երգերի պոետիկական պատկերներն ու սյուժեները:

Միջնադարյան շատ բանաստեղծներ՝ Սարկավազ Վարդապետը, Ներսես Շնորհալին, Միրտիչ Նաղաշը, Հովնաթան Նաղաշը, Սայաթ-Նովան և ուրիշներ իրենց բանաստեղծություններում արտահայտել են պանդխտության թեման: Մեր գուսան-աշուղներից շա

տեքն էլ իրենց լավագույն երգերը հորինել են պանդխտութեան մոտիվներով:

Պանդխտութեան թեման յուրահատուկ արտացոլում է գտել XIX—XX դարերի գրողներ՝ Ստ. Նաղարյանի, Մ. Նալբանդյանի, Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի, Բաֆֆու, Վ. Փափազյանի, Ալ. Շիրվանզադեի, Հ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ալ. Մատուրյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Կուրղինյանի, Դոդոխյանի և շատ ուրիշների ստեղծագործություններում:

Պանդխտութեան թեման, միախառնված հայրենաբաղձութեան հետ, լայն տարածում ու արձագանք են գտել արևմտահայ հատվածի և առավելապես սփյուռքահայ գրականության մեջ: Արևմտահայ գրողներ՝ Մ. Աճեմյանը, Դանիել Վարուժանը, արձակագիրներ՝ Թլկատինցին, Լ. Բաշալյանը, Ռ. Զարդարյանը, Մ. Կյուրջյանը և ուրիշներ գրել են պանդխտութեան թեմայով բանաստեղծություններ, գեղարվեստական երկեր, ինչպես նաև ակնարկ-հոդվածներ: Մելքոն Կյուրջյանի՝ «Պանդուխտի կյանքեն», Ար. Տեկանցի «Պանդուխտ վանցին» գրքերը արտահայտում են ամբողջ պանդխտութեան էությունն ու պանդխտի կյանքը:

Ինչպես տեսնում ենք, հայ բազմաթիվ գրողների մոտ այս կամ այն չափով, այս կամ այն առիթով արծարծված է պանդխտութեան թեման, որին մենք չենք ուզում անդրադառնալ, քանի որ այստեղ հնարավոր չէ խոսել բոլորի ստեղծագործության մասին, այլապես կշեղվենք մեր նյութից: Այդ մի այլ թեմա է, որին առանձին առիթով կարելի է անդրադառնալ, պատրաստելով մեկ այլ աշխատանք:

Ժողովրդական պանդխտութեան երգերի հետ իրենց ունեցած հարադատությամբ առանձնապես աչքի են ընկնում Իսահակյանի, Աճեմյանի և միջնադարում՝ Մկրտիչ Նաղաշի պանդխտութեան երգերը, ուստի այստեղ բացառության կարգով մի քանի խոսք վերոհիշյալ բանաստեղծների պանդխտութեան երգերի մասին:

Թե՛ Մ. Նաղաշը, թե՛ Իսահակյանը և թե՛ Աճեմյանը ունենալով մի ընդհանուր թեմա, յուրաքանչյուրը տարբեր ձևով են մոտեցել իրենց նյութին: Յուրաքանչյուր բանաստեղծ իր պոետիկական կարողությունների ու աշխարհայացքի համեմատ սեփական անհատականության կնիքն է դրել պանդխտութեան երգերի վրա:

Նրանց պանդխտության, ինչպես նաև ժողովրդական համանուն երգերում արտահայտված են հայ աշխատավոր գյուղացու վիճակը մինչև պանդխտություն գնալը, ծանր ու դժան հարկերն ու հարկա-

հանությունը, գյուղացու մտորումները, պանդխտի գանգատն իր
դառն ճակատագրից, հայրենիքի ու ընտանիքի կարոտը և այլն.

Ղարիպին սիրտն է ի սուգ անմխիթար,
Երբ հառաչէ, նա սիրտն ի փորն առնու գալար,
Յորժամ չիջէ զիւրն սիրելիքն հաւասար,
Նա յաշերուն արիւն կաթէ երեսն ի վայր ¹:

Դեռևս XIV—XV դարերում Մկրտիչ Նաղաշը զգացել է պանդխտ-
տության մեծ շարիք լինելու հանգամանքը: Նա լավ գիտն զարիւր
կյանքը, դրա համար էլ մանրամասն նկարագրում է նրա դրու-
թյունը, ցույց տալով պանդխտությունը բոլոր կողմերով՝ հայ-
րենիքի կարոտ, զարիւրի ծանր վիճակ, հիվանդություն, հալածանք
ու արհամարհանք, մի խոսքով պանդխտի կենսագրությունը: Նա-
ղաշի «Վասն զարիպի» երգի մեջ պանդուխտը երգում է՝

Թէ զօրն տան նուշ ու շէքէր, որ ճաշակէ,
Երբ հառաչէ, նա ի սրտէն արիւն կաթէ ²:

Բանաստեղծն այնպիսի մանրամասնություններ է նկարագրում
զարիւրի կյանքից, որ զգում ես, թե ինքն էլ է եղել այդ վիճակում:
Նա հատկապես նշում է զարիւրի արհամարհված վիճակը՝

Ղարիպն ի տղն երթայր մտնէր վախվախելով.
Ի տան տիրուն զինչ ի շանէն խիստ վախելով.
Յորժամ տեսնուն ի դուրս հրեն անարգելով,
Սւ նայ ի յետ դառնայր տրտում արտասուելով ³:

Սակայն, ինչպես Նաղաշը, այնպես էլ մեր հետադա դարերի
բանաստեղծները մշակել են ոչ միայն պանդխտության թեման, այլև
ժողովրդական զարիւրի երգերը: Նկարագրելով պանդխտի վիճակը
օտարության մեջ, Նաղաշը վարպետորեն օգտագործել է պանդխտ-
տության երգերի բնագիրը: Բնորոշ է այս տեսակետից նրա հետևյալ
երգը՝

¹ Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և յուր տաղերը, Վաղարշապատ, 1898,
էջ 37:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 38:

Ղարիպն խեղճ էր, նա երբ յանկարծ հիւանդանայր,
Յետար փողոց մոխրաթաւ անկեալ կենայր,
Թէպէտ ունէր շատ սիրելիք, մէկ մի չկայր,
Եւ կայր անկեալ վրայ երեսին խեղճուկ ու լայր:

Ղարիպն ի ժամ հոգեվարին երէց ձայնէր,
Մէկ մի չկայր, որ զսպաղատանքն կատարէր,
Ոչ սիթեւիլ և ոչ բարեկամ առ նա լինէր,
Նա ի խոցոյն դառն արտասուէր և հառաչէր¹:

Այս երգը մոտիկից հիշեցնում է ժողովրդական պանդխտի Զրգերից՝ «Ղարիպը պառկել ա անճար կը տնքայ» և «Ղարիպը հիվանդ էր, ծանր կը տքար» տողերով սկսվող երգերը (տե՛ս ժող. №№ 45, 51 երգերը):

Եթե նաղաշը նկարագրում է պանդուխտի ծանր կացութիւնը պանդխտութեան մեջ, Իսահակյանը ներկայացնում է պանդուխտի կարոտը դեպի մայրը և հայրենիքը, նրա վերադարձը: Այդ երգերում Իսահակյանը արտահայտում է պանդուխտի տեսած և կրած տառապանքները պանդխտութեան մեջ, պանդխտութեան ավերիչ ազդեցութիւնը և հետևանքը պանդխտի վրա՝

Դարդը՝ սըրտիս, աղքատ ու խեղճ,
Յուպը ձեռիս, գլխակոր,
Շատ տարիներ պանդուխտ եղած՝
Նորեն դարձա հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծըռած,
Միտքս շվար ու մոլոր,
Յոթը սարեն, յոթը ծովեն
Դարձա նորեն հայրենիք:²

Իսահակյանի վերադարձող պանդուխտը եղակի չէ: Ինչպես տրիշ շատ պանդուխտներ, այնպես էլ նա վերադարձել է կորացած մեջքով, մոլորված, աշխատանքի համար անպետք: Ինչպես պանդխտութեան ժողովրդական երգերում, այստեղ, Իսահակյանի նույն երգում էլ արտահայտված են պանդխտութեան մի քանի մոտիվներ՝ սիրո, կարոտի, հայրենիքի կարոտի և այլն: Իսահակ-

1 Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և յուր տղերքը, Վաղարշապատ, 1898, էջ 38—39

2 Ա. ֆ. Իսահակյան, Ընտիր երկեր, հատ. 2, Երևան, 1940, էջ 22:

յանի պանդուխտը օտարութեան մեջ տառապում է հայրենիքի ու մո-
կարոտից՝

Հայրենիքես հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ազիզ մորես բաժանվել եմ,
Տըխուր-տըրտում, քուն չդնիմ¹:

Մշակելով պանդխտութեան թեման, և լավ ծանոթ լինելով ժո-
ղովրդական բանահյուսութեանը, Իսահակյանը մեծ վարպետու-
թյամբ օգտագործել է պանդխտութեան երգերը: Նա ժողովրդական
ողուն հարազատ և բարձր արվեստով վերարտադրել է պանդուխտի
կյանքն ու վիճակը:

Պանդխտութեան անտունիների համար բնորոշ է օտարութե-
անից վերադարձողին չճանաչելու մոտիվը: Վերցնելով այս մոմենտը
ժողովրդական երգից, Իսահակյանը գեղեցիկ կերպով տվել է պան-
դուխտի կնոջ հանդիպումը՝

Ցուպը ձեռիս գեղը մտա,
Անցա յարիս տան ճամբով.
Տեսա յարբս վարդը ձեռին՝
Մենակ կանգնած զըռան մոտ.
Ասի—«քուրիկ, ազիզ տեսքիդ
Արժանացա ես բարով...»
Նա էլ ինձի չը ճանաչեց...
— Աղքատ էի ու փոշոտ²:

Պանդուխտի երկար բացակայությունից հետո, մայրն էլ է ժո-
ղանում որդու դեմքի գծագրությունը, և երբ նա վերադառնում
է տուն, նրան չի ճանաչում: Բնորոշ է այս տեսակետից հետևյալ մի-
նադարյան գուսանական երգը՝

Աշուիդ իմ որդուն աշուին,
Ձանդ անոր ձանը չիլմանիր.
Դնա՛ այս գեղին վերես.
Հէլպէթ այս գեղը խանի ունի.

¹ Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Ընտիր երկեր, հատ. 1, Երևան, 1939, էջ 266.

² Նույն տեղում, էջ 22:

Պառկեւ ւ անուշ քուն եղիւ
Հէլալի՞թ այս մութը լուս ունի.
Մութն երթայ ու լուսը գայ,
Մայնը ըզիր որդեկը ճանչնայ ¹:

Իսահակյանը բոլորովին այլ ֆոնի վրա օգտագործել է ժողո-
րրդական երգի այս մոտիվը.

Դարդը սրտիս հասա մեր տուն,
Տեսա ծերուկ խեղճ մորս ...
Ասի — «Նանի՛, ճամբորդ մարդ եմ,
Գիշերս ինձ հյուր կընդունե՛ս»:
Ախ, մերի՛կ ջան... վշտովս ընկավ,
Սըրտին գրկեց ու լացեց,
«Ա՛խ, բալա ջան, զարիր բալա,
էդ դո՞ւն ես... ²:

Այլ բնույթ ունեն Մկրտիչ Աճեմյանի պանդխտության երգերը:
Իր «Նորեկ պանդուխտներ» գեղեցիկ ու սրտառուչ բանաստեղծու-
թյան մեջ Աճեմյանը տալիս է նորեկ պանդխտի մտորումներն ու
տվայտանքը: Հանդես են բերված երկու պանդուխտ եղբայրներ,
սրանցից մեծը համոզում է փոքր եղբորը՝ մնալ և աշխատել, իսկ վեր-
ջինս առաջին իսկ օրվանից հիսաթափված է Պոլսից, և երազում է
երենց գյուղը՝

Երազ մը տեսայ, ալ քունըս թռավ.
Հիմա միտք բերեմ մամիկս պառավ,
Մեր տուն, մեր պարտեզ, այգին ու արօտ,
Ու սրտիս խորէն ա՛խ քաշեմ կարօտ.
Խաշո՛, Պոլիսը թող մընայ իր տեղ,
Խաշո՛, իմ աղբար, մենք զառնանք մեր գեղ ³:

Սրտակտուր խոսքերով նորեկ պանդուխտը խնդրում է մեծ եղ-
բորը՝ թողնել Պոլսի խանը, որի մութ պատերի մեջ մաշվում է հաշ-
րենաբաղձ պանդուխտը, նա տրտնջում է բեռի ծանրությունից, որի

¹ Ներկա աշխատության տեքստերի 239 երգը:

² Ա. Վ. Իսահակյան, Ընտիր երկեր, հատ. 2, Երևան, 1940, էջ 22:

³ Մկրտիչ Աճեմյան, Թրթռուն հանգեր, Պոլիս, 1908, էջ 168:

տակ մեջքը կբած՝ գիշեր ցերեկ աշխատում է, նրա համար այդ հրս-
կայական քաղաքը նեղ է թվում:

Աս մութ խանին մեջ կը մաշուի հոգիս,
Պատառ մի երկինք շկայ, որ հայիս,
Ի՛նչ ընեմ աս մեծ քաղաքը փարթամ,
Ուր բեռ շալկելով անարգութեամբ կերթամ.
Պոլիսը, խաշո՛, ինծի կու գայ նեղ.
Խաշո՛, աղբարիկ, ա՛լ գնանք մեր գեղ¹:

Ծ՛վ նաղաշի, և՛ Իսահակյանի, և՛ Աճեմյանի պանդխտության
երգերը ոչ միայն բովանդակությամբ են նման ժողովրդական հա-
մանուն երգերին, այլև իրենց մոտիվներով, հուզականությամբ ու
արվեստով:

¹ Մ կ ր տ ի շ Ա ճ ե մ յ ա ն, Թրթռուն հանգեր, Պոլիս, 1908, էջ 168:



ՊԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ



Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Այս աշխատությանն իբրև բնագիր ծառայել են հայ պարբերական մամուլում և ազգագրական ժողովածուներում ու երգարաններում տեղ գտած պանդխտության ժողովրդական երգերը:

Սրանցով, անշուշտ, չեն սպառվում պանդխտության տևազրված երգերը, դրանք կարող են լինել նաև առանձին գրքերի, մանավանդ պարբերական մամուլի մեջ լույս ընծայված: Սակայն, կարծում ենք, որ նշածով էլ հիմնականում կարելի է լրիվ պատկերացում ու ծանոթություն օնենալ հայ ժողովրդական պանդխտության երգերի մասին:

Տեքստը կազմելիս նյութերը դասավորել ենք ըստ երգերի գաղափարական մոտիվների, հետևյալ ենթագլուխներով՝

1. Հրաժեշտի և բաժանման երգեր
2. Հայրենաբաղձության երգեր
3. Կարոտի, սիրո և սպասումի երգեր
4. Սգո և թաղման երգեր
5. Պանդխտության զանազան երգեր

6. Հավելված 1: Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվի նյութերի:

7. Հավելված 2: Անհայտ հեղինակների երգեր, որոնք ժողովրդականացել են:

Հավելվածի նյութերի ընտրության հարցում քավականաչափ խիստ վարվեցինք, հավաքած ունեինք վաթսուհի հասնող անհայտ հեղինակների երգեր, որոնցից ընտրեցինք լավագույնները: Այդ երգերը լինելով անհատական ստեղծագործություններ, անցել են ժողովրդին և դարձել նրա սեփականությունը, մոռացության տալով հեղինակին:

Յուրաքանչյուր բաժնի երգերը դասավորել ենք այբբենական կարգով, վերջնելով առաջին տողի առաջին տառը:

Անկասկած ավելի լավ կլիներ, եթե երգերը դասավորեինք ըստ նրանց ստեղծման ժամանակի, բայց այդ հնարավոր չէր, քանի որ ամեն մի ժամանակաշրջան, լինի դա միջնադարը, կամ թե հետագա՝ XVIII—XIX դարերը, միևնույն է՝ ունի իր համապատասխան մոտիվներով երգերը, որոնք գործի ընթացքում պիտի անընդհատ կրկնվեին։ Կարելի էր դասավորել նաև ըստ տեղավայրերի, սակայն այդ ձևի բաժանումն էլ նպատակահարմար չհամարեցինք, որովհետև յուրաքանչյուր տեղավայր կամ գավառ, ունի իր պանդխտության տարբեր մոտիվներով երգերը։

Այսպիսով, ամենահարմարը թեմատիկ բաժանումն է և այբբենական կարգով դասավորելը։

Նպատակահարմար համարեցինք առհասարակ ոչ մի երգի վերնագիր չտալ, որովհետև եղած վերնագրերը խիստ պայմանական են և կամայական (յուրաքանչյուր բանահավաք իր ցանկացած վերնագիրն է դրել)։

Բնագրին հարադատ մնալու համար, ծանոթագրությունների մեջ բերում ենք յուրաքանչյուր երգի վերնագիրը, բանահավաքի ծանոթություններն ու բացատրությունները նույնությամբ։

Այս օգտագործած աղբյուրներից մեկը՝ Հ. Շանիկյանի՝ «Հնութիւնք Ակնայ» ժողովածուն ամբողջապես ընդգրկում է Ակնի ժողովրդական երգերը։ Բանահավաքը այդ երգերը կոչում է անտունի։ Մենք չենք գրում անտունի բառը, նկատի ունենալով, որ անտունիները միայն պանդխտության երգեր չեն, կան և սիրո, օրորոցի, հարսանիքի, լալիքի և այլ անտունիներ։

Անտունիները լինում են և՛ մեծ, և՛ փոքր, երբեմն քառյակ, նույնիսկ երկյակ, իսկ հաճախ բավական մեծ։ Դրանց մի մասը կազմված է մի քանի միմյանցից անկախ երգերի միակցությունից, որոնք բավական հեշտությամբ կարելի է վերածել իրարից անկախ առանձին երգերի։ Մենք այդպես էլ արինք՝ հետեւելով պրոֆ. Մ. Աբեղյանի «Գուառնական ժողովրդական տաղեր»-ի անտունիների բաժանման մեթոդին։

Ի դեպ պսևնք, որ ոչ միայն անտունիներն ենք վերածել առանձին երգերի, այլև շատ ժողովածուներում եղած միակցված ուրիշ երգերը։ (Բոլոր դեպքերում ծանոթագրություններում ցույց ենք տալիս, թե որ երգից ի՞նչ մաս է դուրս թողնված և ինչ վերցված)։

Բանահավաքների մոտ երբեմն պանդխտի երգը միակցված է օրորոցի, սիրո և հարսանիքի երգերին, երբեմն էլ՝ ջանգլուում-

ներին: Այսպիսի դեպքում մենք հարմար համարեցինք զուրս
թողնել տեքստից այն մասը, որը պանդխտության չի վերաբերում:
Տեքստերին հարազատ մնալու համար ծանոթագրություններում
ցույց ենք տալիս, երբեմն բերելով դրանք նույնությամբ:

Պահպանված են ոչ միայն բարբառային, քերականական ձև-
բը, այլև ուղղագրությունն ու տառադարձությունը:

ՓՈՓՈԽԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեր բերած բոլոր վարիանտները կամ նրանց տարբերություն-
ները նշանակված են անմիջապես երգերի տակ: Այդ փոփոխակ-
ների սկզբի թվանշանները ցույց են տալիս վերևի երգի համապա-
տասխան տողերը, իսկ թվանշանների կողքին երկաթագիր տառերը
գրվում է իբրև առանձին վարիանտ, ա կամ բ:

Փոփոխակների կամ այլ ընթերցվածների բազմաթիվ լինելու
դեպքում ամենից առաջ հաշվի ենք առել նրա գեղարվեստական
արժեքը, իսկ եթե պատահել է, որ տարբեր աղբյուրներում նույնա-
նման տարբերականներ են, այս դեպքում նկատի ենք ունեցել հրա-
տարակության հին լինելը: Եթե երգը ունի մի շարք աղբյուրներ,
առաջին հերթին դրել ենք ընտրած բուն վարիանտը, ապա այնու-
հետև մնացած աղբյուրները ժամանակագրական կարգով:

Փոփոխակները կամ նրանց տարբերությունները բուն վարիան-
տից տալու համար երգերի տողերը նշանակված են 1, 2, 3, և հա-
ջորդող թվանշաններով. 1—առաջին տող, 2—երկրորդ տող և այլն:

Այն տողում, ուր տարբերություն կա, այդ տողն ամբողջապես
մեջ է բերված, սկզբից գրված իր թվանշանով. օրինակ՝ 182 երգի
տակ կա «ԱՆՀ Արսենի ձին արօտն էր», այդ նշանակում է, որ փո-
փոխակի առաջին տողը տարբեր է հիմնական երգի առաջին տողից:
Հաճախ հանդիպում ենք փոփոխակների, որոնք երեք տող են, այդ
նշանակում է, որ տվյալ երգի միայն առաջին տողն է միանման,
մնացած երեքը զանազանվում են: Պատահում են նաև փոփոխակ-
ներ, որոնք բերված են նաև 1—3—4 և գրված երեք տող, օրինակ՝

1—3—4 ժամի դուռը մաս մաս քար

Թևերիս բերանն օյա,

Նարս թավաթի սօյա: (236)*

* Տե՛ս № 109 ծանոթագրությունը:

առ նշանակում է, որ միայն երկրորդ տողն է նույնանման, մնացած երեքը զանազանվում են հիմնական երգից (մայր վարիանտից):

Միաժամանակ պատահում են փոփոխակներ էլ, երբ գրված է լինում 3—4, այս էլ նշանակում է, որ առաջին և երկրորդ տողերը միանման են, երրորդը և չորրորդը տարբերվում են:

Երբ փոփոխակը բոլոր տողերով է տարբեր, այդ դեպքում գրվում է իբրև առանձին վարիանտ, և կամ ք:

Փոփոխակներն իբրև անկախ երգեր են առնված, երբ դրանց հիմնական մասի բովանդակությունը տարբեր է:

Երգերի տակ համառոտագրերով, երկաթագիր տառերով նշանակված են այն աղբյուրները, իսկ թվանշաններով այն էջերը, ուր կա տվյալ երգը կամ քառյակը. օրինակ՝ ՀԱ 438 նշանակում է Հնու-թիւնք Ակնա, էջ 438 կամ ԱՀԺԲ 104, նշանակում է «Աղգագրական Հանդես, գիրք 12, էջ 104 և այլն:

Առանձին համարի տակ բերել ենք այնպիսի փոփոխակներ, որոնք ըստ բովանդակության ուրիշ երգ կարող են համարվել: Իսկ այն երգերը, որոնց որոշ քառյակներ կամ տողեր կրկնվում են այլ երգերի մեջ, ցույց ենք տվել Հմմտ. (համեմատել) համապատասխան երգի համարի հետ:

Տեքստում որոշ երգերի տակ հանդիպում ենք էՁԱ, ՄՈՌ, ՊԹԱ, ՊԹԵ, ՎՏԱ, ՎՏԳ, ՎՏԶ, ՎՆՆԱ, ՎՆՆԲ համառոտագրությունների, դրանք ձեռագրերի համառոտագրություններն են, որոնց կողքին, փակագծում գրված կա ԳԺՏ, այս նշանակում է, որ տվյալ երգերը վերցրել ենք Մ. Արեղյանի՝ «Գուսանական ժողովրդական տաղեր»-ից, և նույնությամբ բերում ենք այս ժողովածուի մեջ:

Վերևը նշված համառոտագրությունները հրեանի Պետական թանգարանի, Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանների ձեռագրերն են, որոնցից Մ. Արեղյանն օգտվել է անձամբ և ուրիշների հատկապես կատարած արտագրություններից:

ԿՐՃԱՏ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնագրերի մեջ առաջին տողի վերջում գրված թվանշանը ցույց է տալիս բանահավաքի դրած վերնագիրը, որը բերում ենք ծանոթագրությունների մեջ: Իսկ տեքստերի մնացած մասերում եղած թվանշանները, որոնք հերթականությամբ շարունակվում են՝ մեր բացատրություններն են և յուրաքանչյուր երգի մասին ծանոթագրություններ ու բանահավաքների բացատրությունները:

«Զիք» (շկա) բառից հետո գրվում է այն բառը կամ տողը, որը
շունի ցույց տրված տեքստը:

«Հմմտ.» (համեմատել) սրանից հետո գրվում է այն երգի հա-
մարը (N), որի հետ նմանություն ունի վերևի երգը, կամ քառյակը:

«Փոխ» (փոխանակ) երբ մի բառի փոխանակ կա մեկ ուրիշը:

Երբ միևնույն գրքի, կամ թերթի ու ամսագրի մեջ երկու և ավելի
երգեր անմիջապես հաջորդում են միմյանց, և այդպիսի երգերը
բովանդակությամբ հարմարվում են իրարու, և կարող են միասին
մի երգ համարվել, այդ ժամանակ երգերի այդպիսի հաջորդության
կարգը ցույց է տրվում երգերի համարներից հետո տրված համա-
ռոտագրության վրա, նշելով 1 և 2, իսկ եթե ավելի է՝ 3, օրինակ
ԲՆԱ.¹ 68 ԲՆԱ.² 68 նշանակում է «Բիւրակն», 1898 թ., էջ 68 և «Բիւ-
րակն», 1898 թ., էջ 68:



Յ Ո Ւ Յ Ա Կ

ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԳՐՔԵՐԻ, ԱՄՍԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՐԹԵՐԻ,
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԱ.¹ — Ակն և ակնցին Ա. հատոր, Պուրբեշ, 1942:

ԱԱ. — Ակն և Ակնցիք — նախաձեռնեց և հավաքեց Առաքել Փեչյան, աշխատասիրեց, դասավորեց և խմբագրեց Մկրտիչ Պարսամյան, Փարիզ, 1952 թ.:

ԱԲ. — Արաբկիր և շրջակայի գյուղերը, Ս. Ա. Բախտիկյան, Բեյրութ, 1934:

ԱԵՀ. — Ազգային երգարան Հայոց, Գամառ-Փաթիլա, Պետերբուրգ, 1856:

ԱՀԲ. — Ազգագրական Հանդես, երրորդ տարի, Բ. գիրք, Թիֆլիս, 1897:

ԱՀԳ. — Ազգագրական Հանդես, երրորդ տարի, Գ. գիրք, Թիֆլիս, 1898:

ԱՀԴ. — Ազգագրական Հանդես, երրորդ տարի, Դ. գիրք, Թիֆլիս, 1898:

ԱՀԵ. — Ազգագրական Հանդես, չորրորդ տարի, Ե. գիրք, Թիֆլիս, 1899:

ԱՀԶ. — Ազգագրական Հանդես, հինգերորդ տարի, Զ. գիրք, Թիֆլիս 1900:

ԱՀԸ. — Ազգագրական Հանդես, վեցերորդ տարի, Է և Ը. գրքեր, Թիֆլիս, 1901:

ԱՀԺԱ. — Ազգագրական Հանդես, իններորդ տարի, ԺԱ, ԺԲ գրքեր, Թիֆլիս, 1904:

ԱՀԺԵ. — Ազգագրական Հանդես, տասներեկերորդ տարի, ԺԵ գիրք, Թիֆլիս, 1908:

- ԱՀԺԷ.— Ազգագրական Հանդես, տասնմեկերորդ տարի, ԺԷ գիրք, Թիֆլիս, 1908:
- ԱՀԺԸ.— Ազգագրական Հանդես, տասնմեկերորդ տարի, ԺԸ գիրք, Թիֆլիս, 1908:
- ԱՀԺԹ.— Ազգագրական Հանդես, տասներկուերորդ տարի, ԺԹ գիրք, Թիֆլիս, 1910:
- ԱՂ.— Աղբյուր, ամսագիր, Թիֆլիս, 1893:
- ԱՐԶ.— Արձագանք, գրական և քաղաքական լրագիր, Թիֆլիս, 1893, 1894, 1895, 1896:
- ԱՐՄ.— Արևելյան մամուլ, ազգային, գրական և քաղաքական լրագիր, ամսագիր, շաբաթաթերթ, Ջմյուռնիա, 1883, 1902, 1909:
- ԲԱ.— Բալու, իր ստեղծությունները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, կազմեց Հարություն քահանա Սարգիսյան (Ալևոր), Գահիրե, 1932:
- ԲԱՆ.— Բանասեր, հանդես, Կ. Պոլիս, 1905:
- ԲՆ.— Բիւղանդիոն, օրաթերթ, Կ. Պոլիս, 1913:
- ԲՆԱ.— Բիւրակն, լրագիր (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1898, խմբագիր, Գ. Անդրեասյան:
- ԲՆԲ.— Բիւրակն, լրագիր (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1899:
- ԲՆԳ.— Բիւրակն, լրագիր (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1900:
- ԲՎ.— Բազմավեպ, ամսագիր, Վենետիկ, 1847, 1851, 1861, 1862, 1867:
- ԳԲ.— Գրոց-Բրոց, երկասիրեց Գ. վրդ. Սրվանձտյանց:
- ԳԺՏ.— Գուսանական ժողովրդական Տաղեր, Մանուկ Աբեղյան, Երևան, 1940:
- ԷԱԺԱ.— Էմինյան Ազգագրական ժողովածու, հատոր Ա. փշրանքներ շիրակի ամբարներից, հավաքեց Աղ. Մխիթարյան, Մոսկվա, 1901:
- ԷԱԺԶ.— Էմինյան Ազգագրական ժողովածու, հատոր Զ. հավաքեց Ա. Հայկունին, Մոսկվա-Վաղարշապատ, 1906:
- ԹԿ.— Թեոդիկ, Ամենուն Տարեցույցը, Վիեննա, 1925 թ., ԺԹ տարի:
- ԹՄԿ.— Թիֆլիսեցոց Մտավոր կյանքը, Գրիգոր Տեղ-Աղեքսանդրյան, Թիֆլիս, 1885:
- ԺԱԲ.— Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, Տիգրան Վարդանյան, Թիֆլիս, 1900:
- ԺԵԿ.— Կոմիտաս, ժողովրդական երգեր, ազգագրական ժողովածու, Երևան, Պետհրատ, 1931:

- Ժե.— Ժողովրդական խաղիկներ, Մանուկ Արեղյան, Երևան, 1940:
- ԼՄ.— Լուսա, գրական, քաղաքական, պատմական և հանրային ամսագիր, Թիֆլիս, 1907:
- ԽՈՏ.— Երգեր, առակներ, հանելուկներ, Խոտրջրո, Տիֆլիս, 1909:
- ՄՎ.— Մաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության, առաջին պրակ, հավաքեց Հայկ Աճեմյան, Էջմիածին, 1917:
- ՀԱ.— Հնությունք Ակնա, Հ. Ճանիկյան, Թիֆլիս, 1895:
- ՀԲ.— Հայրեններու Բուրաստանը
- ՀԵ.— Հայերգ, Արիստակես Վ. Տեկանց, Թիֆլիս, 1882:
- ՀՀ.— Համով-Հոտով, երկասիրեց Գ. վրդ. Սրվանձությանց, Կ. Պոլիս, 1884:
- ՀՄԺԵ.— Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Աս. Մնացականյան, Երևան, 1956:
- ՀՄԽԱ.— Հաղար ու մի խաղ, ժողովրդական երգարան առաջին հիսնյակ, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1903:
- ՀՄԽԲ.— Հաղար ու մի խաղ, ժողովրդական երգարան, երկրորդ հիսնյակ, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1905:
- ՄԵ.— Մանանայ, ժողովեց և լույս էած Գ. վրդ. Սրվանձությանց, Կ. Պոլիս, 1876:
- ՄԵՏ.— Մկրտիչ Նաղաշ և յուր տաղերը, հավելված միջնադարյան տաղեր դարիպության վերա, Կ. Կոստանյանց, Վաղարշապատ, 1898:
- ՄՇ.— Մշակ, գրական և քաղաքական լրագիր, Թիֆլիս, 1881, 1889:
- ՄՍՍ.— Մասիս, լրագիր, Կ. Պոլիս, 1884, 1886, 1888, 1889, 1890, 1891, 1893, 1902:
- ՆԴ.— Նոր-Դար, քաղաքական և գրական լրագիր, Թիֆլիս, 1888, 1897:
- ՆՀԳ.— Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողովածու, Տիգրան Նավասարդյանց, Գ. գիրք, Թիֆլիս, 1884:
- ՆՀԶ.— Հայ ժողովրդական հեքիաթներ, ժողովածու, Տիգրան Նավասարդյանց, Զ. գիրք, Թիֆլիս, 1890:
- ՆՍ.— Նավասարդ, գրական և գեղարվեստական տարեգիր, կազմեցին Դանիել Վարուժան և Հ. Ճ. Սիրունի, Կ. Պոլիս, 1914:
- ՊԿ.— Պանդուխտի կյանքեն, Հրանտ (Մեղրոն Կյուրճյան), Փարիզ, 1931:

ՊՎ.— Պանդուխտ վանքին, նամակներ, երգեր, առածներ, առեղծ-
վածներ, գրեց Արիստակես Վարդապետ Տեր Սարգսենց, Կ.
Պոլիս, 1876:

ՋԲ.— Զավախքի բուրմունք, ժող. նյութեր, գիրք Բ, հավաքեց Եր-
վանդ Լալայանց, Թիֆլիս, 1892:

ՌՄ.— Ռամկական մրմունջներ, ժող. երգեր և պարերգեր, խմբա-
գրեց Արշակ Բրուտյան, Աղեքսանդրապոլ, 1898, 2-րդ տպա-
գրություն:

ՍՀԱ.— Սոխակ Հայաստանի, լիակատար երգեր, հատ. Ա, Գր.
քահանա Գրիգորյանց, Բաքու, 1902. 5-րդ տպագրություն:

ՍՀԵ.— Սոխակ Հայաստանի, լիակատար երգեր, հատ. Ե, Գր. քա-
հանա Գրիգորյանց, Պետերբուրգ, 1888:

ՎԺԵ.— Վանա ժողովրդական երգեր, ազգագրական ժողովածու,
ձայնագրեցին Սպ. Մելիքյան և Գարեգին Գարդաշյան, Երե-
վան, 1927:

ՎՍԱ.— Վանա Սաղ, հավաքածույք Վասպուրականի ժողովրդական
երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների, ժողովեց
Գեորգ Գ. Շերենց, Ա. մաս, Թիֆլիս, 1885:

ՎՍԲ.— Վանա Սաղ, հավաքածույք Վասպուրականի ժողովրդական
երգերի, առածների, հանելուկների, օրհնությունների, և
անեծքների, ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Թիֆլիս, 1899:

ՏԽ.— Տաղեր ու խաղեր, խմբագրեց և կազմեց Աղեքսանդր Մխիթար-
յանց, Աղեքսանդրապոլ, 1900:

ՌԻԵՊ.— Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Սպիրիդոն
Մելիքյան, Երևան, 1935:

ՓԱՀ.— Ընդարձակ Տարեցույց սուրբ փրկչի աղագյին հիվանդանոցի,
կազմեցին Մ. Զուհաճյան, Բ. Ազատյան, նոր շրջան, Գ. տարի,
Կ. Պոլիս, 1927:

ՓՇ.— Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, ժողովեց
Գարեգին սարկավազ Հովսեփյանց, Թիֆլիս, 1893:

ՔՀ.— Քնար Հայկական, խմբագրեց Մ. Միանասարյանց, Պետեր-
բուրգ, 1868:

ՔՄՎ.— Քնար Մշեցոց և Վանեցոց, ժողովեց Արիստակես վրդ. Սեդ-
րակյան, Վաղարշապատ, 1874:

ՀՐԱԺԵՇՏԻ և ԲԱԺԱՆԱՆ
ԵՐ ԳԵՐ





1

Աղըն պէզիրկեան հմ, բեռներս բեռնամ,
Մարիկ ձեռքդ պազնեմ ես քեզ չի մոռնամ,
Դուն աղօթող եղիր, ես ալ թէզ դռնամ...

ԱԱ 551

2

— Բարեւ մի յիսնէ առէք
Ու տարէք ի յայն պէօֆան.
Պազէք իմ պազած տեղիքն,
Եօք ասեք, թէ՛ «Ատ քեզ նշան.
Ատ ապըրշմէ փնջիկդ,
Որ եկել վիզըդ ման ի ման,
Կտրէ՛, տուր մաղ մի նշան,
Ես օտար երկիր կու գնամ»:

ՎՏՔ (ԳԺՏ 205)

3. ԴՎ դիմ

4 ՎՏՔ լաւք:

5 ՎՏՔ փրհճիկդ

Գնամ ու գնամ «կասէր
 Իմ մանչուն՝ ես ավտարու չի՛.
 Երբ բարով-մնա ասաց,
 Ես աւ օտ-չաւօտ մնացի.
 Երբ զոտքն ի զանկուն եղիր,
 Ես հայրան ի վայր մնացի:
 Այլ բան չկարցի ասել.
 Վեր երթաս՝ ճամփեկդ ի բարին.
 Այն ճամփովն որ դուն երթաս,
 Վարդ ու մուրտ առջեւդ բռնանի.
 Այն քաղաքն որ դուն մտնես,
 Գրօղին ձայնիկ չի հասնի.
 Այն մէջլիսն որ դու նստիս,
 Գաւաթներդ գինով լըցւի՛,
 Ծովերն այլ գինի դառնայ,
 Ու նաւերն՝ տօտօքանի»:

ՎՏԱ ՎՏԲ (ԳԺՏ 206)

- 2 ՎՏԱ ՎՏԲ ի մանչուն (ՎՏԱ) մանչուկ, ուղղ. իմ մանչունն:
 - 2 ՎՏԱ չէ փոխ. չի: «չէ» և «չի» բարբառային ձևով նշ. «չի՛ն»:
 - 3 ՎՏԱ եր բարով ինձ մնա ասաց:
 - 4 ՎՏԱ ես աւաւտ-չաւաւտ կենդանի:
 - 5 ՎՏԲ ոտքն:
 - 6 ՎՏԱ ի վար:
 - 7 ՎՏԱ չկարացի:
 - 8 ՎՏԲ կերթաս:
 - 8 ՎՏԱ շանփատ:
 - 9 ՎՏԱ ճամփովն:
 - 9—10 ՎՏԲ չիք այս երկու տողը:
 - 11 ՎՏԲ ան:
 - 11 ՎՏԲ մտնուա:
 - 12 ՎՏԲ գրօղին ձայնըն: ՎՏԱ գրօղի ձայնիկ:
 - 13 ՎՏԲ ան մէջլիսն որ դու ՎՏԱ այն մաճլիսն որ դուն:
 - 14 ՎՏԱ պատիատ փոխ. դաւաթներդ:
 - 15—16 ՎՏԱ չիք այս երկու տողը:
 - 16 ՎՏԱ տօտօղանի փոխ. տօտօքանի:
- ՀՃՄՏ. 13 երգը:

— Գնամ ու գնամ կը'սիմ՛,
 Ես կե'րթամ, բարով մնացէք,
 Ծաղիկ մ'ա մանէթ կուտամ,
 Վարդերուն մէջը պահեցէ՛ք,
 Ամենքդ հաւասար նստէ՛ք,
 Իմ տեղս ալ խոռ պահեցէ՛ք,
 Ամենուտ խմածն անուշ,
 Իմը՝ իմ տեղը վաթեցէ՛ք:

ՀԱ 436 ՀՀ 302 ԱԱ 463

1 ՀՀ Գրնա ու գրնամ՝ կըսեմ:

2 ՀՀ բարով մնա կըսեմ:

3—4 ՀՀ չիք այս երկու տողը:

6 ՀՀ չիք ալ:

8 ՀՀ իմինք իմ տեղս:

4ա

Լեռներ ու խորուն ձորեր,
 Ես կերթամ, բարեւ մնացէք.
 Ծաղիկ մ'ալ ամանէթ կու տամ,
 Վարդերուն մէջ պահեցէք:
 Զուր ուզէ՛ զինի տուէք,
 Մարիկ շունի, սիրտը մ'արունէք:
 Ամէնքդ ի հաւսար նստէք,
 Իմ տեղուկը խոռ պահեցէք:
 Ամենուդ խմածը անուշ՝
 Իմը՝ իմ տեղը վաթեցէք...:

ԱԱ 468

5

Ելեր հմ, կոյներ հմ, խուրպէթ գնալու:
 Կուլայ հարըս, կուլայ մարըս, կուլայ Լաբըս,
 Զեռքերուս են բռներ իմ երկու քուրըս...

ԱԱ 511

Ես ելեր իմ կ' երթամ, սև աչեր աղիզ, ²
 Դիւն բարեխօս լընիս, սուլթան սուրբ Սարգիս:
 Քաղէ լմնցուցած պախճաս ու պարիս
 Վարդս քեզ ամանէթ, մա' չր, բարով կեցի':
 Ես խարիպ ու դուն խարիպ.
 Իմը չէ, քու բանտ է դիժար:
 Հան թէ կ'ըսիմ դիժար,
 Ուր խարիպ երկիր տի կենաս:

ՀԱ. 473

Համտ № 16 երգի 5—8 տողերը:

7

Ես պուպուլուն խաւքն եմ շարով, ³
 Ձում ածիցի խազար զօրով.
 Գոնին ասի տիւ կաց պարով,
 Ես լէ կերթամ խազար տարով:
 ԱՀԺԲ 106

8

— Զիմ հարն էմանէթ կու տամ,
 Ի վարդին մէջըն պահեցէք.
 Թ'էրթամ ու շուտով դառնամ,
 Զամանաթս ի տէր հասուցէք.
 Թ'երթամ, խարիպուկ մեռնեմ,
 Վարդըն ձեզ, ըզտէրն յիշեցէք.
 ՀԵ (ԳԺՏ 204)

2 ՀԵ մէջ, ուղղ. Ը.Ն. մէջըն:

3—5 ՀԵ թէ երթամ, ուղղ. Ը.Ն. թէրթամ:

էլեբ հմ, կերթամ կը, վե՛ւ գիտէ հալս, ⁶
 Մէմ'ա Աստուած գիտէ դառնալս ու գալս:
 Մարիկ, ձեռքտ պագնեմ, եար, մնաս բարով,
 Արզահիլ կամօքտ պաքմ տուր սիրով:
 ԶԲ 35

էրթալու հմ, պիտի ճանապարհ գընամ,
 Արի քեզի տեսնեմ, կարոտ չմնամ,
 Խանում ելա ջան, դու մնացիր բարով,
 Ես կ'երթամ լալով, լալով ողբալով:
 ԲՆԱ 558 ՀՄԽԱ 46 ԺԵԿ 43

1—2 ԲՆԱ ՀՄԽԱ չիք այս երկու տողը:

3 ԲՆԱ ՀՄԽԱ դու կեցիր բարով:

5—6 ԲՆԱ ՀՄԽԱ քոչ ու բարխանով, սարեր ման գալով:

էրթամ Ստամբոլ,
 Դալիմ փարա բոլ,
 Իմ եարի խամար
 Առնիմ ջուխտ մի սոլ.
 Արի', եար, արի',
 Խոռվ մի' կենայ,
 Աստուորիս բան'
 Եա'ր, մզիկ չի' մնայ:⁵
 ՌՄ 69 ՔՄՎ 21 ԳՎ 121 ՎՍԱ 37
 ԲՆԱ 583 ՏԽ 97 ԲՆԳ 122
 ԱՀԱ 125 ԷԱԺԶ 86 ԺԽ 330

3 ՏԽ եարոջ:

7 ՏԽ աստուորիս:

Լուսնակն էլանի, լուս գնաց,
Իմ եարբը Թիֆլիզ գնաց,
Թիֆլիզ էթա ղաղա էր,
Զորսը տարի վաղա էր:

ԺԵԿ 112

Կարիր, էն ճամբախ, ինչ տիւ կը քէլես,⁶
Քար քաղած, աւազնը մաղած էլնի.
էն ախալիր, ինչ տիւ ճիւր կ'իմես,
Պող ոսկի, պողկալն ապէկի.
էն քաղաք, որ տիւ կը մտնես,
Գրէօղի դաֆթար չը գրուես.
էն տուն, որ տիւ կը նստես,
Տեղ վարթ, պիւլոցն ըռըհան.
էն շուկէն, որ տիւկը մտնես,
Շըմէն կաշնեն, տիւ նստես.
էն բազառ, ինչ տիւ կանես,
Թանգ ծախես, էժան վճարես:

ՆԶԶ 100

Հմմտ. 3 հրդը:

Հետ հոգուս ի վեր թռայ,
Բռնելու և արգիլելու.
Զերդումն ի բերանդ առիր.
«Երթալու եմ, չեմ կենալու»:

Երթաս ի խարիպ աշխարհ,
Ի յատար երկիր ի հեռու,
Լայ սրտիկդ ու զիս ուզէ,
Զկտրի աշերըդ ի լալու:
ՊԹԵ (ԳԺՏ 209)

15

Ճաղպեր հմ ջրի նման,
Ի յերկրոց յերկիր կու գնամ.
Յըցո՛ւր մէկ մի քեզ նման,
Զայն սիրեմ ու զքեզ մոռանամ.
Թե չէ՝ զայս գեղիս քարերն
Արիւնէս կարմիր լուանամ:
ՎՆՆԲ (ԳԺՏ 204)

16

Մեկ կըյրիճ մըն կելլէ կեյա սիւային,
Իպթիտասին կ'ըսէ եար մընաս բարով,
Հեկալլաշմիշ կ'ըլլի եարան Եօլտաշին,
Պագնէ հօրը ձեռքը, հա՛յր, կեցիր բարով:

Ելեր հմ կ'երթամ դու կ'արգիլես իս,
Դուն բարեխօս եղիր սուլթան սուրբ Սարգիս,
Թազէ ժըմընցուցած պաղչաս ու էգիս
Վարդս քեզ ամանաթ, մայր, կեցիր բարով:

Թազէճէ բուսեր է ֆիտանըս, ծառըս,
Զիմ հաւատար տեսնելու պաղչաս ու պարըս.
Կուլայ ու ժուռ կուգայ սեւ աշեր եարըս
Զիմ դիմանար խեղճուդ, եար, կեցիր բարով:

էամէրն ալ կ'ըսէ՝ շեմ ընեն ինամ,
Երթամ՝ օր պէ աւուր վրայ՝ հեռուրնամ,
Յկուր պագիկ մը տուր, անկարօտ մնամ
Կ'երեսայ նը ճամբան, հար կեցիր բարով:

Բեռցընցաւ դասէվէթիս բեռները
Արիւնով լեցուեր է սրտիս գոները.
Ես ալ սեւ հագնիմ կիյնամ լեռները
Ահա ես կ'երթամ, հար կեցիր բարով:
ԲՆԲ 679

Հմտ. 6 երգը

17

Մըրգայ լեռը ձուն է եկեր,
Ես կ'երթամ ո'ւր շուարիմ:
Փեշիտ տակը տեղ արէ',
Ուր գամ տակը շուարիմ:
Երբ փեշդ մէկդի անես,
Ձունին վրայ ես մեռանիմ:
Մի' վախե'ր, մա'յրիկ, մի' վախեր,
Այդ վախը սիրտդ մի' ձգեր:
Ես տի նստիմ գետնի վրայ,
Քեզ տի պահեմ գլխուս վրայ:⁷

ՀԱ 496

18

Մոտեցաւ բաժանման տխուր վայրկեանը⁸
Ջար, յար, յար, յար, յար, յար, յարո ջան,
Քողեմ ես նրանց արտասուքը ծով լինի
Մարալըն ջեյրան:

Ուզեցա ձեր մոտ վերքերըս բանալ,
 Ղարիրն եմ չեմ կարող անլաց հեռանալ,
 Մըտերիմ ընկերներ ինձ միք մոռանալ,
 Որ իմ սիրտըս հանգիստ, ապահոված լինի:
 ՈՒԵՊ 67

19

Սեւ ծովը ճեղքեցէք, իմ ճամբաս բացէք:
 Ղարիպ երկիր կերթամ ինձ ողորմեցէք:
 Ղարիպութեան տեղը հոգուս քեար ըրաւ,
 Ջատեց նազլու եարէս, իս օտար ըրաւ:
 Մեղքս շլիիդ ըլլայ, բարով բան չըրիր,
 Շատ գրեր գրեցի, քեզի մալ չըրիր:
 ԱԱ 529

20

Սիլաս ալ միտքս ինկաւ, կերթամ չեմ կենար,
 Աման, աս տէրտէրուն ալ չեմ դիմանար,
 Դիմանալու տէրտ չէ, ինտո՞ր դիմանամ:
 ԱԱ 530

21

Մարդ.— Սրտիկ, ի՛նչ անեմ, սրտիկ, խե բե չ'էլա խուն,⁹
 Կիշէր գանգուոր, ցէրէյ վիրաւոր:
 Եօթ տիր սաֆար եմ արե,
 Մէկ էլ կանեմ հալար սաֆարի:
 Շամ կուզես՝ քե կութնի պիրեմ,

Կութնի կուղես՝ քե շամ պիրեմ,
 Քեօշկ կուղես՝ քե քեօշկ շինեմ,
 Հալարա քե ջղմա ճամխեմ՝
 Ոսկի նալչէքնը վէրէն.
 Հալարա քե քամար ճամխեմ՝
 Ոսկի պալնխանը վէրէն:

Կին. — Ի՞նչ անեմ քոյ կութնի շամէն,
 Ի՞նչ անեմ՝ քոյ քեօշկը-սարէն,
 Ի՞նչ անեմ քոյ քամար ջղմէն.
 Սիրտս ի սե, իրեսըս տեղին,
 Ծեռս ի ծոցս, ափիյս իրիսիս,
 Խաջս ի խարամ, ճիրս ի լեղի:
 — Պանցրիկ սարեր, բաձրացէք,
 Քոացող գետեր, տատրեցէք
 Իմ կարիքի ճամխիյ մօտ արէք,
 Իմ կարիք շոտ ուր տեղ խասուցէք:

ՆԱ 99

22

Յածցի՛ լեռներ, ցածցի՛ քարեր վրայէտ ոնցնիմ,¹⁰
 Նաղու եարս խուրպէթ կ'երթայ, ետըւէն հասնիմ.
 Աճապ օր ալ տ'իլլի՞ ես եարս տեսնիմ:

ԱԱ 462

22ա

Յածցէ՛ք, լեռնե՛ր, ցածցէ՛ք, վրանուդ օսնի՛նք,
 Աղբարս պանդուխտ կերթայ, ետեւէն հասնինք,
 Բարեկա՛մք, տվայ արէք, մուրատնուս հասնինք:

ԱԱ 514

Ուսկա կու գնամ, խօշ եա՛ր,
 Արե՛կ, դիմ ճամփեկըն օրհնէ՛.
 Տարեկ մի օֆա պահէ՛,
 Զերբսիկդ ի մարդոյ ծածկէ՛.
 Թէ գամ, նայ տուա արա՛,
 Թէ չգամ, նայ դու սեւ ներկէ՛.
 Հազա՛ր ամանաթ, հոգի՛,
 Յետեւ ինձ ըզսէրըն թաբկէ՛:
 ՎննԲ (ԴԺՏ 206)



ՀԱՅՐԵՆԱԲԱՆՁՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ



Ալ մահրումաս լուացեր եմ,
 Ղարիպ էրկիր գընացեր եմ.
 Խապար տարէք իմ եարիս,
 Ղարիպ անտէր մոհուրիւ եմ:
 ԺԱՐ 51 ԱՐՁ 1895 57

1 ԱՐՁ մահրուման լուացել:

2 ԱՐՁ ղարիբ տեղը գնացել:

4 ԱՐՁ ղարիբ տեղը մնացել:

Ես ծարաւ եմ, ջուր չկայ,¹¹
 Սարերին աղբուր չկայ.
 Վախում եմ ղարիբ մեռնեմ,
 Վրէս էլը-գին չկայ:
 ՆՀՁ 103

Հմմտ. 42, 44, 62 երգերը:

Ես ղարիբ եմ՝ ջուր չըկայ,
 Սարերին աղբուր չըկայ.
 Վախենամ ղարիբ մեռնեմ,
 Վրէս մէր ու քուր չը գայ:
 ԱՀԴ 115 ԱՀԺԸ 25 ՀՄԽԲ 23

1 ԱՀԴ ծարաւալ եմ:

3 ԱՀԴ վախում եմ ղարիբ մեռնիմ:

4 ԱՀԴ քշտիս մէր ու քուր չկայ:

Մըրաւալ ըմ, ճիւր չըկայ,
 Սըրէրանում ըմ ախպիր չըկայ,
 Կը մէռնիմ զարիւր էօլքիւմ,
 Քըշտես մար ու քուր չըկայ:

ԱՀԺԸ 25

Հմմտ. 42, 62, 277, 284 երգերը:

Ես զարիւր եմ, տուն չունեմ,
 Գիշերները քուն չունեմ.
 Սաղ տարին ինձ ձրմեռ ա,
 Մեկ օր ինձ դարուն չունեմ:

ԺԽ 379

Ես շէֆթալուի մորճ մ'էի,¹²
 Ապառաժ քարը բուսնէի:
 Եկին, քաշեցին տարին,
 Զիս ալլոց ալդին տնկեցին:
 Շէքրէն ալ շէրպէթ արին,
 Ուր բերին ինծի ջրեցին:
 Եղբա՛րք, եկէ՛ք զիս տեղս տարէ՛ք,
 Ու ձնան ջրով ջրեցէ՛ք:

ՀԱ 449

Ես ալ շափտալու մորճիկ էի,
 Ապառաժ քարերն ի բուսայ,
 Եկին քաշեցին, տարին,
 Իս ալոց պաղլա տնկեցին:
 Շէքէրն ալ շէրպէթ արին,
 Իս ու իմ քոքը շրեցին:
 Շէքէրէն շէրպէթն ի՞նչ անեմ,
 Իս իմ վէթանը տարէ՛ք,
 Կու կենամ ծաբաւ ւ անօթի...

ԱԱ 559

Էլաւ հէյք, էլաւ լիւսին,¹³
 Կան էկան մէջ վարդնոցին:
 Իրեք խայերէն ասաց,
 'Մէջ վարդին՝ էրկուը կարիւրին:
 Կարիւրն ուր կարիւրութիւն,
 Կարն ուր սրտի ուզածին,
 Ի՞նչ դիժար կէլնի էն առճին տարին:
 Կազար նռը, շաքար ուտես,
 Մեռ ծոցն ի, ափիկն իրիսին.
 Կազար ալ կումաշ խայնես,
 Պէ ատլաս, սիրտը սև՝ իրեսն ի դեղին:

ՎՍԱ 52

էս տեղ պառկելու՝ ես քունջ (անկիւն) մը կուզեմ, ¹⁴
— Յորի.

— Երկինքն է զարիպ, գետին անծանօթ,

Ջուր-հացն է լեզի, մարդիկ անամօթ

Նէ սէր, ֆուխարին նումուտ,

Հողն է անըռամ, սրտերը քարոտ:

Առաքելոյ գեալն գետան,

Խապրիկ մը կուզեն իսկի շիտան,

Աստուած արէր սապալի օջախ,

Չեղնէք տարր է տարր քանդուէր իմ օջախ:

Եարաբ, Խոտէօ, ես քի կաղաչեմ.

Ձեռքուկըս կը թալեմ՝ զքու փէշ կը բռնեմ,

— Կեղնի սաղ աչքով զըմէն լէ տեսնեմ,

Հասարաթս առնեմ, մուրադս կատարեմ ու էնտեղ թաղուեմ:

Եաման կռունկ քու կանչով,

Եաման բլբուլ քու տաղով,

Մշու սարեր ոամ ըրէք,

Իմ տարտին դարման ըրէք...

ԱՐՁ 1894 49

Էրկու եար որ մէջտեղ տիսնաս, ¹⁵

Ախ վախ ուր խօր խէրանին:

Կարիքն ի օտար ախշար,

Սիրտ նեղ, կեանքն ի սպառ,

Թէ սրտի հարարաթն ասես,

Ապառաժ քեարեր կպատուի:

ՎՍՍ. 52

էրնէկ կուտամ ձեզի, սարեր,
 Զուր շունիք՝ կանանչ գունաք,
 Ոչ մահ ունիք, ոչ մեռանիք,
 Ոչ դարիպ էրկիր կըզքենաք:

ԺԱՐ 49

Ժամ ժամ զիմ զարիպութիւնս
 Ես չիշեմ, ու նստիմ ու լամ:
 Ճապղղել եմ ջրի նման,
 Ի յօտար երկիր կու գնամ:
 Աստուած գիտէ ան ճանփան,
 Ուր երթամ, կամ ուր տի մնամ:
 Ո՞վ կապէ խաշն իմ սրտիս,
 Կամ հոգւարք, որ ես դուրանամ:
 Յորեկն եմ ն' ետի նման,
 Ուր նեւտն, ես ի հոն կենամ:
 Գիշերն աղեղան նման՝
 Ես լարթափ ի վար կու մնամ:

Հե ՎՏԲ (ԳԺՏ 203)

- 2 Հե յետ փոխ. ես:
- 2 Հե նստեմ:
- 3 Հե ճապղղեր եմ:
- 3 ՎՏԲ ջրիտ:
- 4 ՎՏԲ եւ ատար:
- 5—8 Հե չիք այս երկու տողը:
- 9 ՎՏԲ եւ տիտ:
- 10 Հե դով տեսնում՝ իղէմ կու գնամ:
- 12 ՎՏԲ կու գնամ փոխ. կու մնամ:

Իմ սիրտը կժի պէս կոտրեմ, ¹⁶
 Քեանի ճիւր լցեմ կ'տանի.
 Ամէն խաւք ուր ինգիւն կնդեմ,
 Ես եմ մոլորվեմ.
 Ամէն քեար ուր տեղն ի տատրեմ,
 Ես եմ կլորվեմ:

ՎՍԱ 53

Հմմտ, 56 երգը:

34

Խարիպ իմ ու ձերն եկի, ¹⁷
 Ձեր հոգուն համար պահեցէ՛ք:
 Ապրիմ նը աղեկ անիմ,
 Թէ չապրիմ, տարէք թաղեցէ՛ք:
 2Ա. 486

35

Խարիպ ուր որ կ'երթար ¹⁸
 Դռուին կը գոցեն,
 Կտոր մը հաց կուտան,
 Սիրտը կը խոցեն:
 Խարիպին խարիպին, մարը խարիպին,
 Կռւար ու ժուռ կուգար քորը խարիպին:
 Կանչէ կռունկ կանչէ,

Չանլիդ բարակ է.

Ուր որ խարիպ մը կայ

Սիրտը կը բակ է:

Յարիպին խարիպին, մարը խարիպին,

Կուլար ու ժուռ կու գար քորը խարիպին:

ԲՆԲ 42

Հմտ. 38 և 38ա երգերը:

36

Մառներ դուք ծիրան միք տայ, ¹⁹

Ճղներ՝ դուք էլ բար միք տայ:

Ես դարիր եմ, ղոնախ եմ,

Դարդերս իրար միք տայ:

ԴՄ 149

37

Կանչէ՛, կոռ՛նկ, կանչէ՛, ձայնդ բարակ է,

Որտեղ դարիպ մի կայ՝ սիրտը կը բակ է,

Ղարիպութիւն տեղը խիսդ անճարակ է.

Կըռո՛նկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Կանչէ՛, կոռ՛նկ, կանչէ՛ բարցր լոռներուն,

Ղարիպութիւն կէրգամ, վախեմ մեռնելուն.

Ֆալաքը զիս զատեց քօրայայ կառներուն.

Կըռո՛նկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Կըռո՛նկ, իջած տեղն շայիր-շիման է,

Որտեղ դարիպ մի կայ՝ սիրտն կուման է,

Ամէնին՝ լուս արև, ինծի՝ տուման է.

Կըռո՛նկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Ղարիպն տըրտմեր ու գնացեր է ուն (...այ),
Երկու ձեռքն էրեսին դրել ու կու լայ.
«Վախեմ՝ ղարիպ մէննիմ, զիս, ալ օ՛վ տի լաք.
Կըռո՛նկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:

Ղարիպին աչեր խոցուէր ի լացէ,
Որդեղ որ կերդայ՝ ճանրան ի թաց է,
Շասիքը կըտըրտեր, մըսիկը բաց է.
Կըռո՛նկ, էրդաս անդին, ըսե՛ս մօրերուն:
ՀՄԺԵ 247

38

Կանչէ՛, կըռունկ, կանչէ՛, ²⁰
Տակըդ կանաչ է.
Աշխըբքին արեգակը
Ինձի դաման է:

Կանչէ՛, կըռունկ, կանչէ՛,
Զէնրդ բարակ է.
Քու անուշ խաղըդ
Ինձի դաման է:

Կանչէ՛, կըռունկ, կանչէ՛
Քանի գարուն է.
Ղարիբներուն սիրտը
Գունտ-գունտ արուն է:

Կռունկ, ո՞ւրտից կուգաս.—
Բարձր լեռներէն:
Կըռունկ, եղած տեղըդ
Չայիր շիման է:

ԺԱՐ 18 ԱՐՁ 1895 57

9—12 ԱՐՁ չիք այս շորս տողը:
Հմտ. 35 երգը:

Կանչէ՛, կոռունկ, կանչէ՛, ²¹
 Քանի գարուն է,
 Ղարիբներու սիրտը
 Գունդ գունդ արուն է:

Կանչէ՛, կոռունկ, կանչէ՛,
 Ձէնըդ բարակ է.
 Եարիս լեզուն թաղա
 Մեղրած կարագ է:

Կոռ'ունկ, էղած տեղըդ
 Չայիր-չիման է,
 Աշխարքը արեգակ՝
 Ընծի դուման է:

ՌՄ 63 Տե 75

11 Տե գարրներուն սիրտը:
 Հմտ. 35 երգը:

Կանչէ, կոռունկ, կանչէ ձէնդ բարակ է,
 Եարս կորուցեր՝ հալս եաման է,
 Կոռունկ, եղած տեղդ չայիր չիման է,
 Աշխարհք արեգակ, ինծի տուման է:

ՋԲ 21

Կանչէ՛, կոռունկ, կանչէ, քանի գարուն է,
 Ղարիպներու սիրտը գունդ-գունդ արուն է,
 Քու իջած տեղտ չայիր չիման է,
 Աշխարհին արեգակ ինծի տուման է:

Կանչէ՛, կոռունկ, կանչէ բարձր սարերէ,
Գնացեր եմ զարիւղ էրկիր, վախեմ մեռնելէն,
Մի՛ լա՛, մարիկ, մի լա՛, ես զարիւղ տեղ եմ,
Վաթանիս հողի ջրին ես կարօտցեր եմ:

ԶԲ 34

Էմմա, 35, 38 հրգերը:

39

Կրռունկ կանչեց սարերուն, ²²

Ղարիբ տըղէն երերուն:

Սըրտիկ, մալուլ մի մնա,—

Աշխարհ մարդու չի մընա:

ՀՄԽԱ 7

40

Կոռ՛ւնկ, յիւստ կը կեաս Բաղդաստայ չօլէն

Խաբրիկ ըմ չունի՛ս իմ խօրէն, մօրէն:

— Քիւ խէրն ի մեռի, քիւ մէրն ի շիւարի,

Ասիր ուր ձէթիկ ձեաքա՛իր ձըւարի:

Կոռ՛ւնկ աստուած կ'սիրես,

Քիւտիկ ըմ կիրիմ, տամ քեզի ամանաթ,

Տանես իմ խէրանական աշխարք,

Ասես՝ քիւ մէկ տղէն գեոյ Հնդքստան:

ՓՇ 24 ՀՄԽԱ 53

— Կըռունկ, յո՞ւտ կուգաս:
 — Բաղդատայ շողէն:
 — Խաբրիկ մը չունիս
 Իմ հօրէն, մօրէն:

— Քու հէրն ի մեռի,
 Քու մէր շըւարի,
 Առի ուր ձէթկիկ
 Չագեր, ձըւարի:

ՀՄԽԱ 53

41

Հարայ, հարայ հըրէնէ,
 Հըսկը հանած ա կիւրէնէ,
 Շօշ տամ շըմալ կըռանամ,
 Դիբի վաթանըս ըրկընանամ:
 ԱշտԷ 28

42

Հիւլանդ եմ, հալիկ չունիմ,
 Խարիպ եմ մայրիկ չունիմ,
 Ընկեր եմ ծովուց օրթան.
 Ծլալու ճարիկ չունիմ:

Ա՛խ ըսիմ արին կուգայ,
 Սիրտս սեւ քարին կուգայ,
 Վախիմ տէ խարիպ մեռնիմ,
 Օնդ քօր, օնդ ախբեր կու կայ:²³

ԲնԱ 623

ՀՃՄտ. 25 25ա 62 Էրզնըր:

Ղարիր եմ, տեղս քար ա,
 Ղարիրութիւն դժգոար ա.
 Աստուած սիրէք բան շատէր,
 Ղարիրն ես ի՞նչ անճար ա: ²⁴

ՀԱՄԵՐ 28

Հմմտ. 44 երգը:

Ղարիր եմ, տեղս քար ա, ²⁵
 Ղարիրն էդ ի՞նչ անճար ա.
 Վախում եմ ղարիր մեռնեմ,
 Անագէ հողը մտնեմ:

Ն22 108

Հմմտ. 25 43 62 երգերը:

Ղարիրը պարկեկ ա, անճար կտնբայ, ²⁶
 Հէր ու մէր չի կայ, որ հոգսը հոգայ,
 Քարերը հօրդանն են, ֆօղը դօշակ,
 Բարց ու բալիշ շունի նա իր գլխի տակ:

Մեր շունի, որ տեղը գցէ վերցնէ,
 Քիր շունի բարցի էրէսը դարցնէ,
 Եար էլ շունի հալը, խաթրը հարցնէ,
 Ախպեր շունի շուխայ կտրէ, հաղցնէ:

Վայ էն մօրը, որ ղարրին բերել ա,
 Քշերը ծիծ ա տվել, ցերեկը ըրօրել ա,

Ղարիբը երգրէ երգիր կորել ա,
Ինքն իրա ճամփէն լափ մոլորել ա:

Տասը տարի կայ հեռացել է, կորել
Օտար երգիրներ ա ընգել, կորել,
Ընչանք շմեռնէի եարս տեսնէի.

Վարժ ու ռեհանի պէս մօտը բռնէի:

ԱՀԺԱ 66 ԶԲ 34

Հմմտ. 48 59 երգերը:

46

Ղարիպ եմ ղարիպ զուշ եմ,
Ղարիպ երկրի դուշ եմ
Մտնիմ տուն՝ մէր չկայ,
Յեւէմ դուս՝ չօլի զուշ եմ:

ԱՀԶ 333

47

Ղարիպ եմ... չունեմ,
Ես հիւանդ եմ, ճար չունեմ
Վախենամ ղարիպ մեռնեմ,
Վրէս էլ ուզէլ չունեմ:

ԷԱԺԶ 113

Ղարիպը պառկեր է՝ անճար կը տքայ²⁷,
 Չունի հարիկ, մարիկ, օր իրեն հոգայ,
 Քարերը հօրդանն էր, հողերը դէօշակ.
 Չունի գլխուն տակը բարձ՝ ինչդ էնէր:

Մարմ ա շունէր տեղը ցկէր վերցնէր,
 Քուրմ ա շունիր՝ բարձին ղպլան դարձնէր,
 Եարմ ա շունիր՝ հալը, խաթրը հարցընէր,
 Մէմ մեռնիլ, մէմ բաժնիլ, մէմ ղարիպ էրկիր:

ԶԲ 34

Հմմտ. 45 59 երգը:

49

Ղարիպ եմ տեղս քար է,
 Հիւանդ եմ, շատ անճար եմ.
 Հեռու տեղ մարիկմ ունեմ,
 Թե շունիմ որ հասնէի:

ԷԱԺԶ 116

50

Ղարիպ եմ ու խիստ լալի,
 Յայս օտար երկիրս որ եկի.
 Ոչ հայր, ոչ եղբայր ունիմ,
 Ոչ ունիմ սրտով սիրելի.
 Ինձի սիրելի պիտէր,
 Որ սրտի՛ս սէրըն ասէի,
 Զհոգուս հոգին ի՛ր տայի,
 Յարեւէս բաժին հանէի:

ՎՆՆՐ (ԳԺՏ 199)

Ղարիպը հիւանդ էր, ²⁸
 Ծանր կը տըբար,
 Չորս բռլորը կաշէր,
 Ազգական չկար:

Սուտ ազգական եղան,
 Հարցուցին հալը,
 Կուղէին ուտէին,
 Ղարիպի մալը:

ԱՆԵ 206

Ղարիպի հառաչք ու մորմոք. ²⁹
 Էս գիշեր, աշնան գիշեր
 Շողն իջնէր զգետին նըշխէր,
 Սարերու նաշխուն հաւքեր,
 Անխասավաթ քունն են մտեր:

— Ես մենակ, էս բնակեր,
 Անտուն, անտեղ, անընկեր,
 Ըմէն Քու (հայրենիք) հալ ու դարդեր,
 Սիրտս ընկեր կրակ դառեր:

Ձիք մալում է՝ իմ ամեն բան՝
 Մըր ժամն ու երեք խորան,
 Իմ տուն իմ տեղ, ու իմ վաթան,
 Իմ ճըժեր, մալեր ու իմ թուլան:

Ջրմէն լէ թողի, առի գարէ մ'հաց,
 Ջփողպատս թոթոխ՝ Էլայ աչքով թաց,
 Փարայ բերելու հասալ ի Սթամբուլ,
 Մարաւ էդ իմ ծովս, շուտ կտրաւ իմ դօլ:

ԱՐՁ 1894 49

Ղարիպ պառկեր, անտէր կը տըքայ, ³⁰
 Անիծ, օջիւ էլեր իրեն կը հոգայ:
 Չունի հար, մար, չունի քուր, ախպար.
 Մահուան դուռն էկեր, անճար կը սըգայ:

—Քանքիւ լըս թեկ էրէք, պատանքըս կարեցէք.
 էրեսըս պատն էրէք, ճրագը մարեցէք.
 Տասը մատըս կը տրեցէք, մոմեր շինեցէք,
 Չորս բոլորս ալախաշխաշ վառեցէք.
 Աւագը խունկ էրէք, վըրաս ծըխեցէք:

ԺԱՐ 20 ԱՐՁ 1895 54

- 1 ԱՐՁ ղարիպ պառկել, անտէր կը տըքայ:
 2 ԱՐՁ անիծ օջիւ էլեր իրենք կը հոգայ:
 3—4 ԱՐՁ չիք այս երկու տողը:
 7 ԱՐՁ մոմ փոխ. մոմեր:
 8 ԱՐՁ չորս բոլորքս:
 Հմմտ. 45 48 երգերը:

54

Մարդ որ մարդու կանիծի, ³¹
 Թող ասի՝ կարիրանաս,
 Սար քեյ սնար էլնի,
 Աւաղի մէջ թիւլանաս:
 Թէ քեռ աշխարհ յիշես,
 Ողջ անձնով էլնես ցաւագիւն:
 ՎԱԱ 52
 Հմմտ. 255 երգը:

Պաղչա եմ, պար շունիմ ես,

Այլա եմ, նար շունիմ ես.

Բընաւեր հաւք եմ էղեր,

Իջնելու տեղ շունիմ ես:

ԺԱՌ 45 ԱՐՁ 1895 57

55ա

Ես պաղչա ու պար շունիմ,

Շատ դարտ ունիմ, դեղ շունիմ,

Բընաւեր հաւքի նման

Մէկ նըստելու տեղ շունիմ:

ԺԱՌ 39

55բ

Պաղչա ունիմ, պար շունիմ.

Հայվա ունիմ, նար շունիմ:

Ինկեր իմ ծովուն օրթան

Ալ ելլելու ճար շունիմ:

ՀԱ 409 ԱԱ 493

1 ԱԱ պաղ շունիմ փխ. պար

2 ԱԱ հէլվա

3 ԱԱ իմ եարբս է ալոց երկիր

4 ԱԱ տեսնելու փխ. ելլելու

56

Սարերն ամէն ձին եկեր, ³²

Սարերու վէրն վերադեր.

Նա ձայն ի ճղերն առեր,

Ամէն հաւն իւր ընկեր գտեր,
Ես եմ մոլորեր:
Ամէն քարն իւր տեղն դադրեր,
Ես եմ գլորեր...

ԱՀԺԲ 105

ՀՄՄ. 53 Կրդը:

57

Սարի տակը մնացի,
Գլխը կապս վլացի,
Խապար տարէք իմ եարիս,
Ղարիք անտէր մնացի:

ԱՐԶ 1895 57

58

Սիրտըս նըման էր էն փրլած տըներ,—
Կոտրեր գերաններ, խախտեր է սըներ.
Բուն պիտի դընեն մէջ վաչրի հաւեր.
Երթամ ձի թալեմ էն գարնան գետեր.
Ընիմ ձըկներու ձագերացըն կեր:

Ա՛յ, տօ լա՛ճ տընաւեր:

Սև ծով մ'եմ տեսե, սիպտակն էր բոլոր.
Ալին կը դարնէր, չէր խառնի յիրոր.
էն ո՞րն է տեսե մէկ ծովն երկթաւոր,—
Անտունի սիրտն է պըղտոր ու մոլոր:
Ախ, իսկի միլնիք սըրտիկ սևաւոր:

Ա՛յ, տօ լա՛ճ տընաւեր:

ՀՄԽԱ 6

Ստամպօլու խորունկ խորունկ ձորերը,
 Տասը տարուան վաստակըս ընկեր կորեր է,
 Վայ, ան մարիկին օր ինծի բերեր է,
 Գիշերը ծիծ տուեր, զօրը օրեր է,
 Հարիկ շունիմ խաթր ու հալս հարցնէ,
 Մարիկ շունիմ եարաներս լաւցնէ,
 Քուրիկ շունիմ տեղս ցկէ վերցնէ,
 Ախպար շունիմ շուխայ կտռէ հագցնէ:

ԶԲ 36

Հմմտ, 45 48 երգերը:


Քանդիրը դրին ճիտըս՝ արևուս ուրդան.³³
 Իջնեմ զարիպ էրկիր, շատ էնեմ ֆիրդան.
 Քարերը դօշակ էնեմ, հողերը հօրդան:
 Չունիմ գլխուս տակը բարձ, ա՛խ, ես ի՞նչ էնեմ:

ԺԱԲ 20 ԱՐՁ 1895 54

2 ԱՐՁ շատ էնիմ ֆերդան:



ԿԱՐՈՏԻ, ՍԻՐՈՒ ՄՊԱՍՈՒՄԻ
ԵՐ ԳԵՐ



Ալվա էկան դարնայ էրկան օրերը, ³⁴
 Հալեցան ձօները լցուան զետերը,
 Բուսցան առուններուն կանանչ խոտերը,
 Վիրա՛ վիրա՛ կ'երթան կարսուն էտեր,
 Կաքաւկին տասուերկու ձագանց արևը,
 Էրթաս, ընկիս Սթամպուլա վերելը:
 Վաղուց դայողներուն հետ սիլա ճամբէի.
 Չմեռած իմ սիրած եարբս տեսնայի,
 Էն օր եարբս ընկեր պաղչան քննացեր,
 Հովը շաշմիլ ըղէր, ծոցիկն էր բացեր:
 Իմ տէ՛ր, փափաքս տո՛ւր, սիլաս իմ դարձեր
 Օխթը տարի կէնէ սիլաս իմ մոռցեր
 Դարնայ ջրերուն պէս ճաշմիլ եմ էղեր,
 Զալըմ ֆելեկին ձեռք շաշմիշ եմ էղեր:
 Դարունը՝ տի քայի խաշլըն շունէի,
 Եարբս ինծի գիր մէ՛ր ճամբեր փարայով.
 «Կուզես կեմիով էկօ՛, կուզես խարայով...»

ԲՆԱ 473

Ախ ըսիմ արին կուգայ, ³⁵
 Սիրտս սեւ քարին կու գայ.
 Վախիմ թէ դարիպ մեռնիմ,
 Ոչ քոր ոչ աղբար կու գայ:

Լուսունկան բակ բոլորեց,
 Սեւ ամպին մէջ ոլլորեց.
 Յարիս ղուրպէթն էրթալը,
 Եօթը տարին բոլորեց:

ԲնԱ. 40

Հմմտ. 25 42 և 64 Երզնէր:

63

Ախ սանհեր դու գացիր բարով. ³⁶
 Զմուշ չես տեսնէր հազար տարով,
 Հարս նստեր ճիծ կը բերէ
 Առջինէկն էլ գութան կը վարէ
 Վալլէ լէ Արփիկ վալլէ վալլէ Արփիկ վալլէ:
 Ծովուն հավքմ կէր, անունն էր արօր,
 Վզիկն էր էրկէն, սըրտիկ սեւավոր
 Առնէմ բեզօրէն, էրթամ հետ ինոր,
 Արի եար արի, ղուրպաթ մի մնա
 Աստուրի մալը ծի, քէ չի մնա:
 Երկինքն է ամպեր, կուգա մաղմաղ ձին
 Քո սիրու համար, մնամ երերուն,
 Արի եար արի, խռով մի մնա
 Աստուրի մալը ծի, քէ չի մնա:

ՓԱՀ 169 ՌՄ 69 ՍՀԱ 125

Հմմտ. 76, 101, 102, 102ա, 102բ և 124 Երզնէր:

64

Ամպեր է գարուն կու գայ,
 Սեւ սրտէս արին կու գայ,
 Գիտեմ քի եարս տունն է
 Զանը ղուրպէթէն կու գայ:

Այս ընեմ արին կու գայ,
 Սիրտս սեւ քարին կու գայ,
 Ես հոս անտէր տի մեռնիմ,
 Վե՛ւ գիտէ եարս եբ կու գայ:

ԱԲ 121

Հմմտ. 62 երգը:

65

Ա՛յ Եօրկիւ ա՛յ Տիմիթրի,³⁷
 Հետն ընկեր լընիս խարիպիս:
 Առնես ու փէշիտ ներքին,
 Աներեւուն լեռնէն անցընես:
 Բերես իր սիւան հենես,
 Հասցնես սրտին մութատին:

ՀԱ 451

Հմմտ. 65ա, 242ա երգերը:

65ա

Այ Եօրկի, այ Տիմիթրի,
 Հետըն ընկեր լընիս զարիպիս.
 Առնես ի ձիուդ էռջին,
 Անհուն լեռներն անցընես,
 Անցնիս, սիւա բերես,
 Ինչ տիլէկ ունի՝ կատարես...

ԱԱ 462

66

Այ իմ կարօտով եարուկ, սիրունիկ,
 Որ գացած տասն երկու տարի,
 Ի՞նչըիս եմ կարօտացեր,
 Իրեսին շէւքէթն եմ մոռցեր:

Աչ աչերս քեզ տեսեր,
 Աչ լեզուս հետզ խօրաթեր:
 Տարին տասն երկու ամիս
 Ֆուն ծովուն եալըն կու կենաս,
 Մովը մահանայ կընես,
 Իս քենէ հասրաթ կուպահես:
 Քեւերս կարմունչ կապեմ,
 Սովեզերէն անցնիս ու գաս,
 Եկոր քեզ բաղնիք տանիմ,
 Մըքմա թէլ՝ բարչամդ վլանամ:
 Երբ բաղնիքէն ուր ելլես,
 Ղալտընաս ու մեր տունը գաս:
 22 295 ԲՆԱ 492 ԱԱ 109
 Հմմտ. 95, 173, 174 երգերը:

67

— Ա՛յ իմ մայիսի անձրե, ³⁸
 Ուր կուգաս կանչիս վրայ,
 Քը գասնը կենամ կանաչ,
 Քը չի գաս, երթամ չորանամ:
 2Ա 466

68

Ա՛յ իմ սարերու (կամ հարաւու) հովիկ,
 Վաք իջեր դռնակն է դարկեր:
 Զրթնցայ ու վեր ինկայ,
 Գիացայ թը խարիստ է եկեր:
 Նորուկ ճահելուկ հարսնուկ,
 Ձեք իջէր դռնակն է բացեր:
 Տեսեր ուր իր եարը չէ,
 Մէլիկեր ու ներս է գացեր:

Կեսրակն ալ հարցմունք արեր,
 Հա՛րսնուկ, քու ո՞ր տեղտ է ցաւներ:
 Մա՛րիկ քու որդուտ սիրուն,
 Իմ ամեն տեղիկս է ցաւեր:
 Մի՛ լար, մի՛ խառդիր հա՛րսնուկ,
 Գիր կ'անեմ որդիս կու բերեմ:
 Գիր անես, որդիտ բերես,
 Աստուծու լուսուն տիրանաս:
 Գիր չ'անես ու չի բերես,
 Կ'անիծեմ ուր քար կու դառնաս:
ՀԱ 433

68ա

Բարձր սարերու հովեր,³⁹
 Վար իջեր դռնակն է ծեծեր.
 Ու նորուկ ջահելուկ հարսնուկ՝
 Որ իջեր դռնակն է բացեր.
 Տեսեր, որ իր մարդը չէ,
 Մալուկեր ու ետ է դարձել:
 Կեսրակը հարցմունք արեր.
 «Հարսնո՛ւկ, քու ո՞ր տեղդ է ցաւցեր»:
 — Մարի՛կ, քու որդուտ սիրուն
 Իմ ամեն տեղիկս է ցաւցեր:
 «Մի՛ լար, ջահելո՛ւկ հարսնուկ,
 Գիր կ'անեմ որդիս կու բերեմ»:
 — Գիր անես, որդիդ բերես,
 Աստուծու լուսուն տիրանաս.
 Գիր չ'անես, ու չի բերես,
 Կ'անիծեմ որ քար կու դառնաս:
ՀՀ 298 ԲՆԱ 694 ՄՍՍ 1884 ԱՀԺԲ 104

1 ԲՆԱ բարսը փոխ. բարձր:

2 ՀՀ ԲՆԱ ուր փոխ. վար:

6 ԲՆԱ իտ է դարձել փոխ. ու ետ

7 ԲնԱ Հարցմունք է արեր:
 9 ՀՀ որդւոյդ սիրողն:
 10 ԲնԱ էմմէն փոխ. ամէն:
 10 ԲնԱ այս տողից հետո ունի հետեւյալ շարք տողն եւ՝
 — Իմուն ճահիլուն հարսնունկ,
 էրեսդ ինչո՞ւ է մալուդ:
 — Քու մէկիկ որդուն համար,
 էրեսս էմմէն օր մալուդ:
 11 ԲնԱ «Մի՛ լար սիրունիկ հարսնունկ:
 12 ՀՀ կը բերեմ փոխ. կու բերեմ:
 15 ՀՀ որդիդ բերես փոխ ու չի բերես:
 8—16 տողերի փոխ. հետեւյալ 12 տողն է՝
 ՄՍՍ 1884 3745
 — Իմուն ճահիլուն հարսնո՛ւկ,
 Երեսդ ինչո՞ւ է մէլուդ
 — Քու մէկիկ որդուն համար
 Երեսս ամէն օր մէլուդ
 Գիր կենիմ որդիս բերիմ.
 Օր դիր էնես որդիդ բերես
 Աստուծոյ լուսը տեսնես,
 Օր շնեսս, չի բերես,
 Կանխման օր քար կը դառնաս:
 Կանանչ դաշտ ու դուր մեյդան
 Չի տեսար էն ծառ ամիրան
 Ան Էրէկ անցաւ ցիրեկից:
 10—12 ԱՀ չիք այս Էրեք տողը:

69

Ան բարձր սարին վրայ կաքուով մէ նստեր, ⁴⁶
 Կուտ կուտէ, արցունք կու թափէ,
 — Կաքուով, դուն ինչո՞ւ կուլաս.
 Թող, էրթայ դարիպին տէրը լայ.
 — Դուռը շեմ գիտէր դարիպին:
 — Էկուր նշանով ցուց տամ:
 — Քու դարիպը տուտեղ կը կենայ:
 — Դունուկն է բոյախանայ.
 Նուշ առէ, ամբակ կը ծախէ.
 Ամենուն արժան արժան

Ինձ տեսէր սուղ կը ծախէ
Թուխ աչքեր կիշևոք ըրեր,
Ունքերով վեր կը քաշէ:

ԷԱԺԶ 106

Հմտ. 118, 118ա, 118բ հրդերը:

70

«Անլուս լուսընկին գիշեր
Ան հարուն արտ կու քաղէի,
Քաղէի ու բըռնտէի,
Մանուշակ կեմով կապէի,
Կըրէի կալն բլէի,
Արծըթէ կամով կամնէի:
Տուն լընայի
Չազերուս ապրանք ընէի:
Գիշերը քուն չունիմ
Ցորեկը տըշլըիս,
Աղաս սիւա եկու
Ես կուտամ խաշլըիս,
Պիլեզիկս ալ կանիմ
Քու ձիուդ պաշլըիս:
Ստընպոլ ուր կըսին
Մէջն երկու դարի,
Հա հար, ե՞րբ տուրբի
Քու երկու տարի:
Երկու տարին ալ ոլըրի
Գալու դարար է,
Չորս տարին ոլըրի
Վաստակն հարամ է,
Հինգ տարին որ մտնայ
Տէրը վերամ է,
Վեց տարին որ մտնայ
Սեպէ մեռած է:
Երկու ծով ծով աչեր
Իս մի լացընեք

Իս շատ ին լացուցեր՝
Դուռն մի՛ լացըներ,
Տէրտս մաւելցըներ
էօմր քս մանցըներ»:

ԲՆԲ 694

71

Անծեղն ալ կու կանչէ, իշալլահ խեր է,
Մարիկ ելիր կայնէ, աղօթքըդ ըրէ,
Քէվրանն եկաւ անցաւ, քու տղադ ո՞ւր է:
Պիւլպիւլն ալ կու կանչէ պաղչէ պարի պէս,
Մէկն ալ չկայ խապրիկ մառնեմ խարիպէս,
Խարիպըս կարօտցայ աշվա նարի պէս:
Կեսերս հագածը փուլլու շապիկ է,
Գիտես քի քու տղադ ինծի էրիկ է,
Ալ չիմ դիմանար, մարըս, հերիք է,
Նըստած տեղըս լեռ է առջեւս ծով է,
Երթացած ճամբաս կրակ ու հով է,
Մարիամ Ածամար քինար է քով է:
Գիշեր ցորեկ հիշ չես ելլար մտացըս,
Գլուխս բարձ դնեմ կուգաս դիմացըս,
Աղու ըրիր ըմմէն օրուան կերած խըմածըս:
Կուլամ, ուղորմած տէր, աս ընտո՞ր բան է,
Պարտըկանն ալ եկեր՝ տընեն կը հանէ:

ԲՆԲ 680

Հմմտ. 83, 150 երգերը:

72

(Հարսն) Ատ ո՞վ, ատ երգիքտ եկեր, ⁴¹
Ատ օտար հողը կու կոխէ:
Թը մարդ ես նը վա՛ր եկու,
Թը շուշան ծաղիկ գնալու:

— Ու՛շ մարդ իմ ի վար գալու,
 Ու՛շ շուշան ծաղիկ՝ գնալու:
 Պիւպիւլ իմ ու ժուռ գալու,
 Շատ երամ ունիմ գնալու:
 Երթամ շատ երկիր ոսնիմ
 Շատ խարիպ տեսնիմ մէն ի քուն,
 Ամենուն խարիպն է քուն,
 Իմ ու քու խարիպն է արթուն:

ՀԱ 434

Հմմտ. 124 երգը:

73

Արազ-նըզանրմ գեամին,
 Գօքսիս ա տալիս քամին,
 Ես մի դարիք ջան ունեմ,
 Հասրաթ եմ ծոցի համին: 42

ՌՄ 119

74

Արե դիպավ Կողբայ սարին,
 Ե՛րբ պըտի գայ իրեք տարին,
 էրթանք հասնինք նազլու եարին:

ՏԽ 115

75

Արցունքս է կուր զրանը սալը,
 Գացեր է գեմքիս կարմիրն ու ալը...
 Պաղչայիս բոլորը վարդ իմ բուսցուցեր,
 Ապառաժ իմ կըծեր ջուր իմ վաղցուցեր,

Ես ալ իմ սիրելի ձագն եմ կորուսեր,
 Անոր համար կու պտրտիմ սար ու ձոր...
 Սար ու ձոր մոտ կոխեր աշխրբիս վըրայ,
 Աշխրբին արեւը իմ ձագուն վըրայ:
 Եօթը տարի կանէ, ձագ քեզ ատեր եմ,
 Էօմըս ուղուրիդ մախիր արեր եմ,
 Այս գիրս ալ արցունքներովս գրեր եմ,
 Առնես այս գիրը, ձագ, դուն սիլա դաս:

ԲՆՐ 694

75ա

Եօթը տարի կանէ, եար, քեզ ատեր եմ,
 Էօմըս քու ուղուրիդ թէլէֆ ըրեր եմ,
 Արցունքովս աս գրիկըս գրեր եմ,
 Կարդաս աս նամակս, եա՛ր, սիլա անես:

ԱԱ 514

75բ

Եօթը տարի կանէ, եար, քեզ ատեր եմ,
 Տէրտ անելով անձս մախիր արեր եմ,
 Աս գրիկս՝ արցունքովս գրեր եմ:
 Տուն եկո՛ւր, տուն եկո՛ւր, աղաս տուն եկուր,
 Արմաղան չեմ ուզեր, արեւդ առ եկո՛ւր:

ԱԱ 513

76

Բաղէշ կը գովեն չորս գեղ քրթանոց,
 Ես քդի սիրեցի, դրո դուն օրօրոց,
 Խանչեմ եար արե, սարեր լացընեմ,

Շատ դարիպ դուրսաթ ճամխից դարձնեմ: 43

Խաւկունք վըր ծովուն անուն արօր էր.

Սրտիկ սեաւոր, գլխիկ կարմրուոր

Կապեմ բէ շարէն, էրթամ խըտ ինոր,

Որ զիմ դարտ գիտէր, որ զէնու զէտոր:

Դալալ, ուստ գուգաս,— Այար Խլաթայ.

Պագիկմի տամ քե տուր ընձի զոլաթայ:

Խաւկունք կը քէլէր խըտ ծովու ափան,

էն խարիպ խաւկունք, էն ծովէն թափան:

Չորցեր ա գետիւր, կայներ ա գեամին,

Խաղտեր ա սնէր, մըլչնն ա քամին:

Գիշերուան լուսին, ցերեկուան արև,

Ընցար ու դարձար՝ չը տուիր ընձի բարև.

Այ հար արե

Խոռով մի մնայ

Դունիեն աստուոր,

Ինձ քե չի մնայ:

ԷԱԺ2 56

Հմտ. 63, 101, 102, 102ա, 102բ երգերը:

77

Բամբակ հմ ցաներ Խարբերտի ուլան.

Բիւլբիւլ մի փլցուներ ձագերուս եռւման:

Տուն էկո, տուն էկո, սիրածս տուն էկո,

Արմաղան պետքը չէ, արեւդ առ էկո:

Գոգնոցս ներկերեմ Կէնճու տորոնով,

Սրտիկս լէցուեր է գունդ գունդ արիւնով,

Սիրած աղբիւր շինէ հս գամ ջուր խըմեմ.

Ընքուերդ սեւ դար արա, հս վրան թառիմ:

Դուն էկո, գուն էկո, սիրածս դուն էկո,

Հաց ու գինի ունինք, արեւդ առ էկո:

Ձորերուն ջուրերն են տաքցեր,
Վախեմ սիրածս մէջն է լողկըցեր
Աղբար հերիք պառկես
Օրն ու արևն է անցեր:

Մարն ու մանուշակի հոտն սարն ու դաշտ լեցեր
Տուն դարձիր, դիս ջուրը մի նետեր,
Գայլու կեր մընէր, տուն դարձիր:

ՀՀ 320 ՄՍՍ 1884 3730

- 1 ՄՍՍ բամբակ եմ ցաներ հարրերտու օվան:
- 2 ՄՍՍ պիւլպիւլ մի փլցներ հավրուիս ետվան
- 3 ՄՍՍ իմ հար տուն էկօ, փոխ. սիրածս տուն էկո
- 4 ՄՍՍ արդամանդ փոխ. արմաղան
- 5 ՄՍՍ կենճուկ փոխ. կենճու
- 6 ՄՍՍ լեցեր է, փոխ. լեցուեր է
- 7 ՄՍՍ աղբար աղբիւր շինա:
- 8 ՄՍՍ ընթիլիճ սև քար էրա:
- 9—12 ՄՍՍ չիբ ալս շորս տողը:
- 13 ՄՍՍ աղբար հերիք պեռկիս դարունա եկեր:
- 14 ՄՍՍ մուծն ու մանուշակը իրուր խառնըլեր:
- 15 ՄՍՍ մանա լաշըս, քաշա ջուրը մի նետեր:
- 16 ՄՍՍ տար գերեզման կապա, գալա կիեր մի ընէր.
Հմմտ. 136, 151 երգերը:

78

Բարսր քէօշկ ես նստեր, բաղում կու նայիս.
Օսնողին դարձողին սիրտը կու նայիս.
Խօսք էիր տուեր թը սիլայ տի դայիր,
Պէլքի մէկ տերտերուս տէրման լընէիր:

ԱԱ 514

79

Բաքվա քամէն ա կեամ,
Տըռներնա շըխկշըխկամ,

Տիւս յէկէ տրէսէ նրոնացէ
Վէրիմ կարօտ եարն ա կլամ:
ԱՀԺԷ 44 ժն 201

Քաքւա քամին ա գալի,
Դոներն են շխկշխկում.
Դուրս եկա, տեսա հեռւանց
Որ-իմ կարօտ եարն ա գալի:
Ժն

80

Քըղտոր ջուր կուգէր սարերաց թեւն⁴⁴,
Արնոտ հոտ կուգէր գետերաց մօտէն,
Եարիկս ճամբեցի էրկէն ճամբերէն,
Կարօտ մընացի իւր անուշ հոտէն:

Ա՛խ, ես չըխէրայ իմ Ասլու մօտէն,
Ասլիկ ձիկ մոռցաւ գընաց մեր գեղէն,
Ես էլ չըխէրայ կարիբիս մօտէն,
Ափսոս որ խաբրիկմ չեկաւ ինորմէն:

Աւեր Ըստամբօլ, քամբախ Իւսքիւտար,
Կարիբիս մօտէն չէկաւ մէկ խաբար.
Ո՛չ մէկ կըտոր թուղթ, ոչ մէկ կոր պըլիկ
Զէկաւ ուր մօտից. մոռացէր էր ձիկ:

Խէրիկս էր հովիւ, աղբէրս գառնարած,
Կարիբ եմ ճամբե իտե սարերաց,
Իտե սարերաց, իտե քարերաց.
Կարիբիս մեռնեմ, ուր ճամբըններաց:

Քամին վէր ծովուն էրէրաց,
Էնեմ իրիշկեմ քօշկիս ճաղերաց:

Կարիրիս սուրաթն էնտեղ երևաց,
Իմ աղիզ ումրիկս հետ ուր քիւլ արաց:
ՎՍՐ 59 Ն29

1—12 Ն29, չիք այս տասներկու տողը:
17—20 Ն29, չիք այս չորս տողը:

81

Գեղի միջին սրտին նուշ ի¹⁵
Կարիպութեն աշիշ փուշ ի:
Կարիպ եմ խետ կարիպներաց,
Էլայ իրիշկեցի քեօշկի ճաղերաց:

Իմ կարիպի սուֆաթն էրևաց
Իմ տղա չ ումրիկ քիւլ արաց
Ուրախ սրտիկս արուն արաց:

Խարաւ քամին, դիւ դնա, արե.
Էարիպիս տես, խարբիկմ առ, արե,
Արե եար, արե, խոռվ մի կենար.
Սուտ ու փուտ դիւնի մալ մարդու շմնար:

Երեկ յեվարին, վեր պերու քարին.
Ջրինդով զարկին բրինդար հարին.
Խապրիկ տարէք իմ նազու հարին.
Առնէ դեղ-դարման, դայ իմ հարին:

Քամբախ Բուրանիս, փլէր Իսկիւտար.
Իմ կարիպ շերթէր, ձիկ անէր տէրպէտար.
Արի, եար, արե, խոռվ մի մնար
Աստնուորի մալ ձիկ քե շմնար:

ԷՍԺ 44

Հմմտ. 76 101, 102, երգերը.

Գիշեր խալտայ դուս էլայ,
 Թուխ ամպն անուշ կը ցուլայ,
 Աշնան գիշեր՝ հով գիշեր,
 Շաղն իջէ՝ գետին նխշեր.
 Խանդիմ.— լուսնակ դոր կէրթաս,
 — Կերթամ գիշերին ու ցորեկ
 Կէրթամ վեր Ալու սարին,
 Շատ բարե խօրօտ եարին ⁴⁶:

ԷԱԺՁ 93 ԱՀԵ 192

ԱՀԵ 194 ԺԵ 142

Գիշեր ցորեկ հիշ չես ելլեր մտացս.*
 Դլոխս բարձ դնեմ, կու դաս երազս:
 Հէրամ արիր կերած հացս խմածս,
 Աշխարքին չեմ փոխեր իմին սիրածս:
 Աճապ օր տըլլայ առնեմ մուրատս:

Վարդենի պիտէի դուռդ բուսնէի,
 Անցնէիր դառնայիր փէշդ քսուէի:
 Փեշդ քսուէի ու սէրս առնէի,
 Անցնէիր դառնայիր դէմքդ տեսնայի
 Ամէն տեսնալուս ալ՝ կարօտս առնէի:

Խալէմքէր պիտէի Քիւսֆէթդ առնէի,
 Քանի կարօտնայի, վերատ նայէի:

*) Վերնագիրն է «Ալե կէօզլէրի».

Պէլքի ես ալ քենէ կարօտս առնէի:
Ջարկիր կրակ տուիր, կերիմ կու վառիմ,
Ջրի պէս ծարուցեր՝ ճամբատ կունայիմ:

Օխտը տարի կ'ընէ շեմ տեսեր պօյրդ,
Ճնճղուկ ըլլայի թռչէի քովըդ:
Զթողուց խնթամ անդգամ սօյրդ
Տուն եկո՛ւր, տուն ե՛կ, աղա՛ս տուն եկուր,
Արմաղան շեմ ուղեր, արևոտ առ տուն եկո՛ւր:

Քանի՛ մէկ, քանի՛ մէկ՝ աս քու նաղերըդ:
Անմահութեան ջուրով լուս մաղերըդ:
Քանի կ'ապրիմ նէ ղըյմաթս գիտցիր,
Մի՛ կենար եկուր սիրոյ պաղջաս մտիր,
Էկէր ես որ մեռնիմ՝ տիւմանէ քեզի:

ԱԱԱ 111

83ա

Գիշեր ցորեկ հեշ շեւ ելլեր մտացս.⁴⁷
Գլոխս բարձ դնիմ, կուգաս երազս:
Հէրամ արիր կերած հացս խմածս,
Աշխարքին շեմ փոխիր իմին սիրածս,

Աճապ օր տըլլայ առնիմ մուրատս:
Խալէմքէր պիտէի, բէսվէթտ առնէի,
Քանի կարօտնայի, վրատ նայէի,
Պէլքի ես ալ քենէ արդուս առնէի:

Գարնան պիլպուլի պէս պաղճան կ'իջնէանք,
Թև թևի կուտայանք, շիֆթ ծուռ կու գայանք,
Երկիր կու հավասէր, զատուիլ շունէանք:

Զարկիր կրակ տուեր, կերիմ կու վառիմ,
Ջրի պէս ծարուրցեր՝ ճանբատ կու նայիմ:
(Հանգերգ)
ՀԱ 462

Հմմտ. 71 երգը:

83բ

Գիշեր ցորեկ հեշ չեն երթար մտացս,
Գլուխ բարձր դնիմ, կուգայ երազս,
Երազս տեսնելով շոսնիր կարօտս:
ՀԱ 493

83գ

Գիշեր ցորեկ հեշ չես երթար մտացս,
Գլուխ բարձր դնեմ կու գաս երազս,
Երածս տեսնելով՝ կարօտս շոսնիր,
Ահ ու վար շատ կանեմ, բան մը չի բուսնիր:
ԱԱ 520

83դ

Գարնան պիւպիւլի պէս կիջնէանք բաղչա՞ն,
Թեւ թելի կու տայինք, չիֆթ ծուռ կու գայինք:

84

Գիշեր ու ցորեկ կուլամ,
Ձի դադրիւր աչերս ի լալու.
Իմ եարս ի ծոցոյս ելեր,
Ու երես դրեր գնալու.
Զձեռկունքս այլ ի յինք տարայ.
«Բռնելու եմ, չեմ թողելու»:
Չերդումն ի բերանն էառ.
«Դնալու եմ, չեմ կենալու»:
ՊԹՐ ԷՋԱ ՄՈՌ (ԳԺՏ 203)

- 2 ՊԹՐ չի դադրիւ:
- 2 ՄՈՌ չի կտրիւ:
- 2 ՊԹՐ ԷՋԱ ի լալուն:
- 3 ՊԹՐ չեարս:
- 3 ՄՈՌ եարն:
- 3 ՊԹՐ ՄՈՌ ի ծոցէս:
- 3 ՊԹՐ էլաւ: ԷՋԱ ելաւ:
- 4 ՊԹՐ վու, ԷՋԱ և փոխ. ու:
- 4 ՊԹՐ գնալուն:
- 5 ՊԹՐ զձեռքունքս: ԷՋԱ ձեռնիրս:
- 6 ՊԹՐ ԷՋԱ բռնելու ու թող չի տալու (ԷՋԱ չտալու):
- 7 ՊԹՐ ԷՋԱ առեր փոխ. էառ:
- 8 ԷՋԱ երթալու փոխ գնալու:
- 3 ՄՈՌ ու չեմ:

85

Գիշերս ես ի դուրս ելայ,
Ի յերկինքն ի վեր նայեցայ.
(Ուսինն այլ կամար կապել՝

Ի Հոռմն ի վայր կու գնայ:
 — Լուսի՛ն, քո արեւդ ասեմ,
 Պահ մի կաց, մինչ որ լուսանայ.
 Երկու բան գանգատ ունիմ,
 Զայն ասեմ, լուկ ա՛յլվի գնա:
 Գնա՛, իմ հարին ասա՛.
 «Մալուկեր քու հարդ ու կու լայ.
 Հոգին կլափին անել,
 Ու աշուին գալուդ կու մնայ»:

ՎՏԱ ՎՏԲ (ԳԺՏ 215)

- 2 ՎՏԱ լ՛ ի յերկինքն:
 3 ՎՏԲ կապեց:
 4 ՎՏԱ լ՛ ի Հոռմ ի վար:
 5 ՎՏԲ ինչ օր փոխ. մինչ որ
 7 ՎՏԲ բան ես գանկատ:
 8 ՎՏԱ քեզ փոխ. դայն:
 9 ՎՏԲ լօք ա՛լվի:
 9 ՎՏԱ գնայ վ՛ իմ հարին ասա:
 10 ՎՏԱ թէ զարիպ ունիս, հա՛յ կու գայ:
 10 ՎՏԲ ու ելեր քո յհարն ու կու գայ: Ուղղ. Ը. Ի.
 մալուկեր քո հարդ ու կու լայ:
 11 ՎՏԱ հոգին ալ կլափան:
 12 ՎՏԱ լ՛ աշվին քո գալուստ գու մնայ:

86

- Գնալ ու գնալ կ'ասես,
 Ա՛ռ դանակըն ու ղիս մորթէ՛.
 Քո սիրած հարուկն եմ ես,
 Իմ արիւնըս քեզ հալալ է:
 Այս իմ նենգատոր աչերս
 Ծըռկըտի, գայ, զքեզ փնտըռէ.
 Թէ դուն որ ի հոս շըլաս,
 Նա՛յ լեզուակս հետ ո՞ւմ զրուցէ:
 ՎՆՆԲ (ԳԺՏ 206)
 2 ՎՆՆԲ դանակ, ու ղ. Ը. Ն. դանակըն:

— Գնամ ու գնամ կ'ըսեմ,
 Հէ՛նց ասիմ, որ ատալ չունիս.
 Պաղրիկս ի յեփոց դրի,
 Դեռ ատաւ-շատաւ կու նայիս:
 Թէ նուշ, թէ շէքէր ուտեմ,
 Առանց քեզ իմ հալ է հէրամ.
 Թէ ապրիմ քսան տարի,
 Կու քաշեմ հազար տարու խամ:
 ԲՆԴ (ԳԺՏ 207)

88

Գուլամ ու կերէրամ, իմ անուշ եարս,⁴⁸
 Առաւօտուն գեղնեմ՝ գըյնիս իմ միտս,
 Օլմազ ճամբէքտ աշեմ՝ ծոխ կը ճիտս,
 Դու գայիր անցնէիր՝ դաֆ ըլլիր դարդս:
 ԶԲ 35

89

Գըա չի լուսցի արև առիր,
 Մոկաց սարիր, բիդ-բիդ քարիր.
 Էրկու պաղ աղպուր մէջ կը թալին.
 Մէկ թախ զողան ի, մէկ թախ բառին.
 Անիկ ինչ թախ զողան ի, սոսուռ մաքերուն ի.
 Անիկ ինչ թախ բառին ի կարիպ խաւքերուն ի,
 Սուտիկ ինչ էնեմ խըտ քեօ հալին,
 Սուտիկ, դիւ շինես բարխուտար.
 Դոմ (երբեմն) կլնես շիւար, շախնտար,
 Դոմ կլնես շահու խոնդրեար:
 Անձրե, անձրե վեր սարերաց,
 Զգեաս լցունս վեր կարիպներաց,
 Կարիպներ, ես կը մեռնիմ ձեր ճամբխներաց,
 ԷԱԺԶ 60

Դուրս կը կամ լաստին կալը,
Կը երեւայ Բաքվայ սարը,
Ջանըս քեզ մատաղ խաղէին,
Ուղարկի իմ բալայ հարը:
ԱԶԴ 114

91

Եկան ու ասին ինձի,
Թէ՛ «Քո հարն ի պախշան կու գայ»:
Ելայ, գնացի, աղբա՛ր,
Ձի գտայ ես հատ մի ճուհար:
Ընկայ ի ծովին միջին,
Ղարղ եղայ ու կ'երթամ ի վար:
Մանկտի՛ք, ձեր արեւդ ասեմ,
Ցուցուցէ՛ք ինձ ելնելու ճար:
— Ասեմ քեզ ելնելու ճար.
Մի՛ երթար ի յերկիր ի վար,
Կ'երթաս ի յերկիր ի վար,
Փռշտմնիս ու բանդ է դիժար:
. ՊԹԱ (ԳԺՏ 217)

6 ՊԹԱ ի վար, այսինքն՝ ցած, խորքը:
8 ՊԹԱ «եկնելու» բառի վրա ավելացրած է «մէկ»:
10 11 ՊԹԱ ի վար, այսինքն՝ ի դուրս, օտար:

92

Եկէ՛ք, քուն չիլիինք, նստինք,—
Մենք շատ քուն ունինք լինելու.
Շատ աշուն ու շատ դարուն
Տի պառկինք, ալ չի՛ տի ելլենք:

Քունն երթայ, ալուի կու դայ,
 Եարն երթայ, զատման կու կենայ:
 — Ես քեզ միննէթ մի ունիմ.
 Ա՛ն սէրըդ ու դարձի՛ ի տուն.
 Դարձի՛ լ՛եղիր փոշիման,
 Զոր չէ եղեր օրիկդ երկուք.
 Օրիկդ ալ երկուք լինի,
 Կու սովորիս ու շատ կու կենաս:

ՄՍՍ (ԳԺՏ 213)

4 ՄՍՍ տ՛կլենք, ուղղ. ք. չ. տի կլլենք:

4 ՄՍՍ շատման, ուղղ. զատման, որ է՝ «ի զատման»
 բաժանված հերոս:

93

Եկին ու խապար բերին,
 Թէ՛ «Ելեր քո հարն ու կու դայ»:
 Եկէ՛ք, մեք ի դէմ երթանք,
 Որ նորա սիրտըն չի մնայ.
 Պագնեմք զիր կարմիր երեսն,
 Որ աշխարհս չէ ի գին նորա.
 Լեռնումք ի ոտուց փոշուն,
 Ու քաշեմք աշլիս թութիա:

ՎՏԱ ՎՏԲ (ԳԺՏ 213)

1 ՎՏԲ զապար, ԴՎ բերին խապար:

2 ՎՏԱ մանչ փոխ. քո հարն:

3 ՎՏԱ պաքնինք:

3 ՎՏԱ լիք ի:

7 ՎՏԱ առնունք զիր ոտից փոշին:

3 ՎՏԱ լ՛ աշիս քաշենք թութիա:

94

Եկիք նէ բարով եկի՛ք,
 Իմ սրդեկէն խապրիկ մի բերի՛ք:

խապրիկ մի գալուն բերէ՛ք,
Աչքերս լալուն կտրի,
Իմ սրտեկս թալկտելուն:
ՀԱ. 494 ԱԱ. 112

Հմմտ. 194 երգը:
2 ԱԱ. իմ որդիես
3 ԱԱ. խապրիկ մը
5 ԱԱ. իմ՝ շիբ: Սրտիկս թալկտալուն:

95

Ծա ալ անկիւման էի,
Անկիւման կիւման շունէի:
Ան բարձրը սարերն իվար
Ալ մեզի արե կու ցաթէ:
Ամենունը տունն ի ներս,
Մեր երդիքն ի վար ճառագեց:
Վաղո՛ւց զնացած խարիւղ,
Ուր կ'անէ տաս երկու տարի:
Ինչեիս իմ կարօտցեր,
Երեսիտ շիֆէն իմ մոռցեր:
Եկիր նը բարով եկիր.
Դուն եկիր, ես իմ խնտալու:
Քու գալն է հազար բարի,
Քու զնալն է խեղճ ու լալի:
Դուն մերն ուր գալու էիր,
Երեկով իմաց շանէի՞ր:
Սփռիմ էսդիշում խալի,
Գործած է տաս և երկու տարի:
Զգիմ խուշ բիւլի տէօշեր,
Քի վրան զերպապ շուխանի:
Սազեմ ոսկունքէն սեղան,
Հաւ խորվիմ կաքան իվրան:
Ծիւնիմ արծթէն խատէհ
Նոսան հատ գինին իվրան:

Խմէ՛ որ ըսիմ անուշ,
 Անտունի մ'ըսիմ ուշէ ուշ:
 Ինչեւ անտունի մ'ըսիմ,
 Ուր թնտայ խատէհն ի ափիտ:
 Խատէհն ի ափիտ թնտայ,
 Սըռմա թել պելսերն երեսիտ:
 Սէրը սիրողին վայլէ.
 Այս գինին անուշ խմողին:

ՀԱ 437

ՀՃՄտ. 66, 173 երգերը:

96

Ծս երկու խարիպ ունիմ,
 Մէկն է հիւսիս մէկն հարաւ:
 Հիւսիսինը փրթեր ու գար,
 Հարաւէն խապրիկ մի բերէր:
 Խապար խարիպէս բերէ,
 Իմ սրտիկս կանգնեցնէ:

ՀԱ 452 ԱԱ 465

3 ԱԱ սիրսինս փրթեր փխ. հիւսիսինը
 ՀՃՄտ. 135 երգը:

97

Ծս չեմ պառկիր բարսը օտան, կու մսիմ.
 Երկիր սիւա կու գայ, ես կու հաւասիմ,
 Ղրկէ թաշկինակդ, երեսըս քսիմ,
 Աս գարուն ալ չի գաս՝ օտար եար կրսիմ:

ԱԱ 521

Յս քեյ պատկուց սիրիցի, ⁴⁹
 Անունդ վէր պաղկիս գլրիցի.
 Քեո գիյն սայսան թիւման կտրիցի,
 Առտսինք աչքովս ճամբախտ աչկիցի:

Զի գիյն էլնէր ես քեյ գյնի,
 Քեո ձեռն ու ոտ խինայ դնի.
 Նոան գիյնին խե քեյ խմի,
 Սարխօշ էլնի քեո ծոց քյնի.
 Պաքիյկ մ'առնի, օխէշ անի:
 Արե՛ ջան, արե՛, հեռու մի մնա,
 Սուտ մուտ աստվոր ձի քեյ շմնայ:
 ՎՍԱ 62

— Երթամ թուխ ամպիկ լինիմ,
 Գամ, ցաթեմ երդիքդ ի վրայ.
 Յաժնամ ու ցօղիկ մի տամ
 Քու ճերմակ կրծոցդ ի վրայ
 Արթնանաս ու վեր իյնիս.
 «Աս ինչ ցօղ որ յիս կու ցօղայ...
 Ես անտեղ խարիպ մ'դնիմ,
 Ան կուլայ ու հոս կու ցօղայ:
 Յօղայ, թուխ ամպիկ, ցօղայ
 Յօղալուն ատենն է հիմա»:

ՆՍ ԱԱ 435

6 ԱԱ—Ցօղիկ, աս ի՛նչ ուր դուն կու ցօղաս:

Յաժնամ ու ցօղիկ մի տամ, ⁵⁰
 Քու ճերմակ ծոցիտ վրայ:
 Արթննաս ու վեր իյնիս,
 Աս ի՞նչ ցօղ ուր իս կու ցօղայ:
 2Ա 500

100

— Երկինք որոտաց, դողաց,
 Աստղն իսկի ի տեղն չմնաց.
 Իմ եա՛ր, երբ յիսնէ ելար,
 Բիւր հազար ծաղկունք ի հտրաց.
 Գրե՛մ ես բարակ թղթիկ,
 Ուղարկե՛մ շատ պատգամ ի լաց.
 «Որտեղ ես՝ բարով կացի՛ր.
 Զքո սիրա՛ծ հարըդ շմոռնաս»:
 2Ե վննԳ (ԳԺՏ 210)

- 1 վննԳ երկինքն:
 2 վննԳ աստղն իւր տեղն:
 3 վննԳ իմ եարն ի յիսնէ գնաց:
 4 վննԳ հետ իրաց:
 5 վննԳ բարակիկ փոխ. ես բարակ:
 8 2Ե քո սիրած հարն շմոռնաս:

101

Էրեկ էվարին վէր կեմայ դարին, ⁵¹
 Թըվանքիով զարկին պրինտար արին,
 Խապրիկմ տարէք իմ նազլու հարին
 Առնի տեղ դարման կեայ վէր իւր հարին:
 Էրէկ էվարին ուխար վէր պէրին

Կթեմ թուխ մաքին լցեմ սուրահին
էօրէօխկեմ եարին.

Կանչեմ եար արե
Խոռով մի կէնայ,
Աստըվորիս մալ
Մի, քե շմնայ:

ՊՎ 83

Հմմտ. 76, 81, 102 հրգերը:

102

էրէկ էվարին վէր Սասմայ քեարին,
Թըվանքով զարկին, բրինդար արին.
Խաբրիկմ' տարէ՛յք իմ նազլու եարին,
Թէ չէ կըգեյրեմ մէջ էն դաւթարին:

Խաւքմ' վէր ծովուն անուն էր Աբօր,
Վզիկն էր էրկէն՝ սրտիկ սեւաւոր.
Կապեմ բէշարէն էրթամ խեռ ինոր,
էն իմ դարդ կիյտի գեօ ես էլ ինոր:

Խաւքմ' էլ իրե թղթիկ կէր պէրան,
Առի, կարդացի իմ գելխու ֆարման.
Արե՛ր եա՛ր արե՛ր, խոռով մի՛ մնա,
Աստըվորիս մալը ձի քեյ շմնայ: ⁵²

ՎՍԱ 37

Հմմտ. 76, 81, 101 հրգերը:

102ա

Մովուն խաւքմ կէր, անուն էր Արոր ⁵³,
Վզիկն էր էրկէն, սրտիկն սեւլավոր,
Կապեմ պէշարէն էրթամ խեռ ինոր,
էն իմ տարտ գիտէր ես էլ կէօ ինոր:

Պօստան եմ դրեր լէր էնա դարին,
Զելաւ մէկ շամամ էօրէօխկեմ եարին,
Աստված շէն պախէր էս տարւան տարին,
Զելաւ մէկ շամամ էօրէօխկեմ եարին,
Շամամ թօռօմաւ, իմ եար խոռվաւ:

Արե՛հ եար արե՛հ,
խոռվ մի՛ մնայ,
Աստըվորիս մալ,
Ծի, քե չի՛ մնայ:

ՊՎ 86 ՌՄ 77

1 ՌՄ անունն էր Արօր:

5 ՌՄ պէօստան:

7 ՌՄ աստուած:

Հմմտ. 81 երգը:

102բ

Ծովուն հաւքըմ կէր, անունն էր արօր,
Վըղիկ երկէն էր, սըրտիկ սեւաւոր.
Կապեմ բեշարէս, երթամ հետ ինոր,
էն իմ դարդ գիտի, ես էլ գօ ինոր:

Եկաւ հաւքըմ էլ,
Բըղթիկ կէր բերան,
Առի, կարդացի իմ գըլխու ֆերման.
«Արի, եար արի խոռվ մի կենա
Աստըվորի մալ ձի, քե չի մնա»:

ՀՄԽԱ 54

Հմմտ. 76, 81, 101, 102, 102ա երգերը:

103

Քրէկվալ լուսին, էս աւուր արե,
Մեր դըռնէն ընցար, չըտըրի բարե.

Մաշտենք խոռով իր շըտըվիր բարև,
Թէ ձիկ թարկ արիր, ուրիշն ես կընդես:

Կանչեմ, եար, արե՛, մի աներ նազիկ,
Դըռնից մի՛ իրիշկեր, մի՛ աներ ճիկ-վիկ,
Կանչեմ, տօսթ, արե՛, լըսիր իմ ձէնիկ
Բանն Աստուած գիտի սիրեր եմ քեզիկ:

էսօր լըսեր եմ, քո գեռն փոխեր ես,
Ինձի թողեր ես, քեզ եար ճարեր ես.
Աստուած մուպարաք, բարով վայելես,
Իմ մեղաց գիմաց մընաս սեերես:

Կանչեմ, դօսթ, արե՛, սարեր լացուցեմ,
Շատ կարիպ կուրպաթ ճամբէն դարձուցեմ:
Կանչեմ, եար, արե, մի՛ մընա խըռով,
Սըրտովս եմ սիրե, մարդ շարե զօռով:

ՎՍԲ 41

Հմտ. 104, 105, 133 երգերը:

104

էրկիյնքն էր ամպե, կուկեէր մարմար ձին,⁵⁴
Կուկեէր կըթափէր վէր մալուլ մարդուն.
Մէկ ե՛ս եմ մալուլ, թէ աշխար բիւթին,
Իմ հարոշ սիրուն մնամ էրէրուն:

էրին էրէրին ոշխար վէր բէրին,
Կթեյնք թուխ մաքեին լցեյնք սուրահին.
Խօրված քեարաբով օրօխկենք հարին,
Որ եար խոռովե, շամամ թօռօմե:

Կանչեմ եար արե՛, աշխար լացուցեմ,
Շատ կարիք կուրբաթ ճամխէն դարձուցեմ:
ՎՍԱ 39

Հմտ. 103, 105, 133 երգերը:

էրկինքնի ամպեր կուգայ մարմար ձին⁵⁵
 Կիսալի, կաթի վէր մալուլ մարդուն,
 Մեկ ե՞ս եմ մալուլ, թէ աշխարհս պիթուն:
 Էսօրնի ամպեր կուգայ անձրև ու ձին:

Ա՛խ, ե՞րբ կէլնի, որ իմ հար գայ մեր տուն,
 Էսօր ի՞նչ օրի-ուրբաթ ու պախսի
 Ճուխտմ հար ոնեմ տէլ նորախարսի,
 Խորած վարդապետ կասի շխասի:
 Կանչեմ, հար արե՛, խոռվ մի՛ մնայ,
 Աստըվորիս մալ՝ ծի, քե շմնայ:

ՊՎ 39 ՌՄ 77

- 1 ՌՄ կիւգայ:
 2 ՌՄ մալիւ մարդին:
 3 ՌՄ աշխարհս պիթին:
 8 ՌՄ կասի շխասի:
 Հմմտ. 103, 104, 133 կրգերը:

էրկու դարիս պիւպիւ վարդին կը թառի,
 էրկու ծըծիս օրթան կրակ կը վառի,
 Ես ալ աշխարհք եկա, հիշ մուրատ չառի
 Ի նծի կըսէն մի լար, ես ընտոր չի լամ:

Եաման կը փրփրի Պոլիսու ծովը,
 Ինչ անուշ կը փշէ սևվտէին հովը,
 Թէ որ տէրը կամէր երթայի քովը,
 Առնէի մուրատս, իշնէի ծովը:

Եար էկո, էկո, ճանկ մը շամիլ առ էկո,
 Չամշի փարա շունիս նէ, անուշ հոգիդ առ էկո:
 ՓԱՀ 2 163

Հմմտ. 176 կրգը:

Ընկալ թաղէ թաղ, ես թուղթ՝ ճարեցի,
 Շող շողան մատներս դալամ արեցի,
 Աչքիս ըրտասունքը թանաք արեցի,
 Սրտիս դարգերը մէջը գրեցի:

Գրեցի, ասի հալս իմացիր,
 Ես կարմ չեմ, էլ դու դիմացիր.
 Իմ կողմանէ դու խիալով կացիր,
 Ես քիչ գրեցի, դու շատ իմացիր:

Գրեցի, ասի ամենին տէր կայ,
 Էդ քու սրտումը էդ ինչ թաւուր սէր կայ,
 Ինձ հմա ոնչ լիս, ոնչ էլ քշեր կայ,
 Ես խօրօտ եղնիկ, ինձի տէր չկայ:

Ասի, ամեն հաւք իր բունը մտաւ,
 Ամենն էլ իրան հնգերը դդաւ,
 Մենակ ես եմ, ախ, ես մոլորված,
 Ես մառմառ քար եմ, տեղից գլորած:

ԱՀԺԱ 67

Հմտ. 111 157 երգեր:

Թամբու տէնակ թամբումը,
 Թառ յըղօնէյգ վանքումը,
 Իմ հարը հըշտըէղ տըէսէր,
 Շօշվա դըլէն շամբումը:

ԱՀԺԷ 47

Թութ պաստեխ, քար կըլլի,
 էլին տղան հար կըլլի.
 Ֆարադի կերթան տէի
 Աստղար կենալ կըլլի:

ԱՐ 120 ԲՆԱ 624

109ա

Թութ պաստէխը ծալ չըլլիր,
 էլին տղան հար չըլլիր
 Ֆարադա խուրպաթ կերթան
 Աս խըտըր կենալ չըլլիր:

ԲՆԱ 624

110

Իմ հաբն է գրեք ըսէր,
 Եա՛ր, եկո՛ւ գիս գողցի՛ր ու տա՛ր:
 — Ինտո՛ր դամ, գողնամ տանիմ,
 Ատ չէօլին ճամբեկն է դժար:
 Մի՛ վախեր, հար, մի՛ վախեր,
 Ես կարմունճ կապիմ քո համար:
 Ես կարմունճ կապիմ քէօ համար,
 Մարգրիտ շարիմ լարէ լար:
 Սփռիմ էպիշում խալի,
 Ուր գործած տասս և երկու տարի:
 Ոտքովտ ի վրան կոխես,
 Ոտքացտ փոշեկը առնիմ:

Ոտքացդ, փռշեկը առնիմ,
Ուր քաշիմ աչքիս թիւթիա:
Ուր քաշիմ աչքիս թիւթիա,
Աչքերուս լուսը շատանայ: ⁵⁶
ՀԱ 435

111

Ինկեայ թաղէ թաղ աղչէմ ճարիցի. ⁵⁷
Տըվի թապաղէմ թըղթիկ առիցի,
Աչքիս արտըսունք թանաք արիցի,
Շողշողուն մատկերս կալամ արիցի,
Սրտիս տարտեր տավթար արիցի,
Ստամպէօլ քաղաք էօրէօխկիցի:
Կարիպնի նստեր վէր օտար փողցին
Կարիպն, ախ կանի իւր խօր խէրանին:
Կանչեմ ջան արե
Սարեր լացուցեմ.
Շատ կարիպ, կուրպաթ
Ճամխէն դարձուցեմ:

Ինչի կուլաս կուց կուց արուն,
Թէ կէօ իրե բարի գարուն.
Քե կառնեմ վէր իմ թեվերուն,
Կթոնեմ վեր պանցրիկ սարերուն,
Պիոնը կղնեմ մէջ քեարերուն,
Էրդիս կբանամ դէմ խով քեամուն,
Կարիպիս մեռնեմ իւր ճամխներուն:
Կանչեմ ջան արե
Սարեր լացուցեմ,
Շատ կարիպ, կուրպաթ
Ճամխէն դարձուցեմ:
ՊՎ 85 Ն291 44 Ն292 45 ՌՄ 76 ԷԱԺ2 45

1 Ն29 Մամերս սիվտըկաւ ճամբախդ աշկիցի:

1 ՌՄ ճարիցի փոխ. ճարիցի:

2 Ն29 Սինամա փիտուր կալամ կըտրիցի:

3 Ն29 ալիշ փոխ. աչքիս:

3 ՌՄ արտասունք փոխ. արտասունք:
 5 ՆՀԳ իմ սըրտի դարդեր ինն զըրիցի:
 5 ՌՄ շիր այս տողը:
 6 ՆՀԳ արև եար արէ, խոռոլ մի մնայ
 աստըտորիս մալ մարդու շի մրնայ:
 7—24 ՆՀԳ շիր այս 18 տողը:
 12 ՌՄ համփէն փոխ. փամխէն:
 13—24 ՌՄ շիր այս 12 տողը:
 Հմմտ. 107 երգը:

112

Հալւարա ջուրը սառն ա,
 Պստիկ բողբոջիկ դառն ա,
 Տունդ դարձիր, իմ աղբեր,
 Ղարիբութիւնը դառն ա:
 Աղբիւր 1893 № 4, ժն 134

113

Հալւարա ջուրը սառն ա,
 Օտարութիւնը դառն ա,
 Տունդ դարձիր իմ աղբեր,
 Բողբոջըս պղստիկ դառն ա:
 ՀՄԽԲ 6

114

Լեղուդ բալլի պիտէր, սիրտս բանայիր,
 Իմ ներսի տէրտէրս դուն իմանայիր.
 Խօսք էիր տուեր թը սիլա տի դայիր,
 Պէլքի մէկ տէրտէրուս տէրման լնէիր:
 ԱԱ 516

Լեռները ձօն կու գայ օվան տուման է,
 Եարէն զատուողին հալը համան է.
 Ես ալ ինչ ըսիմ, օրըս լըման է:

Գիշերը քուն չունիմ, պառկիմ քնանամ,
 Թղթիկ մը չես գրեր, տէրտըդ իմանամ,
 Ես աս ցաւերուս ընտոր դիմանամ:

ԲՆԲ 680

Լեռներուն գըլուխը կանանչ մօրի է,
 Խարիւղին մէջ օրը հազար տարի է,
 Խարիւղ, ելիր եկու, խէլվըդ խերար է,

Շատ չէ, շատ չէ, երեք տարին խերար է,
 Իրեք տարուէն վերջը փերը հերամ է,
 Շատ կենալն ալ քու արեւուն զարար է:

ԲՆԱ 566

Լեռներուն գլուխը կանանչ մօրի է.
 Իկիտին մէկ օրը հազար տարի է.
 Եկու, դարիւղ, սիլա, մեզ ալ մեռնիլ կայ,
 Արանիս ալ շատ լեռներ ու ծովեր կայ:

Ա.Ա. 521

Լեռներուն գլոխը կանանչ շաչիր է,
 Ղարիպին մէկ օրը հազար տարի է,
 Երեք տարին մէկ կտրիճին խէրար է,
 Շատ կենալը իր արեւուն զարար է.
 Կաւրում, ելիր, եկուր, պատանքս կարէ
 Վերցուր դիր գերեզման, բարս դուն շարէ...
 Ա.Ա. 522

116գ

Այ Եօրկայ բոլորը կանանչ մօրի է,
 Մէկ օրը զարիպիս հազար տարի է.
 Ղարիպ, ելիր ւ եկուր, խէվլըդ խարար է,
 Շատ կենալն ալ քու արեւուդ զարար է,
 Երեք տարին ալ կտրիճին խերար է,
 Օխտը տարին քու արեւին զարար է:
 Ա.Ա. 524

117

Լխնեակը ցերեզ, ցերեզ,
 Շաքար կոտրեմ, տարէք կերէք,
 Աղլուխս կաշառք կտամ,
 Ծարիցս խաբար բերէք:
 Ա.Հ.Ժ.Ա. 54

118

Լուսիկ մը փրթաւ սարէն,⁵⁸
 Կէսն է խոռ, ու կէսն է բոլոր:

Լուսիկ, դուն լուսով կենաս.
 Թէ կենաս պահիկ մը հուտայ.
 Երկու խօսք գանգատ ունիմ
 Գանգտիմ, դուն արվայ գնա:
 — Գնա ղարիբիս ըսէ,
 Չ'կենայ ու ելլայ գայ:
 — Խօսքունքդ գլխուս վրայ,
 Դուռը չ'գիտեմ ղարիբիդ:
 — Եկոր նշանով ցոյց տամ.
 Բարձրը պատ ու ծառն ի վրան.
 Նստերէ ծառին շուրջ,
 Նուշ դրեր, շաքար կու ծախէ,
 Ամենուն աժան աժան,
 Իս մոռցեր, նո՛ւշ կու ծախէ:

ՀՀ 298

Հմտ. 69, 168ա, 168բ երգերը:

118ա

Լուսիկ մի փրթաւ քարէն,
 Կէսն է խոռ ու կէսն է բոլոր:
 Քիչ քիչ ալ ի վեր եկաւ,
 Բոլորեր զըննոր թագաւոր:
 Լո՛ւսիկ, դուն լուսով կենաս,
 Թը կենաս պահիկ մը հուտա,
 Երկու խօսք գանգատ ունիմ,
 Այն գանգտիմ, դուն արվա գնա:
 Գնա՛ խարիպիս ըսէ՛,
 Չի կենայ ու ելլէ ու գայ:
 — Խօսկունքդ ի գլխուս վրայ,
 Չգիտիմ դուռը խարիպիս:
 — Եկո՛ւր, նշանով ցոյց տամ,
 Ուր գտնես դուռը խարիպիս:
 Իմ եարն է շէքէր խանին,
 Նուշ դրեր շէքէր կու ծախէ:

Աշուին թէրազու արեր,
 Ուներովը վեր կու քաշէ:
 Էմմէնուն աժան աժան,
 Իս տեսեր նը սուղ կու ծախէ:
 ՀԱ. 439 ԱԱ. 454
 20 ԱԱ. ես տեսաւ նը, սուղ կու ծախէ...
 Հմմտ. 69, 118, 118բ երգերը:

118բ

Նուսիկ մի փրթաւ քարէն,
 Կէսն է խոռ ու կէսն է բոլոր.
 Քիչ քիչ ալ ի վեր եկաւ
 Բոլորեր զերդ նոր թագաւոր:
 — Նուսիկ, դուն լուսով կենաս.
 Քէ կենաս պահիկ մը հուտա:
 Երկու խօսք գանգատ ունիմ,
 Այն գանգատեմ, դուն ալվա գնա:
 Գնա՛, խարիպիս ըսէ՛
 Չի կենայ, թող ելլէ ու գայ:
 — Խօսկունքդ ի զլխուս վրայ.
 Չի գիտեմ դուռը խարիպիդ:
 — Եկուր՝ նշանով ցույց տամ.
 Բարձրը պատ ու ծառ շքերուն.
 Նստէր է ծառին շքին,
 Խատ ու մատ խատէհն ի ափին.
 Ճնատէհն որ ափիդ ունիս,
 Կամ խմէ, կամ տուր խմողին.
 Ան սազդ որ կէօքսիդ ունիս,
 Կամ շալէ, կամ տուր շալողին:

ՀԱ. 440 ԲՆԱ. 393 ԱԱ. 455

- 1 ԲՆԱ. լուսիկը փոխ. լուսիկ
 4 ԲՆԱ. փառավոր փոխ. թագաւոր
 Ա-բդ տողից հետո ԲՆԱ. ունի ալեւի այս երկու տողը՝
 Ես հասայ իմ մուրատիս,
 Տարուք լուսիկին լինի:
 Տ ԲՆԱ. գամ, գոյախմ, դուն ալվի գնա:
 Մրանից հետո ունի ալեւի հետեւյալ տողը՝
 Գնա ու գնա կըսեմ:

10 Բնկ, մեկուկեր քու եարդ, կուլայ,
ուր աշխոյն արուն կու ցողայ:

13—20 Բնկ.

Եկուր նշանով ցուց տամ.
Ոսթամալու նոր խանը՝
Նուշն առեր, շէրէր կու ծախէ:
Էմմենուն աժան աժան,
Իս տեսեր նը՝ սող կու ծախէ:
Աշուին թէրէղու արեր,
Ուներովը վեր կու քաշէ.
Իս մոռցեր նուշ կու ծախէ:
Գնա ու գնա կըսեմ,
Գնա խարիպիս ըսէ՝
Ալ չի կենայ, էլլէ գայ,
էլլե ու գայ:

Հմմտ. 69, 118, 118ա երգերը:

118գ

Լուսիկ մը կապեր կամար,
Կանգ առեր երդոցն ի վրայ:
Լուսիկ դուն լուսով կենաս,
Թը կենաս պահիկ մը հուտա,
Երկու շիֆթ գանգատ ունիմ,
Գամ գոյտեմ դուն ալվի գնա.
Գնա զարիպիս ըսէ,
Չի կենայ, էլլէ ու գայ:
Անոր կըսեմ ուր թող գայ,
Ուր տրտմեր սրտիկս ու կու լայ:
— Խօսքունքդ ի գլխուս վրայ,
Չի գիտեմ դուռը զարիպիդ:
— Եկուր, նշանով ցուց տամ,
Ուր գտնես դուռը զարիպիս —
Բարսը պատ ու ծառ շքերուն.
Նստեր է ծառի շուքին,
Խատ ու մատ խէտէ՛ն ի ամփին:
Խէտէ՛ն ուր ամփիդ ունիս,
Կամ խմէ, կամ տուր խմողին:
Ան սաղն ուր կէօքսիդ ունիս,
Կամ շալէ, կամ տուր շալողին:

ԱԱ 445

Լուսնեակ բրդաւ սարէն. 59
 Կէսն է խոր ու կէսն է բոլոր.
 Քիչ քիչ ալ ի վեր եկաւ,
 Կու մանէր նորուկ թագաւոր:
 Լուսին քեզի գանկատ ունիմ,
 Կեցի գանկտիմ ալւէ զնա.
 Գնա իմ աղբօրն ըսէ
 Չը կենայ, թող ելնէ ու դայ,
 Ուրբաթ շաբաթ թող չըսէ
 Կիրակին թող առնէ ու գնայ:

ՄՍՍ 1886 3820

Լիւսի՛ն տիւ պանցրիկ լիւսին,
 Որ կ'պիւտրես մէջ տանխինգիյն.
 Շատ տուն կ'մտնես, շատ քեօշկ ու սարայ,
 Էրթաս կայնես իմ կարիբի գլխու վրայ:

Կարի՛բ, տիւ քի՛ւն ես, թէ արթուն,
 Որ չիր կ'անես քեռ սէր խանե խուն,
 Ինչի՞ մտար իմ մանկան էրուն,
 Թողիր էնպէս էրուն էրէրուն:

Ձի խաւք ծիծեռնակ պիտէր,
 Գիյ քեռ էրտիս պեռն զնի.
 Յերեկ ել ու մուտ անի,
 Գիշերը քեռ ծոց ծվարի:

Քեռ ծոց ձիկ սալվի սնդիւկ,
 Ես էլնի մէյ կարիբ ճնճղուկ.
 Որ կոտրէր էն սալվի սնդիւկ,
 Թռնէր էն կարիբ ճնճղուկ:

Իգիշն ի պաղլե ալաջայ գեարուն,
 Սրտիյս ի էլե հարալու արուն.
 Տիւ մարալ ջէյրան, հս հմ քեյ հէյրան,
 Որ թէ մեռնեմ, տիւ ձիկ պարտական:

ՎՄԱ 64

121

Լուսնակն էր կեռ ու կամար, ⁶⁰
 Քուր մեռնէր ախպօր համար,
 Օխթն օր ծոմ ու պասս պահեմ,
 Ղարիպ ճամբորդիս համար:

ՆՀՁ 87

121ա

Լիսնեակը կեռ ու քեամար,
 Քիրը մեռնի ախպօր համար,
 Յիսուն օր պասս հմ պըհել,
 Իմ հարի ճամփի համար:

ԱՀԺԱ 54

121բ

Լուսնիակը կամար-կամար,
 Ես մեռնիմ քեղի համար.
 Իցցուն օր պասս կըպահեմ
 Ղարիպ ճամբորդիս համար:

ԺԱՐ 44

Լուսնեակը ինձի ցերեկ, ⁶¹
 Շիրուանու քարուան բերէք,
 Աղլուխըս մութտա կուտամ,
 Եարիցս խապար բերէք:

ՌՄ 183 ՓՇ 137 Տե 150

3 ՓՇ լալուղս Տե կտամ փոխ. կուտամ:

4 ՓՇ եարոջս փոխ. եարիցս:

Լուսնկան կապեր կամար, ⁶²
 Ես կուլամ քեզի համար,
 Մէկիկ մի սիւլայ եկո՛ւ,
 Աստուծու սիրուն համար:

ՀԱ 462

— Խաչին լուսնկան նորուն՝
 Ես ի քու դռնակդ եմ եկեր.
 Դռնակդ ալ ի դիր տեսայ,
 Ոլըրով երդիկդ եմ եկեր:

— Թէ մարդ ես նը՝ վար եկու,
 Թէ շուշան ծաղիկ գնալու:
 — Ոչ մարդ եմ ի վար գալու,
 Ոչ շուշան ծաղիկ գնալու:

Պիւլպիւլ եմ ի ծուռ գալու,
 Շատ երամ ունիմ գնալու.
 Երթամ, շատ երամ ծուռ գամ,
 Շատ խարիպներ տեսնեմ ու գամ:

ԲՆԱ 565

Հմմտ. 72 երգը:

— Խարիպ իմ, դուռըտ եկի ⁶³,
 Քա՛յ դուռտ ուր մանիմ ինեքս,
 Քաղիմ վարդ ու բռահան,
 Կարմիր խնձոր տամ ի քեզ:
 — Դուռտ բանամ ներս առնիմ,
 Ինձի շատ ամօթ կու լինի:
 Գնա՛ իջի ան գեղը,
 Հէլպէթ ան գեղը խան ունի:
 Պառկէ՛ և եղիր անուշ քուն,
 Հէլպէթ աս մութս լոս ունի:
 Մութն երթալ ու լոսը գայ,
 Խարիպ ես ճամբեկտ երևնայ:
 — Եարո՛ւկ, քեզի ի՞նչ արի.
 Ուր իս ճամբու դրիր քի գնա՛յ
 Ո՛ւչ պաղ մի պաշար տուիր,
 Ո՛ւչ ճերմակ ծոցուտ նավալէ:
 Երթամ ու վանքը տ՛իջնիմ,
 Սուրբ Սարգիս տանիմ հաւալէ:
 Քեզ առնէ ու ինձի բերէ,
 Ուր ծողվէ ալէմս իվրայ:
 — Մօտիկ աղբիւր դէմտ գամ,
 Ուր՝ եա՛րս խաթրտ շի մնայ:
 Առնիմ ոտք-տկիտ փոշին,
 Ուր աչքս քաշիմ թիւթիա:
 Աչքս քաշիմ թիւթիա,
 Պէլքի լուսը շատանայ:

ՀԱ. 441

Հմտ. 215, 299 երգերը:

Խարիպս հիւսիսէն փրթաւ,
 Պող ձիով սալթանաթով:
 Բռնեցի ճորով ու զորով
 Պաղ մի առի հազար նազերով:

Ան պագին քաղցրութենէն,
Բռնկե՛ր սրտիկ՛ւր ու կ'երի:

ՀԱ 452

127

— Խարիպս ո՛ր ճամբով կ'երթայ, ⁶⁴
Ես անոր ճամբեկ պիտէի:
Ո՛ր աղբիւր ուր ջուր խմէ,
Ան ջրին ակնեկ պիտէի:
Յածնար են ջրէն խմէր,
Ես ալ իմ մուրատն առնէի:
Երթար ո՛ր քաղաք իջներ,
Ան քաղքին խանճի պիտէի:
Ուր գար ու խանը իջներ,
Իմ էզիզ օտան տանէի:
Թւիկս ալ շըլիւն ձգեմ,
Մանտրտիկ հետը խորըթեմ:

ՀԱ 434

128

Խուշին խանատովը խրկեցի բարեւ,
Ըսի, վարդ է բացուեր սրտիկիս վերեւ,
Ուր մնացիր, խարիպ, դուն իմ բարկ արեւ
Արեւուդ կարօտ, ալ չիմ դիմանար:
Յաւա շատ խորուն է, դու չես իմանար:

Մինտրիկը կերթամ պախճան ու պարը,
Զիկայ սիրտիս սիրած անուշիկ հարը.
Ախ, ալ չի տի գննիմ ցաւերուս ճարը.
Ճար արէք, ճար արէք, հոգիս արուն է,
Կու վաղէ արունը, ցաւըս խորուն է:

ԹԿ 85

— Խօշ հա՛ր, քեզ լալով սէլամ,
 Ես ի քո քաղքէն կու գնամ.
 Բեր՝ պագնեմ զաշերդ, ուներդ,
 Երբ երթամ՝ չի կարօտանամ:
 Յայս աստուածաշէն ծոցէդ,
 Երեսէդ մահրում կու մնամ.
 Բացվեր ես ի վարդ նման,
 Ես պլպուլ՝ ի դէմ քեզ կուլամ:
 Մարդ չեղամ, թէլ հար սիրեմ,
 Կամ ըզբո՛ւ սէրըն մոռանամ,
 Կամ ըզբո՛ւ անուշիկ պագիկն
 Թէ սրտէս հանեմ, ուրանամ:
 Թէ նուշ, թէ շաքար ուտեմ,
 Առանց քեզ իմ հալն է հարամ:
 Ասրեր եմ քսան տարի,
 Ու քաշեր հազար տարոյ զամ:
 Ի՞նչ շահ իմ շատ ապրիլն,
 Որ առանց սիրուդ կը մնամ:
 Ես ու դո՛ւն, հոգե՛կ, ես ու դուն,
 — Ես ու դո՛ւն, աշխարհ՝ դռնկեկ քուն:
 — Ես դո՛ւն, աչքո՛ւնք, ես ու դուն:
 Ես ու դուն, օթվան սարերուն:
 — Զէդ ասա, հոգե՛կ, զէդ ասա,
 Զաչրդ ուտեմ, ունքերդ ի վերայ:
 ՎՏԶ (ԳԺՏ 202)

Սրծվերս իմբուղ էր, կարիք ճամխիցի,⁶⁵
 Մամերս ճերմկաւ, ճամբախ աշկիցի.
 Էսօր թող ձիւն կեէր, վէր ձեան կարկուտ կեէր,
 Իմ հար թող տուն կեէր, ձիկ անուշ քիւն կեէր:

էսօր ի՞նչ օր ի, կասեն ուրբաթ ի,
Ջուխտմ եար ունեմ կարիբ կուրբաթ ի,
Ջուխտմ եար ունեմ՝ մէյ խին մէյ թաղա,
Մէյ կուտայ արաղ՝ մէյ կուտայ մաղա:

Էն արաղ տվօղ՝ շիվար շափարղայ,
էն մաղա տվօղ՝ իմ ջանին ջաղայ:
Արէ՛ եար արէ՛, մալուլ մի՛ մնա,
Կուրբաթ հս ինգեյ, արե՛ մի մնա՛:

Քեամբախ Բէյ օղլի, պլէր Իսքիւդար,
Որ շանէր իմ եար վէր ձիկ դարբէ դար.
Քեամբախ Բուլանըղ ի՞նչ անուշ տեղ էր,
Մէջ քեռ էրկու ծոց քյնեկու տեղ է՛ր:

Արի թէ պագիյ անխալել մեղր էր,
Սրտիկս կը խորվէր իմ դարդիս տեղ էր:
Արե՛ եա՛ր, արե՛, քեյ պան շեմ ասե,
Վալա՜ կը մեռնեմ խոցերս ի խասե:

Պանցրիկ սարերաց հըմէնին տէր կայ,
Հըմէն եղնիկին մէկէլ մարդ կայ,
Ես խօրօտ եղնիկ, ինձի տէր չկայ,
Վուլ ձիկ չ՛սիրե, ուր սիրտ սէր չ՛կայ:
ՎՍԱ 61

Հմմտ. 179, 183 Երզնէր:

131

Կանգնեմ քարին ու սարին,
Գիր գրեմ դարիբ եարին.
Արցունքով գրեմ, կանչեմ,—
Աղու կըտրի սէնց տարին:

ՀՄԱ 26

Կանչեմ հողի վեր, ստեղծօղ,
 Զամենայն զարիսկ դու պահէ՛.
 Իմ եարն ի զարիսկութիւն.
 Իր կրակըն զիս կու երէ.
 Զիր գալն ինձ շուտով արէ՛,
 Զիս ամէ՛ն տէրտըս նա՛ գիտէ.
 Զերեսս երեսին դնեմ,
 Որ հողիս ի ծոցն ելանէ:

Հն (ԳժՏ 210)

6 Հն ամենայն, ուղղ. ք. չ. ամէն:

7 Հն զերես, ուղղ. ք. չ. զերեսս:

Կարիրն է նըստե վէր օտար փուղցին,
 Ախ ու վախ կանի ուր խօր խէրանին:
 Կարիբիս մեռնեմ, ուր նըխշուն բեղին,
 Դառնայ ձիկ առնի մէջ քաղցըր ծոցին:
 Տուն դարձիր, կա՛րիբ, մի՛ թողնիր ահով,
 Թէ քեզ չըտեսնեմ՝ կըմեռնեմ շուտով:

Կանչեմ, ջան արե, սարեր լացուցեմ,
 Կանչեմ, դօսթ արե՛, քարեր լացուցեմ.
 Շատ կարիբ կուրբաթ ճամբէն դարձուցեմ,
 Իմ կարիբ տեսնեմ, գերեզման մըտնեմ:

Բաղչէմ ըմ տընկե, թուրէն ուր մենէն,
 Աստուած ձիկ շիտուր, շիւքր եմ ուր մենէն.
 Թէ պըզտիկ էլայ, խէր մէր չըտեսայ,
 Իմ ամալ ջամալ ումրիկըս կէրայ:

Արե՛, եար արե՛, մի աներ խըռով,
 Կըմեռնեմ շուտով, մընաս կարօտով.

Արե՛, դօսթ արե, հասիր մուրազիդ,
Ի՞նչ էլ չես տիսնե քո կարօտ եարիդ:

Արե՛, եար, անցիր մեր բակի մօտով,
Քող մեր բակ լեցուի քո անուշ հոտով,
էրկէն ճամբըներդ փըշերով լիքն են,
Արի թէ քաղեմ՝ մատներս կարնոտեն:

Կարիքի տիրոջ սըրտիկ կէլնի խոց,
Արե՛ արտսունքով կը լըցու ուր ծոց.
Անշափ տի կանչեմ, սարեր լացուցեմ,
Շատ կարիք կուրբաթ ճամբէն դարձուցեմ:

ՎՍԲ 61

Հմտ. 103, 104, 105, 111 երգերը:

134

Կարիւպ, արի էրթանք սըպ նշան,⁶⁶
Քեօ պոչամ կտրեմ, դնեմ քեօ ճամբխու նշան,
Կեյնեմ կիշկամ քեօշքի ճաղերաց,
Իմ կարիւպի սուրբաթ կերեայ:
Առջեն էր բարտայ,
Իտեն էր բատան.

Գեթմա կարիւպ, գեթմա:

Կարիւպ եմ ճամբիսէ իտն սարերաց,
Կարիւպին մեռնեմ ուր ճամբխըներաց,
Քեամբբախ Ստամբուլ, աւեր Սքեանտար,
Տարաւ իմ կարիւպ շիբե մէյ խապար.

Գեթմա կարիւպ, գեթմա.

Ա՛խ արի, սարեր լացուցի,
Իմ կարիւպ ճամբխուց դարձուցի
Բանձրիկ սարեր, բէդ բէդ քեարեր,
Իմ կարիւպ մեջ ձե ի կորուան:

Գեթմա կարիւպ, գեթմա:

ԷԱԺԶ 50

Կարմիր խնժորի պայոս
Աճապ քեզ ո՞վ արաւ ալոց:
Ո՞վ որ քեզ ալոց արաւ,
Ան կենայ ծովուն և երերուն:
Աճապ խարիպին տիրուն
Սիրտն ինտո՞ր արև կու ծագէ:
Ո՞ւշ սիրտս արև ցաթեր,
Ո՞ւշ երեսս է պարզ ծիծաղցեր:
Ես երկու խարիպ ունիմ
Մէկն է հիւսիս մէկն է հարաւ:
Հիւսսինքս փրթէր ու դար,
Հարաւինս ալ հետը բերէր:
Աճապ տի լընի՞ օրիկ,
Խարիսլ, դաս դուռս, առնիմ ի տուն:
Թեիկս ալ շըլլիտ ձգիմ,
Մանտրտիկ հետտ խորաթիմ:

ՀԱ 440

11 ՀԱ սիրտունս ք. ի. հիւսսինս:
Հմմտ. 96 երգը:

Կեսուրիս հագածը ալլի շապիկ էր,
Էնու էրածն ինձի ախ, շատ ու շատ էր,
Տնէն տեսներ կելէր աղա կըլմանէր,
Ծոցիկս օր մտներ շաղայ կըլմանէր,
Տասվերկու տարուրկան տղայ կըլմանէր,
Տուն էկօ, տալէան տղաս, տուն էկօ,
Արմաղանդ պէտ չէ տարածդ առ էկո:

Իմ տղաս, իմ աղաս Իզմիր է գացեր,
Իզմիրիայ քաղաքը թուքէն է բացեր,
Իզմիրայ հարսներուն խաս է հագուցեր

Ինչ խըտըր օր փէնճիրէյէն դուրս հայեր,
Ասնող դարձողին ըլ սրտիկը մէրէր:
Տունն էկօ, տալիան տղաս, տունն էկօ,
Արմաղանդ պէտ չէ տարածդ առ էկօ:

Իջէր է կայներ է, էռջելը ծով է,
Հողուս դգալն՝ ազապ է, սէվտան ըլ հով է,
Յըսղանպօլա քաղքէն վով է որ գուգայ,
Եարէս խապար ըրճըփ եփ է օր տիգայ,
Քէնքիւլէն ու բերնէն խնկայ հոտ տի գայ,
Տունն էկօ, տալիան տղաս, տունն էկօ,
Արմաղանդ պէտ չէ տարածդ առ էկօ:

ԲՆԱ 331

6 ԲՆԱ աղաս ք. ի. տղաս
Հմտ. 77, 138, 151 Երգերը:

137

Կերածս կուլ չի գնում,
Մի օր ուրախ չեմ մնում,
Քանի եարս դարիպն ա,
Դիշերնեքը չեմ քնում:

ՏԵ 177

138

Կուլամ ու ժուռ կու գամ ես քեզի համար,
Արցունքս երեսս ի վար կապեր է կամար.
Մէկ մալ սիլա եկու, մէկ մորճիդ համար:
Մորճիկդ ալ ժըմներ, մէյվան է լուլա,
Աստուած խըսմէթ անէ գառ տեսնաս պիլէ:

Էմմէնուն հայրը կուգայ, ինք կայներ կուլայ:
Ջարկիր կրակ տըլիր կերիմ կու վառիմ,
Ջըրի պէս ծարաւ իմ ճամբադ կը նայիմ:
Աղաս, գրեր ես աշունը գալըդ

Հիշ պէտքը չէր գրել, ուր ատ էր հալըդ:
Տիւմանէն չ'ընէր քու արած բանըդ:

Եօթը տարի կընէ Իզմիրը ես գացեր,
Իզմիրու երեսը թիւքեան ես բացեր,
Ատ տեղի հարուդ քուրք ես հագուցեր
Աս տեղի հարուդ էօմրն ես հատցուցեր: 67
ԲՆԲ 693

Հմմտ. 136, 146, 151, 156, 184 Լրգերը:

138ա

Օխտը տարի կանէ Իզմիրը ես գացեր,
Իզմիրի չէօլերը թիւքէն ես բացեր.
Ադ տեղացի հարիդ քիւրք ես հագուցեր,
Աս տեղացի հարըդ շատ ես լացուցեր...: 67
ԱԱ 519

139

Հալեմ, հալեմ, հըրցընեմ,
Ճիտքն ածեմ զըրցընեմ,
Բաքվից եկողներ, ձեզ մատաղ,
Կացէք իմ հարից հարցընեմ:
ԱՀԴ 114

140

Հայ հար, հայ հար:
Այ իմ սիրական մարդուկ,
Կարօտեմ քո լուս երեսիդ,
Ծարւերեմ սիրոյ գրիդ:

Փափկեր եմ եղնիկի նման.

Սէրդ անուշ, խօսքունքդ անուշ,

Կու խօսիս լուսունկայ լուսուն,

Հոտդ ալ անուշ կու բուրէ,

Դարնան ծաղկունունց նման:

ՀՀ 297 ԲնԱ

1 ՀՀ չիք այս տողը:

3 ԲնԱ քու փոխ. քո:

4 ԲնԱ սիրոյ մէջ դրիդ:

141

Հայ եար, հայ եար,

Եարս ելաւ խարիպութեան,

Ինձ ալ ձգեց մէլէլութեան,

Փռեցի էպրիւշիւմ խալի,

Գործեցի տաս ու երկու տարի:

Եկին ու բերին խապար.

«Թունդ ելեր քու եարն ու կու գայ»:

Ամեն բանս ի դան դրի,

Ջուր դրի մազս լուացի:

Հագայ շարաշար շապիկ,

Կապեցի լահոռ շալ գօտիս.

Դրդմակ մալ նռան գինի.

Ես առի ու դեմը գնացի:

Դուշմանս ալ երեսս ելաւ,

— Ո՛ւր կ'երթաս, ան քու մարդը չէ:

Թուլցաւ շահէնն ի բազկիս,

Թափեցաւ նռան հատ գինիս:

— Դուշման, աչքդ կոյր կենայ:

Նենգաւոր լեզուդ չորանայ:

Մէկ մալ դուշման տեսնամ,

Տի հանեմ չախուեկս ի ջորէս.

Տի մորթիմ սեւ ոչխրի պէս:

Արիւնը գատէհն առնեմ,

Տի խմեմ անպակ գինու պէս,
Մըսիկն ալ քարաք տ'ընեմ,
Տի ուտեմ կաքվու մըսի պէս: ⁶⁸

22 296 ՆԱ 436 ԲՆԱ 393

- 1—5 22 ՆԱ ձիք այս հինգ տողը:
6 22 խաբար
7 22 քուկինդ փոխ. քու եարն: ԲՆԱ էլիր քու եարքդ
կուգայ:
8 ԲՆԱ էմէն:
9 ԲՆԱ դրի վլացի:
10 22 ձարէ ձար:
14 ՆԱ տուժմանս:
15 ՆԱ եարքտ փոխ. մարդը:
16 ՆԱ շահենին բաղկի:
17 ՆԱ գինի փոխ. գինիս:
18 ՆԱ տուժման, աշտ քոր կենայ:
16—19 ԲՆԱ այս տողերի փոխարեն ունի՝ Տիւժման,
աշքըդ քոր կենայ, Ատ լեղուակըդ ինձի չբանայ:
Թուլացաւ շահէն ի բաղկիս: Վաթեցաւ նըրան
հատ գինիս:
20 ՆԱ մեյ մալ տուժմանս ուր տեսնիմ:
21 ՆԱ տի հանիմ չախուկս ի ճեպէս:
24 ՆԱ տի խմիմ:
25 ՆԱ քէպպալ:
26 ՆԱ ուտիմ:

Հա՛յ տար ու բեր, տար ու բեր, ⁶⁹
Գէշը տար, աղուոր մը բեր:
— Գիշուն ո՞վ աղուոր կուտայ որ բերեմ.
Գէշն ալ կշկուրին նման,
Անի մեր պատերն է կողման.
Աղուորն ալ զըտ ջուր նման
Անի իր եարին բաղջան կը վազէ:
Վարդ ու նուռ ունի ջրելու.
Վարդ ու նուռս է ջրելու,
Ընէհանս է կող կապելու:
Քաղեմ ու դաստա ընեմ,

Ու շրկիմ զարիպիս.
Առնէ ու քնդին դնէ,
Շարէ թուլբնդին քաթիրը:
էԱԺԶ 105
Հմմտ. 144 հրգթ:

143

Հաց եմ թխել գարի ա,
Իմ եարը սաֆարի ա.
Սափար երթալուդ մեռնեմ,
Խօսքերդ շաքարի ա:
ՔԶ 160

143ա

Հաց իմ թխե գարի է,
Եար ունեմ սափարի է.
Սափար գնալուդ մեռնիմ
Խօսկիրտ շաքարի էր:
ԹՄԿ 462

143բ

Հաց եմ թխէ գարի էր,
Իմ եարը սաֆարի էր,
Մեռնիմ սաֆա գնալուտ,
Խօսքերըտ շաքարի էր:
ԶԲ 35

Հո՛ւներ, տարուբե՛ր հո՛ւներ,⁷⁰
 Եղբօրմէս մէջ գըրիկ բե՛ր,
 Քէ գըրին տալապ շանէ,
 Բարշամէն թելիկ մի բե՛ր:

Հո՛ւներ, տարուբեր հո՛ւներ,
 Գէշը տա՛ր աղուորը բե՛ր,
 Գէշին տէրը արեւ չունի,
 Աղուորին գիշերն է արեւ:

Գացէ՛ք մէծ վարպետ բերէք,
 Աղուորին խաբդան ձեւեցէ՛ք,
 Արեգակն երես արէ՛ք,
 Լուսընկան աստառ ձեւեցէ՛ք:

Ինչ սէր կայ դըրէք սուղակ,
 Ինչ անոյշ բաներ կան՝ կօճակ:

22 294 ԱՐՄ 1883 377

4 ԱՐՄ բերշամեն:

7 ԱՐՄ դիտուն տէր:

10 ԱՐՄ խաֆդան փոխ. խարդան:

14 ԱՐՄ պաղեր կան փոխ. բաներ կան:

Հմմտ. 142 երգը:

Ղո՛ւշ, իմ գլխովն անցկացի,
 Արի թըռի ու անցի,
 Գնա՛ հարիս աչքով տե՛ս,
 Անուշ բարե բե՛ր ընծի:

Տե 197

Մանեցի, մանեցի բարակ մանեցի,
 էջա խաս բաղջան վարդը քաղեցի
 Լսեցի հարբս կու գայ շապիկ կըյրեցի
 Տուն էկօ, տուն էկօ, հարբս տուն էկօ,
 Արդամանդ պէտքը չէ, մինակ տուն էկօ:

ՄՍՍ 1884 15

Հմմտ. 136 151 երգերը:

147

Մենտիլդ աղտոտ է
 Ղրկե վլանամ
 Դրնեմ սեւ աշերուս,
 Պառկիմ քնանամ:

ԱԲ 118

148

Մթնեւ ա տուն չի գալիս,
 Ամբել ա ձին չի գալիս,
 Իմ հարը հեռու տեղ է,
 Մի մատը գիր չի գալիս:

ԱՀԺԱ 57

149

Մտանք ի բարեկենդանք, ելլանք ի Զատիկ,
 Եար, դուն ելեր կերթաս, ինտոր տի զատինք:

Սիլաս միտքս ինկաւ շաշմիշ եմ եղեր,
եւման գետի պէս ճօշմիշ եմ եղեր:

Աշունը տի գայի, տըշլըխ չունէի,
Գարունը տի գայի, խաշլըխ չունէի,
Եարս ինծի ձի մի դրկեր փարայով,
Կուզես կէմիով եկու, կուզես խարայով:

Կրիշս ձեռք առի, ըսի թէ ո՞ւր իմ,
ես բոլոր ցաւերս քեզի կու գրիմ.
Զգիտնաս, սիրելիս, որ քեզ մոռցեր եմ,
Սիրտս աստուած էրած՝ միշտ կը համբերեմ:

Լեզուդ բալլի պէտք էր, սիրտս բանայիր,
իմ սրտիս սէրը դուն իմանայիր: 71

ԲՆԲ 693

150

Նոր է բացուեր կարմիր վարդի տերեւը,
Կրակով է լեցուեր սրտիս վերեւը,
Քաշածներս ալ չեն քաշեր լեռները,
Ցաւերս ալ պատմեմ կուլան քարերը:

Պատկերքդ դիմացս ու կու հայիմ,
Ալ չինամ դիմանար, կրակէդ կէջիմ,
Քալած ճամբադ վարդ ու մանուշակ
Ծարաւ եմ, ջուրի պէս ճամբադ կու հայիմ:

Այվանը կելամ, ցուրտ է կու մրսիմ,
էլին եարբ կուգայ, ես կու հավասիմ,
Տէրը հոգիս ալ շառներ, մեռնիմ, խալըսիմ:

Անծեղն ալ կու կանչէ իշալլահ խեր է;
Ելիր մայրիկ, ելիր աղօթքդ ըրէ.
էլին տղան կուգայ, քուկինդ ո՞ւր է: 72

Ա.Բ 119

Հմմտ. 71 երգը:

Շատ բամբակ իմ ցաներ խարբերդու օվան,⁷³
 Մա'րիկ, մի քրքրեր պիւպիւլիս իւվան
 Ե՛լ եկո՛ւ, ե՛լ ելկու, ա՛ռ պառւին տուան:
 Ճարը քենէ լընի, մար աստուածամար.
 խարիպս դուն խրկես, (կամ անդարձս դարձ բերես)
 Սուրբ աստուածամար:

Մարանը մեծցեր է պապա կու կանչէ,
 Ան տեսնող կըյիճը սրտէն կու հառչէ.
 Մա'րիկ, ելի՛ դուն ալ աստուծու կանչէ՛:
 Ճարը քենէ լընի,.....

Օխտը տարի կ'անէ Իզմիր ես գացեր,
 Իզմիրի չէօլերը թիւքէն ես բացեր.
 Չեռացտ թղթիկն ալ ինչո՞ւ ես մոռցեր:
 Ատ տեղացը հարուն քուռք ես հագուցեր,
 Քու էօքսիւզ հարիկտ շատ ես լացուցեր:
 Տո՛ւն եկու, տո՛ւն եկու, աղաս, տուն եկո՛ւ,
 Արմուղան չիմ ուզեր, մինակ դո՛ւն եկու:
ՀԱ 460

Հմտ. 77 136 138 երգերը:

Չորս տարի յա գնացել,
 Սիրտըս դադ է մնացել,
 Եար ջան, վաղեղ անցել ա,
 Էրկու ամիս ա մնացել:

ՔԱ 123

Պաղչան իջայ, ամէն մէջվան հասեր է,
 Վարդը բացուեր, ռահանը բուսեր է,
 Երեսկ ան աչերուն՝ հարը տեսեր է,
 Քովը նստեր՝ իր մուրատին հասեր է...:

ԱԱ 513

Պաղչան ու պաղը մէկ է,
 Հալվան ու նարը մէկ է,
 Ի՞նչ կ'երթաս օտար երկիր
 Ամէն մէջվան ալ մէկ է:

ԱՐ 121

Պիւպիւլ էր ուշմիշ եղաւ,
 Վարդ էր պուպուշմիշ եղաւ:
 Ծրագ վառեմ փնտռեմ,
 Հավայեն ուշմիշ եղաւ:

ԱՐ 120

Պիւպիւլն ալ կու կանչէ, պաղչա պարու պէս,
 Մէջ մալ շեկաւ խապար մ'առնեմ ետրուկէս,
 Ինտոր եմ կարօտցեր, հայվա նարի պէս
 Ալ չինամ դիմանար, կեցնիմ կարօտէս:

Մորճիկն ալ է ժմենը,
Մէյլան ալ լուլայ,
Ամէնքին եարը կու գայ
Ան կայնի կուլայ:

ԱՔ 121

Հմտ. 138 157 158 երգերը:

157

Պիլպիւր կու կանչէ պաղճէ պարի պէս,⁷⁴
Մէյ մ'ալ չի գար՝ խապար բերէ խարիպէս,
Ինչեխ իմ կարուտցեր հայվա նարի պէս:
Պիլպիւր կու կանչէ ասօր գարուն է,
Մի խօսիք մարկըններ, սրտիկս արուն է:
Միրական եար մ'ունիմ, ան ալ հեռուն է:

ՀԱ 461

Հմտ. 156 158 երգերը:

158

Պիլպիւր կու կանչէ պաղճէ պարի պէս,⁷⁴
Մէյ մըն ալ չի գար խապար տոնեմ խարիպէս,
Ինչեխ իմ կարուտցեր ալվա նարի պէս:

Տօշակս տախտակ է, բարձս չոր քար է,
Ելեր եմ կայներ եմ ներքեւ ձոր է,
Իմ եարես զատուեր եմ, աս ինտոր օր է:

Չար կասկամը կանչէ տանըդ պետ արէ
Եար եկու ձեռօքդ պատանքս կարէ,
Վերցուր դիր գերեզմանս՝ քարը դուն շարէ:

ԲՆԱ 565

Հմտ. 156 157 երգերը:

Պիւլպիւլ ի՞նչ ես պառկէ շօխուռ օվայում,
 Խեղճ ընկերտ քեզ փնտռէ կու վայում,
 Իս եմ զարիւպ երկրում, սիրտս է տանջվում,
 Խղճա, զարիւպ պիւլպիւլ, սիրտս վառած է:

Պիւլպիւլ, ի՞նչ ես պառկէ, պահար եազ եկաւ,
 Մեր գեղին մէջ շատ էօրդակ ու զազ եկաւ,
 Տանը մէջ եարս լսեց, ինծէն վազ եկաւ,
 Մի ընէ, զարիւպ պիւլպիւլ, սիրտս վառած է:

Պիւլպիւլ ի՞նչ ես պառկէ, գարունը հասաւ,
 Կարմիր վարդը՝ պաղշաներուն մէջ բուսաւ,
 Տանը մէջ՝ սիրելիս իմ միտքս ընկաւ,
 Մի ընէ, զարիւպ պիւլպիւլ, սիրտս վառած է:

Մի էրթայ, զարիւպ, մի էրթա, ճամփան շամուռ է,
 Եար, քու սէրդ ապառաժէն ամուր է,
 Օխտը տարի ըսածտ սաստիկ մեծ դուռ է,
 Մի էրթա, իմ զարիւպ, սիրտս վառած է:

ՋՋ 36

160

Պիւլպիւլը կու կանչէ, ե՞րբ տի գալ գարուն,
 Կուլամ ու ժուռ կու գամ աշուն ու գարուն.
 Տիվանէ եմ եղեր իմ եարուս սիրուն,
 Որու եարը կու գայ՝ երանի տիրուն...:

ԱԱ 519

161

Պիւլպիւլը կու կանչէ, վաղը գարուն է,
 Աչքերս արցունքոտ է, սիրտս արուն է,
 Խոցս մի փրցներ, եարաս խորուն է,
 Անոր համար որ եարըս հեռուն է:

ԱԱ 519

Պիւպիւն ալ կու կանչէ գարուն է գարուն,
 Մի բանար եարանիս, խորուն է խորուն:
 Պիւպիւն ալ կու կանչէ պաղշապարի պէս,
 Մէյմալ շեկաւ, խապար առնեմ դարիպէս,
 Ինչեղ իմ կարօտցեր, հէյլա նարի պէս:

ԱԱ 528

163

Ջրբի էն կուռը եօնջայ,
 Քարուքանդ կանեմ Գեանջա,
 Գեանջու շհարը փուլ գայ,
 Իմ աղիղ եարը տուն գայ:

ԱՀԺԱ 60

164

Ջուրն իլաւ երես երես,
 Բազրկեան աստուած սիրես,
 Երբ որ քնաս Շորագեալ.
 Ղարիպ եարս հետդ պիրես:

75

ԱՀԶ 375 ՏԽ 228 ԷԱԺԶ 111

ԱՀԳ 99 ԱՀԴ 167 ԱՀԲ 339 ԺԽ 492

165

Ջուրն ի փրոթե վերին սարէն,
 Կուգայ թափի մարմար քարէն,
 Ձեռք մէք իտա սըրտիս եարէն:
 Եարս ի դարձե ուր կըրակէն:

ճարրս գնացեր կարիրութեն,
Զիկ որ թողեց չար գերութեն,
Առանց հարող իմ հալն ին՝ չ իս
Աման, հարիկ շուտ ետ դարձի:

Էլի՛, կայնի՛, բաժդ իրիշկեմ,
Այնախդ առնեմ, քեզ նըմըշեմ:
Քեզ կարիր աշխարհ կողորկեմ:
Գեահ-գեահ վերէն թէ իրիշկեմ:

Կարիրութեն՝ չար գերութեն,
Անունը շէլնէր, ինքը շէլնէր:
Թո՛ղ իմ հար մօտ ձիկ մընէր,
Օր դամ գէր ձիկ տիսնէր:

Երկու ամառ իրեք ձրմեռ,
Հերիք ձիկ անես կիսամեռ.
Գիշեր ցերեկ քո կարօտով,
Օր շեմ տեսնես ցամաք աչքով:

Կարիբի տիրող հացն աղու ի,
Կարիրներաց կեանք մահու ի,
Իրենց օրերն դարտամահով,
Մընան իրարուց կարօտով:

Գարուն էկաւ, ամառ գրնաց,
Աչքըս մընաց ճամբրներաց,
Աստուածամօր խընդիր ունեմ,
Դուռ մի բանայ կարիրներաց:

Թուղթ կըզբրեմ դիւրջի կալմով:
Քեզ կողորկեմ կուշի թևով.
Դու քեաֆուր վարդ, ես էլ բիւրիւ,
Գիշեր ցերեկ մնամ ահուդարով:

Քեզ կուղարկեմ դուդա սալամ,
Թող իմանայ աշխարհ ալամ,
Թէ շատ մընաս թէ քիչ մընաս,
Ախ, կարիք հար, սիրուդ կուլամ:

ՎՍՐ 60

Ջուրս տաք, ա, ջուր բերէք,
 Հնդստանայ հունդ բերէք,
 էլ ու գինս թամամ ա,
 Ղարիբ եարս տուն բերէք:⁷⁶
 ՓՇ 137 ՌՄ 108 ԱՀՁ 375

166ա

Մարավել հմ, ջուր բերէք,
 Ըսպահանու հուն բերէք.
 Կըմեննիմ էս ղարիբ տեղը,
 Ղարիբ ղուշս տուն բերէք:
 ԱՀԴ 263 ԱՀԴ 115
 ԱՀԺԸ 25 ԱՀԸ 140

167

Սև հաւի ձուն փուրն է,
 Իմ եարը Գեանջու կուռն է,
 Գեանջայ, բու սարը փուլ գայ,
 Բալքի իմ եարը տուն գա:⁷⁷
 ՔՀ 164 ԱՀԴ ԱՀՁ

168

Սէրըդ պտղունցըդ առիր,
 Իմ սրտիս մէջը վառեցիր.
 Կրակըդ վառ թողուցիր,

Դուն ալոց երկիր գնացիր:
Քանի դուն ալոց, ալոց՝
Իմ սրտիկս է գանգատ ու խոց:

ՄՍՍ 1902 332

169

Սիրտդ տա՛ք արա, տը՛ղայ, մի՛ պաղեր,⁷⁸
Բուռ մի մաղ իմ ծամիցն եմ կըտրեր պահեր,
Նախշուն աղլուխի ճոթին եմ կապեր,
Իմ ատլաս կապայի ծոցի ջոթն եմ ծալեր *դըրեր:*

Կապէն ի վան քաղաք պահ եմ տուեր,
Թէ մարդ իրե, հետ կը ճամբեմ,
Թէ հաւք իրե, թեւ կը կապեմ:
էկար ու ընցար, գիշեր չըմնացիր,
Շալդ ու շապիկդ թողիր գընացիր:

Լըւամ լըւամ շիստըկի,
Վարդի ջըրով կիստըկի:
Բերնիս փութով փոշին հանեմ,
Շուռ տամ ու ծալծալ անեմ:

22 309

170

Ստամբէօլ քեաղայք վէր Սև ծովերաց,
Վաթան կուրիսե վէր կարիբներաց,
Կարիբիս մեռնեմ ուր ճամխըներաց.
Որ չէթէր մնէր իտե սարերաց:

էլայ պանցր էօդէն, ինգնայ անուշ քնուն,
Կոտրաւ սրտիս սուն, էլայ էրէրուն.
Ֆինալով կացի կարիբիս սիրուն,
Գիշեր ցերեկով մնացի արթին:

Ընգնայ թաղէ թաղ ախշէմ՝ ճարիցի,
Տվի թարաղէմ՝ թղթիկ գլխիցի.
Շողշղուն մատքերս կալամ արիցի,
Իմ սրտիս դարդեր ինն գլխիցի:

Վանայ չիւմ Պօլիս մէկ օրօսկիցի,
Շատ կարիք կուրքալ՝ ռառով դառնուցի,
Արե՛, ջան, արե՛, արե՛, հար արե՛,
Վալահ կը մեռնեն, խոցերս ի խասն:

ՎՍԱ 63

Հմտ. 104, 107, 130, 171, 183 երգերը

171

Մտամբով շինէր են վէր Մեւ ծովերաց,
Ճամխներ բռնէր ի վեր կարիբներաց.
Կարիբս եմ ճամխէ խտեւ սարերաց,
Կարիբիս մեռնեմ, ուր ճամխըներաց:
Իմ տղա ումրիկ ձիկ էլ քիւլ արաց,
Անգին ի հս էլ, ձի սարխօշ արաց.
Բարով շուտ դառնաս վեր քո տան տեղաց:

ՆԶՊ 45

Հմտ. 170, 183 երգերը

172

Սրտիկս է քաշեր դալամ,
Թաճնելու թղթիկ մի դրէ:
Կանչեմ հոտ ի վեր, իմ տէ՛ր,
Ջամենայն դարիս դու պահէ՛:

Ղարիպ գնացած ունիմ,
 Իւր տարտերըն ղիս կու լափէ:
 Շալայ թէ շուտով դառնայ,
 Թէ չէ՝ իմ հոգիս կու ելնէ:
 ՊԹԱ (ԳԺՏ 210)

2 ՊԹԱ բաժներու ուղղ. բաժնեկու:

173

Վաղուց գնացած եարուկ,
 Ե՛լ եկո՛ւ խիստ իմ կարուտցեր,
 Ինչեիս իմ կարօտացեր,
 Ես իքու սըֆաթն իմ մոռցեր:

Տարին տաս և երկու ամիս,
 Դուն ծովուն ելուն կու կենաա:
 Ծովն ալ մահանայ կ'անհա,
 Իս քննէ կարօտ կու պահես:

Եր ուր գալու ուր լընիս,
 Դուն ինծի իմաց մ'արէ:
 Թեւ կարմունճուկ շինիմ,
 Անցի՛ ու դարձի՛ եկու տուն:⁷⁶
 ՉԱ 442 ԲՆԲ 693 ԱԱ 493
 Հմմտ. 66 95 301 երգերը:

174

Վաղուց գնացող զարիպ,
 Ինչեիս իմ կարօտացեր,
 Էրեսիդ սֆաթն իմ մոռցեր,
 Երբ գաս ու բաղնիքն էրթաս,
 Մոլըրիս ու մերը գաս:⁸⁰
 ԷԱԺԶ 102

Հմմտ. 66 95 173 երգերը:

Վարդ եմ քաղեր, վարդավառի կիրակին,
 Ալ չինամ զիմանար եարիս կրակին,
 Յածցէք լեռներ, ցածցէք վրովնիդ անցնիմ,
 Եարս զուրպէթ զնաց ետեւէն հասնիմ,
 Ճահիլին եարբ զուրպէթ կու հասնի,
 Այն եարին էօմիւրը սեւով կու անցնի,
 Արեւ կըլլայ, հով կըլլայ,
 Նուշանբան տերեւ կըլլայ,
 Գացէք, ըսէք այն եարին
 Սատըղար կենա՞լ կըլլայ:

ԱՐ 120

Տալղա, տալղա կընէ Պուլիսա ծովը,
 Ինչ անուշ կու փըշէ սեվտային հովը,
 Տէրը նասիպ ընէր էրթայի քովը,
 Առնայի մուրատս իյնայի ծովը:

Ստամբուլա ճամբան, վարէն կու բանի,
 Ուրիշին գէշ խօսքը սիրտս կու գանի.
 Գիտցիր քի խմեր եմ եօթը տարուայ գինի
 Տարիքդ միտքս իյնա նէ խելքս կու տանի:

Ստամբուլը մի գովեր երկրէ վար է,
 Տախտակը տէօշէկ, սալ քարն ալ բարձ է.
 Ձեռքերը երեսին մենտիլն ալ թաց է
 Վայ անոր տիրոջ, աշերն ալ լաց է:

Փօստան էկեր էրթամ նամակ հարցունեմ
 Ինտոր բնեմ, ես աս սէրս մոռցունեմ,
 Քերվան զրկեմ, եարս տուն դառցնեմ,
 Գիշեր, ցորեկ մենի ըսեմ լացունեմ:

Պաղչան իջնամ ամէն մէյվան հասեր է,
 Վարդը բացուեր, մանիշակը գոցուեր է.
 էրնէկ ան աշերուն եարր տեսեր է
 Զեռքը, ձեռքին տուեր մուրառին հասեր է:

Վարդ ու պիլպիլ էի նոր տի բացուէի,
 Ֆէլէկը՝ շի թողուց եարիս հասնէի
 Շատ սիրով սիրեցի մուրառս շառի
 Ղրկե՛ գաւաթ մը ջուր սրտիկս մարի:⁸¹

ԱԲ 119

Հմտ. 106 երգը:

177

Տիւ մտերես ոսկի գեամին,⁸²
 Կըզզզզայ սիրուդ քեամին.
 Գեամին ինգերի վեր անտակ ծովուն,
 Մըծվերդ ես տվե ինոր պաղ խովուն:
 Արե՛, եար արե՛, քեյ պան չեմ ասե,
 Վալահ կ'մեռնեմ, խոցերս ի խասե:

Գեամին վեր ծովուն էրէվաց,
 Քեամին ի վարկ եէլքեան ի պաց.
 Կարիբի սուրաթն մէջն էրէվաց,
 Կարիբիս մեռնեմ ուր ճամխըներաց,
 Որ եղնիկիս ումրիկ քիւլ արաց:
 Արե՛ ջա՛ն արե՛, սարեր լացուցեմ,
 Շատ կարիբ կուրբաթ ճամխէն դառցուցեմ:
 ՎՍԱ 62

178

Ուրբաթէ շաբաթ կը լուսնայ,
 — Քոր, հայիր աղբարդ կուգայ,—
 — Հայ աղբար սա ճամբով մի գար,

Հայ աղբար սա ճամբով իկօ,
 Օր մահուան ձան չէ լսուած:
 Հայ աղբար ան խալին մեյնիմ,
 Օր տասուերկու տարւայ գործեր իմ.
 Հայ աղբար՝ դղումը բերիմ,
 Օր պոյը պոյը, պոյդ կըլմանի
 Հայ աղբար՝ անքէրսին բերիմ,
 Օր նաշխը նաշխիդ կըլմանի.
 Հայ աղբար՝ ան գինին բերիմ,
 Օր գոնը գոնըդ կըլմանի:

ՔնՔ 42

179

Փշեցէք, հովեր, սարեր ձուն բերէք,
 Իմ դարիր եարս առէք տուն բերէք,
 Հենց արէք, որ դուք էս ըրիգուն բերէք,
 Անքուն աչքերիս քաղցր քուն բերէք:
 Ըսօր թող ձուն գար,
 Իմ եարը տուն գար,
 Ինձ անուշ քուն գար:

Ծծերս կոկոմ դարիր ճամփեցի,
 Ծամերս ճերմակ ճամփայ պահեցի,
 Քարիբիս գնալը իրեն թողեցի,
 Ծգ դառնալ գալը աստծուն բաշխեցի:
 Ըսօր թող ձուն գար,
 Իմ եարը տուն գար,
 Ինձ անուշ քուն գար:

Քանի ու քանի ելնեմ դռները,
 Արնով լցունել ա սրտիս կռները:

Արի, ծով աչքեր, ինձ մի լաղացներ,
Դուշմանս շատ ա մի ծիծաղացներ:

Ըսօր թող ձուն դար,

Իմ հարը տուն դար,

Իմ աչքիս քուն դար:

ԱՆԺԱ 69

Հմտ. 130 հրդեհ

180

Քաղեցինք պարտէզին դուարթ վարդերը,

Ի՞նչ կու քաշեն պանդուխտներուն տէրերը:

Ցաւերս ալ չեն քաշեր լերան քարերը,

Ձեմ կրնար համբերեր, նեղ են դարերը:

ԱԱ 514

181

Քանի հարուկ կանչեմ քեզի, դուն լսէ՛,

Միշտ լսէ ու մեր սիրուն վրայ խօսէ,

Հերի՛ք գնացիր պանդուխտ երկիր մնացիր,

Կարօտով մնացած հարուկդ յիշէ...

ԱԱ 513

182

Քարիս տակը քարոտ ա,

Պարնի ձիանն արօտ ա,

Թամամ օխտը տարի ա,

Քոյրն աղբօր կարօտ ա:

ՔԶ 150 ԱԶԸ 447 ԱԶԳ 97 ԷԱԺԶ 130

ԷԱԺԶ 142 ՌՄ 138 ՏԵ 237 ԲԱ 131

1 ԱԶԸ Արսենի ձին արօտն էր:

1 ԷԱԺԶ ծառի տակ արօտ ա:

- 1 ԷԱԺԶ քարի տակը քոլոտ ա:
 2 ԱԶԳ քանձըր ձիանցն արոտ է:
 2 ԷԱԺԶ կարմիր ձիան արոտ ա:
 3 ԱԶԳ ուղիղ փոխ. թամամ:
 3 ԷԱԺԶ բօլօլիկ օխտը:
 3 ՌՄ Տև Եօթը:
 4 ԱԶԳ քիրն աղբորէն կարոտ է:
 4 ԷԱԺԶ քուր աղբոր:
 4 ԷԱԺԶ քիրն աղբորը:
 4 ԱԶԸ քուրն ուր աղբոր կարոտ էր:

183

Քեամբախ Բէյօղլի, պէր Իւքիւտար,⁸³
 Որ շանէր իմ հար վէր ձիկ դարբէղար,
 Քեամբախ Բալխլի ի՞նչ անուշ տեղ էր,
 Մէջ քէօ էրկու ծոց՝ քնկու տեղ էր,
 Արէ՛, հար արէ՛, մալու մի՛ մնայ,
 Կուրբաթ հս ինկհ, արէ՛, մի մնայ:

Պէանցրիկ սարերաց յըմէնին տէր կայ,
 Յըմէն եղնիկին մէկ էլ մարդ մը կայ,
 Ես խօրօտ եղնիկ, ընձիկ տէր չկայ,
 Վուլ ձիկ չը սիրէ, ուր սիրտ սէր չկայ:

Ստամբէօլ քաղաք վէր սև ծովերաց,
 Վաթան կուրբսէ վէր կարիւրներաց,
 Կարիւրիս մեռնեմ, ուր ճամխներաց,
 Որ չ'էրթէր մնէր յետև սարերաց...

Վանայ չիւմ Պօլիս մէկ էօրէօխկեցի,
 Շատ կարիւր-կուրբաթ՝ ոտով դարձուցի,
 Արէ՛, հար արէ՛, արէ՛, ջան արէ՛,
 Վալլահ կու մեռնեմ, խոցերսի խաս է...

ՌՄ 102 Տև 132 ՄՇ 1889 143

- 1 Տև Իսկիդար:
 3 ՄՇ Բալբլի:
 5 ՄՇ արի, հար արէ:

7 ՄՇ պանքրիկ:
 11 Տև Ստամբուլ:
 12 Տև կարիպներաց:
 14 Տև մրներ:
 18 Տև խոցերսի խասն:
 Հմմտ. 130 170 171 երգերը:

Քու երթած ճամբինքդ կըրակ ու հով է,
 Չորս բոլորը լեռ է, օրբան ալ ծով է.
 Մալր-աստուածամար քինար է, քով է,
 էմմէն զարիպ իրեն սիւան դարձնէ...

Կուլամ ու ժուռ կու դամ ես քեզի համար,
 Արցունքս երեսս ի վար կապեր է կամար.
 Մէյ մալ սիլա եկու, արեւուդ համար...
 Գացիր ատ երկրին խումաշին, ալին,

Ինչ տամհօդ ես տըւեր զուրուշին, մալին,
 Հէշ չես հարցընէր աշխարհքին հալին...
 Աշխարհքն է մընացեր զուրուշն ու փարան,
 Հէշ ցաւու մը չի նմանիր հէսրէթին Լարան:

Վախենմ, քեզի չի գալ ատ չէօլին հաւան
 Աման ողորմած տէր, ի՞նչ է ասոր շարան,
 Առաւօտուն կելլամ, պիւպիւր կու կանչէ
 Աս զուրպէթին տէրտը սիրտս կու տանշէ:

Չալըմ, ելի եկու, աս բարուլ բան չէ,
 Առաւօտուն կելլամ, ամայ ու ալազ է,
 ես ալ քեզ տեսնալս շատ մեծ մութադ է,
 Չեմ գիտեր ըրածըդ նիա՞ղ է, նա՞ղ է:

Գացիր ատ երկրին շատ չէօլեր անցար,
 Իկ սէրըս ու քու սէրըդ թափեցիր մոռցար,
 Չեմ գիտեր՝ հոտիկ ես մի, եօխսամ դարձար.

Սիրելիս ո՞ւր մնաց աշունը գալըդ,
Հէշ պէտք չէ գրելիք որ ատ էր հալըդ,
Ես քեզմէ կարօտ եմ, ի՞նչ տ'ընեմ մալըդ
Տիվանէն ալ շքներ քու ըրած բանըդ:

Քսան տարուան դարիւր հեշ կերթա՛ հեռուն,
Օր աւուր կու բանի եարանին խորուն,
Հեշ ցաւ մը չի նմանիր հասրէթը եարուն
Գիշերս ամիս եղեր, ցորեկըս՝ տարի,

Հավասեցայ քեզմէ կարօտըս չափ,
Սրտովըս սիրեցի, մուրատս չափ,
Քրսան տարի կեցար, օր մ'ալ «ահ» չըրիր,
Շատ գըրեր գըրեցի, քեզի մալ չըրիր:

Քու արեւուդ դարար, ինծ ալ մեղք ըրիր,
Վերուցի կարմիրըս, ծօռ գըրի ֆեսըս,
Ես ալ մորճիկմընէս կառնեմ հավասըս...
Մորճիկդ ալ է ժըմներ, մեշվան է լուլա,

Էմմէնուն հար կու գայ, ինք կանի կու լայ,
Աստուած խըսմեթ ընէ, գաս տեսնաս պոլա
Երթած երկըրներուդ խումաշը խաս է,
Ջուր խըմած թասերըդ Էմաս-թըրաշ է

Չեմ գիտեր՝ ըրածըդ նիա՞ղ է, նա՞ղ է,
Երազ մըն ալ տեսեր եմ աս մոտ օրերըս,
Իմմընէ կըյրեցիր գիրդ ու բարեւըդ,
Աստուծու ամանեթ օրդ ու արեւըդ:

Կելլամ բարձրը լեռներ, կու շինեմ եռվա,
Չերեւար, ո՞ւր տի նայիմ թէ լեռ, թէ օվա,
Հատաւ ըմմէն ճարըս, բայց մընաց տուվա:

ԲԿ 151 Ա.Ա. 524

37 Ա.Ա. մոտ գըրի ֆէսըս:

41 Ա.Ա. գաս տեսնաս պոլա:

Հմմտ. 138 երգը:

ՍԳՈՒ ՎՊԱԴԱՐԱՆ
ԵՐԳԵՐ



Վ

Ալ չեմ երթար պաղլան վարդերնոյն տակը,⁸⁴

Ինկեր է մատնիկս ջէահիր ակը:

Ա՛հ, ի՞նչ դժուար ցաւ է էօլիմին խակը:

22 301 ԱԱ 112

Չեմ իջնար պաղլան, խնծորուն տակը,

Մատանցս ալ է ինկեր մատնուս էլմաս ակը:

Ի՞նչ դժուար է եղեր, էօլիմին խակը:

ԱԱ 564

Ամա՛ն, աման, իս Իսկիտար անցուցէ՛ք,⁸⁵

Սեւ ծովը ճեղքեցէ՛ք, ճամբան ցցուցէ՛ք:

Տարէ՛ք իմ հօրս դուռը,

Վար դրէ՛ք, պահ մի լացէ՛ք:

Մարիկս ալ ի դուրս բերէ՛ք,

Տարուրած աշուին լացուցէ՛ք:

Աղբարս ալ ի դուրս բերէ՛ք,

Տամպուտին թելը կըյնցէ՛ք:

Եարուկս ալ ի դուրս բերէք,
 Ետըվէն ծամը քակեցէք:
 Ծամը քակին, Կարը կու մեռնի,
 Ոսկին քակին, տունը կ'աւերի:

ՀԱ 474

186ա

— Եամա՛ն, Կամա՛ն, իս Ոսկուտար անցուցէ՛ք:⁸⁶
 Սև ծովը ճեղքեցէ՛ք, ճամբան ցըցուցէ՛ք.
 Տարէ՛ք իմ մօրըս դրոնակ, վա՛ր դրէք, պօհ մի լացէ՛ք:
 Եարուկս ալ վա՛ր իջուցէք, հիւսած ծամեր քակեցէ՛ք.
 Քուրուկս ալ վա՛ր բերէք, ծարուրած աչքըն լացուցէ՛ք:
 Չըկա՛ն... չեն գա՛ր...
 Անտերունչ տարէք թաղեցէ՛ք:

ՀՀ 300 ԱԱ՝ ԻԻԻ

1 ԱԱ Իսկուտար

3 ԱԱ պոհ մը

4 ԱԱ հիւսած ծամերը

187

Ա՛յ իմ սևոր աղուոր,⁸⁷
 Պօյաճին ո՛ր թաղ կու կենայ:
 Ո՛ր թաղ պօյաճի կենայ,
 Իմ խարիպս հոն կու կենայ:
 Լաթերս պօյան թաթխիմ,
 Ուր ալէմ աշխարքս իմանայ:

ՀԱ 498 ԱԱ 550

1 ԱԱ հայ իմ սև աշեր աղուոր:

2 ԱԱ թաղը կու կենայ:

3 ԱԱ որ տեղ պօյաճի:

4 ԱԱ իմ զարիպս ալ հոն:

5—6 ԱԱ չիք այս երկու տողը:

Այս գիշերն ես դուրս ելայ,
 Ողորմուկ ձայն մի կուգար.
 Յաճցայ ու ականջ դրի,
 Իմ որդեկիս ձայնն էր կու գար:

Տարէ՛ք հօր ու մօր դրոնակ
 Վա՛ր գրէք, պօհ մի լացէ՛ք,
 Դառնուկ մարիկը վար կանչեցէք,
 Մարած աչքերը լացուցէք:
 22 303 ԱԱ 534

Հմմտ. № 136 Կրգը:

188ա

Ես այս գիշեր դուրս ելայ,
 Ողորմուկ ձայնիկ մը կու գայ,
 Յաճցայ ու ականջ դրի,
 Իմ որդուս ձայնիկն է կու գայ:
 ԱԱ 534

189

Աւուրցս ի դան պիւլպիւլը տի գայ
 Փէնճիրէնին տի թառի,
 Բերան մը լաց տըսէ, բերան մը հարէն
 Հարէնը կու կանչէ, սիւլայ եկողին,
 Լացերը տի կանչէ զարիպ մեռնողին...:
 ԱԱ 533

Բեռնեբա էիր կապեր, ⁸⁸

Ոտքունքա ի սիւայ,

Խաֆիլ եկաւ ինկաւ,

Էօլիմն ի' վրայ:

ՀԱ. 478

191

Գառնեղը անմեր մնաց,

Հայ տղան անճար մնաց.

Գերեզմանը օտար տեղ,

Աննշան անքար մնաց:

Ա. 22 335

192

Եկին ու բերին խապար, ⁸⁹

Զէօլ խուրպէթ մանուկ մ'է մեռեր:

Մեռեր մարդ չէ իմացեր,

Իրեք օր խանն է մնացեր:

Հարկի պաղլորկան մ'է եկեր,

Այն խանին զոնական է բացեր:

Բացեր ու ներս է դացեր,

Մօրը մէկ մանուկ մ'է մեռեր:

Համտլներուն ձան տուեր,

Առեր ծովեզերն է իջեր:

Ծովէն ալ ջրիկ առեր,

Մանուկին պօջն է վըլացեր:

Գլխուն փոշին վար առեր,

Սև պօլին պատենք է ձեւեր,

Փէրչեմէն մազիկ առեր,

Խարիւլին պատենքն է կարեր:

Եկին օտար մարեր ի վրան,
 Եկին օտար քուրերն ի վրան,
 Եկին ու վա՛յ բերին բերողին,
 Վա՛յ բերողին, վա՛յ ոնցունողին,
 Վա՛յ լուսէ լուս արթուն կեղողին:
 ՀԱ 482 ԱԱ 466

9 ՄԱ հաճանքուն ձան տուեր:
 12 ԱԱ պոչիկն:
 13 ԱԱ փուշին փոխ. փոշին:
 15 ԱԱ մանենքը ասեղ արեր:
 16 ԱԱ սև առջին պատերն է:
 17—18 ԱԱ Առեր ջրեղերն է զցեր
 Զարկեր հեղեղն ու տարեր:
 Հմմտ. 205 երգը:

193

Եկին ու բերին խաբար,⁹⁰
 Սուրբ Յակոբ օտա կը շինէ,
 Նստեր օտային վերեւ,
 Նուշ դրեր շաքար կը ծախէ:

Եկո՛ւ քեղ բաղչան թաղենք,
 Ու մազենք հողդ շարերով.
 Հողիդ վըրան ծաղիկ ցանենք,
 Յանկենք կարմիր վարդերով:

Սուրբ Յակոբայ վրան
 Զօքեր է դուման
 Պառկեր է որդեկս
 Կու կանչէ եամա՛ն:

Եամա՛ն մարիկ, եաման,
 Զիս ասկէց վերցուցէ՛ք,
 Աջ ու ձախ դիուս,
 Կողերուս բարձիկներ դըրէ՛ք:
 ՀՀ 303 ԱԱ 112

Եկի՛ք նէ բարով եկի՛ք,⁹⁰
 Իմ որդիէս խաբրիկ մի բերի՞ք.
 Խաբրիկ մի գալուն բերէ՛ք,
 Աչքերս լալուն կտրի, սրտիկս թալկըտելուն:

Իմ որդեկս չէ մեռեր,
 Մուրք Յակոբ ուխտ է գընացեր:
 Ի՛նչ վարդ կայ՝ գըլխուն է դրեր,
 Մանուշկին հոտոյն է քնացեր:

22 302

Հմմտ. 94 երգը:

Եկո, ֆէլէկ, եկո, խապար մի հարցնեմ,
 Մեր պուրճ ու պատերուն քակողը զո՞ւն հս.
 Մեր զարիպներուն տանողը զո՞ւն հս...:

ԱԱ 539

Եկո՛ւր երթանք լեռնակն ի վեր,⁹⁰
 Ես կանչելով, դուն փնտռելով,
 Զինքն չ՝ զտնանք, հող կը զտնանք,
 Իր ապառաժ քարըն համբուրենք:

22 303 ԱԱ¹ 112

3 ԱԱ զինքը չը գտանք:

Եղբայրն է քրոջ սրտին երակ,
Անոյշ խօսի ու տայ մութատ:
Եղբայրն անուշ, թէ եղբորորդին,
Երկուքը մէկ կու նըմանին:

Մարիկն է տաքուկ հացիկ,
Ով որ ուտէ կշտացընէ,
Հայրիկն է անպակ գինի,
Ով որ խըմէ հանգչեցընէ:
22 300 ԱԱ՝ 111

3 ԱԱ եղբորդին:

5 ԱԱ մայրիկն է:

7 ԱԱ անապակ գինի:

197ա

Օտադ բաղչայիդ վրայ,
Պաղ աղբիւր ոսկի լուլայ.
Ամենուն տեղիկ տուին,
Քեզի տէսթուր՝ թը գնա.
Մարիկս էր տաքուկ հացիկ,
Ով ուտեր նը կու կշտանար,
Հարիկս էր անպակ գինի,
Ով խմեր նը կու հարբենար,
Աղբարս ալ արեգակ նման
Սար ու ձոր հաւասար կու ցաթէ...
ԱԱ 536

198

Երթամ քաջարծիւ լինիմ,
Գամ թառիմ քու պատուհանին,
Ինչաքը ֆիղան անեմ,
Ֆիղանէս քունըս չի տանի:

Եկո՛ւ, որդեակ, գիտ մի՛ լացուներ,
Ես շատ եմ լացեր, ա՛լ մի լացուներ,
Իմ դարդը ու սրտիկս մի թնդացներ:

Աչերս են շարդախի նըման,
Մէջքն երկու աղբար կու կենան,
Մեծիս մեծ արեւ կ'ըսեն,
Պղտիկին՝ արեւ լուսընկան:

Նուրին ու թուրին կ'ըսեն,
Անի մեր բաղչան լինի,
Նուրին ու թուրին կոտորանցով,
Պաղուկ չրիկ վաթւըթեցաւ:

22 300

198ա

Երթամ քաջարծիւ լընիմ,
Գամ թառիմ քու պատուհանիդ,
Ինչքան ահ ու դար անիմ,

Ֆիդանէս քունդ չի տանի,
Որու քուն տանի տանի,
Իմ ու քու քունդ չի տանի...

ԱԱ 435

199

Աղջինը.— Երկիրի կար կարելէն՞
Մատիս ծէրը ծակծրկաւ...
Պըտը դան մը Ստամբուլէն...
Տըքուն էջքիս կէտխակաւ:

Մէրը.— Երէկ իրիկու թուղթ անի

Աղջինը.— Աստուծու կամքա օրտնեալ ընայ,

Սիրտը ցաւի աստուածածնայ...
 Իրեքը մէկ, մէկ օրուան մէջ,
 Մեռեր թաղեր են խէշէխէշ...
 Աստվածածինն երթանք հըմմա,
 Իրեքինէ հոգուն համա,
 Մէյմէկ ծունկ ժամ կենանք ու դանք,
 Աղջինը. — «Կայ նըշանածուս... վախ...
 ախպրտանք»:
 ԱՐՄ 1912 505

200

Ինծի տարէք, հարիս դռնէն անցուցէք,
 Եարաներս բացէք՝ քաֆիր հարիս ցցուցէք.
 Մատվըներս կըտրեցէք, մոմ էրէք վառեցէք,
 Աւազը խունկ էրէք, վրաս ծխեցէք,
 Ինծի տարէք, հարիս դուռը թաղեցէք:
 ԶԲ 21

Հմտ. 201 երգը:

201

Ինծի տարէք, հարիս դռնէն անցուցէք⁹²,
 Եարաներս բացէք, հարիս ցըցուցէք,
 Սկը վերցուցէք, ալը քաշեցէք.
 Ինծի տարէք մարմառ քարին տակը թաղեցէք.
 Հողը դեօշակ էրէք, մարմառ քարը՝ բարձ:
 ԺԱԲ 20 ԱԲԶ 1895 54

Հմտ. 200 երգը:

202

Ինչո՞ւ դուն խարիպ մեռար,⁹³
 Ուր տուին հողտ դրամով:

Եկո՛ւ դուն սիւայ մեռի՛ր,
Ուր տայի հողդ քիւրէկով:
Խարիւ պ մեռար, խարիւ պ թաղեցին,
Խարիւ պ տունին հողին վերեւուն:

ՀԱ 498 ԱԱ 542

- 1 ԱԱ դարիւ պ
 - 2 ԱԱ հողը տրամով.
 - 3 ԱԱ ուր գայիք սիւայ մեռնէիր.
 - 4 ԱԱ տային հողը քիւրէկով.
 - 5 ԱԱ հողդ քիւրէկով տային.
 - 6 ԱԱ թաղէանք շարուկ լաթերով...:
- Հմմտ. 205, 206 երգերը:

203

Լացէ՛ք, մա՛րեր, լացէ՛ք, քո՛ւրեր,⁹⁴
Հոս մարդ չկայ որ չէ մեռեր.
Քեզի մեռեր մատղաշ որդեկ,
Մեզի մեռեր, մեր տանուտէր:

ՀՀ 303 ԱԱ 539

- 2 ԱԱ մարդ չի կայ քի չէ մեռեր:
- 3 ԱԱ նէ ան ճամբուն ճամբորդն է եկեր,
- 4 ԱԱ նէ ան ճամբուն տէրը՝ խնդացեր:

204

Կարիք եմ, ձեր դուռն եմ իկե,
Ձեր խոզիւ խամար դեխ ձիկ իրիշկէ՛յք.
Օրէն խացմ ջրայ կտրեցե՛յք,
Թէ որ էլ ուզեմ, ձիկ քեարկոծէ՛յք

Որ չ՛մեռայ, ձեր նավէղ կանեմ,
Որ մեռայ, ձիկ տարէ՛յք թաղեցէյք
Նաշիկս Առդումայ պիրէ՛յք,
Լէշիկս ինե գրեցէ՛յք:

Տարէ՛յք իմ հարող դռնէն ընցուցէ՛յք,
 Դուռ տփէ՛յք, հար տիւս խանէ՛յք,
 Ծովծովան աչքեր լացուցէ՛յք,
 Զավրէս ծոցէս խանեցէ՛յք,
 Ինոր ծովծովան աչքերն սրբէ՛յք:

ՎՍԱ 63 ՄՇ 1889 143

- 1 ՄՇ դուռն եմ եկէ:
 2 ՄՇ ձեր խօսքու խամար:
 3 ՄՇ խաջ մը:
 5 ՄՇ ձեր ավեղ կանեմ:
 7 ՄՇ տարէք իմ հարող դռնէն ընցուցէք:
 9—12 չիք այս շորս տողը:

205

Ղարիբ մեռար, ղարիբ թաղեցին,⁹⁵
 Ղարիբ լըցին հողիկն ի վրադ,
 Եկին օտար մարեր ի վըրադ,
 Եկին օտար քուրեր ի վըրադ:

Եկին ու վա՛յ բերին բերողին (ծնողին)
 Վա՛յ բերողին, վա՛յ մեծցնողին,
 Վա՛յ լուսալուս արթուն կեցողին.
 Մաղկատր սրբտին, ծիծը տուողին:

ՀՀ 299 ԱԱ¹ 111

8 ԱԱ Մաղկատր սրբտին ծիծ տվողին:
 Հմմտ. 192-ի վերջին տողերը: 202, 206 երգերը:

206

Ղարիպ մեռար, ղարիպ թաղեցին,⁹⁶
 Ղարիպ հողեր վրադ լեցուցին,
 Օտար մայրեր վրատ լացին,
 Օտար քոյրեր լաց կու կանչին:

ՀԱ 496

Հմմտ. 202, 205 երգերը:

Ճամբորդ կուգայ, ի՞նչ գումաշ ու բեռներ կայ,⁹⁷
 Արանիս ալ ի՞նչ ծովեր ու լեռներ կայ:
 Տուն էկո՛ւր, տուն էկո՛ւր, աղա՛ս տուն էկո՛ւր,
 Աշխարհս ոչինչ է, մեզի ալ մեռնիլ կայ:

Հաներ ես կարմիր, հագեր ես ալըդ,
 Նո՞ քենէ կարօտ եմ, ի՞նչ անեմ մալըդ,
 Սաղլըղով չէր բերեր քու բերող մարըդ
 Զարկիր, կրակ տուիր, կերիմ, կո՛ւ վառիմ:

Զըրի պէս ծարւեր եմ, ճամբորդ կու նայիմ:
 Հարիկ էիր, իրաւ կ'ըսէիր, շառնէիր առիկն ի առէն
 Առիկն ի առէն առնէիր, քու որդեկդ շար գրողէն:

22 299 Ա.Ա. 111

6 Ա.Ա. ի՞նչ բնեմ մալըդ:
 10 Ա.Ա. առիկն ի առէն:
 11 Ա.Ա. առիկն ի առէն առնէիր, քու որդիկդ
 տեղ կու կենաւ:
 12—13 Ա.Ա. ա՛յ իմ սե աշեր սուրմա, պոչաճին ո՞ւր
 Քու հաշմաղդ որ սե ներկեց, ան գիտե
 թե տը տի մնաւ:

Մանուկ մ'ալ երէկ մեռաւ,
 Ասօր հըպաթը վերուցին:
 Տարին ծովեզերը դրին,
 Ծովի ջրով վլացին.
 Մատներն ասեղ ըրին,
 Ու պատանքը կարեցին:
 Ակռաները խունկ ըրին,
 Ու իր վրայ ծխեցին.
 Շիւերը կերոն ըրին,
 Ու իր վրայ վառեցին:

Մարիկը վերեւէն բերին,
 Մանկան դիակը ցըցուցին:
 Մարիկն ուր տղան տեսաւ,
 Ճշվոտալով վրան ինկաւ,
 Հեղկլտալով ետ դարձաւ:
 Աղբարն ալ ավէն բերին,
 Զէնքըն առին ավը թռուցին:
 Հարսնուն ալ հարսնեց բերին
 Հինէյուն ձեռուն սեւցուցին...:
ԱԱ 467

209

Մեռաւ ւ օսիյաթ արաւ,⁹⁸
 Իս ճամբուն վրայ թաղեցէ՛ք:
 Քարս նշանով դրէ՛ք:
 Անունս (կամ ցաւերս) վրան գրեցէ՛ք:

Որդիկս ուր թաղաւոր անէք (կամ սիւլայ դա)
 Ես աչօք անիմ, նայեցէ՛ք:
ՀԱ 488 ՀՀ 302

209ա

Մեռաւ, վասիյաթ րրաւ,
 Զիս ճամբուն վրայ թաղեցէ՛ք:
 Քարըս նշանով դրէք, ցաւերս վըրա՛ն գրեցէ՛ք:
 Երբ որդիկս թաղաւոր անէք,
 Աչօք անեմ դուր նայեցէ՛ք:

ՀՀ 302 ԱԱ՝ 112

4 ԱԱ երբ որդիկս:

Մեռաւ, օսիաթ ըրաւ,
 — Զիս ճամբուն վրայ թաղեցէք,
 Որդեկս ուր սիւա ընէ,
 Ես աչօք անիմ, հայեցէք:
 Քարս նշանով դրեք,
 Յաւերս վրան գրեցէք...:

ԱԱ 544

210

Շարուած մարգրիտ էիր,⁹⁹
 Կտրեցար կուտ կուտ եղար,
 Քուրուրտանք, վրայ էկէք,
 Ժողովեցէ՛ք որ ալ չի մնայ:
 22 302 ԱԱ 1 112

210ա

Շարած մարգրիտ էիր,
 Զեմ արժան տեղուկ վաթեցար,
 Քուրուրտանք, վրայ եկէք,
 Ժողովեցէք ուր հատ մը չի մնայ,
 Հատես ու հատիկ մը մնայ,
 Կու թափիմ արունս ի վրան:
 ԱԱ 540

211

Պաղճրպանը պառկեր, քունը տարեր է,¹⁰⁰
 Խոռոյաթը եկեր, վարդը քաղեր է,

Փոստան եկեր քեզի խապար բերեր է,
Ասոր քու սիրական որդիտ մեռեր է,
Մեռեր ու չէ հասեր սրտին մուրատին:

ԱԱ 491

212

Ջութտակ աղանոյ նման էր երեսիդ բէնկը,¹⁰¹
Ոչ հայազգուն մէջ կար,
Ոչ տաճիկն ունէր, ոչ ֆրէնկը.
Ղալամքեար չէի, որ հանէի աննման ըռանգդ:
Հա՛մ, գահերու վրայ հերկ անեմ,
Արցունքովս ցօղեմ, ցաւերովս ցանեմ:
Սուրբ աստուածածնայ ծոցէն մարգրիտ մի ինկեր, գին չունի,
Ծրնե՛կ զըտնողին, վ՛այ էկեր կորուսողին:

ՀՀ 302 ԱԱ՝ 112

1 ԱԱ շութտակ..... պենկը:

2 ԱԱ ոչ հայ ազգուն մեջ:

4 ԱԱ զալամքեար չէի, որ հանէի աննման ըռանգդ:

213

Օտադ բաղչային վրայ,
Պաղ աղբիւր, ոսկի լուլայ,
Տեսէ՛ք թէ ինչո՞ւ կուլայ.
Տէրն է զարկեր, նստեր կուլայ:
Նոր էի դրեր մատնիկն ի մատ,
Ճալակ չըթողուց առնէի մուրատ:

ՀՀ 303 ԱԱ՝ 112

1 ԱԱ պաղչային:

3 ԱԱ տեսէ՛ք թէ ինչո՞ւ, ինչո՞ւ կուլաւ:

5 ԱԱ մատնիկս:

6 ԱԱ ֆելեկը:

ՊԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ
ԸՆԱԸՆՆ ԵՐԳԵՐ



Աճապ դարիսլին տիրուն
 Սիրտն ինտո՞ր արեւ կու ցաթէ,
 Ուշ սրտիկս արեւ ցաթէ,
 Ուշ երեսս բաց ծիծաղէ...:

ԱԱ 568

Ա՛յ իմ խատուտիկ հարսնուկ,¹⁰²
 Զրեղերն ի՞նչ կու բանիս:
 — Խարիպս է խարիպ երկիր
 Ես անոր ճամբան կու պահիմ:
 — Հարսնո՛ւկ, եկո՛ւր պագ մի տո՛ւր,
 Խարիպէն խաւրիկ մի տամ:
 — Պագ մի չէ, երկուք կուտամ,
 Խարիպէս խաւար բերողին:
 Պագ կուտամ ու պագ կ'աննիմ
 Պե՛հ կուտամ մէկալ օրերուն:
 — Հա՛րսնուկ, ելի՛՛, վե՛ր եկու,
 Ես ի քու խարիպտ եմ եկեր:
 — Աչուիտ խարիպիս աչուին,
 Զանտ անոր ձանը չի մանիր:
 Ծէպէտ ու ծոցէտ կ'ուզիմ,
 Տեսնիմ նո՞ւր կուտաս թը խնծոր:
 Նուր կա հաղար հատ ունի.

Հաղար պագն ալ ո՞ւր կու լընի:

— Երկու սլրն ուր մէկ լընի,

Հաղար պագն ալ թեղ կու լընի:

Յկո՛ւ նի՛ստ ձիուս ետին,

Ուր լընինք ձի ու ձիաւոր

(Եւ երկուքն ի միասին կ'երթան իրենց տան դուռն)

Մա՛րիկ, եկու դուռը բա՛ց.

Խարիպ որդեկտ իմ եկեր:

— Գնա՛ աս գեղին վերեւ.

Հէլպէթ աս գեղն ալ խան ունի:

Պառկէ՛ւ անուշ քուն եղի,

Հէլպէթ աս մութը լոս ունի:

Մութն երթայ ու լոսը գայ

Մարիկն իր որդեկը ճանշնայ:

(Մօր այս պատասխանին վրայ, որդին ու հարսն կը մեկնին
կ'երթան այլ երկիր):

Մութը գնաց լոսն եկաւ,

Ու՛շ (ո՛ւշ) որդեկ կայ, ո՛ւշ հարսնուկ:

(Ուստի մայրն լեռներն ելնելով կը հարցունէ)

Կանաչ դաշտ ու դուր մեկտան,

Ո՞վ տեսաւ իմ ծոյր ամիրան:

(Լերինք և դաշտերն կը պատասխանեն)

Դուն ալ որ ասօր եկիր,

Ան երեկ ոնցաւ ցերեկուան:

ՀԱ 432

Հմմտ. 125, 239, 292 երգերը:

215ա

— Նորուկ պլպլուկ հարսնուկ,

Չայեզերըն ի՞նչ կանես դուն:

«Ղարիպ երկիր եար ունիմ,

Քիմ եարուն ճամբան կու նայիմ»:

— Եկու, ինձի պագ մի տուր,

Քու եարուն խապար բերողն իմ:

«Պագ մը չէ՝ երկուք կուտամ,
 Իմ հարուն խապար բերողին»:
 — Եկու քեզի նուռ մի տամ,
 Համրէ, տես՝ քանի՞ կուտ ունի:
 Կուտ զլուխ պագիկ մի տուր,
 Աւելին հարամ թէ պիտի:
 «Նուռ կայ՝ հազար կուտ ունի,
 Հազար պագըն ո՞ւր կու լինի»:
 — Երկու սէրն որ մէկ լինի,
 Հազար պագը շատ կու լինի:

ԲՆԲ 729 ՄՄՍ 1902 333

216

Այ իմ հայվայի կեռաս,
 Դիմացի լեռը կու կենաս.
 Ես ուր քանի քեզ կու գամ,
 Դուն ինձմէ հեռու կու կենաս:
 Կենաս նէ ամառը կուկենաս,
 Յուրտ ձմեռը ինտո՞ր տի կենաս,
 Ամառը շարով պահեմ,
 Յուրտ ձմեռը՝ թոռ քթանով:

ԱԱ 538

216ա

Այ իմ հայվայի կեռաս,¹⁰³
 Դիմըցի լեռը կու կենաս,
 Ամառը կենաս կենաս,
 Յուրտ ձմեռն ինտո՞ր տի կենաս:
 Քանի ես ի քեզ կու գամ,
 Դուն ինձմէ հեռուն կու կենաս:

ՀԱ 407

Այլ ողորմ մարդ չեմ տեսել,
 Քան զհարուստն որ աղքատանայ,
 Ի դարիպութիւն երթայ,
 Հայր ու մայր, եղբայր շունենայ.
 Յորժամ սիրելի տեսնու,
 Նայ պահէ զերեսն ու գնայ:
 Նորա օրինակ ի՞նչ բերեմ,—
 Ըզկանանչ ծառն որ շորանայ.
 Տերեն ալ իւրմէ թափի,
 Շուքըն իւր տակէն հեռանայ:

ՎՏԱ ՎՏԲ (ԳԺՏ 202)

- 1 ՎՏԱ այ, ողորմ մարդ չեմ տեսել:
- 1 ՎՏԲ չիք մարդ:
- 2 ՎՏԲ քանց հարուստն:
- 4 ՎՏԲ հար ու մար և աղքատ:
- 6 ՎՏԲ և փաթտէ փոխ. նայ պահէ:
- 7 ՎՏԲ պաշխուն փոխ. օրինակ:
- 8 ՎՏԲ եփ կանաչ փոխ. ըզկանանչ:
- 9—10 ՎՏԲ չիք վերջին երկու տողը:
- 10 ՎՏԱ շուքտ, ուղղ. ք. ի. շուքըն:

Ան մարդն ուր որդեկ կալէ,
 Թող ծոցուն դուրս չի հանէ:
 Եր ուր ծոցուն դուրս հանէ,
 Թող աւոյց երկիր չի դրկէ:
 Կ'երթայ, կու լընի դարիպ,
 Կուլայ, իր մարը կ'անիծէ...
 Ղարիպն ուր որ երթայ,
 Դռուին կու գոցեն,
 Կտոր մը հաց կու պան,
 Սիրտը կու խոցեն...

ԱԱ 464

Հմմտ. 35 երգը:

Աշխարհս իրեք կուլլի,¹⁰⁴
 Ան ալ մեզի կու լընի:
 Մէկ մեռնիլ ու մէկ գնալ,
 Մէկ հարուստ ուր աղքատանայ:
 Մարդն ուր մալէն ուր կ'աղքատանայ,
 Կ'էլլէ փոխ կ'անէ ու փառաք:
 Ես ալ ուր քենէ աղքատանայ,
 Ո՛ւշ փոխ կուլլի, ո՛ւշ փառաք:
 ՀԱ 477 ԱԱ 553

1 ԱԱ աշխարհը երեք:

2 ԱԱ ան երեքն ալ մեզի կուլլի:

5—8 ԱԱ չիք այս շորս տողը:

Աս գիշեր երազս ի դան,
 Ախ մը մեր դուռը կու չալէր:
 Արթնցայ ու վեր ինկայ,
 Գիտցայ թը զարիպս է եկեր:

Պարզ էր անհունն () պարզ էր...

Սիրու տէր մարդը կու խաբէք...

Դուք ալ սիրու տէր լընիք,

Ուր գիտնաք թը ի՞նչ դիժար կու լընի...

ԱԱ 445

Ասկից ու հաղար տարի,
 Ղարիպ, քու դրած տաղդ տի բանի,
 Ինչ անգամ միտքս ուր իյնիս,
 Իմ հոգուն տունը տի ցալի:
 ԱԱ 555

Արեւը սարին,
 Կաքավը քարին.
 Շատ բարեւ տարէք
 Իմ զարիւր եարին:

ԷԱԺԶ

223

Քաղաքիդ քաղըպանն եմ ես,¹⁰⁵
 Քաջ դրոնակդ ուր մտնեմ ներս.
 Մրտնեմ վարդ ու նուռ քաղեմ,
 Արմաղան ղրկեմ զարիւրիս:

22 293

224

Գիտեմ՝ շատ հայրէն գիտես,
 Լուկ ընտրէ՛ մէկիկ մի, ասա՛,
 Ասա՛ այս ամսուս վերայ,
 Այս խալիսիս, զինչ որ հիմա կա՛յ.
 Խօսարն մանէո՛վ ասա,
 Մի՛ ասեր մարդուն քու ճուպայ(?)
 Գիտես, որ զարիւր եմ ես,
 Ղաւրիպին սիրտուն յի մնա՛յ:

ՎՏԱ ՎՏԲ (ԳԺՏ 199) ԱԱ 504

1 ՎՏԲ գիտեմք որ շատ:

2 ՎՏԲ լուկ, ՎՏԱ ու մէկ փոխ. մէկիկ:

4 ՎՏԱ հիմիկն որ փոխ. որ հիմա:

5 ՎՏԱ խաւակտըտ:

6 ՎՏԱ այսպէս՝ մարդուն քու ճուպայ, ՎՏԲ (զլիսին
 պատիվ նշանը) ու քու ճուպայ:

Եւարըս զարիւպ երկիրը,
Աշխարհն ինձի հոս մուրջը,
էլին ծառնը ծաղկեր,
Իմն՝ կարկուտնը զարկեր:

ԲԱ 23

Եկեր է խաշին ամիս,
Փայտոս կանեմ զարիւպիս,
էմմեն զարիւպ տուն դարձալ,
Իմ զարիպս վէթանն ուրացաւ:
ԱԱ 500

Եկին ու խաբար բերին,—
Թող լեզուն չորնայ բերողին,—
— Քո եարն ի Պոռոսա քաղաք,
Նա՛յ տեսաք ի մէջ շուկային.
Ձեռկունքն է դալալ տվել,
Ու նստել առջեւ գնօղին.
«Գնօ՛ղ, գնէ՛, մի՛ վախել.
Վա՛յ հաղար իմ կորսընօղին»:
ՎՏԲ (ԳժՏ 211)

§ ՎՏԲ լեարն:

Եկո՛ւր ուր մէկ նաւ նստինք,¹⁰⁶
 Նաւն ի նաւ, ծովն ի գնաց:
 Երկուքնիս հիրաց հիրաց,
 Երկուքնիս սրտեկն (կամ եարուկն) է տարած:
 ՀԱ 432

229

Յս ալ խարիպին ձանը,
 Կ'առնէի նը կ'արմննայի:
 Եկաւ իմ գլխակա ելաւ,
 Կ'ողորմիմ ամեն խարիպի:
 ՀԱ 454 ԱԱ 555

230

Երկինքն ամպեւա ամպով,
 Եարիս թաղել եմ ճամբով,
 Չմեռայ բեղի յապով,
 Ումբօ, լուրիկ, գառմ լուրիկ...

Բուլանիս ծովս ու մովս էր,
 Իմ սիրածը շատ թովս էր,
 Ափսոս մահը կանուխ էր,
 Ումբօ լուրիկ, ջան լուրիկ...

Ընկայ շօլէշօլ սեյրան,
 Պատռեցի հագիս դէյրան,
 Յս ու էն բըզի հէյրան,
 Ումբօ լուրիկ, գառմ լուրիկ, ջանմ լուրիկ...

էրնէկ, լաօ էն օրուան,
Քնդի բերի մեր թուլան,
Ուտեցուցի տաք շորուան,
Ումբօ լուրիկ, գառն լուրիկ...

Ինչ եղան էն օրեր,
Սրտիս սաւղենա կորել,
Սիրտս էրիւր սև հորել,
Ումբօ, լուրիկ, ջանօ լուրիկ...

Ե՛րբ կիգայ էն գարուն,
էլիկս տեսնիմ անարուն,
Ծաղկով ծաղկած՝ գալարուն,
Ումբօ, լուրիկ, գառն լուրիկ...
ԼՄ 21

231

Զառ բըլբիւլ ըմ, կյօլըս տէղէն,¹⁰⁷
Շօռկը կյամ գյանջիւ կյէղէն.
Յէս ջանըս մատաղ կըտամ,
Իմ եարէս ղարիբ տըղէն:
Ա.Զ.Ժ. 45 Ա.Զ. 378 Ժ.Ե 431

232

Զընգ ու ղընկ բաղբրկան
Եկաւ հասաւ բարխանան.
Բարխանին պէտք էր գիար
Խալած ջիգրիս փշում ճար,
Եւ ահա նորա ցաւը.

— Հա, եկաւ արապէրըս
 Ղարիբ ղուրբաթից,
 Հօր-մօրմա աչքերից՝
 Դառն արցունք ցամքեց:
 Խնդացաւ մըր պարս,
 Բերկրացի և հս,
 Եւ մըր զրացիներ,
 Զարկին շատ ծափեր:
 Բօլ էր, շատ բօլ
 Ընդրա փէշքէշներ՝
 — Հօրս՝ մի լաւ թըղպէխ
 Մօրս՝ մի սպիտակ լաշակ,
 Ինձի ու հարսին՝
 Մի ֆռֆռան փուշի:

ԱՐԶ 1894 № 143

233

Էլնիմ սարը ոնց անեմ,¹⁰⁸
 Քարը գլխիս բարձ անեմ,
 Նայ էթող գայ, նա գալող
 Խարիպ Խարին խարցնեմ:

ԷԱԺԶ 110

234

Թող Ստամպոլ շէն կենայ, իմ հարիկս հոն կենայ,
 Երբ որ աղբարս ելլէ գայ, Թող փլչի, հիմն երերայ.
 Ալվա չեմ աներ խմիշ, շատ մարդու աղբար կու կենայ
 Երթամ, շիրին լնամ, Ստամպոլ գնեմ.
 Քակեմ ու նոր շինեմ, իլիմն ավըրեմ
 Իլիմն ալ աւըրեմ, Խար, ելլես ու գաս:

ԱԱ 53բ

Թռչիմ, իյնիմ, Ստամպոլու վերելք,
 Պագնեմ ան ղարիալիս կամար ունքերը,
 Վրանին ժուռ կու գան կաքուռ ճուտերը.
 Կաքուռն ձագն որ կաննես՝ մարը կու ճշէ,
 Գիշեր ցերեկ կասկամ կուլլի, կու կանչէ:
 ԱԱ 531

Ժամի տկի մարմար քար,¹⁰⁹
 Ես չեմ առնի ղարիք հար,
 Թէ որ առնեմ ղարիք հար,
 Օսկին ղարկեմ սարէ սար:
 ԷԱԺԶ 126 ԱՀԲ 343
 ԲԱ 144 ԺԽ 529

— Իմ բարձրագնա՛յ յուսին,
 Չի տեսա՞ր զիմ հար Մշեցին:
 — Էրէկ եմ տեսեր զքո հարն
 Ի յայգին ի Յակոբոսին.
 Նստեր ի վարդի շքին՝
 Կու խմէր ըզկարմիր գինին.
 Խմէր, ողորմուկ կ'ասէր.
 «Շատ բարեւ տարէ՛ք իմ հարին»:
 ՀԵ (ԴԺՏ 211)
 4 ՀԵ ի յայգին Յակոբոսին, ուղղ. Բ. Ը. ի յայգին ի
 Յակոբոսին:

Լուսիկ բոլորեր և եկեր,
 Ես ի քու խարիպտ ի նման.
 Խպնէ ու ամչնէ՛, լուսիկ,
 Ո՛ր տեղտ իմ խարիպիս նման:
 Խարիպս թուխ աչք ունէր,
 Թուխ յուներ ու շուշման բերան:
 Շրթունք, շուրթեղէն ունէր.
 Սըռմա թել պխսերն ի վրան:

ՀԱ. 438 ԱԱ. 453

- 1 Ա.Ա. լուսիկ մը:
- 2 Ա.Ա. եմ նման:
- 3 Ա.Ա. խմնէ ու ամնչէ:
- 4 Ա.Ա. է զարիպիս նման:
- 6 Ա.Ա. ունքեր ու շուշմա:
- 7 Ա.Ա. շարեղէն ունէր:

Լուսինկայ և երկան գիշեր ¹¹⁰
 Ես ի քու դոնակդ եմ եկեր.
 Դոնակդ ալ ի դիր տեսայ,
 Ոլորով պարտեզդ եմ եկեր:
 Մարիկ, մարիկ, դուռը բաց,
 Ես ի քու որդեկիդ նման:
 Աշուիդ իմ որդուն աշուին,
 Ձանդ անոր ձանը չիլմանիր.
 Գնա այս գեղին վերեւ,
 Հէլպէթ այս գեղը խան ունի,
 Պառկէ և անուշ քուն եղի:
 Հէլպէթ այս մութր լուս ունի:
 Մութն երթայ, ու լուսը գայ,
 Մայրն ըզիր որդեկը ճանչնայ:

ԲՆԱ. 393 ՄՍՍ 1886 3820

Հմտ. 125, 215 երգերը

Խարար տարէք կարըրնիրուն,
 Ճուղար տարէք կարըրնիրուն,
 Զընիր խալե վեար սարիրուն:
 Խանէ՛, խանէ՛, խանէ՛, խանէ՛,
 Խիհօ՛, խիհօ՛, խիհօ՛, խիհօ՛,
 ՍՎ 41

Կանանչ յարտի քնարին,¹¹¹
 Շատ բարե հեռու եարին.
 Դարման չեղաւ իմ դարտին,
 Վարամ ուտայ հինգ տարին:
 ԷԱԺԶ 139

Կարմի՛ր, կապաւոր աղուոր,
 Դուն ո՛ւր կ'երթաս մենաւոր.
 Կեցի՛, Այ-Եօրկի հետդ գայ,
 Ուր չելլէ դէմդ ձիաւոր.
 Այ-Եօրկի, այ Տիմիթրի:
 Այ Եօրկին իր ձին հեծնէ,
 Այ Նիկոլ իր Ակնայ ջորին:
 Երթայ, դարիպս ի քուն:
 Մառայ եմ Մրդայ հովուն,
 Կէմէկս վրայ ծովուն
 Խառղ եղեր, կու նայի հովուն,
 Իմ տէր դուն այան մըրէ,
 Հանէ՛ կէմէկս խարան:
 Իս ու իմ զարիպս հիրաց:

Ղարիպս է վրայ ծովուն
Արթնցնէ ու տուն բերէ.
Այն հով լեռներուն.

կամ

(Ան հով լեռները օնցընէ:
Օնցընէ ու ժամ բերէ,
Տէրը իր բանիկն աջողէ:

ԱԱ 463

242ա

— Կամի՛ր կապաւոր աղուոր,¹¹²
Դուն ո՞ւր կերթաս միաւոր:
Կեցի՛ր այ Եօրկի հետտ գայ,
Ու դեմդ ալ շիլլէ ձիաւոր:
Այ Եօրկին իր ձին հեծնէ,
Այ Նիկոլ իր ճերմակ ջորին:
Այ Եօրկի, այ Տիմիթրի,
Այ՛ Նիկոլ ձանս դուն լսես:
Բռնես խարիպիս թէէն,
Աներկ լեռներն անցընես:

ՀԱ 436 ԱԱ 462

Հմմտ. 65 երգը:

243

Կաքուիկ նստեր վեր քարին,
Օր կուլար՝ արցունքն էր արին:
— Սե կաքուիկ, ինչո՞ւ կուլաս.
Քի՛նտոր չի լամ, որ ձագերս են տարած,
Ջագերս բուններն են տարած.
Իմ սիրտս են էրած.
Ոչ գիտեմ ավճիւնները տարած
Ոչ գիտեմ հարաւին հովը քշած:

- Սև կաքուիկ, դուն ո՞ւր տի թառիս
 — Բանձր խաւսին վրա կը թառիմ:
 — Սև կաքուիկ, թէ ատոր տէր գայ, ո՞ւր:
 — Ուռիին ու մորիին վրայ՝ խարաբաս կ'թառիմ:
 — Թէ հոն էլ չթողեն,
 — Կէծ մը կրակ կըլլիմ:
 Տես զիս կը վառիմ»:

ԱՀԺԲ 104

244

Կ'ելլեմ ի րարակ ճամբէք,
 Կու նայիմ ջրուտը կերեայ,
 Զրուո՛ր, ետէ ետ գնա՛,
 Ղարիպիս պօջը երեւայ:
 Հագեր իսկերլէ շուխա,
 Չէ բոնտեր, կէօքսը կերեւայ:
 Դարձի՛ր ու ետիդ նայի՛ր,
 Փէռչէմիդ ոլորքն է հոգիս...:

ԱԱ 472

245

Կու քաս, կ'անցնիս մեր դոն ի վար կը ծառնաս,
 էպիւշիւմէ բարձր բեռներ կը բեռնաս:
 Կ'երթաս զարիպ կ'ըլլաս, դուն մեզ կը մոռնաս:
 Ղարիպութեան տեղը հոգուս քէր ըրավ,
 Զատեց հօրէս մօրէս, զիս օտար ըրաւ:
 Զեմ զատիր ի հօրէս, չեմ զատիր ի մօրէս
 Զատեր եմ սէրմանէս, թուխ-աչեր եարէս:

ԱԱ 528

Հա' եար, հա եար ¹¹³

Աղուոր մի ծարուսենէն, հա եա'ր.

Նստեր է ջրին վրայ: Հա եա'ր:

Կտրիճ մի անոր սիրուն,

Գնաց ի դէմ խօսելու:

Նստաւ ու սէվտան ինկաւ,

Մոռցաւ ի'նչ բան խօսելու:

— Ըսաւ, խա'հրդման կրչիճ.

Դուն ի'նչ ժուռ կուգաս աս տեղը:

— Ըսաւ քի տէրտիս համար

Ժուռ կիւգամ հէքիմ բռնելու:

Ի'նչ արի, շեղաւ տէրման,

Հոս եկայ հէքիմ բռնելու:

— Ըսաւ քի տէրտդ ի'նչ է.

Մի' վախնար բռնացնելու:

— Խնծորդ է կապեր չալղայ

Ես մատա ունիմ ուտելու:

Զուտիմ նը մատաս կուղէ,

Կու վախիմ քի դողցնելու:

Բացուեր է պախճիս վարդը,

Ես պաղպան լընիմ քաղելու:

Քաղիմ ու տէսթէ անիմ,

Պէլքի թը թմբիմ հոտերուն:

Ա'յ իմ, աննման աղուոր

Ես քենէ պաղիկ մի կ'ուզիմ.

Խարիպ երկիր եար ունիս,

Դուն սեպէ' զէքէթ արեուն:

— Պազ մի չէ, երկուք կուտամ.

Խարիպիս քովէն գալողին:

Դուն ինձմէ պազ մի կ'ուզես,

Ես հաղար կուտամ բերողին:

— Ա'յ իմ խատուտիկ հարսնուկ,

Քու սիրուն ես հոս իմ եկեր:

Պազ մի տո'ւր տէրտի համար,

Դուն ալվի վատէդ մի' դառնա'ր:

Ելլիմ ու ձիուս վրայ,

Խառնուիմ ի մէջ հովերուն:
 Երթամ ի օտար երկիր,
 Խաբիպիտ տեղն տի գտնիմ:
 Նստիմ ու հարցմունք անիմ.
 Հսիմ ուր ալ չի կենայ:
 Ելլիմ քահավան ձիուս,
 Առնիմ խաբիպդ ի երսէս
 Խառնուիմ ամպին մէջը,
 Իջնիմ աս ջրին վրայ:
 Խաբիպտ դուռդ բերի,
 Ա՛ն նստէ՛, անուշ խորքթէ՛:
 Քու եարտ քեզի բերի,
 Հասուցի սրտիդ մուրատին:
 Խօսք տուիր ու վատ արիր,
 Դուն քու խօսքտ կատարէ՛:
 Քենէ հաղար պագ կ'ուզիմ,
 Անկէց ետե եա՛տ արէ՛:
 — Ես կուտամ հաղար պագս,
 Զիմ մնար քեզի պարտական:
 Ա՛յ իմ խահրըման կըչիձ,
 Ես մինակ, դուն ո՛ւր կու երթաս:
 Դուն եղար դարնան արե,
 Յաթեցար աս ջրին վրայ:
 Քու սրբուն տաքը զարկաւ,
 Ես եղայ ձնիկ հալելու:
 Նստինք աս ջուրին վրայ,
 Խօսք ունիմ քեզի ըսելու:
 Նուան հատ գինի ունիմ,
 Անուշ լինի խմողին:
 — Դուն խմէ՛ր (ուր-որ) ես ալ խմիմ,
 Պէլքի արբենամ քու սիրուն:
 Դուն սիրէ՛ եարուտ նման,
 Ես ճուղապ կուտամ քու տիրուն:

ՀԱ. 429 ԱԱ. 450

Հա՛յ իմ բարի լուս աստուած,
Արթնցու զարիպս ի քնուն,
Արթնցու ու ժամ ղրկէ,
Տուր տէօվլեթ, դառնա ի տուն:
Ինչ տիլէկ ուզէ նը տո՛ւր.
Ինչ խնդիր ունի նը կատարէ...

ԱԱ 472

Հեյ Այ-Նիկոլ, Այ-Նիկոլ,
Այ-Նիկոլ, Այլդ հմ եկեր:
Այ-Նիկոլ, ճանիկս լսես,
Ելլես բարձր լերան վրայ,
Ելլես բարձր լերան վրայ,
Ղարիպիս ճամբան սալըխես
Ուր զարիպս չճօշնաս
Թուխ աչեր ու շուշման բերան,
Թուխ աչեր ու շուշմա բերան,
Զխմա ունքերն է վրան:

ԱԱ 473

Ղարանֆիլ հմ դաստի մէջ,
Բիւլբիւլ հմ զաֆասի մէջ,
Խապար տարէք իմ հարիս,
Յս կորեւ հմ դարտի մէջ:

ԺԱՐ 45

4 ԺԱՐ ես կորեւ զարտի մեջ, ուղղ. ք. ի. ես կորեւ հմ:

Ղարիպ հմ ու դուռդ եկի,
Բա՛ց դռնակդ ու ա՛ռ իս ի ներս,

Դուռդ բա՛ց ու ներս ա՛ռ իս,
 Ղարիպ եմ, շունիմ տուն ու տեղ:
 — Ղարիպ գնալու ունիմ,
 Ուր կրակը իս կու երէ:
 Ղարի՛պ, շուտով ետ դարձի՛,
 Ձէ նը՝ իմ հոգիս կու ելլէ...:

ԱԱ 475

251

Ղարիպ երկիր ման եկած,
 Զանիդ մեռնեմ բէղարած,
 Մի ոտը որ շուտ գայիր,
 Ինձ չէիր տեսնի տարած:

ՏԽ 181

252

Ղարիպ տեղը քարոտ ա,
 Ղարիբը անճարոտ ա.
 Եարիս ասի՝ դուս արի,
 Ասալ՝ սիրտս եարոտ ա:

ԺԽ 207

253

Ղարիպն ալ ղարիպ երկիր,
 Ի՞նչ դիժար է էոջի տարին.
 Տարին ուր երկուք լընի,
 Կու սորվի ու ղաման կու կենայ...:

ԱԱ 561

254

Ղարիպս օտային վերեւ
 Հէմ սարաֆ էր, հէմ պէղիրկեան.

Երուր օտայէն վար առին,
Ուշ սարաֆ մնաց, ուշ պէզիրկեան....

ԱԱ 542

255

Մարիկն անիծեց զորդին.
— Իմ որդի՛, դուն զարիպանա՛ս,
Երթաս ի յօտար երկիր,
Զղարիպի՛ն զատուրն գիտենաս.
Ըզքարըն սնարք առնես,
Ի վերայ աւզին քնանաս.
Վաղվենէ ի վեր ելնես,
Քան զաստուած այլ ճար չունենաս:
ՀԵ (ԳԺՏ 199)

6 ՀԵ աւազին, ուղղ. Ը. չ. աւզին,
Հմտ, 254 հրգը:

255ա

Իմ մայրս որ զիս եբեր,
Անիծեց թը՛ զարիպանա՛ս.
Երթաս ի յօտար երկիր,
Հայր ու մայր և եղբայր չունենաս:
Ուր որ քոյր և եղբայր տեսնաս,
Դարձընես զերեսիկդ ու լաս:
Սեւ քարն սընարք առնես,
Ի վերայ հողին քընանաս,
Գլխակդ ալ ի վեր կալնուս,
Քան զաստուած այլ ճար չունենաս:
ՀԲ 432 ԱԱ 421

256

Մէկ ազնիւի մի սէր անկայ ի գլխէս
Գիշերն երազէս, ցորեկն ի սրտէս,

Կորուսեր եմ զիմ աննման սիրելիս.
 Անոր համար կը պըտըտիմ ի սարերն ի ձորերն:
 Ի միտս որ գայ, կը թռչի խելքս ի գլխէս,
 Աչերս արին կը բոլորի ի սրտէս,
 Ղարիպ եմ ես, որ եւեր եմ երկրէս,
 Անոր համար կը պըտըտիմ ի սարերն ի ձորերն:

ՄՍՍ 1884 423

257

Շատ խօրօտիկ անմահութիւն,
 Սիրելիս մի ըներ վատութիւն,
 Թորգեմ՝ երթամ զարիպութիւն:
 ԲԱ 174

258

Շատ սոյ ու սոփ ունիս,
 Ծոյ աղգի տէր ես,
 Ասօր զարիպ տեղ ես գնացեր,
 Գլտեն թը անտէր ես..
 ԱԱ 549

259

— Ոչ մարն է բերեր նրման,
 Ոչ արեւն ու ոչ լուսունկան.
 Քեզ բերեր Մըրսա աւլան,
 Որ իջեր պաղշաս պէկըման.
 Իջեր ու վարկեր վըրան,
 Մէջը վարդ, բոլորն ըռահան.

Քաղեմ ու տէսթէ անեմ,
 Խըրկեմ զարիպիս արմաղան.
 Առնէ, դընէ աշերուն,
 Ըսէ. «Սիլայէն եկեր արմաղան»:
 ԲնԱ (ԳԺՏ 233)

1—2 ԲնԱ ուշ փոխ. ոչ:

260

Պանդուխտ էի, շատ կարօտով եկայ ես,
 Խիստ կարօտեալ սիրելիներս տեսայ ես.
 Շատ յարգանքներ, մեծարանքներ տեսայ ես:
 ԱԱ 519

261

Զուր կուգայ բանձր սարէն,
 Կը թափիր մառմառ քարէն,
 Ով որ դառնայ իր զարիպէն
 Քող խանա գոթու եարէն:
 ԷԱԺԶ 110

262

— Զուրիկ, ո՞ր ակնէն կուգաս,
 Իմ պաղուկ ջրիկ, անուշիկ:
 — Ես ալ ան ակնէն կու գամ,
 Հին ու նոր ձուներ կայ վրան:
 — Եկուր քեզ պաղճաս տանիմ,
 Վարդ ու նուռ ունիմ ջրեկու,

Ռեհանս է կող կապելու.
 Քաղեմ ու փունջ ընեմ,
 Արմաղան ղրկեմ խարիպիս:
 — Խարիպիդ դուռը չգիտեմ:
 — Եկուր նշանով ցուց տամ.
 Երթաս շատ երդիք անցնիս,
 Շատ խարիպ պառկեր մէն ի քուն,
 Մէն ի քուն, աղուոր, մէն ի քուն,
 Իմ ու քու խարիպն էր արթուն...

ՄՍՍ 1902 333

Հմմտ. 263-Երգը:

263

— Զրիկ, ո՞ր այնէն կու գաս,¹¹⁴
 Իմ պաղուկ ջրիկ ու անուշիկ:
 — Ես այն այնէն կու գամ,
 Ուր հին ու նոր ձուն կայ վրան:
 Գիշեր ու ցորեկ կերթամ,
 Քուն չունիմ, արթուն կու կենամ:
 — Զուրն ալ եղեր եար ունի.
 Իր հարին պաղչան տի երթայ:
 Զորնայ քու հարին պաղչան,
 Եկուր մեր պաղչան տանիմ քեզ.
 Վարդ ու նուռ ունիմ ջրելու,
 Ըռեհանս ալ կոծ կապելու:
 Քաղիմ ու փունջ փունջ անիմ,
 Արմաղան խրկիմ խարիպիս:
 Առնէ ու քնթին դնէ.
 Կիւլպէնտին փաթերը շարէ.
 Կիւլպէնտն ալ արեւը ըլլայ,
 Իր հարուն սրտիկը ցաթէ:

ՌՆԱ 330

Հմմտ. 262 Երգը:

Զրիկ, ո՞ր ականէն կուգաս,¹¹⁵
 Իմ պաղուկ ջրիկ ւ անուշիկ:
 — Ես ալ ան ականէն կուգամ,
 Հին ու նոր ձնակն է վրաս:
 — Եկո՛ւր մեր պայսճան տանիմ,
 Վարդ ու նուռ ունիմ ջրելու,
 Վարդ ու նուռ ունիմ ջրելու,
 Հռահանս փունջ հանելու:
 Քաղիմ ու փունջ փունջ անիմ,
 Արմուղան խրկիմ խարիպիս:
 Առնէ ու քնթին դնէ,
 Կիւլ պէնտին փաթերը շարէ:
 Կիւլպէնտն ալ արեւ ըլլայ,
 Իր եարուն սրտիկը ցաթէ:

ՀԱ 441

264

Սլուան քամին էկաւ,
 Ծովիցը գեամին էկաւ,
 Ղուրբաթ գնացած հարս
 էս դովրին-դամին էկաւ:

ԷԱԺԶ 173

265

Սուլթան վարդին տերերէ,
 Աղբօրս ղրկած բարերէ:
 Աղբարս ղուրպէթ տեղ է,
 Աստուած պահէ արերէ:

ԱԱ 500

Տանըս տակը խօր ա,
 Զըբու տէնակը հօր ա,
 Այ օխտը տարւան կօրած նըշանած,
 Պէրած սաղվարըտ հօր ա:

ԱՀԺԲ 88

Քար մի թալի մըր դշին,
 Թըխ գայ նստի բու թշին,
 Կրակ տու զարիպ փշին:

ՏԽ 165 ՀՄԽԱ 37

Քարթօն հմ սազեր, մտեր հմ մէջը,
 Եարս հմ դրկեր, քսանիս մէջը
 Եթիմ տի վենծյնիմ հս ասկից վերջը:

ԱՐ 118

Քեզ բերեր Մսրա ասլան
 Ուր իջեր պաղղաս պէկէման.
 Իջեր ու զարկեր վրան,
 Մէջը վարդ, բուրբն ռահան.
 Քաղեմ ու տէսթէ անիմ,
 Ղրկեմ զարիպիս արմաղան.
 Առնէ, դնէ աշերուն,
 Ըսէ. «Սիլայէն եկեր արմաղան»:

ԱԱ 579

Քո եարն ի Հալապ քաղաքն,
 Ի շուկան շէքէր կու ծախէ.
 Աշուին է կշեռք արել,
 Ունքերովն ի վեր կու քաշէ.
 «Շէքէրին դինն ալ, հրամէ՛,
 Պագ մը տո՛ւր, ու շուտ խալըսէ»:

Էջ 44 ՎՏԲ (ԳԺՏ 211)

- 1 ՎՏԲ իմ եարն է յաւտար նստել:
 1 ԴՎ իմ եարն է յօտաք երկիր նստեք:
 2 ՎՏԲ է՝ ի շուկան:
 3 ՎՏԲ աշերն:
 3 էջ 47 աշվին:
 4 ՎՏԲ ունքերովն: Կկ ի վար փոխ. ի վեր:
 5 էջ 47 շէքրին: 5—6 ՎՏԲ շիք այս երկու տողը:

Օրդեւ կու գայ սողալով,
 Մառը տերեւ՝ դողալով.
 Ղարիպս ելեր կու գայ,
 Ալ ձին ներքեւ խաղալով:

ԱԱ 499



ՀԱՎԵԼՎԱԾ



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ

272

Անումս հա, անումս ¹¹⁶
 Վա՛յ աման, վա՛յ աման,
 էս ինչ ցավ ա ջանումս,
 Վա՛յ աման, վա՛յ աման,
 Մըռնիլն էնքան ծանդը շի,
 Վա՛յ աման, վա՛յ աման
 Կըմնա դարիբ անումս,
 Վա՛յ աման, վա՛յ աման
 Վա՛յ դարիբ օրս սե ա,
 Սերտըս տեղը կը հեա:

Նի հիլա լաստին կալը
 Վա՛յ դարիբ ջանս վա՛յ,
 Յուրովաց զըլեն սարը,
 Վա՛յ դարիբ ջանս վա՛յ
 Քու հեր մեռնի խաղային,
 Վա՛յ դարիբ ջանս վա՛յ
 Պաց թող կյա իմ բալա եարը
 Վա՛յ դարիբ ջա՛նս վա՛յ
 Վա՛յ, դարիբ օրըս սե ա,
 Սերտըս տեղը կհեվա:

273

Աշունք եկավ, թափավ կաղալ,¹¹⁷
 Միտս ի ընկավ զիմ հար՝ գեղալ,

Մեռնի դարիբութենի տերը,
Բոլ չի՞ մնանք էլու դռները:

Ղարիբի պառց կապուտ քար ի,
Ղարիբի կերած զըհար ի,
Ղարիբի խմածը տառ ի,
Ղարիբի սիրտ քեռզ կվառի...

Տառ եօխսութնի երեսեն,
Թողել ենք մեր կեղի քեռշեն,
Մեռ ինք թալե էլու փեշեն
Ա՛խ եաման ինչեր կքաշենք:

Աստնվորի վրա մի խամար չկա,—
Թիզմ խող, օրըմ ազատութեն.
Զոռքի, զավթողի երեսեն,
Ընդանք տառը դարիբութեն:

274

Աստըզը ցոլոց ցոլին,
Կարիբ եարըդ էր չոլին,
Կարիբ եարր տուն չէր կա,
Բալաք աշկերդ քուն չէր կա,¹¹⁸

275

Դադլա-դադլա կրլլեր Պոլիսա ծովը,
Ինչ անո՛ւշ կփչեր սավտային հովը,
Տէրը նասիբ աներ երթայի մոտը,
Առնէի մուրաղըս, ընկնէի ծովը:¹¹⁹
Հմտ. 176 երգը:

Եկին ու խապար բերին,¹²⁰
 Թե ելեր քու հարըն կու գա,
 Բան ու գործըս դան տըրի,
 Զուր տաքցուցի լողացա:

Հագա շարմաղ շապիկըս,
 Կապեցի լահոռ կոտիս,
 Դըտում լեցի նըռան գինի,
 Առի ու դեմ դընացի:

Տուշմանըս առաջըս ելավ,
 Առաջ ելավ ու ասեց.
 — Ո՛ւր կերթաս ա՛յ պեխապար,
 Ատ եկող քու հարըդ չէ...

Թուլացավ Թաղաթըն իմ բազկի,
 Թափեցավ նըռան գինին...
 Տուշման քոռ տառնա աչքըս,
 Կընտըվիս, շորնա ձեռքըս:

Դուն ապրիս հազար տարի,
 Քեթ մեկիկ որթիտ մեռնի...
 Մեյմալ տուշմանըս ուր տեսնամ,
 Չախուս տի հանիմ ի ճեպես:

Արունը տի գինի անիմ,
 Խըմիմ կարմիր գինու պես,
 Միսըն խավուրի տա՛նիմ,
 Ուտեմ խոզու մըսի պես...
 Հմտ. 141 երգը և տես № 68 ծանոթագրութիւնը:

Ես ծարավ եմ ջուր չկա,¹²¹
 Էս ձորին ախպուր չկա,

Ես զարիբ եմ կմեռնեմ,
Կըշտիս էլլիզո՛ւն շունեմ:
Հմմտ. 25, 25ա, 25բ և 284 երգերը:

278

Ես զուշ եմ, զարիբ զուշ եմ,¹²⁹
Ղարիբ երկրորի զուշ եմ,
Նէ մտնեմ մարիկ շունեմ,
Դուրս կըլլիմ չօլի զուշ եմ:

Մարիկ, մարիկ մարկութիւն,
Ընձի մի տար զարիբութիւն,
Ղարիբութիւն լավ չէ,
Գեղի մէջին անուշ է:

278ա

Ես զուշ եմ զարիբ զուշ եմ,
Հեռու երկրի դիշ եմ,
Կուգամ ներս հարըս չկա,
Կեղնեմ չօլերը դիշ եմ:
Հմմտ. 42 երգը:

279

Ես մե շամամի թաղ եմ,¹²³
Կարիբ տեղը տուտաղ եմ,
Խապար տարեք իմ հարին,
Ոչ մեռած եմ, ոչ սաղ եմ:

էսօր սարերը փուռ էր,
Իմ հարըս բանքէ ղուշ էր,
Վախենամ կարիք մեռնիմ,
Վրեա էլ լացող չը կեր: ¹²⁴

էրկնքից իջալ վիշապ,
Ծառները բռնեց փշատ,
Ամմեն ծառիս մէ փշատ,
Կարիք հարիս ումբըր շատ: ¹²⁵

Ժամի դռան կարմիր քար,
Ես չեմ առնի կարիք հար,
Կարիք հարի դռան փուշ,
Գեղի միջինն էր անուշ:
Հմտ. 236 երգը

Լուսնեակ կամար կամար,
Ես մեռնեմ քեզի համար,
Եօթը տարի պաս բռնեմ,
Ղարիք համբորդիս համար:
Հմտ. 236, 236ա, 236բ երգերը,

Արեգակ կամար, կամար,
 Քուր դուրպան աղբօր համար,
 Օխտն օր ծոմ ու պաս բռնեմ,
 Ղարիպ աղբօր համար:

284

Ծարավել եմ ճուր չիկա,
 Կոխկիս մըն ախպուր չկա,
 Վախում եմ զարիբ մեռնեմ,
 Քիշտիս մեր ու քյուր չկա:¹²⁶

Է՜յ, մեր տիոնին քարը լավ,
 Միւր կանանչ սարը լավ ա,
 Է՜յ, զարիբի օրը սե ինի,
 Իմ ազիզ եարը լավ ա:
 Հմմտ. 25, 25ա, 25բ, 277 երգերը:

285

Ծովուն խաւք ըմ կեր, անուն էր արօր.¹²⁷
 Վզիկն էր էրկէն, սրտիկ սեւավոր:
 Կապեմ բէշարէն, երթամ խետ ինոր,
 Էն իմ զարդ կիտի, ես էլ գէօ ինոր:

Ինզա թաղ է թաղ, ախչեմ ճարիցի,
 Տըվի թաբաղեմ, թըղթիկ առիցի,
 Աչիչս արտասուք թա''նա''ք արիցի,
 Իմ սրտի դա''րդեր ինե գրիցի,
 Զում Ըստամբէօլը մէկ էօրէօխկիցի:
 Արե, եար, արե, խըռով մի մնա,
 Աստըվորիս մալ ղի քե չի մնա:

Ըստամբէօլ քաղաք վէր սև ծովերաց,
Վաթան կուրիսև վէր կարիբնեհրաց.
Կարիբիս մեռնեմ ուր ճամխըներաց,
Որ շերթեր մնէր իդև սարերաց:

Ծըծվերս հումրուդ էր, կարիբ ճամխիցի,
Ծամերս ճերմըկավ ճամբախն աշկիցի:
Կարիբնի նստև վէր օտար փուղցին,
Կարիբն ա՛խ կանի ուր խօր խէրանին:
Արի, եար արև, խըռով մի մնա
Աստըվորիս մալ՝ զի քե շի մնա:

Խաւքիկ մէլ իրև, թղթիկ կէր պէրան,
Առի կարդացի իմ գլխու ֆա՛րման,
Գա՛մբա՛խ Բեյ-օղլի, պլէր Խաքիդար,
Որ իմ եար շանէր վէր զի դարբէդար:
Արև, եար, արև, կանչեմ ջան արի
Ջանիկս քե կուրբան, ինչ՝ կա, թօղ արև:
Կանչեմ խաչերեն, մէկը տաճկերէն:

Կարիբ մեմ ճամխև խօրօտ խըրեղէն,
Կուլամ կը կանչեմ, սև քարի վէրէն:
Ա՛նչա՛մ կը կանչեմ սարեր լացուցեմ,
Ծատ կարիբ կուրբաթ ճամխէն տառցուցեմ:

Էլա պանցր էօղէն, ինդա անուշ քուն,
Կողրաւ սրախս սուն, էլա էրէրուն,
Խիեալով կացի կարիբիս սիրուն,
Կիշեր ցէրէկօվ մնացի արթուն:

Էրկինքն ի ամբև, կուգա մա՛րմա՛ր ձին,
Կուգա կը թափի վէր մալուլ մարթուն,
Մէկ ե՛ս եմ մալուլ, թէ՛ աշխար բիթուն,
Կարիբիս սիրուն մնամ էրէրուն:

Խէրիկս էր խօվիվ, ախպէրս գառնարած,
Կարիբ մեմ ճամխէ իտև սարերաց,
Կարիբիս մեռնեմ ուր ճա՛մխըներաց,
Որ շէրթէր մնէր իտև սարերաց:

Քրդտոր ջուր կու գէր սարերաց թիւէն,
Արնոտ խոտ կուգէր գետերաց մօտէն,
Եարիկս ճամխիցի էրկէն ճամխերէն,
Կարօտ մնացի ուր անուշ խոտէն:

Աւեր Ըստամբէօլ, քեամբախ Իսքիւդար,
Կարիբիս մօտէն շէկալ մէկ խաբար:
Ո՛չ մ'էկ կտոր թուղթ, ոչ մէկ կոր պըլիկ —
Չեկաւ ուր մօտից. մոռցէր էր էն զիկ:

Գեամին վէր անտակ ծօլուն էրէրած,
Էնիմ իրիշկամ քէօշկիս ճաղերաց,
Կարիբիս սուրաթն էնտեղ էրէվաց,
Իմ ա՛՛ղիղ ումրիկս խետ ուր քիւլ արաց:
Արե՛ Լա՛ր, արե՛, մի՛ մընա՛ խըռով,
Սրտօվս Լմ սիրե, մարթ շա՛րե զօռով:
Հմտ. № 102ա, 111, 170, 130 Կրգերը:

286

Կարիբ Լմ տրե Մշու գյամին,
Քամբախ անեմ քյո բէօշ քյարւընին,
Քյարուան քյաշօղ ասպած սիրես
Քյարւընի ճոթ ուշիկ կյաշի
Իմ կարիբի ոտքեր մաշի
Կարիբ մեռնեմ քյո աշքերաց
Մեռնեմ քյո երկէն պանցրիկ սարերաց:

Մծուերս Լօմրուղ էր կարիբ Լմ ճամբե
Մամերս ճերմըկան կարիբ Լմ աշքե,
Կարիբ շուտ կնա, կարիբ շուտ տառցի,
Ես կը նստեմ քյո ճամխուն բաշի:

Կարիբ, անգյան էկար շուտ կնացիր,
Մէկ գէօր մօ ձիկ չը մնացիր,
Ես մալուլայ տիւ չը լացիր
Իմ մալուլ սիրտս արուն լցիր:¹²⁸

Կարմիր վարդըս ի պատրոս,¹²⁹
 Ո՞վ արավ խարիպ ալոց
 Ով որ քեզ ալոց արավ,
 Մընա հոգուն երերուն:
 Խարիպին տիրուն սիրտն
 Աճապ ինտո՞ր արեւլ ցաթէ:
 Ուշ սիրտն արեւլ կու ցաթէ,
 Ուշ երերան ծիծաղ պատե.
 Ով խարիպ ունե տունեն,
 Սիրտն է սեւլ, ճիշերն խունի:
 Աճապ օրիկ տը լընի՞,
 Խարիպըս դա տուռը կանի,
 Գա կանի, առնիմ ի տուն,
 Թեւիկս ալ շըլին ծըքիմ,
 Քաղցր մանտրիկ խորաթիմ:
 Հմտ. 126 երգը:

Կաքավ կայներ ա քարին,
 Կտուց դարկե շինարին,
 Խնձոր թալեմ թեերին,
 Տար խասցրու իմ կարիբին:

Կենե եկավ դարնան օրեր,
 Ձուն հալեցավ ելան դետեր:
 Բուսան խոտեր, բացվան ծաղկներ,
 Կոտնկ սիրես ձագանըտ արեւլ,
 Թռչես Ստամպոլու վերեւլ,
 Շատ բարեւլ տանիս խարիպիս:

Ասեա,— քանի՞ մնաս խարիսկ երկիր,
 Եւ եկուր, ալ խաւլլըտ խարար է,
 Եօթ տարին բաւ է, խարար է,
 Շատ կենալ ումրիտ զարար է,
 Եւ եկուր, ալ քանի՞ մնաս խարիսկ, շվար,
 Եամա՞ն աս տերտերուն ալ շեմ տիմանար։¹³⁰

290

Կռունգ զարիր էլեր կերթաս,¹³¹
 Ագյար էնտեղ եարիս տիսնաս,
 Ասա Գյուլգազ տի ծեռն էրեսին
 Կսպասի քու պարով տառցին։

Կռունգ, ասա ես մալուլ եմ,
 Կիշեր ցերեկ սքամ, կուլամ,
 Աչկս ճամփին, ծեռս ծոցիս,
 Լեզուս կտրած քողն երեսիս։

Մեկ երեսս ի խարս, մեկը՝ ախշիկ,
 Քողի կապած իմ խաս բոխշեք,
 Ասա, Գյուլգազ տի, բալլու խորոտ,
 Աչկը ճամփիտ մացե կարոտ...

Վերա՞ն ըլներ զարիբութիւն,
 Աշխարհ, ալամ վառեց բութուն,
 Քանի՞ կարոտ սրտեր մխան,
 Քանի ջիգար վառւիին, ծխան։

291

Կուշն ընցաւ էն անդեն,
 Պատռաւ սրտիս փարդեն,
 Աշուղ շեմ աշուղ տառնամ,
 Իմ կարիր եարի դարտեն։

Հա եա՛ր, հա եա՛ր,
 Ա՛յ իմ աղվորիկ հարսնուկ:
 Գետեզերքն ի՞նչ կու նըստիս.
 — Խարիպ ունիմ խարիպ երկիր
 Անոր ճանպան կը պահիմ:
 — Հարսնուկ, աղվոր իմ հարսնուկ,
 Եկուր ինծի պագ մի տուր,
 Խարիպետ խապրիկ մի տամ:
 — Պագ մի չէ, երկուք կուտամ,
 Մեկ խեր խապար բերողին:
 — Հարսնուկ, եկո՛ւ, վար եկու,
 Ես քու խարիպըն եմ նոր եկեր.
 — Աչվիտ խարիպիս աչվին,
 Ծանրտ-ծանին նըմանի...
 — Երկու սերըն ուր մեկ լընի,
 Պագըն հազար կու լընի.
 Եկուր նըստիր ձիուս ետնեն,
 Լընինք ձի ու ձիավոր:
 Եկու տուռը բաց մարեկ
 Խարիպ որթեկըտ իմ, եկեր իմ,
 — Գընա աս գեղին վերև,
 Էնտեղ տեղ ու խան կենի,
 Հեւպէթ մութը լոս կենի,
 Թող մութըն երթա լոսը գա
 Մարեկն իր որթեկըն ճանչնա...
 Մութը անցաւ լուսըն եկաւ,
 Ուշ որթեկ կա, ուշ հարսնուկ...
 Մարըն ընկաւ դաշտ ու մեյտան.
 — Ո՞վ տեսաւ որթեկ իմ ճան
 Իմ ծանր խան-ամիրան...
 Լերինք տվին պատասխան.
 Դուն ասոր կանոխ եկիր
 Ան երեկ էր անցաւ անկան:
 Հմտ. 215 երգը

Հավր րլնայի կեմուն խաւքին թառէի,¹³²

Ղըրբիմու ոտենին կրակ վառեի

Ղըրբիմու փարեն ալ ոսկի չէր, թուջ էր,

Իմ եարին պետկիրելն, իմ սրտին կուհ էր,

Եա՛ր, է՛յ, եար էյ, եար այ եար, այ, եար ոյ եար, ոյ:

Ղրիմն էր մեկ անուն, քաղաքն էր հաղար,

Եար, դու խելոք էիր, ո՛ւր առիր նաղար,

Քու տուշմընիդ շատ էին բիւր ու հաղար

Եա՛ր, է՛յ.....

Իմ օքսուղութիւնս աստծու մոտ մալում,

Հիսուսեն վախեցիր, աստըծո զալում.

Ջեհնումութիւնս տեղ թողիր, ինձ շա՛շեցիր,

Գժոխք ու քաւարան մեկ տեղ քաշեցիր:

Եա՛ր, է՛յ....

Աեսուր- կեսրարս հար ու մար էրի,

Սարերու կաքըվներ ինձի եա՛ր էրի.

Հովանես որթիս ալ քեզնե քեար էրի,

Եա՛ր, է՛յ...

Հիսուսին խնդրեցի տար քեզ բարի,

Եա՛ր դու մի երկար կենալ այդ շաւի տարի.

Գլխուս բան շմնաց, ես էրի մարախ,

Միրեկանիդ կերածն արուն ու թարախ,

Եա՛ր, է՛յ....

Մարկեղանց շինեյանք, խաւքարա եափու,

Եար ջան դու Ղըրբիմն ո՛ւր էիր դափու

Մատունանց քարերն ալ մեյ-մեկ հատ էին,

Եա՛ր, պետկիրողներըտ որչափ շատ էին.

Եա՛ր, է՛յ...

Պախչենին բուսնեին գարնան մի արօտ,

Եա՛ր, ծոցիդ եմ հասրաթ, երեսիդ՝ կարօտ,

Իրիկվան մութն ընկներ, էզվան լուսանար,
Իմ եարն հեռու գնաց, էզվան գուշանար,
Եա՛ր, է՛յ...

Ելերին խորոթեն սիրտս էրին եարա,
Կա՛սին,—Մարթդ Ղըրիմ ծոցն շունի փարա,
Եա՛ր, ինձ ալ չէր պիտի եվելով փարա,
Եա՛ր, քու սաղութիւնդ քու եարին քեար ա,
Եա՛ր, է՛յ...

Էման ալ մնացի, շունիմ տիրական,
Աճապ պիտի գտնա՞մ սիրուն սիրական.
Տարտերս ալ պոլ էին, երած ի եարա,
Աճապ պիտի գտնա՞մ քու գալուտ չարա,
Եա՛ր, է՛յ...

Ես ալ լուսնկի պես հալիմ ու մաշիմ,
Տահա ճեհել էի կարոտդ քաշա,
Ատ աստըծո զալում քեզի մի հանչի,
Բաց աչոք քաւարան թող ենտեղ տանչի,
Եա՛ր, է՛յ...

Ներքեւ ճամբուտ տրինք, մընաց օխտ տարով,
Պալքի վերեւ կու գա Համշենու սարով,
Քեռիս ալ որ եկաւ գնացի հարցրի,
Ոչինչ ալ որ չիցտեր, իման մնացի,
Ճանրես ալ ձեռքս առի, լալով գնացի.
Եա՛ր, է՛յ...

Նանի մեռնեմ սիրահար,¹³³
Չը մոռանաս քո զաւակ,
Սիւլտակ կաթ հալալ արա,
Որ ես կերա ջոջացա,
Ես կերթամ կարիբութեն,
Կարիբութեն՝ չար կերութեն...

Երկնցի գիշեր երկրնցի,
Խորոզ խելացի, խելացի
Մի խուսի որ շուտ չը լուսնա,
Սրտիս դառդեր խովանա...
«Աղլամա մերիկ, աղլամա,
Ուստաջան բաշի բաղլամա»,
Ես կերթամ կարիբութեն,
Կարիբութեն, չար կերութեն:

Մի դընդար շեմքիկ մի դընդար
Ես եմ դընդալու, երթալու,
Մի լար քուրիկ սիրական
Ես քեզ չեմ մոռնա մինչ մախլան,
«Աղլամա քուրիկ, աղլամա,
Ուստաջան բաշի բաղլամա»:

Խերիկ քո ամակ խալալ արա,
Որ քո խացով կըշտացա,
Չը մոռանաս քո կարիբ բալեն,
Որ ժըրի սրտիս եարեն,
«Աղլամա, խերիկ աղլամա,
Ուստաջան բաշի բաղլամա»:

Ես կերթամ կարիբութեն
Կարիբութեն չար կերութեն
Մընաք պարի ընկերներ.
Թաղացալ սրտիս եարեն,
Ես կերթամ կարիբութեն
Կարիբութեն չար կերութեն...

Մեկ շամամ եմ, մեկ թաղ եմ,
Ոչ մեռել եմ, ոչ սաղ եմ,
Խապար տարեք իմ նանին,
Կարիբութիւն տուտ սաղ եմ:

Նստեր հմ տէմ լուսնակին,¹³⁴
 Ախ վախ իմ կարիպ սրտին,
 Աշկ տնկերեմ էան աստղին,
 Իշ ընկերի լուսընկին,
 Տը խասնե՞մ իմ սիրածին,
 Ախ վախ իմ կարիպ սրտին:

էրկուս կէ՞ վար մեր սարին,
 Լոս կը տամ մեր հանդ վարին,
 էրանեկ էան խող ջրին
 Իշ սէրած վար յաղբրին,
 Բախտ կէ՞ր ես էլ խա կշտին,
 Ա՛խ վա՛խ ձի իմ սև բախտին:

Լուսնակ իղեր լոս անոշ,
 Զուլալ էրկինք շատ անոշ,
 Իմ խառնակ սիրտ չի անոշ
 Եար խա եարին անոշ,
 Կարիք սրտին իշ՞ կայ անոշ:
 Ա՛խ կարիք սիրտ չի անոշ:

էրանեկ ձի ճնճղկտիր,
 Ռաֆ կապըցիք մեր հանդեր
 Թոէք գեացէք տանսըններ,
 Տէսէք եար քանի՞մ մաթեր,
 էան հանտեղնի մալըլեր,
 Ես էլ ըսդակ սրտամեռ:

Խերով մերով ձի պախած,
 Կաթ կարքովի ձի շախած,
 Փռվուտ լոշով ջոջադրծած,
 էրանեկ թի ես չէ մեռած (իսկ ասվածը թի ես չը մեռնե)
 Մէկէլ սէրածի խեռ նստած (իսկ ասվածը խեռ նստէ)
 Տը տեսնամ ձի մրաղված:

Չէ չէ, չէ ալեր մարդ,
 Ձի տը թըղնի բէմուրատ:

Պաղ ախպըրի սալերը,
 Կռունկն իջավ կալերը,
 Կռունկն ասավ գարուն ա,
 Կարըբի սիրտը արուն ա:¹³⁵

Ջուրն եկավ երես-երես,
 Բա՞ղըրդա՞ն աստված սիրես
 Եփօր երթաս Շորագեալ,
 Իմ հարին հետըդ բերես:¹³⁶

Հմմտ. 151 երգը, և տես՝ 75 ժանթագրությունը:

Սարի ձունը սառել ա,
 Կանվեն ձեռքս տարել ա,
 Քոռնա նանիս աշկերը,
 Կարիբութուն հաղթել ա:¹³⁷

Սեւ էր չորանի շունը,
 Տարել է հարիս քունը,
 Ես կարիբ եմ չեմ գիտում,
 Ո՞ր մայլեն ա ձեր տունը:

Տարպետար գնացած եարրս,¹³⁸

Այ եկուր, շատ եմ կարոտցեր,

Էնչախ իմ կարոտցեր որ

Ի քո սըֆաթըն եմ մոռցեր:

Տարիներ կըզան կանցնեն,

Դուն ծովուն եալուն ընկած,

Ծովն ալ մահանա կանես,

Իս քենե կարոտ կու պահիս:

Եփոր գալու ուր լընիս,

Դուն իմացըմ արե ինծի

Թեվըս կարմընջուկ անիմ,

Անցի, դարձի տուն եկու:

Հեմամնի խելվեթ անիմ,

Վըլանանք մեր սըրմա փեռլեմը,

Այ կարոտեստ թալկած եմ,

Անցի, դարձի տուն եկու:

Հմմտ. 173 երգը:



Ափսոս քեզ հայոց խեղճիկ ժողովուրդ,¹³⁹
 Ցիրուցան ելաք անմեղ անխորհուրդ,
 Գերի գնաման աք դէպի խորասան,
 Քաղցած ու ծարաւ, տըկլոր թշուառական:

Խարիր ու խաղար ցաւի դիմացաք,
 Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չդրաք,
 Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,
 Տներն ու ժամերն ուրիշի տուաք:

էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքներն,
 Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,
 Ո՛ւմն աք թողման, որ գրնման աք,
 Էսպէս կու լինի որ մոռանում աք:

Վախում ամ էնպէս մտքերնուցդ ընկնի,
 Ինչքան որ ողջ աք մտքերնուդ չընկնի:
 Բարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէք,
 Էսպէս խայրենիք քանդած թողեցիք:

Մասիսի անունն Նոյա տապանի,
 Արարատ դաշտին, սուրբ էջմիածնի,
 Մեր խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
 Չմօռնաք մինչ ի օրն դատաստանի:

Աչքս կուրանար, շլինքս կոտորուէր,
 Խեղճ Հայաստան, քեզ էսպիս շտեսնէր.
 Թէ մեռած էի, ինձ երանի էր,
 Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր:

Գարում լէ ընցաւ, ամառն ետեւէն,
Աշում լէ ընկաւ՝ ընտրանց ետեւէն,
Կոռնկ, ծիծեռնակ՝ իրանց ձագերէն
Երամ կապելով՝ քշուեցան բնէն:

Արի, եար, արի, խռով մը կենայ,
էս սուտ աստուորը մըղի չմնայ:

Դուն մեղքիս տակ մտար՝ եարս եղար,
Դէն թափելու համար՝ ցաւերս հաղար,
Աճեպա՞, բերաղդ, մոռցար զըս ըմէն,
է՛ս էր քու խոստում, քու ահի՞ ու վատէն:

Արի, ջան, արի, բերախտ մը մնայ:
Սրտիկ մի կոտորի, ընի է շուշայ:

Մըր դուն է մինակ անտէր ու դրուկ,
Անեար, անտիրական, օջախն մարուկ,
Նը հաց, նը հալաւ, նը մալ ու թամալ,
Նը քեզնէ թուղթ մը ու նանուշ ջան մալ:
Արի, եար, արի, մալուլ մը կենայ,
Իտա փուշ դունէն մարտու չըմնայ:

Երկինք ամպեր է՝ կուգայ մոր մոր ձուն,
Ախ, կուգայ կը թափուի վըր մալուլ մարդուն,
Երկինքն մթնէր է՝ կէծակ կը զարկէ,
Ախ, զարըբուրի սիրտ էն մինակ կը ծակէ:
Արի, անջիգար, մալուլ դու մեղնի
Տէրն ողորմած է՝ լըմէն բան կեղնի:
ԱՐՁ 1894 132

Գերիս ընդ որ երթամ մոլար.¹⁴⁰
Ղարիպուծիւնն է խիտ դըժար,
Թէ հաց կուտեմ ի վայր շերթայր,
Ջուր կու խըմեմ, լեղի ու դառ:

Ի տուն նըստիմ հանգիստ չի տար,
Սրբտիկս ի փորս առնուր գալար,
Քունն աչերուս արար վըճար,
Բնութիւն կամացըս չէ ճարտար:

Յետ դառնալոյ շրկայ ինձ ճար,
Զի ի հոգւոյս եղայ պէղար,
Յառաջ կերթամ յոթըս չերթար,
Զի ճանապարհս է խիստ երկար:

Իմ մեղքքն շատ է խիստ երկար անհամար,
Որ զիս կուտայ ի տարէ տար,
Մէջ նեղութեան եղայ մոլար,
Մէկ մի շրկայ ինձ մխիթար:

Այն որ առնէ բարեաց վճար,
Մեղաւորցն է քաւարար,
Ըզբեղ հանէ յանդորրութիւն,
Եւ դու իսկի մի ճըճկուհար:

Կա'ց որ ասեմ քեզ բան ճարտար,
Զոր ի յառաջն աստուած արար,
ԶՅովսէփ մանուկն սուրբ և արար,
Որ Բետարբէ որդի արգար:

Յետոյ ի զուր մատնեաց ըզնա
Եւ բանդարգել ըզնա արար
Այն որ զիտէ զծածուկ սրտին
Եւ քննէ ըզխորս անճառ:

Որ և եհան զնա ի բանտէն,
Եգիպտոսի զնա տէր արար,
Ով որ շարին կու համբերէ,
Բարուն հասնի կառնէ վըճար:

Մատենադարանի Զեռ. № 7717 էջ 219-ա—բ, Կի 5Ի

Եկայ անցնելու քեզանից,¹⁴¹
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր.
 Հեռացել եմ տեղից տանից,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Այս աշխարհն է հին Հայաստան,
 Նախնեաց մերոց էր որորան.
 Ինձի երեք սպասողք կան,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Ոռոգում ես դու երկիրը,
 Գետերի միջում ընտիրը.
 Լսէ՛ ղարիպիս խնդիրը,
 Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

ՌՄ 35 ՏԽ 40

306

էս ի՞նչ թաւուր քար ջիկար եմ,¹⁴²
 Թորկեր եմ զիմ ճըժերն ի շօլ:
 Բառատայ խլիւին բէկար եմ,
 Կու կըտըռտեմ բէհուդա սօլ:

Խէրիք մնամ էլու դռներ,
 Էրթամ գտնիմ զիմ խեղճ գառներ,
 Զրեմ զիմ բօստընի ծառներ,
 Շինիմ ընտոր յաղբուր ու գօլ:

Զուր ե՞ք դատիմ ես խաց-փորի,
 Ու դան իմ աւայիք կորի,

Ես կու պարկիմ դօշակս է բօլ:

Սէֆիլ Անօս մնաց լալով,
Մեռաւ խլիսի պարտքեր տալով,
Զուր ե՛ր մնայ խէրուան շալով,
Կրպէն խաղայ առանց զրհօլ:

ՌՄ 43

307

Թորկեր եմ խեղճ, տկտր զիմ ճժեր, զիմ տուն,¹⁴³
Կոլորտիմ մէկ փշուր շոր խացի խամար,
Ըսկի շունիմ դադար, ըսկի շունիմ քուն,
Նօթ տարի է յինէ շունիմ մէկ խապար:

Զըմ գինայ թէ, մբկայ ի՞նչ ձուն տամ խալիս,
Կուրցեր են իմ աշեր, մացեր եմ լալիս,
Մէ դուռմ լէ չի բացուի իմ սե եղբալիս,
Զէմլէ էն Կիկոն իմ, անօթի, անճար:

Խայու խաւատ, Խայու աստուած, փրկէ՛ զիս,
Դիպա Մշու դաշտը իմ տուն խրկէ՛ զիս,
Նա չէ ա՛ռ զիմ խոզին, ումբէս զրկէ՛ զիս,
Ճամբախըս չիրիշկէ իմ սէֆիլ նուպար:

ՌՄ 43 Տե 101

- 1 Տե անտէր զիմ ճժեր:
- 4 Տե յիրնէ փոխ. յինէ:
- 6 Տե զիմ աշեր:
- 7 Տե սե եղբալիս:
- 8 Տե էլի դէն Կիկոն եմ:
- 10 Տե զիմ տուն:
- 11 Տե իմ հոգին փոխ. զիմ խոզին:
- 12 Տե զիմ սէֆիլ:

308

Ի յերկիր օտար հեռացայ,¹⁴⁴
Զսիրելիս իմ մոռացայ,

Ի մէջ ծաղկանցն վառեցայ,
Եղէ ցաւալից ցաւալից:

Այնչափ սաստիկ է և դժուար
Ղարիպուծինն, որ չկայ ճար,
Վկայ է Տէր և սուրբ տաճար,
Եղէ ցաւալից և ցաւալից:

Տիւ և գիշեր ողբայ և լայ.
Տէ՛ր իմ աստուած ինձ ողորմեա,
Ղարիպուծեանս իմ ճար արա.
Եղէ ցաւալից ցաւալից:

Մինչև յե՛րր լաս, աղաղակես,
Ջանձդ կոչես և հառաչես.
Ո՛վ եղկելի, գէմ ծառայ չես,
Եղէ ցաւալից ցաւալից:

ՄՆՏ 53

309

Ի՛մալ պրտի էնինք, ես լէ չըմ գինայ,¹⁴⁵
Որ չը թորկինք քոչինք մըր տուն ու վաթաս,
Չունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,
Հիմկուց յետև տըսնանք, փոխինք զմեր բան:

Իդա խարիպուծեն աւերեց զմըր տուն,
Կը թորկինք հեռենանք ճըժերսի սիրուն,
Հալով մընք հաց կուտինք չուրի յիրիկուն,
Էլ ե՛բ միտք կու բերինք մըր խեղճ խայաստան:

Սէֆիլցեր՝ կը դողանք քրդերու առաջ,
Տաճկին գանգատ կէնինք, չի էնէ ալանջ,
Մանտրցուցեր է մըր վրէն խարջ-խարաջ,
Խեղդերին պարտքնտէր, քեաֆիր խարկախան:

Թորկած խօրօտ հանտերս, թորկած սիրելիս,
Թորկած Զամալ եղս, թորկած Մարալիս,
Ես Ստամբուլ կերթանք, ես թէ չէ Թիֆլիս,
Էնտեիս աչքերս առած ենք սև գերեզման:

ՌՄ 76

310

Լէ, Լէ, Լէ... վայ Լէ...¹⁴⁶
Մըր խօր, պապկէ գերեզման
Թողի, հոստեղ կու կեամ ման
Խօսքիս կելնէ իւքի տակ
Խաւտա, տիժարա վաստակ...
Վայ Լէ, վայ Լէ:

Քանի դուրբաթն եմ ինգեր
Մէջից կօտին շըմ քակեր
Խարսնուկ անուշ-անթառամ,
Քեզնից զատ՝ կիւնն է խարամ...
Վայ Լէ, վայ Լէ...

Ախ, իմ ախպէրք, Ստամբուլ
Կասէք ճէօշ է, փարան բօլ
Խասրէթ մանէք, մեղ հալալ՝
Մըր խօր միւլքն է ու մալալ...
Վայ Լէ վայ, Լէ...
Հիմիկ, լաճերս ի՞նչքան են,
Ողջ են, կո՞րան, ինչ կանեն.
Կրպօն, Մրտօն, խօրօտիկ
Սիրուն Շուշան նէրօտիկ...
Վայ Լէ, վայ Լէ, Լէ...

Հիմիկ իմ արտ ի՞նչ կեղնի.
Ինձնից մահրում՝ կու գեղնի.
Յամքի շուշան, նունուֆար

Գոմից պակսի մըր դուվար...

Վայ լէ, լէ, լէ...

Հիմիկ, էստեղ անօթի

նաքնեմ կապա հնոտի

Երբ որ երգմ երգ երկրին

Աշիցս արցունք կը ցամքին...

Վայ լէ, լէ, լէ...

Արև շողցեր է պօծառ

Նախշուն ա դաշտ, ճեղն ու ծառ

Երթիս վերև են հավքեր

Կու ճլվլան մըր խավքեր...

Վայ լէ, լէ լէ...

Դինա... առջևս են լաճեր

Ինչքան բոյ-բոյան են աճեր

Քարով, կասեն, ի մեր սար

Մինչ դալգ՝ երկնից է խավար...

Վայ լէ, լէ, լէ....

Ախ, շաշխո՞ւն եմ, ի՞նչ էրի

Ղարիբ եղէ, սիրտս կէրի

Հուռ կաց Ղարիբ, ի՞նչ պէտք երգ

Քող փարատի իմ տեղերք:

ՄԾ 1889 148

310ա

Մըր խօր, պապկէ գերեղման,

Քողի հոնտեղ կիգամ ման,

Խոզիս կէլնի իւքի, տակ,

Խաւտա դիժար ա վաստակ:

Վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,

Քանի ղուրպաթն եմ ընկեր,
Միջացս գօտին չեմ քակեր,
Խարսնուկ անուշ Անթառամ,
Քեզնէ զատ կինն է հարամ:

Հիմիկ լաճերս ի՞նչ կանեն,
Մեռա՞ն, կորա՞ն, ի՞նչքան, են
Սիրուն Շուշուն ներոտիկ,
Կրպօն, Մրտօն, խօրօտիկ:

Հիմիկ իմ արտ ի՞նչ կէզնի,
Ընձնէն մահրում կու դեզնի,
Ցամբի ուհան, նունուֆար,
Գոմից սլակսի մըր տաւար:

Արև շողցեր ա պայծառ,
Նաշխուն ա դաշտ, ճեղն ու ծառ,
Զէրդիս վերև են հաւքեր,
Կու ճլվլլան մըր խավքեր:

Ա՛խ շաշխո՞ւն եմ, ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ՝ սիրտս կէրի,
Տղա՞յ սուս կա՛ց, ի՞նչ պէտք երգ,
Կիգա՛մ, կիգա՛մ իմ տղէրք:

ՏԽ 116, ՌՄ 88, ՍՀԱ 257, ՆԴ 1897, 163

14 ՌՄ ընձնից:

311

Խօրօտ թռչնիկ թըռի գնայ,¹⁴⁷
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր,
Ընցի սարեր, շրջի ձորեր,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր:

Բարակ առու, դու քու աստուած,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր,

Իմ սիրտ մըռմունն առի՝ կեփէ,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր:

Մեռելյարոց մարմանդ քամի,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր,
Քէհուտա տեղ մի սըլսըլա,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր:

Ախ, դու խօրօտ հոտուն ծաղիկ,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր,
Գնա ուր մօտ թըլս հոտ քաշա,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր:

Իմ հալալ քուր, պոծառ լուանակ,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր,
Շողքդի բըցէ ճամբխու վրէն,
Իմ ղարիբէն խապրիկ մի բեր:

ՏԽ 107

312

Կանչէ՛, կոռ՛ւնկ, կանչէ՛, ձայնիկդ ի հոգիս,¹⁴⁸
Դուն ալ խիստ քաղցրիկ ձայնիկ մի ունիս,
Աշուն է մօտեցեր, երդալու կամիս,
Բարօւլ դառնաս, բերես գարնան աւետիս:

Կանչէ՛, կոռ՛ւնկ, կանչէ՛, դու քաղցրաձայն ես.
Ձայնդ կու գայ հեռուստ, դու աննման ես,
Բազում և խիստ ի վեր բարձրագնայ ես,
Աղաչեմ՝ չիմ տանէն խաբրիկ մի բերես:

Կանչէ՛, կոռ՛ւնկ, կանչէ՛, ձայնիկդ ի հոգիս,
Երթաս, բարօւլ դառնաս, մուրատիտ հասնիս,
Ղարիպութին անկայ, տրտում է գերիս,
Թխտիկ մի բեր տնէս, մխիթարէ զիս:

Կանչէ՛, կոռ՛նկ, կանչէ՛, սրտով սիրելիս,
Գիտեմ — բարձր կերթաս, ամէն տեղ նայիս,
Զաշերդ համբուրեմ — զիմ տունն տեսնիս,
Որ է՛ անգաղար ի մէջ իմ սրտիս:

Գանգատ առնեմ քեզ, թռչուն գովելի,
Ղարիպուծին անկայ ողորմ ու լալի,
Ո՛չ ազգական աստ կայ և ո՛չ սիրելի,
Սրտիկս է դառնացեր, աշերս է լալի:

Գնա՛յ, կոռ՛նկ, գնա՛, տէր ընդ քեզ լիցի,
Պահէ՛ զքեզ անվորձ ի յորդոց — յորդի,
Ես եմ ղարիպ՝ անկեալ ի յօտար երկրի,
Տէրն նասիպ անէ մեր տեղըն մեզի:

ՀՄԺԵ 252

313

Կըռունկ ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.¹⁴⁹
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:
Մի վազեր երամիդ, շուտով կը հասնիս.
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Թողեր եմ ու եկեր եմ մըլքերս ու աչգիս.
Քանի որ ախ կանեմ կու քաղուի հոգիս.
Կըռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս.
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը շունի՞ս:

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ.
Զայնիկդ անուշ կուգայ քան զջրի տօլապ.
Կըռունկ Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ.
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Սրտերնիս կամեցա՛ւ ելանք գնացանք,
Այս սուտ աս տընուորիս տէրտէրն իմացանք,

Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք.
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աս տընուորիս բաներն կամաց կամաց է,
Միթէ աստուած լրտէ, դոնակըն բացցէ.
Ղարիպին սիրտն է սուգ, աշերն ի լաց է,
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աստուած, քեզնէ խնդրեմ մոռնալէ ռու բերէմ.
Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վերէմ.
Կերած հացն է լեղի ու ցուրն է հարամ,
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Ոչ ըզլուր օրն գիտեմ ոչ ըզկիրակին.
Զարկած է զիւղ շամփուրն, բըռնած կըրակին.
Այրիլըս շեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Պաղտատու կուգաս, կերթաս ի Սէհրատ.
Թըղթիկ մի գըրեմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վըկալ լինի քո վըրագ,
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց:

Գըրեր եմ մէջ թըղթիս, թէ հոս մընացի,
Օրիկ մի օրեր գաշերս չըրացի.
Սիրէլիք, ձեզանէ կարօտ մընացի.
Կըռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտալիր,
Երամ ես ժողվեր՝ հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտըվիր, ելար գրնացիր,
Կըռունկ, մեր աշխարհէն գընա հեռացիր:

ԲՎ 1847, մարտ, էջ 97, Անձ 89

1 Անձ կու գաս:

2 Անձ խապրիկ (բոլոր դեպքերում Պ-ն Բ-է տպված)

5 Անձ իմ մկերս:

7 Անձ ձէնիկդ:

9 Անձ դալար փոխ. տալապ (բոլոր դեպքերում Տ-ի փոխ. Դ-է, Պ-ի փոխ. Բ)

- 10 Անշ ձենիկդ:
 14 Անշ աստընտրիս դարդերն:
 22 Անշ ջիգերն:
 23 Անշ խըմած ջուրն է լեղի, ու հացը հարամ:
 29 Անշ սէհրաթ:
 37 Անշ թէգրիր:

313ա

Կոռ'նկ ո՞ւտից կուգաս, ծառա՛յ հմ ձայնիդ.
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս.
 Մի՛ վաղեր, մի՛ վաղեր, դու թէ՛զ կ'երամես.
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Ձայնիկդ անուշ կուգայ քան դջրի տօլապ,
 Քեզ քան հարցանողին չես աներ տալապ.
 Կոռ'նկ Պաղտա՛տ կ'իջնաս, եօխսայ մի Հալապ.
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Թողեր հմ ւ եկեր հմ մուրքերս ու այգիս.
 Երբ որ ա՛հ կուքաշեմ կուքաղուի շունչս.
 Կոռ'նկ պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս.
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Սրտերներս կամեցաւ, ելաք գնացաք,
 Այս սուտ աստընվորի բաներն իմացաք,
 Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացաք,
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Հավասով հմ պառկեր, ներքես է ֆուշի.
 Հոտուն ալ չեմ պշկար, կութուի մուշկի.
 Հասրաթով մնացի անկողնի, տօշկի,
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Աստուա՛ծ, ի քէն խնդրեմ մուրվէթ ու քէրամ.
 Ղարիպի սրտիկն է խոց, ճիկէն է վարամ.
 Իւր կերած հացն է լեղի, և ջուրն է հարամ.
 Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Ղարիպութիւնն ելէ կամաց կամաց է.
Միթէ՞ աստուած լսէ, նա դրունքն ի բաց է.
Ղարիպի սիրտն է ի սուր, աչերն ի լաց է.
Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Ոչ զլուրն գիտես, ոչ զկիրակին,
Ջարկած է ի շամփուրն, բռնած կրակին.
Խորվելս շեմ հոգար, քենէ կարօտ եմ,
Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Սրտէս շերթար, հոգե՛կ, դարկած նետերն.
Գնամ, ես զիս ձգեմ ելած գետերն.
Խեղդիլս շեմ հոգար, քենէ կարօտ եմ.
Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Ի Պաղտատու կուգաս, կ'երթաս ի սահրաթ,
Թղթիկ մի դրեր եմ, տամ քեզ ամանաթ,
Աստուած այլ թո՛ղ վկայ քո վերատ.
Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Գրեր եմ մէջ թխթիս, թէ հոս մնացի,
Օրեկ մի օրերուն զաչերս չբացի,
Միրելի՛ք, ձեզանէ կարօտ մնացի.
Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Այսօր զարիպութիւնն միակ միավոր
Հոգով այլ և մարմնով ես եմ մեղաւոր.
Սուրբ Սարգիս այլ օգնական այն պօզ ձիավոր.
Կոռ'նկ մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

ՄՆՏ 49

313բ

Կոռ'նկ, ո՞ւտի կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:
Մի՛ վազեր, երամիդ շուտով կու հասնիս,
Կոռ'նկ, մեր աշխարհէն խապրիկ մի շունի՞ս:

Թողեր եմ ու եկեր մլքերս ու այդիս,
Քանի որ ա՛խ կանեմ, կու քաղուի հոգիս,
Կոռ՛նկ, պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս,
Կոռ՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աստուորիս բաներն կամաց-կամաց է,
Եթէ աստուած լսէ՝ դռնակն բացցէ,
Ղարբի բիրտն է խոց, աչքերն ի լաց է.
Կոռ՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աստուած, քենէ խնդրամ միրվէթ ու քեարամ,
Ղարբին քիրտն է խոց, ճիկեարն է վարամ,
Կերած հացը լեղի ու ջուրն է հարամ.
Կոռ՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,
Օրիկ մի օրերուց՝ աչերս չը բացի,
Սիրելի՛ք, ձեզանէ կարօտ մնացի.
Կոռ՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աշունը մօտիկ է, գնալու ես թէպտիր,
Երամ ես ժողովեր հաղարներ ու բիր,
Ինձ ջողար չը տուիր, թէ և եկար հիր.
Կոռ՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Թէ և ղարիպութիւնն՝ կասեն մեղաւոր,
Բայց հոգւով ու մարմնով ես եմ մեղաւոր,
Սուրբ Սարգիս օգնական ճերմակ ձիավոր.
Կոռ՛նկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Տե 51, ՔԶ 146, ՍԶԱ 190, ՌՄ 81

Կօլերուն եզերը շիներ եմ տնակ,
Տնակին մէջերը մնացի մինակ.
Սրտիկս խոցոտ է, մի՛ պարներ դանակ,

Սիրուդ եմ կարօտ, մի՛ զրկե՛ր սիրուդ,
Հոգիս քեզ հէլա՛լ, մեռնի՛մ արեւուդ...:
Օրերը կու համբեմ, չի հատնիր տարին,
Ես հոգերուն վրայ, գլխիկս՝ քարին:
Քո՛ւն եմ թը արթուն, երազս բարին:
Ես երազն ի՛նչ անեմ, կարօտ եմ եարին:

Եօթներորդ տարին ահա լրացաւ,
Կենացս դարունը հետն առաւ անցաւ:
Գարունս՝ անծաղիկ, ամառս՝ անարեւ.
Ես քե՛զ եմ կարօտցեր, չե՛մ ուզեր բարեւ

«Անմահութեան» ջրով մազս վլացի,
Միտքս բերի էջի օրերս ու լացի.
Ինտո՞ք քեզ թողուցի, ես հոս մնացի,
Աչերուդ, մաղերուդ կարօտ մնացի...:

Պիւլպիւլը կու կանչէ, վարդերուն վրան,
Վարդերուն թփիկն ալ սրտիս պէս վերան
Դժար հիւընդով եմ, ճար չունիմ լալու
Ո՛ւչ ճար ունիմ լալու, ո՛ւչ քովդ դալու...:

Մինաւորիկ, կ'երթամ պաղշան ու պարը,
Ձի կայ սրտիս սիրած անուշիկ եարը:
Ա՛խ, ա՛լ չի տի գննեմ ցաւերուս ճարը,
Ճա՛ր արէք, ճա՛ր արէք, հոգիս արուն է,
Կու վազէ արունը, ցաւս խորուն է...:

Պաղշան կ'իջնիմ վարդին թփին քովերը,
Ի՛նչ անուշ կու փշին պաղ պաղ հովերը.
Քանի միտքս կու դան լեռ ու ձորերը,
Կարօտով կու վառի սրտիկս խոցով,
Կու վառի սրտիկս քու սիրուդ բոցով...:

Արանիս լեռ ու ձոր, մնացի հեռու,
«Տի գամ, սիլա տի գամ» կ'ըսէիր հերու,
Ողջ ողջ թաղեցիր իս մէջ ցաւերու:
Ցաւ՝ գերեզմանս է, ես՝ մէջը անթաղ:
Դո՛ւն աէրտիս տէրման, ես՝ քեզի մատաղ...:

Խուշին խանատով զրկեցի բարեւ,
Ըսի՛ «վարդ է բացուեր, սրտիկս վերեւ»

Ո՛ւր մնացիր, դարի՛պ, դուն իմ բարկ արեւ,
Արեւուդ կարօտ, ա՛լ չեմ դիմանար,
Ցաւս շատ խորուն է, դուն չես իմանար...:

Նաղուք կ'ուլլի կարմիր վարդին տերեւը,
 Կրակ ին լեցուցեր սրտիս վերեւը.
 Գրէ՛ ու մի՛ կըշեր, սիրուդ բարեւը:
 Տո՛ւն եկու, աղա՛ս, տո՛ւն եկու,
 Արմաղան չեմ ուզեր, արեւդ ա՛ռ ւ եկու...:
 ԱԱ 327

315

Ճանապարհս ընկաւ Տըփիսիս,¹⁵⁰
 Կրակ լցուաւ մէջ իմ սրտիս,
 Բարև արա սիրականիս:
 Երկրորդ խումբ, երրորդ խումբ, չորրորդ խումբ
 Կռունկ, որսորդի ձեռքից վիրավոր կռունկ,
 Որսորդից փախած դու սիրուն կռունկ:

Լալով գնում եմ ճանապարհ,
 Նա իւր տանն է ես եմ օտար,
 Ասա չընտրէ նոր սիրահար: Երկրորդ խումբ.....
 Մատաղ լինիմ քու երամիդ,
 Անուշ կռկռան բերանիդ,
 Ասա, տեսայ սիրականիդ: Երկրորդ խումբ.....

ՌՄ 83

316

Մեռնիմ քեզի Սուրբ լուսնակ,¹⁵¹
 Ինչի՞ էտպէս դու մինակ,
 Տրտում աչքով իրիշես,
 Սեւ ամպի տակ կը քաշուես:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան.
 Իմ տարտին արա տէրման:

Զոշ ցաւ ունիմ քեզ ասեմ.
Ղարիպ ունիմ չեմ տեսեր,
Էսա թամամ եօթ տարի,
Իմ տղեկներ կորուցի.
Ոչ թուղթ կուգայ ոչ խապար,
Իմ խոցին է չը կայ ճար:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրբան
 Իմ տարտին արա տէրման:

Անտէր անտուն փողոցներ
Շրջիմ, փարսեմ չոր խացեր,
Քամին ու փութ զիս ծեծեն.
Աչքէս արտասունք կը թափեն:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Ախ, իմ սրտիկը սեւ է,
Աստվորիս լոյս խաւերէ,
Քանի որ ղարիպ մի տեսնեմ,
Տղերկացս դարդով կը մծրեմ:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Էն ի՞նչ սեւ օր սեւ տարի
Օր մենք եղանք խեղճ դրի,
Կտրիճ տղէքս նորախաս
Քսան տարու թառ ու թաս:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Թողին տուն տեղ առտ ու ափ
Գոմէշ գութան խարոթ տափ
Ղարիպ աշխարհք հեռացան
Իրենց վօթան մոռացան:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Դուշման դայնդար քար սիրտ էր,
էն էլ չըխօ զէն կուղէր,
Իր սրտի մէջ միշտ կասէր
Խաչօյի տուն ծի խասէր:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Մըր մալ ու մուլք ըմէն առաւ,
Մեզի տըկլօղ դուրս առաւ,
Աստուածն ի վերն էլ տեսաւ
Մեր արտասունք օր թափաւ:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Մեր երկիրն է շէն ու լէն
Մեր գեղն անուն Մուշաղշէն,
Խաղար ցանենք ու քաղենք
Մեզի բաժին հինգ շունենք:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

Թերմաշ մնէր էն օրիկ
Օր ես ինկայ աստվօրիկ,
Մէրիկ եղայ ես օրդոց
Սրտիկս բուսավ դարտ ու խոց:
 Լուսնակ, լուսնակ քե ղուրպան
 Իմ տարտին արա տէրման:

ՄՍՍ 1887 137

Պայծառ արեգակըս, շամշու դամարըս,¹⁵²
Գիշերը էրածըս, զօրը խաչալըս.
Ալամ աշխարհ գիտէ իմ նազլու եարըս:
Անուշ աստուածածնայ ամանաթ ըլլիս:

Ի՞նչ կըլլի մէկ օր մը բարեւ ղըրկես ջուխտ,
Քեզի հետ մէտեղինք, էրթայինք խաչ ուխտ.
Աշից արտասունքով գըրէինք մէկ թողթ:
Անուշ աստուածածնայ ամանաթ ըլլիս:

Թողթ ու գիր էնէի անունդ հիւսնէի,
Վարդէն ալ ըլլէի, դուռըդ բուսնէի,
Ինչքան շմեհունէի՝ քեզի տեսնէի:
Անուշ աստուածածնայ ամանաթ ըլլիս:

Սահաթըդ եղեւ է ինձի մէկ տարի,
Դուն ա ինսաֆ էրէ, մէմ մեր տունն արի.
Էլլեմ ոտաց կայնիմ, բարով սիրական.
Քանի՞ մէկ կըրակիդ վառիմ, սիրական:

Սճամու էրկրէն դամուշ բերէի,
Աշուիդ ու օնքուիդ ալըր գըրէի.
Քանի որ կարդայի՝ կըրակդ էրէի:
Անուշ աստուածածնայ ամանաթ ըլլիս:

Սմէն առաւօտ կելլեմ, կընկնիս կը միտըս,
Կաշեմ կը ճամբընիդ, ծըռեմ կը ճիտս.
Մէկ բարեւ մը ղըրկես՝ շէն կըլլի սիրտըս:
Անուշ աստուածածնայ ամանաթ ըլլիս:
ԺԱՐ 21

318

Մէվկիւլլի ախպէրս, ջանս ջիգեարս,¹⁵³
Մէջը ղարիբութեան ո՞րմանէ հըճըպ,
Հըմըքի կըտրել է սապրըս դարարս,
Կաշեմ շի գալ վաթան, ո՞րմանէ հըճըպ:

էս բանը իմ սրտիս ղիժար կուգայ,
Հեռեւանց խէրի տեղ մեննակ դարտ կուգայ,

Նա գիրմ կզրէ, նա՛ խապար կուզայ,
Փայլունս տրդման, ո՞րմանէ հըճըպ:

Սըապն եմ, բարկցել, դարձել բարակ թել,
Իմ դարտից աշխարհը դարտ չկայ յաւել,
«Ախպէր ջան» կանչելով կէս մարդ եմ եղել,
Անտէր անտիրական, ո՞րմանէ հըճըպ:

ՌՄ 97 ՏՆ 129

1 ՏՆ սակիւլի աղբերըս

2 ՏՆ որման է

3 ՏՆ հըմը քի:

5 ՏՆ շատ դիժար:

6 ՏՆ հեռովանց:

10 ՏՆ իմ դարտես:

11 ՏՆ էղել փոխ, եղել:

319

Վայրի հաւուկ մի բըռնած,¹⁵⁴
Ու բերած զբրած զինքն ի նեղ զընտան.
Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
Սըրտաբեկեալ եմ միջակոտոր,
Ճար շունիմ, ի՞նչ լինամ գերիս.
Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
Թէ հազար զունդզուն փետուր
Բերած՝ ինձ խալիաթ կու տան,
Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց.
Թէ շաքարն է մաղած շաղուած
Բերած ինձ կերակուր կուտան
Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
Թէ զալպուլն ու զղումրին
Ինձ երգասաց կուտան,
Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
Թէ հազար թախտի հուքմն տան
Ու հարիւր հազարի տէր այնին,
Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:

Թէ հազար ինձ մեջլիս դրնեն
 Քաղցր երգով զիս զուարճացնեն,
 Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
 Թէ հազար ինձ ծառայ բերեն
 Անհամար հեծել ձիաւոր,
 Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
 Թէ դարպաս մեր շինած ոսկով
 Զարդարած անգին մարգարտով
 Չուրախանար սիրտ բաժանելոյս յընկերաց:
 Թէ հնար ու ճարակ լինէր
 Ինձ ելնել ի նեղ զնտանէս,
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս:
 Թէ լինէր ու թռչէի, բարձրանայի տեսանել զերամս,
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս:
 Որ խառնիմ ի յերամս:
 Արդ զարթնում ի քնոյ, զերդ տղայ մօր գրկի ի քուն,
 Եւ օրհնեմ զաստուած կենդանի, դրաց զիս ի յերամս:

ԲՎ 1862 205

319ա

Վայրի հաւուկ մի եմ բռնած ու բերած,
 Դրած զիս ի նեղ զրնդան.
 Չուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս,
 Որ չեմ յիմ երամ:
 Սրտաբեկեալ եմ միջակոտոր.
 Ճար չունիմ, զինչ լինիմ գերիս.
 Եթէ զբլբուլ ու զումրին
 Բերեն ինձ երգասաց գուսան, չուրախանամ.
 Եթէ հազար գոյն զգոյն փետուրներ
 Ինձ բերեն խալաթ տան, չուրախանամ.
 Եթէ զշաքարն ի Մաղածու
 Բերեն ինձ կերակուր տան, չուրախանամ.
 Եթէ հազար թախթ ի հուքմն ինձ տան,

Ու հաշիւը հազարի տէր առնեն, շուրախանա՛մ.
 Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն,
 Անհամար հեծել ձիաւոր, շուրախանա՛մ.
 Եթէ դարպաս ինձ շինեն ոսկւով,
 Զարդարած անգին մարգարտով, շուրախանա՛մ:
 Եթէ հնար ու ճարակ լինէր
 Ինձ ելնել ի նեղ զընդանէս
 Եթէ լինէր, որ թռչի, բարձրանայի,
 Տեսնի զիմ երամս, խաղալով, ճախրելով
 Ու կարկաշելով խառնիլ յիմ երամս,
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելոյս,
 Յայնժամ խառնէի յընկերացս երամ:

ՄՆՏ 47

320

Օրերը կու համրիմ, չի հատնիր տարին,
 Ես՝ հովերուն վըրայ, գլխիկըս քարին.
 Քուն իմ թը արթնոն իմ, երազըս բարին,
 Ես երազն ի՞նչ անիմ, կարօտն իմ հարին:

Անմահութեան ջըրով մազըս վըլացի,
 Միտքըս բերի էռջի օրերս ու լացի.
 Ինտո՞ր քեզ թոցուցի, ես հոս մընացի,
 Աչերուդ, մազերուդ կարօտ մընացի:

Պիւպիւլ կու կանչէ վարդերուն վըրան,
 Վարդերուն թըփիկն ալ սրտիս պէս վէրան,
 Դիժար հիւրնտուկ իմ, ճար շունիմ լալու,
 Ու ճար ոնիմ լալու, ու ջրովըդ գալու:

ԹԿ 84



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՆԱԳՐԻ ՄԵՉ
ՉԱՐԱՆԱԾ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ



Մանոթագրութիւնների սկզբում գրված թվանշաններից առաջինը՝ ծանոթագրութիւն համարն է ցույց տալիս, երկրորդը՝ փակագծերի մեջ գրվածը, այն երկրորդ համարն է, որին վերաբերում է ծանոթագրութիւնը:

Եթե մի ծանոթագրութիւնը վերաբերում է մի քանի երգերի, այդպիսի դեպքում, չկրկնելու համար, ծանոթագրութիւն մի համարի տակ թիվում ենք այն երգերի համարները, որոնց վերաբերում է տվյալ ծանոթագրութիւնը:

1(4).— ԶԱ-ի մեջ ունի՝ «Անտունի պանդխտութիւն զնացողին կողմանէ», 22-ի մեջ՝ «Մահերգ» վերնագիրը: ԶԱ-ի մեջ 2. Ըանիկյանը գրում է՝ «Ամենեղ հավասար նստեք» տողն ու նորա հաջորդ երեք տողերն ողբի հետ կերպեն, և երբեմն փոխանակ երրորդ տողին հետևյալը կրսեն՝ «Ջուր ուղի, գինի տվիք, աղ-վորին խաթրը մավրերը»: ԶԱ-ի մեջ այս երգը շարունակվում է, մենք անջատել ենք և գրել ժողովածուի «Պանդխտութիւն զանազան երգեր» բաժնում: ՏԵ՛ս N 242ա երգը և 112 ծանոթագրութիւնը: 22-ի մեջ այս երգի շարունակութիւնը իր բովանդակութեամբ սղո և թաղման էր, և մենք տեղափոխեցինք այդ բաժնում, տե՛ս Ժող. N 205 երգը: Վերոհիշյալ երգը, ինչպես ցույց ենք տվել, տպագրված է նաև Մ. Արեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր»-ի մեջ, Արեղյանը ԶԱ-ի տողատակի տողերը բերել է տեքստում:

Պանդխտի համար ծանր է բաժանվել հարազատներից, բարեկամներից: Պանդխտութիւն մեկնողը դիմում է մնացողներին, խնդրելով իրեն չմոռանալ: Հայկական հին սովորութեամբ, հայրենիքում մնացողները երբ հավաքվում են կերտիսումի, խնջուրի, նստելով սեղանի շուրջը, դատարկ են թողնում պանդխտի տեղը, և յուրաքանչյուր անգամ որեւէ կենաց խմելիս հիշում են իրենց ընկերոջը և նրա համար գրված բաժակը թափում իր տեղը:

Ժողովածուի N N 4, 27, 65, 66, 67, 68ա, 72, 92, 95, 96, 99, 110 113, 124, 125, 126, 135, 140, 141, 173, 215, 215ա, 216ա, 229, 238, 239, 242, 246, 263 երգերը տպագրված են նաև ԳԺՏ-ում, Արեղյանն էլ օգտագործել է նույն աղբյուրները:

2(6).— Այս երգը ԶԱ-ի մեջ ունի՝ «Վանքեն» վերնագիրը:

3(7).— ԱԶԺԲ-ի մեջ ունի՝ «Պանդխտի երգ» վերնագիրը:

4(9).— ԶԲ-ի մեջ ունի «Ղաբիրն ու կիկիր» վերնագիրը: Այս երգի շարունակութիւնն անշատեցիք և դրել ենք «Վարդուհի սիրո» բաժնում, տե՛ս N 88 երգը: Ժողովածուի N N 9, 10, 22, 24, 25, 26, 36, 38ա, 38բ, 39, 42, 49, 52, 58, 62, 64, 68, 77, 80, 99, 107, 112, 118ա, 131, 137, 165, 166ա, 171, 179 252 երգերը ընկ. Գր. Գրիգորյանը օգտագործել է իր «Հայ ժողովրդական բանահյուսութիւն» քրեստոմատիայում, զետեղելով իր քրեստոմատիայի «Պանդխտի երգեր» բաժ-

ևում: Մենք այստեղ նկատի չունենք ժողովածուի այն երգերը, որոնք կան նաև
ԳԺՏ-ում և որոնք օգտագործել է ընկ. Գ. Գրիգորյանը:

5(11).—Ամբողջական դադարաւար կազմելու համար բերում ենք նշված
աղբյուրների վարիանտները, որոնք կան նաև ԺԽ-ում:

ՔՄՎ — էրթանք Ստամբուլ,
Փող էլ պիրենը սօլ,
Առնենք ջութաւում սօլ,
Խաչենք տօրիլէ տօր:

ՊՎ ԲՆԱ — էհանք Ըստամբուլ,
Պիրենը օսկի բօլ.
Առնինք ջութաւում սօլ,
Խաչենք դորե դոր:

ՎՍԱ — Կէրթամ Վանայ բերդ,
Ոտքերս շիղեայ խետ,
Կուղեմ դառնում ետ,
Իմ հար պիրեմ խետ:

Կերթամ Ստամբուլ,
Պիրեմ ոսկի բէօլ.
էժենեմ Առդուում,
Առնեմ ջութաւում սօլ,
Խաչենք դէօրէ դէօր:

էժենեմ Պատի դելդ,
Առնեմ նուկիւմ հդ.
Շինեմ ձուածեղ,
Օրօխկեմ հարոջ:
Իմ հար խոռլե,
Շամամ քոռումե:

ԲՆԳ — Իջենք Ըստամբուլ,
Գրենք ջութաւակ սօլ.
Հաղինք դոր բը դոր,
Ընկէիք չու բը չու:

էԱԺԶ — էրթանք Ստամբուլ,
Պիրենը ոսկի բուլ,
էրթանք Առդուում,
Առնենք ջութաւում սօլ:
Խաչինք դէօր է դէօր:

Ժե —

էրթւեք Ըստամբուլ,
Բերկէք փարա բուլ,
Մեր հարի խամար,
Առնենք ջուհտ րմ սոլ,
Խաղենք դորեդոր,
Ընկենք շոլն շուլ:

Արի, հար, աշի, խրոտ մի մնայ,
Աստըվորիս բան մեզիկ չի մնայ:

6 (13).— ՆՀԶ-ի մեջ ունի՝ «Պանդ լիտ չարդը և յուր կիներ» վերնագիրով
Այս երգի առաջին մասն անջատելիք և դրել ենք Ժող. համապատասխան բաժ-
նում. տես № 21 երգը, ինչպես նաև № 9 ծանոթագրութիւնը:

7(17).— Այս երգի վերջին շորս տողը անջատելիք, որել ենք Ոգո և Թաղ-
ման բաժնում, բովանդակութիւնը չէր առնչւում այս բաժնի հետ. տես № 205
երգը և ճանոթագրութիւնը:

8(18).— «Ուրվագիծ երաւշտութեան պատմութեան» ժողովածուի մեջ այս
երգի առաջին տղը բերված է իբրև «Նորնագիր» Մուսկուլ բաժանման.

9(21).— ՆՀԶ-ի մեջ ունի՝ «Պանդուխտ մարդը և յուր կիներ» վերնագիրով Սրա
22-րդ տողից սկսած՝ Կարիք են ճամշտիս... անջատել է իբրև առանձին երգ դրել
ենք «Շրմուկ»-ի և բաժանման» բաժնում. տես № 13 երգը, ինչպես նաև № 6 ծանո-
թագրութիւնը:

10(22).— ՀԱ-ի մեջ ունի՝ «Ղարիպի վրաս» վերնագիրով:

11(25).— ՆՀԶ-ի մեջ ունի՝ «Ղարիպ աղջկա երգը» վերնագիրով. երգը բաղ-
կացած է մի շարք սիրո քառյակներից, որոնցից ընտրել և անջատել ենք ժողովա-
ծուի համապատասխան բաժնիների համար. տես Ժող. № 44 երգը: Սակայն լրիվ
գաղափար կազմելու համար բերում ենք այդ սիրո քառյակներն ամբողջութեամբ:

Քելմա քելի քելբոլ աղջիկ,
Բաղի բլբոլ ձէնոլ աղջիկ,
Ես ծարաւ եմ, ջուր չկայ,
Սարերին աղբուր չկայ.
Վախում եմ դարիք մեռնեմ,
Վրէս էլը-գին չկայ:
Քելմա քելի քելբոլ աղջիկ,
Քանց քու մէրը սիրուն աղջիկ:

Սրա հաջորդ քառյակը հանդիսանում է Ժող. № 44 երգը, այնուհետև՝

Ղարիք եմ Ղարս գնացի,
Ղարիք տեղը հարս գնացի
Պատկուց օր շտեսայ,
Անփայ տեղ հարս գնացի:

Սիրուն աղջկայ տէրը
Խօսք տունը ա հէրը.

Օխտը տարի սիրեցի,
Չտունց քեւաֆուր մէրը,

Նայուխը մօտիս ա,
Հասրաթը ջանիս ա.
Ուղում եմ երեսդ տեսնեմ,
Վրէն սարկըր տալդայ ա:

Գնացի շալը լուացք,
Սապոնս էր ոսկեջրած.
Հէրն ու մէրն ինչ անենս,
Ճակատիս էս էր դրած:

Սիրել եմ սե չուխավոր,
Դու ես գեալաչու սովոր.
Սիրեցինք՝ իրար՝ շառանք,
Նաշարցանք՝ արինք քաւոր:

12 (27).— ՀԱ-ի մեջ բանահավարը դրել է՝ «Անտունի հայրենասիրական, զոր վտարանդին խոսած է» վերնագիրը:

13(28).— ՎՍԱ-ի մեջ այս երգը բերված է «Սիրականի հակառակորդները» վերնագիրը կրող սիրերգերի շարքում: Դուրս թողեցինք մեր թեմային շտնչվող մասը՝ 63 տող, որից հետո եկող քառյակները անշտեցինք, և ըստ բովանդակության տեղավորեցինք համապատասխան բաժիններում. տե՛ս Ժող. №№ 30, 33, 54 երգերը, որոնք հաջորդաբար բերված են ՎՍԱ-ի 52 էջում:

14(29).— «Արձագանք-ի մեջ այս երգը հանդիսանում է «Ղարբիի հառաչք և մորմոր» տողով սկսվող (մեր ժող. № 52) երգի շարունակությունը, երկուվ երգի բովանդակությունից այն առանձնացրինք երկու տարբեր երգերի և տեղավորեցինք համապատասխան բաժնում, տե՛ս № 52 երգը և 29 ծանոթագրությունը:

15(30).— ՎՍԱ-ից ընտրած քառյակներից է, որ ըստ բովանդակության դասավորել ենք համապատասխան բաժիններում. տե՛ս № 13 ծանոթ.

16(33).— Տե՛ս № 13, 15 ծանոթագրությունները:

17(34).— ՀԱ-ի մեջ այս երգից առաջ գրված է՝ «Ի դիմաց տնանկ հանդուցելոյն առ բարերարն որոյ տունն հիւրընկալեալ էր»:

18(35).— ԲՆԲ-ի մեջ ունի «Նարիայի երգը» վերնագիրը:

19(36).— Այս քառյակը վերցված է ՌԱ-ի «Տուն արի՛, տուն արի՛ յար» սիրո երգից: Երգը բաղկացած է 4 քառյակից, որի յուրաքանչյուր երկու տողից հետո ասվում է՝

Տուն արի, տուն արի, տուն արի եար
Մթնել ա, տուն արի, անչիղեար եար.
Կանչմեմ, եար արի, եարալու եար:

Մեր օգտագործած քառյակը կազմում է վերահիշյալ երգի վերջին մասը: Հասկա-
նալի պատճառով դուրս ենք թողել վերևի ամբողջ սիրերգը:

20(38).— ԺԱՐ-ի մեջ վերնագիրն է «Կոստնկ»:

Ժողովածուի №№ 38, 38ա, 69, 243, 259, 263, 313, 321 հրդերը տպագրված են նաև Աս. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուում: Հեղինակն օգտվել է այն աղբյուրներից, որոնցից օգտվել ենք մենք ժամանակին, մեր ժողովածուն կազմելիս:

21(38ա).— Բանահավաքը այս երգի վերնագիրը դրել է «Աղջկա գլուխը գո՜վելու երգ» և երգն սկսվում է հետևյալ բառերով՝

Աղջի հարսնարդ էկաւ
Վերի կալերէն,
Քեզի հինա բէրին
Թղթի ծալերէն:

Ախրէր արի, ախրէր,
Նզնեք բառանք,
էրթանք դարիք երկիր,
Թէզօք յետ դառնանք

ԽՄ 62

եւ որովհետեւ այս 8 տողը կապ չունի պանդխտության հետ, որա համար էլ տեքստից դուրս թողեցինք:

22(39).— Այս քառյակը վերցրել ենք «Հաղար ա մի խաղ»-ի առաջին հիսնյակի 3-րդ «էսօր ուրբաթ է պաս է» երգից, որի առաջին երկու քառյակը կապ չունեն քննարկի հետ, ուստի վերցրինք միայն այս քառյակը:

23(42).— Այս երգի 5—8 և 13—20 տողերը դուրս է թողնված, քանի որ երգի բուն մասը չեն կազմում:

24(43).— ՀՄԽ-ի մեջ այս երգը գրված է «Ղարիք հմ Կարս գնացի» տողով սկսվող երգի շարքում: Ներկա երգը այդ քառյակներից երկրորդն է, իսկ երրորդ քառյակը բովանդակությամբ համապատասխանում էր ժողովածուի «Հայրենաբաղձության երգեր» բաժնին. տե՛ս № 25ա երգը:

25(44).— ՆՀԶ-ի մեջ եղած սիրո քառյակներից ընտրած պանդխտության մի քառյակ է, որի համապատասխանը դրել ենք նույն բաժնում. տե՛ս № 25 երգը և 11 ծանոթագր.:

26(45).— ԱՀԺԽ-ի մեջ այս երգն ունի՝ «Ղարիքն հիվանդ» վերնագիրը:

27(48).— ՋԲ-ի մեջ ունի՝ «Ղարիպ» վերնագիրը:

28(51).— ԱՀԵ-ի մեջ ունի՝ «Ղարիպի մահը» վերնագիրը:

29(52).— «Արձազանքի» մեջ այս երգը «Ղարիքի հառաք և մորմոր տողով սկսվող երգի սկիզբն է. որի շարունակությունը բուն երգի հետ կապ չունենալու պատճառով անջատեցինք և իրրե առանձին երգ դրել ենք համապատասխան բաժնում: Տե՛ս № 29 երգը և 14 ծանոթագրությունը:

30(53).— ԺԱՐ-ի մեջ ունի «Պանդուխտի կտակը» վերնագիրը: Այս երգի վերջից 5 տող անջատեցինք և դրել ենք ՍՍԳ և Բաղման» բաժնում, նկատի ունենալով, որ բովանդակությամբ չէր համապատասխանում այս բաժնին: Տե՛ս № 201 երգը:

31(54).— ՎՍԽ-ի մեջ եղած «Սիրականի հակառակորդներ» վերնագիրը կրող

սիրնդերի շարքից վերցրած բառակներից է: Տե՛ս № 30, 33 երգերը: Տե՛ս № 13, 15 ծանոթագրությունները:

32(56).— ԱՀԺԲ-ի մեջ ունի «Ղարիբի երգ» վերնագիրը:

33(60).— ԺԱԲ-ի մեջ ունի՝ «Պանդուխտ» վերնագիրը:

34(61).— ԲնԱ-ի մեջ ունի՝ «Պանդուխտ» վերնագիրը:

35(62).— ԲնԱ-ի մեջ այս երգի նախորդ 10 տողը դուրս թողեցինք բուն երգի հետ կապ չունենալու պատճառով:

36(63).— ՌՄ-ի, և ՄՀԱ-ի մեջ այս երգն ունի՝ «Պանդուխտ մշցու երգը» վերնագիրը: Նշած աղբյուրների մեջ սույն երգը մեծ էր և մի քանի բոլորովին տարբեր երգերի անօրգանական միացում, դրա պատճառով էլ դուրս թողեցինք, մանավանդ որ այդ դուրս թողածները առանձին երգերով կային, որոնք ունենք տեքստի տարբեր մասերում:

37(65).— ՀԱ-ի մեջ վերնագիրն է «Անտունի վանք դուղեն»: Այս երգի շարունակությունը կաղմող 10 տողը դուրս ենք թողել բովանդակությամբ տարբեր լինելու հետևանքով:

38(67).— ՀԱ-ի մեջ երգից առաջ գրված է՝ «Հայս կըսեն այն անձինք, որ իրենց սիրելեաց կը սպասեին»: Այս բառակը կա նաև ԳԺՏ-ում, որտեղ Արեգյանը ըստ իմաստի ու շարժի փոփոխել է՝

Որ կու դաս կանչիս ի վրայ,

Թէ դաս նը՝ կենտմ կանաչ,

Թէ չի դաս՝ երթամ, չորնամ:

ԳԺՏ 215

39(68ա).— ՀՀ-ի մեջ եղած սիրո անտունիներ շարքից՝ պանդխտության վերաբերյալ հատվածն է, որ կաղմուկ է № 68ա Լրգը, այս երգի 53 տողը սիրո անտունի է, որի պատճառով և ամբողջապես դուրս ենք թողել, իսկ ներկա համարի շարունակությունն էլ՝ «Լուսիկ մի փրթաւ սարէն» տողով սկսվածը դրել ենք պանդխտության երգերի այլ խմբի մեջ: Տե՛ս № 118 երգը և 58 ծանոթագրությունը: 68ա երգի 3 ալ ընթերցվածներն կան ԱԱ-ի մեջ, էջ 436—437:

40(69).— Արուսյակ Հայկունու հավաքած Ակնի բարբառով եղած սիրերգերի մի մասն է կաղմում այս երգը, որը մենք անջատեցինք, ընտրելով պանդխտության վերաբերյալ մասը, մնացյալը դուրս թողեցինք: Նույն սիրերգի 1-ին տողից մինչև 14-րդ տողը առանձին երգով դրել ենք մյուս բաժնում. տե՛ս № 142 երգը, ինչպես նաև 69 ծանոթագրությունը:

41(72).— ՀԱ-ի մեջ երգից առաջ գրված է՝ «Հարսն առ լուսինն, որ ցաթեր է ի տանիս»: Այս երգը բաղկացած էր 2 տարբեր երգերից, մենք անջատեցինք առաջին մասը, զրեցինք այստեղ, իսկ երկրորդ մասը՝ «ճարիպս որ ճամբով կերթա» տողով երգը զրեցինք համապատասխան բաժնում. տե՛ս № 127 երգը:

42(73).— Վերցված է ՌՄ-ի մեջ եղած սիրային բառակների շարքից: Սկիզբը և շարունակությունը բոլորովին կապ չունեն բուն թեմայի հետ և անկապ քառյակներ են, որոնք դուրս են թողնված:

43(76).— Բանահավաքը տողատակում ցույց է տալիս, որ ասել է Ալթուն Ասպաժատրյանը:

ԷԱԺԶ-ի մեջ այս երգը շարունակվում է, սակայն բուն երգի և թեմայի հետ կապ չունենալու հետևանքով դուրս ենք թողել: Գրված է Բաղեշի բարբառով:

44(80).— ՎՍԲ-ի մեջ ունի «Պանդուխտի երգեր» վերնագիրը:

45(81).— Վերցված է ԷԱԺԶ-ի սիրո երգերի շարքից, վերևից 47 տող սիրո քառյակներ են, ուստի դուրս թողեցինք: Ընտրել ենք միայն պանդխտության հետ կապված երգերը: Շարունակությունն էլ դուրս թողեցինք բուն երգերի հետ կապ չունենալու պատճառով:

46(82).— ԷԱԺԶ-ի մեջ եղած, Ս. Հայկունու հավաքած սիրերգերից ընտրած երկու քառյակ է: Այլու սարը հավանաբար Հալեայն է, քանի որ Ժխ-ի վարիանտում ասվում է «կերթամ վրը Հըլայա սարուն» ճշմանակում է սա հապավված, փոփոխված ձևն է՝ Այլու սար, Հըլայա սար:

Բերում ենք սրա մյուս վարիանտները՝

Գիշեր խալդա դուս ելա,

Թուխ ամպ անուշ կըցոլա.

Աշնան դիշեր, հով դիշեր,

Շաղն իջն, գետին նըխշեր:

Խանչիմ. «Լուսնակ, դո՞ր կերթաս:

— Կերթամ դիշերին ու ցորենի,

Կերթամ վրը Այլու սարին:

— Շատ բարե խորոտ եարին:

ՀԺԵ 93 (ԺԽ 142)

Գիշեր խալդա դուս ելա,

Լուսնակ անուշ կը ցոլար:

— Լուսնակ դուրբան ո՞ր կերթաս:

— Կերթամ վրը Հըլայր սարուն:

— Կերթամ վրը Հըլայր սարուն,

Խեր խապրիկ տաննա եարուն:

Ձեռագիր Ժողովածու Եղիազար Կաբապետյանի, Թալինի Իրինդ գյուղ,
5/2 1928 (ԺԽ 142).

Գիշեր խալդա, դուրս ելա,

Թուխ ամպ անուշ կըցոլալ.

Ցուլալ ցուլալուդ հալբան.

Կըցուլեր հալվա սարին,

Շատ բարե հնուտ եարին:

Քիշ բարե զարիր եարին:

ԱՀ

Ասարդն անուշ կը ցուլալ,

Կըցուլա Հալվա սարին,

Շատ բարե զարիր եարին:

Քիշ բարե զարիր եարին:

ԱՀ

47(83ա).— Բանահավաքը այս երգի վերնագիրը դրել է «Ալն կեօղլի» և ունի հետևյալ բացատրություն՝ «Ակնա «Ալն կեօղլի» երգն, որ սրտաշարժ երկու երեք տեսակ եղանակ ունի, ժողովուրդն հայ և թուրք հավասարապես կերգեն: Կըվիլի թե հեղինակն՝ 40 տարի առաջ՝ հայ կին մէկ եղեր, որո այրն Եգիպտոս կը գտնվի, և որ առն քով զնացած է և տճկ. «էկիլ տաղլար,

էկիլ տաշար և այլն» կամ հայերեն «Յածցի լիոներ, ցածցի քարեր վրա-
յետ ոսնիմ (անցնիմ)» և այլն (տե՛ս մեր ժող. № 22 երգը—Մ. Մ.) հնագույն երգին
եղանակին մոտ եղանակով մը սույն եղանակն հորինած է: Այս երգ չի հիննար,
այլ ամեն ոք յուր վիճակին կամ վշտին համեմատ հետզհետե նորեն կհորինեն: Հին
թե նոր հարյուրավոր տուն կա և հայտնի է թե միշտ նորեն կերգվին: Աստ միայն
մի քանի տուն նոր ելած հայերենն զրեցի: Պետք է գիտնալ նաև, թե մինչդեռ
զրեթե բոլոր երգերն երիտասարդեն առ կինն ուղղվալ է, այս երգը՝ ըստ մեծի
մասին՝ կնոջմեն առ այլն ուղղվալ է: (ՀԱ 461):

Այս երգի առաջին շարս և վերջին հինգ տողերը կան նաև ԱԱ-ի մեջ էջ 523
և 511, նույն երգի 6—8 տողերը կան ԱԱ-ի մեջ մի փոքր տարբերությամբ, բե-
րում ենք այդ տողերը՝

Խալէմքէր պիտլի՝ Թաւիրդ առնէի,
Քանի կարօտնայի՝ վրաց նայլի,
Զի մեռնէի՝ սիւա զայդ տեսնէի,
Պէլքիմ ես ալ քենէ կարօտս առնէի:

ԱԱ 517

48(88).— ԶԲ-ի մեջ ունի՝ «Ղարիրն ու կնիկը» վերնագիրը: Այս երգի առա-
ջին բառակը զրեւ ենք հրաժեշտի և բաժանման բաժնում, տես ժող. № 9 երգը:
Ներկա համարը նրա շարունակութունն է:

49(98).— ՎԱԱ-ի մեջ ունի՝ «Պանդուխտի երգեր» վերնագիրը: Այս երգը
բաղկացած էր մի շարք պանդխտության քառյակներից, մենք անջատեցինք ըստ
նրանց բովանդակության, և յուրաքանչյուրը տեղավորեցինք ներկա ժողովածուի
համապատասխան բաժիններում: Այսպես՝ ՎԱԱ-ի մեջ եղած առաջին վեց քա-
ռյակները իրենց կրկնակներով կառնում են ժող. № 130 երգը, սրան հաջորդող
7—8 քառյակները՝ «ես քեյ պստկուց սիրիցի» տողով սկսվողը՝ համապատաս-
խանում է ներկա համարին, որը այլբենական ցանկով անջատվում է, իսկ սրան
հաջորդող 9—10 քառյակները զուրս թողեցինք թեմայի հետ կապ չունենալու հե-
տևանքով: Վերջին 11—12 քառյակները համապատասխանում են ժող. № 117
Լրգին:

Տեքստին հարադատ մնալու և ամբողջական գաղափար կազմելու համար
բերում ենք այդ 9—10-րդ քառյակները՝

Տիւ մտեր ես ծով կը լիողաս,
էլերես ասինք կը դեղդեղողաս.
Քեանց նոսն խատի կշողշողաս,
Իմ խին զարդեր իբար կուտաս:

Զիւրմ ի փոթե կուկեայ սարէն,
Կուկեայ թափի մարմար քեարէն.
Չեռ մէյք իտայ սրտիս եարէն,
Եարն ի տառցէ ուր կրարէն:

ՎԱԱ 62

Բեյօղլի կամ Բերա և Իսթիզար, Պուսի մասերն են, առաջինը Եվրոպական,
երկրորդը՝ Ասիական ակներում:

50(99ա).— ԶԱ-ի մեջ ունի միայն մեկ քառյակ, որ դրված է մահերգ բաժնում, քանի որ 99 երգը հիմնականում ՆԱ-ից էր, ուստի ԶԱ-ի այս քառյակը դնում ենք իրրեկ փոփոխակ, որը և պակաս է:

51(101).— ՊՎ-ի մեջ ունի՝ «Երգ պանդուխտի» վերնադիրը, այստեղ վերցրել ենք այդ երգի վերջին մասը: Սկիզբը՝ «Ինչեկալ թաղ է թաղ» սողով սկսվող մասը դրել ենք այբբենական կարգով իր տեղում: Տե՛ս № 102ա, 105, 111 երգերը: ՊՎ-ի վերոհիշյալ երգի մի մասը դուրս է թողնված պանդխտության հետ կապ չունենալու պատճառով:

52(102).— ՎԱԱ-ի մեջ դրված է սիրո երգեր շարքում, բանահավաքը երգի տողատակին աստղանիշով ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տան վերջում կրկնվում է՝ արե եար արե:

ԷԱԺԶ-ի մեջ կա այս երգի միայն երկրորդ քառյակը՝

Խաբուկ վրը ծովուն՝ անուն էր արուօր,
Վզիկն էր յերկէն, ւրախի սեւավոր,
Արի, եար, արի, խոռով մի կենար,
Աստուորի մալ մեզի շի մնար:

ԷԱԺԶ 47

սրա շարունակությունը սիրո երգերի շարք է:

53(102ա).— ՊՎ-ի մեջ «Երգ պանդուխտի» վերնադիրը ունեցող երգի երկրորդ մասն է, որի սկիզբը համապատասխանում է Ժող. № 111 երգին, տե՛ս № 51 ծանոթագրությունը:

54(104).— Սկզբից վեց տող դուրս ենք թողել, թեմայի հետ կապ չունենալու պատճառով:

55(105).— ՊՎ-ի մեջ եղած «Երգ պանդուխտի» վերնադիրն ունեցող երգի վերջին մասն է: Տես ՄՄ № 101, 102ա, 111 երգերը, ինչպես նաև ՄՄ 51, 53, 57 ծանոթագրությունները:

56(110).— ԶԱ-ի մեջ եղած սիրո անտունիներից մեկի երկրորդ մասն է, որը կապ չունի վերևի մասի հետ, ուստի դուրս թողեցինք:

Բերում ենք դուրս թողնված մասը՝

Գետակ իմ ելման գետակ.

Ուր կերթաս իւրտա ինծի ըսէ:

Գիշեր ու ցորեկ կերթաս,

Քուն չունիս, արթուն կու կենաս:

Գնամ ու դնամ կրսես,

Ուլ կուգաս, ուլ կու մօտենաս:

Ուր գաս ինծի մօտենաս,

Զիմ թողուր իսկի հեռանաս:

ԶԱ 435

57(111). ՊՎ-ի մեջ ունի՝ «Երգ պանդուխտի» և ՌԱ-ի մեջ՝ «Պանդուխտ վանեցող վառ իղձերը» վերնադիրը: Այս երգը վերոհիշյալ աղբյուրներում ունի շարունակություն, որոնք անկախ երգեր կարող են լինել, այդպես էլ արինք, ան-

ջատելով դրել ենք համապատասխան բաժիններում. տե՛ս № 51, 53, 55 ծանոթագրությունները, և № 101, 102ա, 105 հրդերը:

58(118).— Տպագրված է ՀՀ-ի, ՀԱ-ի, ԷԱԺԶ-ի, ԲՆԱ-ի մեջ: ՀՀ-ի մեջ այս նրդը կազմում է մեր Ժողովածուի 68 երգի շարունակությունը: ՀԱ-ի մեջ ընդմիջ է դարիպի անտունիներ շարքում՝ «Կարոտակեղ հարսն առ Լուսինն» և «Պարձնայ առ Լուսինն» առանձին վերնագրերով կարոտի երգեր են: Այս երգի մեկ աղճատված վարիանտը գտնվում է ԷԱԺԶ-ի մեջ Արուսյակի Հայկունու հավաքած, Ակնա բարբառով պարերգերի ընդհանուր վերնագրի տակ: Նպատակահարմար գտանք չլինելու անհրաժեշտ, այլ բերում ենք այստեղ՝

Լուսիկ մի փոքր քարեր,
Կէսը խոռ, կէսը բոլոր:
Թէ կենաս բահ մի ութան,
Էրկու խօսք գանդատ ունեմ,
Դամ դոյամ. դուն ալիքի ու գնայ:
Գնա, ըսէ դարիպիս,
Զկենայ, էլլէ ու դայ:
Ան կողմէն մարմ էկա ու ըսաւ.
— Ես բու դարիպէտ խապար ունենամ,
Դուն ինձի պագմ կուտա՛ս,
— Դուն իմ դարիպէս խապար ունեցիր,
Պագմ չէ, էրկուք կուտամ
— Ես դարիպէդ խապար ունիմ,
Թէզ գալու, ուշ գնալու:
Նարդի քեզի նուր դրկեց,
Կտրէ տես, քանի հատ ունի,
Հատին ալ պագմը տու,
Աւելին հարամ ըլլի:
— Նուր կալ հաղար հատ ունի,
Հաղար պագլ տուր տեղ կու ըլլի,
— Էրկու սերը տուր մէկ ըլլի,
Հաղար պագլ թէզ կու ըլլի:

ԷԱԺԶ 106

59(119).— Բանահավաքը այս երգը վերնագրել է՝ «Մայր և աղջիկ»: Նրդից առաջ ունի հետևյալ բացատրությունը՝ «Գիշեր է և Լուսինն աղոտ փայլով կը լուսավորէ շուրս դին: Ամեն կողմ լուսնի տակ: Մայրն Լուսնի լուսով բուն կը հյուանք և մերթ ընդ մերթ կը հառաչէր»:

60(121).— Այս բառակից վերև և ներքև ՆԶԶ-ի մեջ պարերգեր են, որոնք ալ մի կապ չունեն մեր Բնմալի հետ, բնականաբար զուրս պիտի մնային:

61(122).— Վերցված է «Մարալու մարալու» պարերգերի շարքից:

62(123).— ՀԱ-ի մեջ ունի՝ «Առ դարիբն» վերնագիրը:

63(125).— «Հարսն առ ջուրն և առ դարիպն» վերնագիրը ունեցող անտունիի շարունակություն է, որի սկիզբը՝ «Ջրիկ, ո՞ր ակնէն կուդաս» տողով սկսվող երգն է, և մեր Ժողովածուում բերված է իբրև առանձին պանդխտության երգ և դրված

է «Պանդխտութեան զանազան երգեր» բաժնում, տես Ն 263ա երգը և 115 ծանոթագրությունը: Այս երգի մեկ այլ ընթերցված տպագրված է ԱԱ-ի մեջ, էջ 455:

Վանքը գյուղ է, այդ գյուղի ներքե, Եփրատի ափին Ս. Գէորգի անունով եկեղեցի կա, որը կոչում են նաև Եփրե (Գէորգ), այս եկեղեցուն կից կա նաև Ս. Սարգսի անվան մի մատուռ: Հավանաբար հին ժամանակներում մի վանք է եղել և գյուղի անունն էլ այդ անվամբ «Վանք» է կոչվել: Այսպես է բացատրում Ճա-նիկյանը:

64(127).— Այս երգի վերևից գրված է՝ «Հարսն առ լուսին, որ ցաթեր է ի տանիս»: Սկզբնաղբյուրի առաջին մասը գրված է Ժողովածուի համապատասխան բաժնում. տե՛ս Ն 72 երգը, ինչպես նաև 41 ծանոթագրությունը:

65(130).— Սկզբնաղբյուրի մեջ ունի՝ «Պանդխտի երգեր» վերնագիրը: Ներկա երգը կաղված է ՎՍԱ-ի մեջ եղած երգի առաջին 6 քառյակից, տե՛ս Ն 49 ծանոթագրությունը: Այս երգի աղճատված վարիանտը կա էԱԺԶ-ի մեջ բերված սիրերգերի շարքում, բերում ենք այդ հատվածը՝

Քամբախ Բուլանխ, փլեր իսկիտար,
Իմ կարիս չլրթի, չիկ անէր տէրպէտար.
Արի՛ ևա՛ր արե՛, խոով մի մնար,
Աստուտրի մալ ձիկ ու քն շմնար:

էԱԺԶ 45

66(134).— էԱԺԶ-ի «Գովասանական և սիրահարական երգեր» բաժնից է վերցված: Տողատակին բերված է՝ երգել է Եսուռ Սարգսյան: Այս երգից առաջ հետո աստղանիշներով բաժանված, բուլբուլին տարբեր սիրո երգեր են:

67(138).— ԲնԲ-ի մեջ այս երգը «Մտանք ի բարեկենդան, ելլանք ի դատիկ» տողով սկսվող երգի շարունակությունն է՝ տե՛ս Ժող. Ն 149 երգը, նկատի ունենալով, որ սրանք տարբեր երգերի միակցություններ են, դրա համար էլ առանձնացրինք: Ներկա համարի առաջ եղած երգից հետո գալիս են այս երգի հետ ոչ մի առնչություն չունեցող, այլ երգվելու եղած տողեր, բերում ենք դուրս թողած հատվածը՝

Տարին տասունըկու ամիս,
Դուն ծովուն հալուն կու կենաս,
Իս քենէ հասրէթ կու պահէս,
Մաղերս կապիմ կարմունջ,
Վըբայն անցիր ու եկուր,
Քեզ ինչխ իմ կարօտցեր,
Երեսիդ շենքն իմ մոռցեր,
Ուշ աչքերս քեզ տեսեր,
Ուշ լեզուս հաւըդ զուրուցեր...»

ԲնԲ 693

68(141).— 22-ի մեջ այս երգը գրված է «Անտունի» վերնագիրը կրող սիրճի-գերի շարքում, որտեղից ընտրել ենք ներկա համարը, 2Ա-ի մեջ՝ «Անտունի դարի-սի լրա» վերնագիրն ունի: Այս երգի աղավաղված և աղճատված վարիանտները կան ՎՍԲ-ի և Ն2Զ-ի մեջ: Բերում ենք այդ վարիանտները՝

ՎՍԲ 50 Ինչ բան որ կէր՝ բանբողս արեցի,
Ջուր դրբի, զըլֆերս լըւացի,
Հաց, բարին բողէն կապեցի,
Կանաչ շրոէն գինով լեցուցի:

Իմ կանաչ-կարմիրն կապեցի,
Մաղկունքներով զըլուխս դարդարեցի,
Մուշկ-ամբար եղով զըլուխս օծեցի,
Վարդ առի, վարդից փունջ կապեցի:

Գրնացի հասա շիւմ կէս դաշտին,
Չարկամ դէմս էկաւ, չար խարսքն ի բերնին
Հարց ու փորձ արի, թէ խարբրկմ առնեմ՝
Սե խաբարն ի տու, սե թուրթն էր ձեռնին:

Ասաց, բարեկամ, տիւ դեռ՝ ր կերթաս,
Դեռ՝ ք ժուռ կուգաս սախուն, էրէրուն.
Քո հարն ի մեռե, հերիք որ զընաս,
Սե օրըն ի բերե վէր քո արեուն:

Ոռնիկըս կախ բնկաւ, կատամբս կոտրեցաւ,
Սար ու ձոր աչիցըս մըթնեցաւ:
Ջրոէնը կոտրավ, գինին էլ թափաւ,
Գինու տեղ ըիւր հազար ծաղկունքը բուսաւ:

Մաղի՛կ, պալասան ծաղիկ,
Վէր սե օծերաց կաշուն բուսնէր ծաղիկ,
Եարիկըս ի մեռե, էլ ի՞նչ անեմ զարդ,
Օր-տարիներով ես պիտի անեմ զարդ:

Չարկա՛մ, քեզ էլ ինչ ասեմ,
Սիրտըս խըռով ի, վայ թէ անիծեմ:
Չարկա՛մ, դու չար խարբարեր էլար ինձի,
Չարկամ, տրնիկըդ քանդվէր, մընիր անորդի:
Չարկամ, տրնիկըդ քանդվէր, մընիր մէջ խոպան դաշտին,
Քո գրոնիկ բաղվէր դէմ չար գրորդին,
Քս էրտխարն դէմ չարկամին, դէմ չար քամուն,
Գըրողն էլ թող ելմուտ անէր օրն ի բուն:

Չարկա՛մ, քո հարս քո թախթից տանէր,
Քո փեսէն եօթնիկ աթոռէն,
Չարկա՛մ, տրնիկըդ վալէլէր գրորդ խորտէր,
Տուն անդիրովն սուգի մէջ մընէր:

ՆԶՁ 100 Պան կէր, պաներս թողեցի,
Ճիւր տրի ծամերս լացի,

Սիրահին գինի լըցիցի,
 Բագիկն արաղ լըցիցի,
 Տիմայ իրկանս կընացի:
 — Չարկամ տէմս առեց.
 — Դո՞ր կերթաս, ասաց, քոյ իրիյն ի մեռե,
 Իրկանտ արևոտ շապիբն եմ պիբե.—
 Ոտնիյս առեց էն տապան քարին,
 Կոտրաւ սիրահին, թափաւ էն նռան գինին:
 Քոյ տուն աւերի, շարկամ, քոյ տուռը փայլի,
 Քոյ տուն մէջ տապան քարին,
 Քոյ տուռ պիտէր աւմաց գրէօղին.
 Գրէօղ քոյ տուն մտնէր, քոյ ծէթ-պէտ խորտէր:
 — Քոյ տուն շէն կենա, պարեկամ,
 Տիւ բախտուր էլենս, պարեկամ,
 Խարար առի քեղնից, պարեկամ.
 Արաթայ սար նըրաթ կը վազէր,
 Պոկնէրդ շաքար կը մաղէր:
 — Ըռճան միներներ խըրխըրեցի,
 Կաղիւֆայ պառցեր տրիցի,
 Վէր իրկանս էրտսին կընացի:

Այս հատվածը վերցված է ՆՁԶ-ի մեջ հղած «Պանդուխտ մարդը և յուր կիներ»
 երգից, այս հատվածից անմիջապես վերև հղած մասը հանդիսանում է Ժող. № 13
 երգը, իսկ սկզբի մասը՝ № 19 երգը:

Այս երգի այլ վարիանտները կան ԱՍ-ի մեջ, բերում ենք ամբողջությամբ՝

Եկին ու բերին խապար
 Քը կլեր քու հարդ ու կու գայ...
 Իմ հարըս, շատ ծոցու լալըիս,
 Շատ ծոցու, շամամ ծծկու...
 Եկէք ուր առջեւ հրթանք,
 Իմ հարուն խաչըը շի մնայ...
 Կեցիք ուր պաղշաւ իջնամ,
 Ես քաղեմ մաղով վարդ կարմիր
 Տանիմ ան ճամբան լնիմ,
 Գայ կոխէ դարիպս ի վրան...
 Էմմէն բանս դան դրի,
 Զուրդրի մաղս լուացի
 Աչերս ծարուրեցի
 Ունեւուս քարեր հասուցի
 Հաղայ շարէ շար շապիկ
 Կապեցի լաֆուտ շալ զօտի
 Կանաչ ու կարմիր քէմխաս
 Ես ալ իմ անձիս հագցուցի

Դղմակ մը նուան հատ գինի
 Ես առի ու դեմ գնացի..
 Տուշմանս ալ ի դեմս ելալ
 — Ո՛ր կերթաս, ան քու եարբոյ յի...
 Թուլցալ շեհնէի բաւկես
 Դղմակս քարին եկալ,
 Հաղար տեղաց պատուհաս
 Բափեցաւ նուան հատ գինիս ...
 Ա, Երուս ծարուրն հատաւ
 Ունէրու քարերը քաշեցաւ
 Կանաչ ու կարմիր քէֆաս
 Յնծալաւ ու անձն ելաւ...
 — Տուշման աչքդ բոր կենալ,
 Նենդատը լեզուդ յորանալ,
 Զորնալ յորնալու լեռուդ
 Նաւն ունի դարիսս ու կու դալ,
 Սև օձը լեզուդ կձէ,
 Սև կարիճը՝ մէջ ծծերուդ...
 Մէկ մայ ուր տուշմանս տեսնեմ,
 Զախուեկս աի հանեմ ի ճէպէս
 Զախուեկս ի ճէպէս հանեմ
 Տի մորթեմ սև ոչխարի պէս,
 Արուն ի խէտէն առնիմ,
 Ուր խմեմ նուան գինու պէս,
 (Կամ անպակ գինու պէս)
 Զիկէրն ի քէպապ անեմ
 Ուր ուտեմ կարմու ծաի պէս...
 Ղարխաս ալ հեռուսն ք ժրթաւ
 Պօղ ձիւս ու սալթանաթիւ,
 Ղարթալ, պօղ ձիւս դեռ իմ,
 Պօղ ձիւս ու սալթանաթիւ...
 Կոնկրէն ի մար կու դար,
 Զուկ ու մուկ համբըրդ սլուռ,
 Զխակ մը եներթին տներ,
 Սոմա թիլ պիտեքն երեսին
 Դուռս բանամ, եկես առնեմ,
 Թեւեկս ի յիս ծղեմ,
 Մանտրտիկ հետդ խորաթեմ
 Հարէն մը ես քեռի բռեմ,
 Ուր թուաւ խէտէն ի ափիդ,
 Խէտէն ի ափիդ գնաց
 Սոմա թիլ տուռիս երեսիդ
 Նիիր նը բարով եկիր,
 Իմ հաղար տարուան սիրելիս
 Դուն եկեր ես եմ խնդալու
 Զու դալն է հագար բարի

Քու գնալն է խեղճ ու լեզիւ:
 Եկեր ես արլի տերթաս,
 Թող գնա, աչքիս մերեւար.
 Եկեր ու ալ շի տերթաս
 Կու շինեմ ոսկունքէն խէֆէս
 Քեզ ոսկուն խէֆէս շինեմ,
 Ուր երթաս հողու տունն ու դաս...,
 — Մահկն ալ քէսպապ տանեմ:

ԱԱ 438—440

Բերում ենք մեկ այլ վարիանտ՝ նույն երգի՝
 եկիւն ու բերին խապար.
 — Թունդ ելեր քու ետքն ու կու դայ:—
 Զուր դրի, մաղս լուացի,
 Հագայ սէրէսէր շապիկ
 Կապեցի լաւու շալ գոտի:
 Դոմակ մը նուան հատ գինի
 Առի ու գեմ գնացի:
 Տուժմանս ալ երեսս ելաւ.
 — Ուր կերթաս, ան քու ետքդ չէ...:
 Թուլցաւ շահէնն ի բաղկիս,
 Ոտքունքս քարն անցաւ,
 Բափեցաւ նուան հատ գինիս...:
 — Տուժման, աչքդ քոր կենայ,
 Ատ ստախօս լեղուդ շորանայ...:
 Քէրուանն ալ հեռուէն փրթաւ,
 Իմ ետքս էր ճերմակ ձիաւոր:
 Տուժմանս ալ ձեռքս անցնէր,
 Հանէի շախտակս ի ճէպէս,
 Մորթէի սեւ ու խաւի պէս...:
 Արունը գատաւն առնէի,
 Խմէի անպակ գինու պէս,
 Մահկն ալ քէսպապ անէի,
 Ուտէի կաքու մըսի տեղ...:

ԱԱ 440—441

69(142) Բերում ենք այս երգի շարունակությունը, որը տեքստից դուրս ենք
 թողել՝

Ան բարձր սարերն ի վար
 Բարկուղիկ հովիկմ իջաւ,
 Հարսնուկ խառնուրիկ հարսնուկ
 Օլըրեր գոնակն է բացեր:
 Տեսեր է ուր իր ետքը չէ,
 Մըլուրեր ու ներս է եկե,
 Կիրական ալ հարսմունք ըրեր,
 — Հարսնուկ. քու ո՞րտեղն է ցաւեր:
 — Քու որդուդ խաթերն համար,

Իմ ամեն տեղուկս ալ է ցաւեր.

— Գիր անեմ, որդիս բերեմ,

Քու ամէն ցաւուկդ անցնի:

— Գիր անես, որդիդ բերես,

Աստծու լուսին տիրանաս,

Գիր չանես ու չի բերես,

Կանխձեմ տւր քար կը դառնաս:

ԷԱԺԶ 105

70(144).— ՀՀ-ի մեջ ունի՝ «Հովերով սեր» վերնագիրը:

71(149).— Սկզբնաղբյուրի մեջ այս երգից անմիջապէս հետո եկող 9 տողը չեն վաճ է Ն 67 ծանոթագրութիւն մեջ: Իսկ արան հաջորդող մասը «կոտւած ու ժուռ կու դամ» տողով սկսվող, հանդիսանում է Ժող. Ն 138 երգը:

72(150).— Այս երգի սկզբի մասն անշարեւել ենք, և կաղմում է Ժող. Ն 176 երգը:

73(151).— ՀԱ-ի մեջ ունի՝ «Ղարիպի վրա» վերնագիրը: Առաջին 3 տողերը կան ԱԱ-ի մեջ, էջ 521:

74(157).— Սկզբնաղբյուրի մեջ ունի՝ «Դարձյալ դարիպի վրա» վերնագիրը: Առաջին 3 տողերը կան նաև ԱԱ-ի մեջ, էջ 528:

75(164).— Ունի բաղմամբիվ փոփոխակներ.

ժե 1—3—4 Կալն էլաւ էրկու էրես,
Բէ որ էրթաս Շորակյալ,
Ղարիբս հետդ բերես:

ԷԱԺԶ 1—3—4 Ձուրն էկաւ էրես բէրես,
Որ կերթաս դարիպ քաղաք,
Իմ եարր խեղդ բերես:

ԱՀԲ 1—3—4 Ձուրն էլաւ էրես-էրես,
Ինչ որ կերթաս երեւման
Իմ եարթին հետդ բերես:

ԱՀԴ 3—4 Դեմ Շորաղեալ դնալիս՝
Իմ եարս հետդ բերես:

ԱՀԴ 1—3—4 Ձուրն էլալ էրես-էրես
Եփ որ դառնաս Շերակալ
Սոնալիս հետդ բերես:

ԱՀԶ 1—3—4 Մեծ պասը էրես-էրես...

Ոտդ կընկնի քաղաքը,
Ձանանս հետդ բերես:
Մենձ կալը էրես-էրես,
Բաղրկեան աստուած սիրես,
Բաշ-Շորաղեալ դնալիս,
Իմ եարր հետդ բերես:

Տե

76(166).— Այս քառյակի ալլ ընթերցվածներ կան, ինչպես ցույց ենք տվել՝
ԹՄ-ի և ԱՀԶ-ի մեջ. բերում ենք ԱՀԶ-ի վարիանտը՝

Ջուրս կէծա, չուր պիրէք,
Ապրհանայ հիւն պիրէք,
Տուն հաւասար թամամ են,
Ղարիր զուշը տուն պիրէք:

77(167).— Կա նաև ԱՀԶ-ի, ԱՀԳ-ի մեջ. բերում ենք ԱՀԶ-ի վարիանտը՝

Տեղին հար ձուն փորին
Իմ աճկը նուխվայ հողերին,
Նուխվայ հողերը մի փուլ գայ,
Բալբայ իմ հարը տուն գայ:

78(169).— ՀՀ-ի մեջ ունի՝ «Աիրողներ» վերնադիրը, երգը երկախոսության ձևով է, երգի առաջին մասը ներկայացնում է տղայի դանդառը աղջկանից, որով զժգոհում է նրա սիրուց և անտարբերությունից: Իսկ երկրորդ մասը աղջիկն է հուսադրում իր սիրածին: Այս մասը իր բովանդակությամբ պանդխտական է, որի համար և զրեցիներ այստեղ՝ ամբողջությամբ:

79(173).— ՀԱ-ի մեջ վերջում ունի հետևյալ երկու տողը՝

Բաղնիրը ի խալվաթ անիմ,
Ուր վլանամ սըռմա թել փերշեմտ:
ԱԱ 443

80(174).— Վերցված է Արուսյակ Հայկունու հավաքած՝ Ակնա ժողովրդական երգերի շարքից:

81(176).— ԱԲ-ի մեջ այս երգի շարունակությունը, չորս քառյակ, որը սկսվում է «նոր է րացվեր կարմիր վարդի տերևը տողով, զուրս թողեցինք, և զրեյ ենք այլ բաժնում, նկատի ունենալով, որ զրանք տարբեր երգերի միակցության են, և իբրև առանձին երգ կարելի էր զնել համապատասխան բաժնում: Տես Ժող. № 150 երգը, ինչպես նաև 72 ծանոթացրությունը:

Այս երգի 9—12 տողերի երկու տարբերակ կա ԱԱ-ի մեջ, բերում ենք երկուսն էլ՝

Ըստամբոյ մի դովեր, երկիրը վատ է,
Տախտակը տէօշէկ է, չոր քարը բարձ է,
Վայ անոր տիրոջը, աշերը լաց է,
Երկու ձեռքն երեսին՝ մէնտիլը թաց է:

ԱԱ 513

2-րդ տարբերակ՝

Ստամբոյ մի գովէք, երկիրը վատ է,
Լեռն երբ մէշէ է, համբաին քար է.
Տախտակը տէօշէկ է, չոր քարը բարձ է.
Այա անոր տիրուն աշերը լաց է,
Երկու ձեռքերն երեսին, մայրաման թաց է:

ԱԱ 531

Նույն երգի 13—16 տողերի այլ տարբերակ կա ԱԱ-ի մեջ, բերում ենք այդ տարբերակը.

Փօստան եկաւ, երթամ նամակ հարցընեմ,
Ինտո՞ր բնեմ, ցափս քեզի զիտցընեմ,
Բաթար զրկեմ, սիրտդ ինծի դարձնեմ,
Գիշեր ցորենկ խաղ կանչելով լացընեմ:

ԱԱ 522

82(177).—ՎՍԱ-ի մեջ ունի՝ «Պանդուխտի երգեր» վերնագիրը Այս երգը մեր ժող. № 98 և 130 երգերի շարունակությունն է։ Նկատի ունենալով, որ դրանք տարրեր երգերի միակցություններ են, և իրենց բովանդակությամբ նպատակահարմար էին տարրեր բաժիններում դնելու համար, անշատեցինք և դասավորեցինք այդպես։

83(183).—ՌՄ-ի մեջ ունի «Վանեցի կնոջ զգացմունքը գեպի յուր ամուսինը» վերնագիրը։

84(185).—22-ի մեջ այս երգը դրված է «Մահերդ ակնա Ապուշեխ և Կամրա-կապ գեղերու ժողովրդյան կանանց իրենց զարբերի և սիրելյաց վրա» ընդհանուր վերնագիրը կրող սգո երգերի շարքում։ Նկատի ունենալով, որ դրանցից յուրաքանչյուրն առանձին երգ է, բայց բանահավաքը ընդհանուր վերնագրի տակ միացրել է, մենք անշատեցինք, և մեր ժողովածուի №№ 185, 186ա, 188, 193, 194, 196, 197, 198, 203, 205, 207, 209ա, 210, 312, 313 երգերը վերցված են այդ շարքից։

85(186).—2Ա-ի մեջ ունի՝ «Ի դիմաց ի Կ. Պոլիս հանդուցյալ պանդուխտին» վերնագիրը։

86(186ա).—Վերցված է 22-ի մեջ եղած «Մահերդ Ակնա Ապուշեխ և Կամրա-կապ գեղերու ժողովրդյան կանանց իրենց զարբերի և սիրելյաց վրա» ընդհանուր վերնագիրը կրող սգո երգերի շարքից. տե՛ս № 84 ծանոթագրությունը։

87(187).—Այս երգը սկզբնաղբյուրի մեջ՝ 2Ա, «Ողբ Վանք գյուղեն» սգո երգերի շարքից է վերցված։ Այստեղից ենք վերցրել նաև ժող. №№ 202, 206 երգերը։

88(190).—2Ա-ի մեջ ունի՝ «Իմահ պանդուխտին» որ հանդերձյալ էր վերահառնալ էր Հայրենիս» վերնագիրը։ Երգը բանահավաքը բերում է երկտողով, մենք ժողովածուի մեջ բերում ենք տողատված, վերածելով 4 տողի։

89(192).—2Ա-ի մեջ ունի՝ «Ի պանդխտության մեռյալ զարիպի վրա» վերահագիրը։ Այս երգի մեկ այլ տարբերակ գտնվում է ԱԱ-ի մեջ, բերում ենք այդ տարբերակը՝

Եկին օտար մարերն ի վրայ,
Եկին օտար քուրերն ի վրայ,
Եկին ու օտարք լացին
Օտար երկիր թաղեցին...
Եկին ու վայ բերին բերողին,
Վայ բերողին, վայ մեծցնողին,
Ալոց, ալոց արթուն կեցողին...:

ԱԱ 546

Երգի վերջին 5 տողը կա նաև ԱԱ-ի մեջ։

90(193).—Վերցված է 22-ի մեջ եղած մահերգերի շարքից. տե՛ս № 84 ծանոթագրությունը, ինչպես նաև №№ 194, 196, 197, 198 երգերը։
Այս երգի առաջին շորս տողը կա նաև ԱԱ-ի մեջ, բերում ենք այն՝

Եկիք նե բարով եկիք,
Մեր սարաֆէն խապրիկ մը բերի՛ք,
Խապարն ուր գալու բերի՛ք,
Ուր կըլի աչերս ի լալուն,

91(199).— ԱՐՄ-ի մեջ վերնագիրն է՝ «Սև խապար», մոր և աղջկա երկախոսությունն է պանդխտության մեջ մեռած փեսացուի մասին:

92(201).— ԺԱԲ-ի մեջ ունի՝ «Պանդուխտի կտակը» վերնագիրը: Այս երգը հաղմում է ժողովածուի № 53 երգի շարունակությունը: Սկզբի մասը գրված է «Հայրենաբաղձության երգեր» բաժնում, տե՛ս № 53 երգը և № 30 ծանոթագրությունը:

93(202).— Վերցված է «Ողբ Վանք գյուղին» սգո երգերի շարքից:

94(203).— ՀՀ-ի մահերգերի շարքից է վերցված: Տե՛ս № 84, 88, 90 ծանոթագրությունները:

95(205).— ՀՀ-ի մեջ եղած մահերգերի շարքից վերցված սգո մի երգ է՝ Տե՛ս № 84, 88, 90, 94 ծանոթագրությունները:

96(206).— ՀԱ-ի մեջ եղած «Մրրդա լեռը ձուն է եկեր» տողով սկսվող երգի վերջին քառյակն է, որը իր բովանդակությամբ տարբերվում էր սկզբի մասից, ուստի անջատեցինք, սկզբի մասը դնելով ժողովածուի առաջին բաժնում: Տե՛ս № 17 երգը, ինչպես նաև № 7 ծանոթագրությունը:

97(207).— ՀՀ-ի մեջ եղած մահերգերի շարքից վերցված մի երգ է. տե՛ս № 84, 88, 90, 95 ծանոթագրությունները:

98(209).— ՀԱ-ի մեջ եղած մահերգերի շարքից է. երգից առաջ գրված է՝ «Ի մահ առն որո որդվոյն ամուսնությունն ի մոտո պիտի կատարվի կամ որ ի պանդխտութենն պիտի վերադառնայ»:

99(210).— ՀՀ-ի մեջ եղած մահերգերի շարքից է վերցված:

100(211).— ՀԱ-ի մեջ ունի՝ «Ի գույժ պանդուխտ որդվոյն» վերնագիրը:

101(212—213).— ՀՀ-ի մեջ եղած մահերգերի շարքից վերցված համապատասխան երգեր են, տե՛ս № 84, 88, 90, 95 ծանոթագրությունները:

102(215).— ՀԱ-ի մեջ այս երգից առաջ գրված է՝ «Կպատմեն թե հարս մը՝ որո այրն ի պանդխտության է եղեր, դրացի հարս մը կրերն ու միասին կպառկին: Կեսուրը ղզալով թե տան մեջ օտար սը կա, կկասկածի, և առանց հարցունել քննելու կսկսի բամբասել ղհարսն, և կուղև որ խաղբ ու խալտառակ ընե զայն: Հարսն ղետեղերն երթալով կսկսի տրտում տխուր շրջիլ. և կմտածե ինքզինք չուրր չեկտիլ: Այս պահուն այրն ի պանդխտութենն կվերադառնա և անդ տեսնելով յուր կիսն, առանց ծանոթացունելու շինքն, կսկսի (խոսիլ) հետևյալ անտունին»:

Կա նա ԱԱ-ի մեջ, էջ 449:

103(216).— ՀԱ-ի մեջ բերված է իբրև օրորոցի երգ, սակայն բովանդակությամբ պանդխտության է, դրա համար էլ ղրեցինք այս բաժնում:

104(219).— ՀԱ-ի մեջ երգից առաջ գրված է՝ «Ի ղիմաց այն կնոջ՝ որ ամուսնույն պանդխտութենն և հարստության անկումն հետո անոր մահն ալ կտեսնե»:

105(223).— ՀՀ-ի մեջ բերված է իբրև օրորոցի երգ, բայց ըստ իմաստի պանդխտության է:

106(228).— ՀԱ-ի մեջ երգից առաջ գրված է՝ «Սգակիր մայրն առ այլ մայր մմն՝ որ վիճակակից է»:

107(231).— Բերում ենք ԱՀՀ-ի և ԺԽ-ի փոփոխակները՝

ԱԶԶ Գիւլայի կանեմ տանի տղին,
Ման կը գեամ կեղած տղին,
Կլէօխս բաղայ կը տամ,
էն եարին, զարիր տղին:

ԺԽ Զառ բլրով եմ, կուս գեղին,
Շուռ կըղամ Գյանջու գեղին...
Իմ եարիս Ղարիր տեղին:

108(233).— ԷԱԺԶ-ի մեջ գրված է Յալլի պեմերգերի շարքում, որտեղից և ընտրեցինք պանդուխտի քառյակը: Հավաքել է Արշալայի Հայկունին:

109(236).— Այս երգը էԱԺԶ-ի մեջ վերջված է Գ. Հայկունու հավաքածներից, ասել է Զոյրա Գրիգորյանը: Այս երգն ասում են վիճակ հանելու ժամանակ, առանց «չան գլուխում»-ի: Բերում ենք երգի/այլ փոփոխակները ԱԶԲ-ից և ԺԽ-ից:

1—3—4 ԱԶԲ 1 Ժամի դուռը մաս մաս քար,
3 Բուերիս բերանն օյա,
4 Եարս թավաթի սօյ ա:

ԺԽ Ժամի դռան կարմիր քար,
Ինչ եմ անում զարիր եար,
Ժամի դռան արեւիլը,
Չեմ ուզում քո բարեւիլը:

110(239).— ՄՍՍ-ի վերնագիրն է՝ «Պանդուխտ որդին և յուր մայրը», որից առաջ գրված են հետևյալ տողերը՝ «Զկես դիշերավ յուր նժգեհ եղբայրը դուռը բաղ-խելով և հետևյալ երգն մեկամաղձիկ իմն կերգե»: Երգի վերջում «Մայրն զգածլալ որդվոյն խոսքեն, ճանչնալով և զյուր որդին, բանա զդուռն և աշոք բացոք կտեսնեն յուրյան տարազրալ զավակն, քանզի ուխտած էր թն հորժամ տեսնեն, յուր աչքին յույսն թող կենազրավ լինի»: ՄՍՍ 1886 3820:

Բերում ենք ԲՆԱ-ի տարբերակը՝

Աշուիդ խարիպիս աշուին,
Զանդ անոր ձանը շի մանիր.
Եարիպըս թուխ աչք ունէր,
Թուխ աչք ու շուշմայ բերան.
Առդան մարգրտէն շարած
Սրմա թէլ պուլուխն ի վրան:

Նույն երգը տպագրված կա նաև ԱԱ-ի մեջ, էջ 452:

111(241).— Ընտրված է ԷԱԺԶ-ի մեջ եղած դուբնի, սալլի, հանդի երգեր շարքից:

112(242ա).— ՉԱ-ի մեջ ունի՝ «Անտունի պանդխտության զնացողի կողմանե» վերնագիրը: Այս երգի սկիզբը, որն սկսվում է՝ «Գնամ ու գնամ կըսիմ» տողով, առանձնացրել և զրել ենք հրաժեշտի և բաժանման բաժնում, տե՛ս № 4 երգը, ինչպես նաև № 1 ծանոթագրությունը:

113(246).—ՀԱ-ի մեջ վերնագիրն է՝ «Անտունի զարիսի վրա», որից հետո գրված է՝ «Այրն պանդխտութենն կվերադառնա յուր սիրելիւնն քով, կինն չի ճանշնար դայրն, և կխոսին հետեւյալ անտունին»:

114(263).—ԲնԱ-ի մեջ այս երգը գրված է «Աղբյուր մի Մըրզա լեռը» տաղի մեջ, երգը կա նաև ԱԱ-ի մեջ, էջ 447:

115 (263ա).— ՀԱ-ի մեջ այս անտունին ունի՝ «Հարսն առ ջուրն և առ դարիպն» վերնագիրը: Անտունին բաղկացած է 40 տողից, որի առաջին մասը, 14 տողը կազմում է ներկա համարը, իսկ շարունակությունը հանդիսանում է ժող. № 125 երգը:

ՀԱ-ի և ԲնԱ-ի մեջ եղած այս անտունին տպագրված է նաև ԳԺՏ-ում, Աբեղյանը երկուսը միասին դրել է, տալով փոփոխակների տարբերությունը:

116(272).—Վերնագիրն է «Ղարիբի երգ»։ 1946 թ. Զանգեզուրի շրջանում, Գորիսում գրի է առել Սերո Խանդաղյանը:

117(273).—Վերնագիրն է «Ղարիբու երգ»։ 1935 թ. Կոտայքում գրի է առել քանահավաք Գ. Թարվերդյանը:

118(274).—Ասել է ոմն Լուսիկ, 1938 թ. Կոտայքում գրի է առել աղագրապետ-քանահավաք Վարդ Բդոյանը:

119(275).—Ասել է ոմն Անդրանիկ (արաբկիրցի) գրադեստ, 25 տարեկան, 1938 թ. Կոտայքում գրի է առել Վարդ Բդոյանը:

120(276).—Վերնագիրն է «Անտունի»։ 1936 թ. Նուբարաշենում գրի է առել Գ. Թարվերդյանը, ասել է Մարուհի Բերբերյանը:

121(277).—Ժողովածուի №№ 277 և 288 երգերը գրի է առել Վարդ Բդոյանը 1938 թ. Կոտայքում, ասել են Եղովանցի մի քանի աղջիկներ:

122(278).—Ժողովածուի №№ 278 և 278ա երգերը վերցված են հայ նշանավոր քանահավաք-աղագրագետ Երվանդ Լալայանի՝ 1915 թ. արշավախմբի հավաքած նյութերից «Ջանդուլտներ»-ի շարքից, գրի է առնված Արտուրում:

123(279).—Ասել են Շահարցի Անիտո Անտոնյանը, անգրագետ, 40 տարեկան, և Մանիշակ Հովհաննիսյանը՝ անգրագետ, 42 տարեկան: Գրի է առել Վ. Բդոյանը 1938 թ. Կոտայքում:

124(280).—Ժողովածուի №№ 280, 283, 283ա երգերը վերցված են Երվանդ Լալայանի՝ 1915 թ. արշավախմբի կողմից գրի առած նյութերից:

125(281).—Ժողովածուի №№ 281, 282, 291 և 295 երգերը գրի է առել Վարդ Բդոյանը, 1938 թ. Կոտայքում: Ասել են Կոտայքի շրջանի Եղովան գյուղացիներ Սրբուհի և Կողո Հակոբյանները, նրանց նախնիները պարսկահայեր են, որոնք եկել են Խոյից և Սալմաստից:

126(284).—Գրի է առել Սերո Խանդաղյանը, 1940 թ. Զանգեզուրում:

127(285).—Վերնագիրն է «Պանդուխտի երգ», մերոյած է Երվանդ Լալայանի արշավախմբի նյութերից, 1916 թ. գրի է առել Սենեքերիմ Շալճյանը:

128(286).—Վերցված է Երվանդ Լալայանի՝ 1915 թ. արշավախմբի նյութերից, գրի է առել Սենեքերիմ Շալճյանը:

129(287).—Ժողովածուի №№ 287 և 292 երգերը ունեն «Անտունի» վերնագիրը, գրի է առել Գ. Թարվերդյանը 1936 թ. Նուբարաշենում: Ասել է Խարբերդի Մեսյան գյուղացի Հովհ. Պարոնյանը:

130(289).—Այս երգը գրի է առել Գ. Թարվերդյանը 1936 թ. Նուբարաշենում: Ասել է Խարբերդի Յոզտան գյուղացի Մաքրուհի Երպեպյանը:

131(290).—Վերնագիրն է «Նորահարսը կոռնկին»։ Գրի է առել Գ. Թար-վերդյանը 1936 թ.։ Ասել է ոմն Գեղանուշ Պողոսյան։

132(293).—Վերնագիրն է «Անտունի» (պանդուխտի)։ Գրի է առել Գ. Թար-վերդյանը 1935 թ., առել է Խոտրչուրի միջին թաղցի Օհաննես Խաչիկյանը, ան-գրագետ։

133(294).—Վերնագիրն է «Պանդուխտի երգ», գրի է առել Գ. Թարվերդյանը 1936 թ., առել է Շուշան Հարությունյանը։

134(296).—Վերնագիրն է «Ժողովրդական երգ», վերցված է Երվանդ Լալա-յանի՝ 1916 թ. խմբարշավի հավաքած նյութերից։ Գրի է առել Շահեն Արրիկ Կու-ծիկյանը։

135(297).—Ասել են Կոտայքի շրջանի Եղովանի գյուղացիներ Շոդո Մի-րոնյանը՝ 54 տարեկան, Քնբուշ Վարդանյանը և Գոհարիկ Զաքարյանը։ Գրի է առել Վարդ Բղոյանը՝ 1938 թ. Կոտայքում։

136(298).—Ասել է Եղովանցի Սրբուհի Հակոբյանը, գրի է առել Վարդ Բղոյանը 1938 թ. Կոտայքում։

137(299).—Ժողովածուի №№ 299 և 300 երգերը գրի է առել Վարդ Բղոյանը 1938 թ. Կոտայքում, առել են Եղովանցի մի քանի աղբիկներ։

138(301).—Վերնագիրն է «Անտունի», այս երգը 1936 թ. Նուբարաշենում գրի է առել Գ. Թարվերդյանը։ Ասել է Ակնի շրջանի Մարմել գյուղացի Հարություն Յոքսուլյանը, 53 տ., գրաճանաչ։

139(302).—Անշ-ի մեջ ունի՝ «Սուղ ջուղայեցվոց» վերնագիրը։ Առաջին անգամ այս երգը տպագրվել է 1847 թ. «Բաղմավեպ»-ում։ Երգը խմբագրությանն է հանձնել Գալուստ Շերմաղանյան-Վարդանյանը։ Խմբագրությունը գրու՝ է. որ երգը շարադրել է Ստեփան Վարդապետը՝ Նախավկայի վանքից, և այս օրինակը Շերմաղանյանը գտել է վանքի մեջ։ Երգը բովանդակում է 1605 թ. Պարսից Շահ Աբբասի հրամանով հայերի Պարսկաստան տեղահան անելու նկարագիրը։

140(304).—Մատենադարանի № 7717 (1695 թվականի ձեռ.) ձեռագիր տա-ղարանից ենք վերցրել, վերնագիրն է «Գովասանք զարիսի»։ Տպագրված է նաև Կ. Կոստանյանի՝ «Մկրտիչ Նաղաշ և յուր տաղերը» ժողովածուում։

141(305).—ՌՄ-ի մեջ վերնագիրն է «Խամուրի», իսկ ՏՍ-ի մեջ՝ «Արաքս»։

142(306).—ՌՄ-ի մեջ ունի «Մշեցու երգ» վերնագիրը։

143(307).—ՏՍ-ի մեջ «Հիմրան քյարաւի» վերնագիրն ունի, ՌՄ-ի մեջ՝ «Հիմրանի»։

144(308).—ՄԵՏ-ի մեջ վերնագիրն է «Տաղ վասն դարիսի»։ Կ. Կոստան-յանը ծանոթագրության մեջ գրում է՝ «Այս տաղն օրինակվեցավ 1695 թ. ձեռագիր տաղարանից, որի մեջ նույնը երկու լիզվով է, փոխ առ փոխ, մեկը թուրքերեն, մեկը հայերեն. հեղինակն անծանոթ է»։

145(309).—ՌՄ-ի մեջ ունի՝ «Խղճուկի լացը» վերնագիրը։

146(310).—ՏՍ-ի, ՍՀԱ-ի մեջ ունի՝ «Կիկոն ի դասըմ բաշա», ՆԳ-ի մեջ՝ «Մըր խոր պատկի դերեղման», ՄՇ-ի մեջ՝ «Մշեցի պանդուխտի երգը» վերնագրերը։ Այս երգի մասին Վ. Փափաղյանն իր հոգվածում խոսելով պանդուխտների մասին, տալիս է հատկապես մշեցի պանդուխտի ապրումների նկարագիրն ու երգի վերլու-ծությունը։

147(311).—ՏՍ-ի մեջ ունի՝ «Կարոտ» վերնագիրը։

148(312).—ՀՄԺՆ-ի մեջ հեղինակը այս երգը գրել է իբրև միջնադարյան ժողովրդական երգ, մենք վերցնելով նույն ժողովածուից դնում ենք անհայտ հեղի-

նահանգի երգերի բաժնում: Նկատի ունենալով երգի շարքը, բովանդակությունը, լեզուն, գտնում ենք, որ սա միջնադարյան որևէ հեղինակի դործ է, հետազոտում անցել է ժողովրդին, մոռացության տալով հեղինակին:

